22 Բ
A 404

# ԹՈՎՄԱՅԻ ԳԵՄԲԱՑՒՈՅ

կանոնիկոս աբեղայի 'ի կար-
գէ սրբոյն օգոստինոսի.

# ՅԱՂԱԳՍ ՆՄԱՆՕՂ ԼԻՆԵԼՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ.

## ԳԻՐՔ ՉՈՐՔ.

Նորոգ թարգմանութիւն 'ի լոյս ըն-
ծայեալ 'ի Հ. Վրթանէս վրդ̃է
յաշակերտաց Մխիթարայ
մեծի աբբայի :

Յամի Տն 1786. 'ի Հոկտեմ. 3.

'Ի Հայրապետութեան Տն Ղուկա-
սու Հայոց կաթուղիկոսի.

'Ի ՎԵՆԵՏԻԿ.

'Ի տպարանի յովհաննու փիացեան:
Հրամանաւ Մեծաւորաց :

## Առ հոգեւսէր ընթերցօղս ։

Բաղկանամ է յոյժ յարգ գրոյս 'ի միջ հո-
գեւորական գրոց, զի խարոց աղեա-
ծն ոգեղան բանից ։ Որոամ իքրն ընտրակա-
նի իմս անչչացեալ ալգս բաղկամս, յե-
րեանց բարբառ ուրձեցին ։ Թարգմանեցաւ
ձայնաւն՝ եւ 'ի մեր բարբառ . եւ փոխեցաւ
քան բաղկամ անգամ . բայց յանընփել ղարամա
նուէ բառից 'ի թարգմանութէ անդ՝ բաղկամ
արէ թաղեալ երեւելին իմացումածս բանիցն ։
Այլ իքրն հարէ եղն զա նորոգ պաղագրոլ
թէ 'ի լոյս ընծայել, խորհրդով խոհակա-
նաց պապղած թոմեցան՝ զայն ըստ բնաւոր
ոմնոյ մերոյն լեզուի թարգմանողօրէն դի-
րիմաց գործել ։ Զի ոգեղան իրաք մաքէ
նիս վերծանողաց դիւրալուր լիցին . եւ փա-
փաքօղ բանից ոք մատենագրոյն ընթերցո-
ղին յօգուտ ։ Յորոյ ներողամտուէ այն ու-
նիմս, թէ զի այսր զեօս ոչ ար-
ժանիցէն ինչ ըստգիտաւ ։



# ՅԱՂԱԳՍ
# ՆՄԱՆՈՂ ԼԻՆԵԼՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ։

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ։

Խրատք առ հոգևոր կեանս պիտանիք։

## ԳԼՈՒԽ Ա։

Յաղագս նմանող լինելոյ քս՟ի, և արհամարհելոյ զա՟մ ունայնութիւնս աշխարհի։

ՈՐ ԳԱՅ ԶԿՆԻ ԻՄ, ընդ խաւար մի՛ գնասցէ. ասէ տր՟։ Այս բանք են քս՟ի, որովք խրատէ զմեզ, զի կենաց նր՟ և վարուց լիցուք նմանողք. եթէ կամիմք ճշմարտապէս լուսաւորիլ, և յա՟մ կուրութենէ սրտ-

 տի

տի լինել զերծ: Ապա մեծ փոյթ մեր լիցի՝ խոկալ զվարս յսի քսի:

բ. Վարդապետութիւն քսի 'ի վեր է քան զամ վարդապետութիւնս սրբոց. և որ զհոգին ունի՝ զծածկեալն 'ի նմա գտանէ զմանանայ: Բայց բազումք 'ի սակաւ լսելոյ աւետարանին չառնուն ինչ եռանդն. զի չունին զհոգին քսի: Այլ որ կամի լիով և քաղցրութեամբ զբանս քսի առնուլ 'ի միտ, զամ զվարս իւր փոյթ կալցի առնել նմին նմանօղ:

գ. Զինչ օգուտ է քեզ՝ խորախորհուրդ վիճել զերրորդութենէ, եթէ չունիս խոնարհութիւն, որով երրորդութեանն լինիս անհաճոյ: Խորին բանք ոչ առնեն սուրբ և արդար. այլ առաքինի վարք սիրելի առնեն այ: Առաւել ընտրեմ յանձին զգալ զզղջումն, քան թէ գիտել զնորին սահման: Եթէ գիտէիր զամ աստուածաշունչ գիրս 'ի բերան, և զամ իմաստասիրաց բանս, զինչ օգուտ էր այն ամ՝ առանց սիրոյն այ, և շնորհաց: Ունայնութիւն ունայնութեանց, ամ ինչ ունայն է, բաց 'ի սիրոյն այ, և 'ի ծառայութենէ նր: Այս է կատար իմաստութեան. արհամարհութեամբ աշխի՝ դիմել յարքայութիւն երկնից:

Է. Ապա ունայնութիւն է զկորստա-
կան մեծութիւն խնդրել . և յայն հա-
տատել զյոյս : Ունայնութիւն է և պատ-
ուասիրել , և յաւագուն զանձն ամ-
բառնալ : Ունայնութիւն է մարմնոյ ցան-
կութեց զհետ երթալ . և ցանկալ
այնմ՝ որ զմ յետ սակաւ միոյ զայ
'ի վր ծանր պատուհաս : Ունայնութիւն
է երկար կեանս խնդրել . և զբարե-
վարուց անփոյթ լինել : Ունայնութիւն
է սոսկ կենաց միայն միտ դնել , և
զհանդերձելոց ինչ ոչ հոգալ : Ու-
նայնութիւն է սիրել զայն՝ որ վաղ անց-
անէ , և չփութալ այն , ուր մշտն-
ջենաւոր խնդութիւն է :

Ը. Յուշ լիցի քեզ սոսկ առակն , թէ
ոչ յագեցի ակն տեսանելով , և ոչ
լցցի ունկն լսելով : Արդ փութա
'ի սիրոյ երևելեաց զսիրտ քո 'ի բաց
դարձուցանել . և յաներևոյթս զօրէն
փոխադրել : Զի որք զըղձայոյն խղ-
ճեանց զհետ երթան , զխիղճ մտաց
աղտեղեն , և զշնորհս կորուսանեն :

## ԳԼ. Բ:

### Յաղագս նուաստ համարելոյ զանձն:

Ա. Ամ մարդ բնաւորապէս գիտել ցանկայ, այլ գիտութիւն առանց երկիւղին այ զինչ օգուտ լինի: Այո՛ լաւ է խոնարհ գեղջուկ, որ այ ծառայէ, քան զհպարտ փիլիսոփայ, որ անփոյթ լեալ զանձնէ, զընթացս երկնից զննէ: Որ քաջ զանձն ճանաչէ, առանձին նանրանայ, և ընդ գովեստ մարդկան ոչ խնդայ: Եթէ գիտէի զամ որինչ է յաշխ, և ոչ կայի 'ի սէր, զինչ օգուտ էր ինձ առաջի այ, որ դատելոց է զիս ըստ գործոց:

Բ. Կասեցի՛ր 'ի կարի իմն ըղձանալոյ գիտութե. զի մեծ է որ 'ի նմայն զբաղումն, և պատրանք: Գիտունք՝ մտադիր կամին երևել, և իմաստունք կոչել: Բազում ինչ կայ, որոց գիտութե նուազ կամ ոչինչ օգտէ հոգւոյ: Եւ յոյժ անմիտ է, որ յոչպիտոյս փըրկութե լինոյ պարապի: Բանք բազումք ոչ յագեցուցանեն զհոգի. այլ վարք բարիք հանգուցանեն զմիտս. և մաքուր խիղճ մտաց՝ մեծապէս վստա-

հա

հաստուցանէ յոյժ:

Դ̃. Որչափ առաւելուս 'ի գիտութի, այնչափ ծանրագոյն համար ունիս տալ, թէ ոչ սրբագոյն կենաս վարես: Ապա մի մեծամտիր ՚ի արուեստ ինչ կամ ՚ի գիտութի. այլ երկիր վասն քանքարոյն, որ տուաւ քեզ: Եթէ թուի քեզ բազում ինչ գիտել, և քաջհմուտ լինել. և զայն գիտասջիր, թէ կայ ևս բազում ինչ, զոր ոչ գիտես: Մի հպարտանար. այլ զտգիտութին քո խոստովանեա լեր: Զիմարդ վերադասես զքեզ քան զայլս, ուր բազումք են զքեզ գիտունք, և օրէնսգէտք: Թէ կամիս գիտել ինչ կմ ուսանիլ յօգուտ, սիրեա անծանօթ լինել, և առ ոչինչ համարիլ:

Ե̃. Այս է բարձրագոյն և գերօգտակար ուսումն. անձին ճշմարիտ ճանաչումն և արհամարհումն: Զանձն ընչին համարել, և զայլս յոյժ լաւ և արդոյ վարկանել, մեծ իմաստութի է և կատարելութի: Թէպէտ և տեսցես զոք յայտնապէս մեղուցեալ, կամ ծանր ինչ յանցուցեալ, սակայն և այնպէս չէ արժան քեզ՝ լաւ քան զնա զանձն համարիլ. զի ոչ գիտես, ցո՞ր վայր ձեռոյ ունիս 'ի բարին: Ամենեքին տկար եմք,

ծնք, այլ դու մի՛ զոք քան զքեզ տը կար համարիր:

---

## ԳԼ. Գ:

### Յաղագս վարդապետութեան ճշմարտութեան:

ա. Ե՛րանի՛, որում ճշմարտութիւն ինքն նմին ուսուցանէ, ոչ օրինակօք եւ ոչ անցաւոր բարբառովք. այլ որպէս եւ էն: Կարծիք մեր եւ միտք յոլովակի խաբեն զմեզ, եւ ը՟ սակաւ տեսանեն: Զինչ օգուտ է կարի իմն հետազօտուել գաղտնի եւ մթին իրաց, վասն որոց ոչ յանդիմանիմք ՚ի դատաստանի՝ թէ զմէ ոչ գիտացաք: Մեծ անմտութիւն է, զի զանց արարեալ զպիտանիսն եւ զկարեւորսն, կամակար ձգիմք յընդվայրաքննինս եւ ՚ի վնասակարս: Աչս ունիմք, եւ ոչ տեսանեմք:

բ. Եւ զինչ փոյթ է մեզ զսեռից եւ զտեսակաց: Ընդ որում յաւիտենականն բանն խօսի նա ՚ի բազում կարծեաց զերծ գտանի: ՚Ի միոջէ բանէ է ամ, եւ զմի նոյն խօսի ամ ինչ. եւ այն է սկիզբն, որ եւ խօսի ը՟ մեզ: Առանց նորա ոչ

ոք

ոք իմանայ կամ դատէ ուղիղ ։ Որում ամ ինչ մի է ․ և զամ 'ի մի ձգէ , և զամ 'ի միում տեսանէ , մարթ է սըրտի նո՟ լինել յանդորրու , և խաղաղական անձամբ կալ յԱծ ։ Ած ճըշմարտութե , յօդեա զիս ը՟ քեզ մշտընջենաւոր սիրով ։ Տաղտկալի է ինձ յոլովակի՝ բազումս ընթեռնուլ և լսել ․ 'ի քեզ է ամ , զոր խնդրեմ , և որում անձկամ ։ Լռեսցեն ամ վ՟դք ․ կարկեսցին ամ արարածք առաջի քո ․ դու միայն խօսեաց ը՟իս ։

Գ ․ Որչափ ոք ներանձնացեալ է , և ներքուստ պարզեալ , այնչափ բազումս և վսեմականս անաշխատ առնու 'ի միտ ․ զի 'ի վերուստ անոյ ը՟ունի զլոյս հանճարոյ ։ Ջինջ , և պարզ և անդրդուելի ոգի 'ի յաճախել գործոց ոչ զբաղնու ․ զի զամ 'ի փառս Ածյ գործէ ․ և 'ի խնդրելոյ զիւրն յանձն ջանայ լինել անձնապահ ։ Ջինչ է , որ խափանէ զքեզ , և նեղէ , բայց քո անմեռ. իղձ սրտի ։ Այր բարի և փոյթեռանդն զգործս իւր զոր արտաքոյ առնել ունի՝ նախ 'ի ներքոյ կարգադրէ ։ Եւ ոչ այնք ձգեն զնա 'ի ցանկուն ախտաւոր յօժարութե ․ այլ ինքն ձգէ զնա ըստ հաճոյից ուղիղ բանի ։

Ո՞վ այնպէս սաստիկ պատերազմ ունիցի, որպէս այն՝ որ ջանայ յաղթել անձին։ Այսմ պարտ էր փոյթ ունել մեզ, անձանց յաղթել, և օր ըստ օրէ 'ի մեր վերայ զօրանալ, և 'ի լաւ անդր յառաջադէմ լինել։

Գ. Ամ կատարելութիւն յաստի կեանս՝ զանկատարութիւն ինչ ունի ընդ իւր լծորդ. և ամ դիտողութիւն մեր չէ ամենևին անմռայլ։ Խոնարհ ճանաչումն անձին՝ ստուգագոյն ճանապարհ է առ ած, քան զխորին քննութիւն գիտութեան։ Չէ ինչ ստգտանելի գիտութիւն, կամ զինչ և իցէ իրաց պարզ ծանօթութիւն. որ յինքեան բարի է, և առ. յ̃ոյ կարգեալ. բայց վերադասել պարտ է յամի զբարիոք խիղճ մտաց և զառաքինի վարս։ Եւ քանզի բազումք առաւել ջանան գիտել, քան բարւոք կեալ. վն այսորիկ սուտ մոլորին, և ոչինչ կամ սակաւ պտղաբերեն։

Դ. Եթէ այնչափ փոյթ 'ի մէջ առնուին 'ի խլել զմոլութիւնս և 'ի տնկել զառաքինութիւնս, որչափ 'ի յուզել զխնդիրս, ոչ արդեօք 'ի վերայ երևէին այսչափ չարիք և գայթակղութիւնք 'ի ժողովրդեան, և ոչ այսչափ ցփութիւնք 'ի վանականս։ 'Ի գալ աւուրն դատաստա

նի

նէ ո՛չ լինի առ մեզ հարցփորձ ՝ թէ զի՛նչ ընթերցաք , այլ թէ զի՛նչ գործեցաք . եւ ո՛չ , թէ քանի՛ ճարտար խօսեցաք , այլ թէ քանի՛ կրօնաւորութե՛ք քաղաքավարեցաք : Ասա՛ ինձ . ո՛ւր են արդ այն ամ տեարք եւ վարդապետք՝ զորս քաջ ճանաչէիր , մինչ դեռ կենդանի էին , եւ գիտութե՛ք ծաղկէին : Այժմ 'ի հաստ նց այլք վայելեն , եւ չգիտեմ թէ խորհիցե՛ն ինչ զնոցանէ : 'Ի կենդանութե՛ն իւրեանց համարէին լինել ինչ . բայց արդ լռութի՛ է զնոցանէ :

Գ . Ո՛վ , որպէս վաղվաղակի անցանեն փառք աշխարհի : Երանի՛ թէ վարք նց ը՛ գիտուե՛ իւրեանց միաբանէին : Յայնժամ քաջադէպ յաջողեալ էր նց ուսումն եւ դպրութի՛ : Քանի՛ք կորնչին անօտի գիտութի՛ յա՛լ , ոյք անփոյթ են զա՛յ ծառայութե՛ : Եւ զի առաւել ընտրեն մեծարգի լինել , քան խոնարհ , վա՛յ այնորիկ նանրանան 'ի խորհուրդս իւրեանց : Նա է ճշմարտապէս մեծ , որոյ մեծ է սէր : Նա է ճշմարտապէս մեծ , որ յաչս անձին փոքր է , եւ զա՛մ բարձրութի պատուո՛յ ոչ համարի ինչ : Նա է ճշմարտապէս խոհեմ , որ զերկրաւորս ամ համարի կղկղանս , զի զքս

շահեսցի: Եւ նա է քաջ ուսեալ, որ զկամս ոչ առնէ, յիւրոց կամաց հրաժարի:

---

## Գ. Լ. Գ.

Յաղագս յառաջափութեան 'ի գործս:

ա. Մի հաւատար ամ՟ բանի եւ գրգռութե՟. այլ զգուշութ՟ եւ երկայնմտութ՟ ը՟ այ կշռեա զա՟մ: Աւա՛ղ, զի բազում անգամ մտադիւրագոյն հաւատամք եւ խօսիմք զայլմէ զչար՝ քան զբարի. այսպէս տկար եմք: Բայց արք կատարեալք ոչ դիւրաւ հաւատան ամ՟ որ բերէ զրոյց. քանզի գիտեն զմ՟դկան տկարութի՟, զի դիւրամէտ է 'ի չարն, եւ 'ի բանս իւր սայթաք:

բ. Մեծ իմաստութի՟ է չլինել վաղվաղակի 'ի գործս. եւ ոչ յամառ յիւր կործիս: Յայս հայի եւ՛ ոչ ամ՟ մ՟ոյ խօսից հաւատալ. եւ զոր լուեալն՝ կի՛ հաւատայ՝ ոչ խակեխոյ յայլոց ականջս հեղուլ: Ընդ առն իմաստնոյ եւ երկիւղածի մուտ 'ի խորհուրդ. եւ խնդրեա՛ ուսանիլ 'ի լաւէ անտի, քան զհետ երթալ խորհրդոց քոց: Վարք բարիք առնեն զմարդ իմաստուն ըստ այ, եւ փորձ

վերջ 'ի բազումս : Որչափ առաւել որ խոնարհ է յաչս անձին, և ա̃յ հնազանդ, այնչափ յամենայն իմաստնագոյն լինի, և խաղաղագոյն :

## ԳԼ. Ե :

### Յաղագս ընթերցման սր̃ Գրոց :

ա̃ . Ճշմարտութիւն խնդրել պարտ է 'ի սր̃ գիրս, և ոչ զճոռոմութիւն : Զամ̃ սր̃ գիրս այնու հոգւով պարտ է ընթեռնուլ, որով և գրեցան : Առաւել պարտ է 'ի սր̃ գիրս՝ 'ի խնդիր լինել օգտի, քան նրբութեան բանից : Այնպէս մտադիւր պարտ է մեզ ընթեռնուլ զջերմեռանդն և զդիւրիմաց գիրս, ո̃պ զբարձունս և զխորինս : Մի՛ գայթակղեսցուցէ զքեզ մատենագրին անուն, թէ շատ կամ սակաւ իցէ նր̃ գրագիտութեան · այլ սէր լոկոյ ճշմարտութեան ձգեսցէ զքեզ յընթերցումն : Մի՛ խնդրեր, թէ ո՛վ իցէ ասացեալ զայս, այլ մի՛տ դիր, թէ զինչ ասի :

բ̃ · Մարդիկ անցանեն, այլ ճշմարտութիւն տն̃ մնայ յաւիտեան : Առանց ակ-

ականութեն բազմօրինակ խօսի ընդ մեզ ամ : Ընդվայրաքննութեն մեր յարովակի խոչ լինի մեզ յընթերցմունս գրոց . զի կամիմք խելամուտ լինել, և մանր կրկտել, ուր պարտ էր հարևանցի անցանել : Եթէ կամիս օգտիլ, ընթերցիր խոնարհութբ, պարզմտութբ, և հաւատարմութբ . և մի յօժարիր երբեք կոչիլ գիտնաւոր : Հարց մտադիւր, և լուր լռիկ զբանս սրբոց . և մի արհամարհեր զառակս ծերոց, զի չասացին վայրապար :

---

## Գ Լ . Զ :

### Յաղագս անկարգ ախորժակաց :

ա . Յորժամ անկարգ ըղձիւ բերի որ առ ինչ, անդէն վաղվաղակի նեղի յանձն : Ամբարտաւանն և արծաթասէրն ոչ երբեք հանգչին . աղքատն և խոնարհն հոգւով՝ վայելեն 'ի բազում խաղաղութեն : Այր՝ որ դեռ անմեռ է յինքեան, վաղվաղակի փորձի և յաղթի 'ի փոքունս և 'ի չնչինս : Տըկարն հոգւով, և որ դեռ ըստ իմիք ինչ մարմնաւոր է, և յօժարամիտ 'ի զգալիս, դժուարին է նմա յերկրաւոր

ցան

ցանկութեանց 'ի բաց կալ խապառ : Վա՜ այսորիկ բազում անգամ տրտմութիւն ունի , յորժամ 'ի բաց հրաժարէ . և դիւրաշարժ է 'ի ցասումն , թէ ոք նմա ընդդէմ դառնայ :

է . Ապա եթէ զհետ երթայ , որում ցանկայ , անդէն 'ի խղճէ մտաց ծանրանայ . զի զիւրոց կրից չոքաւ զհետ . որ ոչինչ օգտեն խաղաղութեան՝ զոր խնդրէ : Ապա դիմամարտ լինելով կրից՝ գտանի ճշմարիտ խաղաղութիւն սրտի , և ոչ թէ ծառայելով նոցա : Ապա չիք խաղաղութիւն 'ի սիրտ առն մարմնաւորի , և ոչ 'ի մարդ՝ որ անձնատուր է յարտաքինս , այլ յայն՝ որ եռանդնոտ է , և հոգևոր :

404

---

## Գ Լ . Է :

### Յաղագս խորշելոյ 'ի ունայն յուսոյ , և 'ի մեծամտութենէ :

ա . Ունայն է , որ դնէ զյոյս իւր 'ի մարդիկ կամ յարարածս : Մի՛ ամօթ համարիր այլում ծառայել՝ 'ի սէր յսի քսի , և յաշխարհի աստ աղքատ համարել : Մի՛ ապաւինիր յանձն . այլ յԱծ հաս

հաստատեա՛ զդոյս քո։ Արա՛ որ ինչ ա՛նկ է քեզ. և ած յաջողեսցէ կամաց քոց 'ի բարին։ Մի՛ ապաւինիր 'ի քո գի-տութն, կամ 'ի հանճար մտեղեաց, այլ 'ի շնորհս այ, որ ձեռնտու է խո-նարհաց, և խոնարհ առնէ զյանձն-ապաստանս։

է. Մի՛ պարծիր յինչս, թէ ունիս. և մի՛ 'ի բարեկամս, թէ հզօր են. այլ յած, որ ամի է պարգևատու, և քան զամ զանձն տալ կամի։ Մի՛ հպար-տանար ը մեծութն, կմ ը գեղ մարմ-նոյ՝ որ դոյզն հիւանդութբ ապակա-նեալ տգեղանայ։ Մի՛ լինիր անձնա-հաճ, մի՛ լինելոյ քո աջողաձեռն և բը-դօնամիտ. զի մի՛ անհաճոյ լիցիս յաչս այ, որոյ է ամ՝ որ ինչ ձիրք բնութե-են 'ի քեզ.

ը. Մի՛ համարիր զանձն լաւ քան զայլս. գուցէ յաչս այ յոռեգոյն ի-ցես, որ գիտէ թէ զինչ կայ 'ի մարդ։ Մի՛ հպարտանար ը գործս բարեաց. զի այլազգ են դատաստանք այ քան զմրդկան, որոյ առաջի յոլովակի անհա-ճոյ են հաճոյք մարդկան։ Թէ ունիս ինչ բարի, հաւատա՛ թէ այլք լաւ ես, զի 'ի խոնարհութն հաստատեսցիս։ Ոչինչ վնաս է, եթէ ամենեցուն զքեզ ներ

քոյ

քոյ արկանես․ բայց վնաս մեծ է, եթէ գէթ միում ումեք ղբեղ վերադառնես։ Ընդ խոնարհս՝ հանապազորդ խաղաղութիւն․ այլ 'ի սիրտ հպարտաց յաւէտ նախանձ և սրտմտութիւն։

---

## Գ Լ․ Ը։

### Յաղագս զգոյշ լինելոյ 'ի չափէ ին ընտանութենէ,

ա․ Մի՛ ամ̄մ̄դոյ յայտներ զսիրտ քո, այլ ը̄ իմաստունս և ընդ երկիւղածս տե՛ս զգործ քո։ Մի՛ յաճախեր ը̄ մանկունս և ը̄ օտարս։ Մի՛ մարդելուղեր մեծատանց, և մի՛ սիրեր երևիլ առաջի մեծամեծաց։ Ընդ խոնարհս և ը̄ պարզամիտս, ը̄ եռանդնոտս և ը̄ բարեպաշտս լե՛ր կենաց կցորդ, և խօսեա՛ց ը̄ նո՛ա՝ որ ինչ է 'ի շինութիւն։ Մի՛ լիցի քեզ ընտանենալ ը̄ կնոջ․ այլ համօրէն զամ̄ բարեպաշտ կանայս յանձն արա այ̄։ Միայն այ̄ և հրեշտակաց նո̄ ընտանութիւն՝ լիցի քեզ անձկալի․ այլ 'ի մարդկան ծանօթութենէ խորշեա՛ց։

բ․ Սէր ունել պարտ է առ ամենեսին, այլ ընտանութիւն չէ յօգուտ։ Պա-

տայ

տաճէ երբեմն, որ անձանօթին բարի
անուն նշողէ. այլ յանդիմանի երևիլ
նա՝ յաչս տեսողաց մառայլ արկանէ,
Կարծեմք երբեմն մերովս ընտանութ֊
հաճոյ լինել առաջի այլոց. այլ առա֊
ւել յաչաց ելանեմք, մի՛ անբարի բա֊
րուց 'ի մեզ երևելոյ:

## Գ Լ. Թ:

Յաղագս հնազանդութեան և հպատակութեան:

Ա. Մեծ է յոյժ կալ 'ի հնազանդու֊
թն ը̄ ձեռամբ առաջնորդի, և չլի֊
նել ինքնագլուխ: Ապահովագոյն է
կալ 'ի վիճակի հպատակութեան՝ քան ա֊
ռաջնորդութեան: Բազումք կան ընդ
հնազանդութեամբ առ հարկի, և ոչ 'ի
սիրոյ: Եւ այսպիսիք տանջին, և ը̄
դոյզն ինչ տրտնջեն: Եւ չստանան
ազատութիւն մտաց, թէ ոչ 'ի բոլոր
սրտէ վ̄ն ա̄յ հնազանդեսցին:
Ընթաց յայսկոյս յայնկոյս, և ոչ գըտ֊
ցես հանգիստ, բայց 'ի խոնարհ հպա֊
տակութեան ընդ հովուու̄թ առաջնոր֊
դի: Ցնորք տեղափոխութեան զբազումս
արկին 'ի պատրանս:

Բ.

Ը. Ճշմարիտ է, թէ ամ ոք մտադիւրն գործէ ըստ միտս իւր. և առաւել միտէ 'ի համախոհս իւր : Բայց եթէ ամծ է 'ի միջի մերում, հարկ է թողուլ երբեմն և զմեր կարծիս՝ վասն օգտի խաղաղութե : Ո՞վ այնպէս իմաստուն իցէ, որ զամ լիով գիտիցէ : Այսպ մի կարի իմն ապաստան լինիր 'ի քո կարծիս : Այլ մտադիւր և կարծեաց այլոց լե՛ր ունկնդիր : Եթէ քաջ են քո կարծիք, և դու վս այ զքոյն թողեալ՝ այլում անսաս, բաղումս օգտեսցիս :

Թ. Բաղում անգամ լուեալ է իմ. ա՛պահովագոյն է լսել և առնուլ ըղխորհուրդ՝ քան տալ : Մարթ է դիպիլ, թէ իւրաքանչիւրոց կարծիք իցեն բարի. այլ չանսալն այլոց 'ի պահանջել բանին, նշան է հպարտութեան և կամակորութե :

---

## Գ Լ. Ժ :

### Յաղագս խորշելոյ 'ի դատարկ բանից :

Ա. Զգո՛յշ լեր յամբոխէ մարդկան ըՏ կարի. զի յոյժ խափանեն զընթացս

Յայտնի

Ծայրին իրաց, թէպէտ և պարզմտու-
թեամբ ամին: Քանզի անդէն յունայնու-
թեան շաղախիմք, և 'ի գերութեան մատ-
նիմք: Ո՛ տայր, թէ յոլովակի լռէի,
և չլինէի 'ի մէջ մարդկան: Այլ զի՞
է մեզ այդպէս յօժարամիտ բերիլ 'ի
խօսս և 'ի զրոյցս, որ ո՛ւր ուրեմն ան
խիղճ դառնամք 'ի լռութիւն: Յայն սակս
յօժարամիտ բերիմք 'ի զրոյցս, զի փո-
փոխ խօսակցութեամբ 'ի միմեանց մխիթա-
րել խնդրեմք. և զխորս մեր 'ի պէս-
պէս խորհրդոց վաստակաւոր՝ ամո-
քել կամիմք: Եւ առ որս կարի հին
սէր և անձուկ ունիմք, կա՛մ զորս հա-
կառակ մեզ կարծեմք, զայնց մատ-
դիւրագոյն ես կամ է մեզ խօսել և
խորհել:

Է. Բայց տեսցուք, զի բազում անգամ
զուր տարապարտուց զայս առնեմք:
Քանզի արտաքինս այս մխիթարութիւն
ներքին և աստուածային մխիթարութեանն ոչ
փոքր վնաս գործէ: Վասն այսորիկ հս-
կել պարտ է և կալ յաղօթս, զի մի՛
դատարկ անցցէ ժամանակն: Եթէ
արժան և օգուտ իցէ խօսել, որ ինչ
'ի շինութիւն է՝ զայն խօսեսցուք: 'Ի չար
սովորութենէ, և 'ի հեղգութենէ յառաջոյ
զխմուն մերոյ է ըստ անդամ բերա-
նոյ

նոյ մերոյ անպատահպանութե : Բայց ըղ հոգևոր իրաց խօսս առնել ոչ սակաւ օգուտ է հոգևոր զարգացման, մանաւանդ՝ ուր համամիտք և համաշունչք յանուն այն միաբանեալ իցեն :

## ԳԼ. ԺԱ.

Յաղագս ստանալոյ զխաղաղութիւն, և յաղագս նախանձու յառաջադիմութեան :

Ա. 'Ի բազում խաղաղութիւն վայելեմք, եթէ ոչ պատաղեմք յայլոց բանս՝ և 'ի գործս, և յորս ոչ են անկ հոգաբարձութե մերոյ : Զիա՞րդ հնար է ը͞ երկար 'ի խաղաղութեան լինել այնմ, որ յօտարի հոգս խառնի, որ արտաքոյ առիթս խնդրէ, և որում չէ ինչ փոյթ ներանձնանալ : Երանի այնոցիկ, որք միամիտքն են . զի բազում խաղաղութի գտցեն :

Բ. Զիա՞րդ ոմանք 'ի սրբոց յոյժ կատարեալ գտան 'ի կատարելութեն և 'ի վերնական խոկմունս : Վ͞ա զի գլխովին զանձինս մեռուցանել ջանացան յամ երկրաւոր ցանկութեց : Վ͞նկ արտի մտօք ընդ այ միացան, և անխափան կարող եղեն

զան_

զանձամբք պատաղել: Մեք կարի իմն զբաղիմք 'ի մեր կերս, և զանցաւորաց յոյժ հոգաբարձուն ունիմք : Դժուարահաս եմք գէթ միում 'ի մոլութեանց յաղթել . և առ օրըստօրէ յառաջադիմութեն չունիմք ինչ եռանդն . վասն կամք ծնամք ցուրտք և դաղջք :

Է . Եթէ էաք կատարելապէս մեռեալք յանձինս, և ներքոյ՝ 'ի զբաղանաց վերծք, կարող լինէաք զաստուածայինս խորհիլ, և զերկնայինն խոկմանց առնուլ ինչ ճաշակ : Մեծ խոչ խափանարար այն է . զի չեմք 'ի կրից և 'ի ցանկութեանց վերծք . և ո՛չ ը̃ ուե̃ց շաւիղ գնալ կամիմք անվրէպ : Եթէ դոյզն միշտ ընդ առաջ լինի, անդէն վաղվաղակի լքանիմք, և 'ի մարդկային մխիթարութիս բերիմք :

Ը . Եթէ ջանայաք որպէս քաջք՝ պինդ կալ 'ի մարտի . տեսանէաք արդեօք զտեառն օգնութիւն յերկնից 'ի մեզ հասեալ : Զի նա ինքն քաջամարտից և 'ի շնորհս իւր յուսացելոց՝ պատրաստ է օգնել . որ առաջի առնէ մեզ առիթս մարտի, զի յաղթեսցուք : Եթէ միայն յարտաքին պահպանութիս կանոնաց դնեմք զյառաջադիմութն կրօնաւորութե, փութով շիջցի մեր ե-

ռանդն : Այլ զտապարն առ արմինս դիցուք, զի մաքրեալք 'ի կրից՝ խաղաղական միտս ստասցուք :

Է . Եթէ ամ յամէ զմի 'ի մոլութեանց խլէաք , վաղվաղակի լեալ էաք արք կատարեալք : Բայց արդ բազում անգամ զհակառակն տեսանեմք . զի լաւագոյնս և մաքրագոյնս գտանեմք ըզմեզ 'ի սկզբան դարձի, քան յետ բազմամեայ ուխտադրութեն : Պարտ էր եռանդանն և յառաջադիմութե օրը̅օրէ առաւելուլ . այլ այժմ մեծ իմն համարի , եթէ ոք զառաջնոյ եռանդանն զմասն ինչ յանձին ունիցի : Եթէ առփոքր մի բռնադատէաք զանձինս 'ի սկզբան , ապա զամ̃ կարող էաք առնել հեշտեաւ և խնդութ̅ :

Ը . Ծանր է զսովորականսն թողուլ . այլ ծանրագոյն է՝ ը̅դդէմ կամաց իւրոց գնալ: Արդ՝ թէ չես յաղթող 'ի փոքունս և 'ի թեթևս , զիա՞րդ յաղթեսցես 'ի դժուարինս : 'Ի սկզբան անդ լե՛ր դիմակալ քում յօժարութե , և կասե՛ր 'ի չար սովորութէ . զի մի՛ առփոքր փոքր արկցէ զքեզ յառաւել դժուարութի : Եթէ գիտէիր, թէ քանի՞ խաղաղութի գործէր քեզ՝ և այլոց խնդութի՝ անձինդ բարեկրութի ,

հարցեմ ժրագոյն լինէիր 'ի փոյթ հոգևոր յառաջադիմութեան ։

---

## Գ Լ. ԺԲ։

### Յաղագս օգտի վշտաց.

ԺԱ. Բարի է մեզ՝ ունել երբեմն ծանրութիւնս ինչ, և ընդդիմութիւնս. քանի բազում անգամ յիշեցուցանեն մարդոյ զհետ՝ թէ յաքսորս է, և չդնել զյոյս իւր յաշխարհս ։ Բարի է մեզ՝ կրել երբեմն հակառակութիւնս, և զի խորհեսցին զմէնջ չարիս և անկատարութիւնս. թէ պէտ և բարի լիցին մեր գործք և խորհուրդք ։ Օգնեն մեզ յոլովակի խոնարհութեան, և 'ի ունայնափառութենէ պաշտպանեն զմեզ ։ Զի յայնժամ լաւ ևս աստուածն լինիմք 'ի ներքին մեր վկայ յանձ, յորժամ արտաքոյ 'ի մարդկանէ անարգիմք, և չեն զմէնջ 'ի բարի կարծիս ։

ԺԲ. Վասն պարտ էր մարդոյ քաջայայտ լինել յանձ, մինչ ոչ պիտոյանայ նմա 'ի խնդիր լինել մարդկային մխիթարութեանց ։ Այր բարեսէր՝ յորժամ նեղի կամ փորձի, կամ 'ի չար խորհրդոց տա_

ռապի, յայնժամ առաւել իմանայ, թէ պէտս ունի ա̃յ օգնականութեան · առանց որոյ տկարանայ առ ա̃մ բարի : Յայնժամ տրտմի, հեծէ, և յաղօթս կանխէ վ̃ա թշուառութեանց՝ զորս կրէ : Յայնժամ ձանձրանայ լինելն նմա երկար կեանք, և անձկայ մահու · զի լուծեալ 'ի մարմնոյ՝ ընդ ք̃ի լիցի : Եւ յայնժամ խելամուտ լինի թէ կատարեալ ապահովութիւն և լիութիւն խաղաղութեան չիք ուրեք յշ̃խի :

---

## Գ. Լ. ԺԳ.

### Յաղագս հակառակ կալոյ փորձութեանց :

Ա. Որչափ յաշխարհի եմք, առանց նեղութեան և փորձութեան լինել ոչ կարեմք : Ուստի ասէ յոբ · ո̃չ ապաքէն փորձութիւն են վարք մարդոյ 'ի վ̃ր երկրի : Վ̃ն ա̃մ ոք զգուշաւոր լիցի 'ի փորձութիւնս իւր, և արթնեսցի յաղօթս · զի մի՝ պատրողութեան տեղի գտցէ սատանայ · որ ոչ երբէք ննջէ · այլ շրջի և խնդրէ, թէ զո՛ կլանիցէ : Ոչ ոք այնպէս կատարեալ և ս̃ր, որ չունիցի երբեմն փորձութիւնս · և բոլորովին զերծ

լինել յայնց անհնար է մեզ։

ը̃. Բայց փորձութիւնք բազում անգամ օգուտ են յոյժ մարդոյ, թէպէտ և նեղացուցիչ իցեն և ծանր. զի նոքօք խոնարհի մարդ, և մաքրի, և խրատի։ Ա՟մ սր̃ք ընդ բազում նեղութիւնս և փորձութիւնս անցին, և օգտեցան։ Եւ որք փորձութ̃եց համբերել ոչ կարացին, անարգեցան, և յետնեալ գտան։ Չի՛ք կրօն այնպէս սր̃բ, և ոչ տեղի այնպէս անքոյթ, ուր ոչ իցեն փորձութիւնք կամ վիշտք։

թ̃. Չէ մարդ բոլորովին աներկեան ՚ի փորձութ̃եց՝ ցորչափ կենդանի է. զի ՚ի ներքս ՚ի մեզ է՝ ուստի փորձիմք, որովհետև ցանկութ̃բ ծնաք։ Ընդ մեկնիլ միոյ փորձութ̃ե կամ նեղութ̃ե՝ միւս ՚ի վր̃ գայ. և միշտ ունիմք կրել ինչ. զի զբարին երջանկութ̃ե մերոյ կորուսաք։ Բազումք խնդրեն փախչիլ ՚ի փորձութ̃եց, և ծանրագոյնս անկանին ՚ի նոյնս։ Փախստեամբ լոկով յաղթել ոչ զօրեմք. այլ համբերութ̃բ և ճշմարիտ խոնարհութ̃բ առ ա՟մ թշնամիս արիանամք։

ժ̃. Որ ոք միայն վերիվերոյ խորշի, և ոչ խլէ արմատաքի, ոչինչ օգտի. նա՝ վաղագոյն ևս դառնան ՚ի նա փորձու-

ձուէք, և չար ևս լինի ։ Ա՛ռ փոքր փոքր՝ և երկայնամիտ համբերութ՟բ (յաջողելով ա՟ծ) լաւագոյն յաղթես, քան բոլոր խստու՟թ և ապաժոյժ նեղսրտու՟թ ։ Խնդրեա՛ սակայ խորհուրդ 'ի փորձուե ։ և է՟ փորձանաւորի մի՛ խստիւ՛ գնար, այլ քաջալերեա՛ զնա, որ՟պ կամէիր, թէ առնէին է՟ քեզ ։

Է. Սկիզբն ա՟մ փորձութեց չարաց՝ է յողդողդուն միտս, և թերայոյս լինել յա՟ծ ։ Զի որ՟պ նաւ անղեակ յայսկոյս յայնկոյս յալեաց ծփի. նոյնպէս այր թոյլ և յառաջադրութես իւր մեղկ, բազմօրինակ փորձի ։ Հուր փորձէ զերկաթ, և փորձութի զայր արդար ։ Բազում անգամ ոչ ճանաչեմք զկար մեր. այլ փորձութի յայտնէ թէ զի՛նչ եմք ։ Սակայն արթուն կալ պարտ է՛ մանաւանդ 'ի սկզբան անդ փորձութե. զի յայնժամ դիւրագոյն յաղթի թշնամին, յորժամ մտանել անդամ ընդ դուռն մտաց չներեմք. այլ անդէն առ սեամն 'ի բաղխել զդուրս, ընդդէմ ելանեմք ։ Վ՟ո որոյ ասաց ոմն ։

Կա՛յ հակառակ դու 'ի սկզբան,
զի պատրաստին դեղք անադան.
այն ինչ յերկար դանդաղանօք,
սաստք զօրացեալ՝ ծանրին չարեօք ։

Քանզի զառաջինն ընդ առաջ լինի մտաց սակս մտածութեն · ապա սաստիկ երեւակայութեն · ապա բերկրութն, և թէւր շարժումն, և հաւանութն : Եւ այնպէս փոքր փոքր գլխովին 'ի ներքս մտանէ չար թշնամին, յարժամ ոչ 'ի գլխի հարկանիմք նմա 'ի սկզբան : Եւ որչափ յերկարագոյն զանգաղի որք ընդ դէմ ունել, այնչափ օրըստօրէ յինքեան տկարանայ, և թշնամին 'ի վերայ նոր զօրանայ :

Զ. Ոմանք 'ի սկզբան դարձի իւրեանց՝ ծանունս կրեն փորձութիս, և ոմանք 'ի կենքն : Իսկ ոմանք գրեթէ յամ կեանս իւրեանց տառապին · և ոմանք մեղմ փորձին · իւրաքանչիւր ըստ խնամութն և ըստ ուղղութեն անձոյին կարգաւորութե, որ զկշռեալ և զարդիւնս մտրկան կշռէ, և զամ 'ի փրկութն ընտրելոց իւրոց նախակարգէ :

Է. Մինչ ոչ է պարտ մեզ յուսահատել 'ի փորձիլ մերում · այլ ջերմագոյն եւ աղաչել զած, զի օգնական մեզ լիցի յամ նեղութիս · որ ըստ ասելոյն պօղոսի՝ արասցէ ընդ փորձութեն և ելս, զի համբերել կարասցուք : Ապա խոնարհեսցուք զանձինս մեր ընդ ձեռամբ այ յամ փորձութիս և 'ի վիշտս ·

զի

զի զխոնարհս հոգւով կեցուցանէ, և բարձր առնէ ։

ԺԲ. 'Ի փորձութեան և 'ի վիշտս փորձի մարդ, թէ որչափ ինչ օգտեցաւ. և յայնս առաւելուն արդիւնք, և լաւ ևս երևին առաքինութիք ։ Զի ինչ մեծ ջերմ լինել մարդոյ և եռանդնոտ, յորժամ չզգայ ինչ ծանրութիւն. այլ եթէ 'ի ժամանակի վշտաց համբերութեամբ տանի, կայ յոյս մեծի օգտի ։ Ոմանք 'ի մեծամեծ փորձութեանց պահին. և 'ի փոքունս հանապազորեայս առեալ յաղթին. զի խոնարհեալք' մի՛ երբէք 'ի մեծամեծս յանձնապաստան լիցին, որ 'ի փոքունս տկարանան ։

---

## ԳԼ. ԺԴ. ։

### Յաղագս խորշելոյ 'ի յանդգնական դատաստանէ ։

ա. Զաչս 'ի քեզ դարձո՛. և զայլոց գործս զգոյշ լեր դատելոյ ։ 'Ի դատել զայլս' մարդ զուր ջանայ, յոլովակի սխալէ, և դիւրաւ մեղանչէ ։ Իսկ 'ի դատել և 'ի քննել զանձն' միշտ ջանք իւր են յօգուտ ։ Որպէս զիարդ են իրք 'ի

՚ի սիրտ մեր, ը̄ այնմ դատեմք զնմանէ
յոլովակի. զի ղուղիլ դատաստանն՝
առ առանձնական սիրոյ՝ դիւրաւ կո-
րուսանեմք: Եթէ առ ում էր յամի
բերումն ըղձից մերոց, ոչ այդպէս
վաղվաղակի խռովէաք ե̄ դիմադար-
ձուն կարծեաց մերոց:

ը̄. Բայց բազում անգամ դօղեալ կայ
ինչ ներքոյ, կամ ընթացակցի ինչ և
արտաքոյ, որ և զմեզ միահաղոյն ձգէ
զկնի: Բազումք ՚ի ծածուկ զանձինս
խնդրեն՝ յամի զոր առնեն, և ոչ իմա
նան: Թուի ինն և ՚ի բարւոք խաղա-
ղութե կալ, յորժամ յաջողեն իրք ըստ
կամս նոցա և ը̄ հաճոյս. ապա եթէ
այլ ազգ ինչ լինիցի քան զհաճոյս նո
ցա, անդէն վաղվաղակի խռովին և
տխրին: Առ պէսպիսութե մտաց և
կարծեաց յոլովակի ծագին երկպա-
ռակութիք ՚ի մէջ բարեկամաց և քաղա
քացեաց, ՚ի մէջ կրօնաւորաց, և ա-
ռաքինեաց:

թ̄. Սովորութե հնացեալ ոչ վաղվաղա
կի թողեալ լինի. և քան զիւր տե-
սութի և անդր՝ ոչոք մտադիւր բե-
րի: Եթէ կարի իմն ապաստան ես ՚ի
տրամաբանութե քո կամ ՚ի հանճար,
քան ՚ի հնազանդական առաքինութե

յն

'յն քն, ուր ուրեմն լիցիս այր լուսաւորեալ: Զի ոչ կամք այս են. հնազանդ լինել մեզ նմա յմի, և բորբոքեալ սիրով զանցանել զմն տրամաբանութբ:

---

## Գ Լ. ԺԵ:

### Յաղագս գործոց 'ի սիրոյ ելելոց:

ա. Վն աշխարհի իրողութեց և վն սիրոյ մարդկան չէ արժան առնել ինչ չար. բայց վն օգտի որոց պէտս ունին, երբեմն զբարի ինչ գործ կամաւ թողուլ կմ 'ի լաւ ևս փոխել արժան է: Զի 'ի լինել այսմ այսպէս, գործն բարի ոչ եղծի խանգարի, այլ 'ի լաւագոյն փոխարկի: Առանց սիրոյ արտաքին գործք ոչինչ օգտեն. իսկ որինչ 'ի սիրոյ լինի, որչափ և փոքր իցէ, և խոտան, գլխովին լինի շահեկան: Զի առաւել հայի այն 'ի սէրն որով ոք գործէ, քան 'ի գործն զոր առնէ:

բ. Բազում ինչ գործէ, որ շատ սիրէ: Բազում ինչ գործէ, որ զգործն բարւոք առնէ: Բարւոք գործէ, որ առաւել հնրկուն քան իւրոյ կամաց

ծա

ծառայէ: Բազում անգամ երեւի թէ
է՛ սէր. եւ է՛ առաւել մարմնասիրու_
թի՛ւն. զի բնաւոր յօժարութի, սեպհա_
կան կամք, յոյս հատուցման, եւ ա_
խորժակ անձնդիւրութեան՝ ուր ուրեմն
լինին 'ի բայց է:

Դ. Որ ունի զճշմարիտ եւ զկատարեալ
սէր, յոչինչ իրս խնդրէ զանձն. այլ
փառացն Այ միայն յամի լինել ըղձա_
նայ: Ոչ ումեք եւ նախանձի, զի ոչինչ
առանձնաւոր խնդութի սիրէ. եւ ոչ
ցնծալ յանձն, այլ յԱծ ըղձանայ երա_
նելի լինել, քան յամ բարութիս: Ոչ
ումեք ընծայէ ինչ բարի, այլ զամ
յԱծ վերաբերէ. յորմէ ամ յաղբերէ
յորդ դայ ամ. եւ յոր ամ սրբք ամ 'ի
վախճան զմայլմամբ հանգչին: Թէ ոք
կայծ մի ունէր ճշմարիտ սիրոյ, խմա_
նայր արդեօք, թէ երկրաւորքս ամ
լի են ունայնութբ:

---

Գ. Լ. ԺԶ:

Յաղագս համբերելոյ պակասութեանց այլոց:

Ա. Զորինչ ոչ յինքն կամ յայլս
ուղղել ակարանայ, համբերել ունի եր_
կայն

բնութեամբ, մինչև ոչ այլազգ ինչ անօրինեսցէ : Խորհեսցի, գուցէ այնպէս լուեալ իցէ՝ 'ի հանդէս համբերութե քոյ. առանց որոյ չեն ինչ արդոյ արդիւնք մեր : Բայց յայդպիսի ոմնառու խօսս աղաչեմ զքեզ՝ օգնական լինել քեզ. առ 'ի կարող լինելոյ տանիլ քաղցրութե :

Ը. Եթէ որ միանգամ կամ երկիցս խրատեալ՝ ոչ անսայ, մի կարեր ընդ նմա. այլ զնամ ույ յանձն արա. զի և զեղին կամք նր և պատիւ՝ յոմ ծառայս իւր. որ քաջ գիտէ զչարիս յեղափոխել 'ի բարին : Զնա երկիցնս միա լինել՝ 'ի տանիլ պակասութեց այլոց և որպիսի և իցէ տկարութեց. զի և քոյ կայ բազում ինչ, որոց այլք համբերել ունին : Եթէ չես ձեռնհաս առնել զքեզ, որպէս կամիս, զիարդ կարող լիցիս խոնարհել զայլս 'ի հաճոյս քո : Մտադիւր կամիմք, թէ այլք իցեն կատարեալք. բայց զմեր անկատարութիւս ոչ ուղղեմք :

Թ. Կամիմք թէ այլք խստիւ յանդիմանեսցին. և մեք յանդիմանիլ ոչ կամիմք : Անհաճոյ է յաչս մեր այլոց համարձակութի. բայց ոչ կամիմք, թէ զխնդիրն մեր խնդիրք : Կամիմք թէ

յայլս

յայլս պահեսցի խստութեն կանոնի. և մեք չառնումք յանձն՝ ընդ լծով լինել կանոնի: Ապա յայտ է թէ ո՛ւր ու-րեմն խորհիմք զընկերեն՝ որպէս զան-ձանց: Եթէ ամենեքին էին կատա-րեալք, զի՞նչ մնայր մեզ յայնժամ կրել

յայլոց վ̅ն ա̅յ:

Գ. Այլ արդ ա̅ծ այսպէս տնօրինեաց, զի ուսցուք զմիմեանց բեռն բառնալ. վ̅ն զի չիք ոք անարատ. չիք ոք ան-բեռն. չիք ոք ինքնաբաւ. չիք ոք ան-ձին լիով իմաստուն. այլ պարտ է մեզ զմիմեանս բառնալ. միմեամբք մխ-իթարիլ. միմեանց օգնել. զմիմեանս ուսուցանել և խրատել: Եւ թէ քանի՛ յառաջադէմ է ոք յառաքինու-թեն, լաւ ևս երևի յաւիթս վշտաց: Քանզի առիթք զմարդ ոչ տկարացու-ցանեն, այլ յայտ առնեն, թէ որպի-սի ոք է:

## Գլ. ԺԷ:

### Յաղագս միանձնական վարուց:

Ա. Ուսի՛ր զկամս քո 'ի բ̅զմս խորտա-կել. եթէ կամիս խաղաղութիւն և

միաբանութեն ընդ այլս ունել : Չէ՛ ինչ
փոքր՝ 'ի մենաստանս կամ 'ի ժողովս
եղբարց բնակել. և անդ անտրտունջ
գնալ, և մինչև 'ի մահ հաւատարիմ
մնալ: Երանի՛ այնմ՝ որ անտանօր բայց
ւոք քաղաքավարի, և բարեաւ զըն_
թացն կատարէ : Եթէ կամիս ըստ
արժանեաց կեալ՝ և զարդանալ, կա՛լ
զքեզ որպէս վտարանդի պանդուխտ
'ի վերայ երկրի : Լե՛ր յիմար վասն
քո՛, եթէ կամիս կեանս վարել կրօ_
նաւորի :

Է. Սքեմ, և հերակարութեն ինչ ոչ
օգտեն. այլ փոփոխութեն վարուց և
կտրել մոռելութեն ախտից առնեն ճշմա
րիտ կրօնաւոր : Որ զայլ ինչ խնդրէ,
և ոչ զմեծ միայն, և զհոգւոյ խորոյ
փրկութեն, ոչինչ գտանէ, բայց նեղու_
թիւն և վիշտ : Չէ հնար և ճերկար
կալ 'ի խաղաղութե այնմ՝ որ ոչ ջանայ
լինել կրտսեր, և տրուպ քան զամե_
նեսեան :

Ը. 'Ի ծառայութե եկիր, և ո՛չ յառաջ_
նորդութե. 'ի համբերութե և յաշխա_
տութե կոչեցար, և ոչ 'ի դատարկու_
թե, և 'ի շատախօսութե : Ապա աստ
փորձին մարդիկ, որ̄ ոսկի 'ի բովս :
Աստ ոչ ոք կարող է կալ, եթէ ոչ

յամենայն սրտէ յօժարեցի խոնար_ հել զանձն մն այ :

## Գ Լ . ԺԸ :

### Յաղագս օրինակաց սրբոց հարց :

Ա . Հայեաց 'ի կենդանի օրինակս սրբոց հարց , յորս փայլեցին ճշմարիտ կատա րելութի և կրօնաւորութի . և տեսցես , ո՞չ դուզնաքեայ իմն է՝ և չնչին , զոր մեքս առնեմք : Բաբէ , զի՞նչ են վարք մեր՝ առ վարուք նց : Սրբք և սիրելիք քսի ծառայեցին տն 'ի քաղց և 'ի ծա_ րաւ , 'ի ցուրտ և 'ի մերկութի , 'ի վաս տակս և յաշխատութիւնս , 'ի հսկմունս և 'ի պահս , յաղօթս և 'ի սուրբ խոկ_ մունս , 'ի հալածանս և 'ի նախատինս բազումս :

Բ . Ո՛վ , ո՞րչափ բազմց և ծանրունց նեղու_ թեանց համբերեցին առաքեալք , մար_ տիրոսք , խոստովանողք , կուսանք , և այլք ամենեքին՝ որք զքի շաւղաց յօժարեցան երթալ զհետ : Քանզի զանձինս իւրեանց յաշխարհի աստ ա_ տեցին , զի 'ի յաւիտենական կեանս ժառանգեսցեն զնս : Ո՛վ , ո՞րչափ խիստ և-

և հրաժարական կնանս մարեցին ընդ հարբ յանապատի ․ քանի՞ երկար և ծանր փորձութեանց տարան ․ ո՞րպ յողովակէ 'ի թշնամւոյն տանջեցան ․ ո՞րպ տոկել և ջերմեռանդն աղօթս առ ած մատուցին ․ ո՞րպէս խստամբեր ճգանց տարան ․ ո՞րպ մեծ նախանձ և եռանդն առ հոգևոր յառաջադիմութին ստացան ․ ո՞րպէս սաստիկ պատերազմաւ զախտս նուաճեցին ․ ո՞րպ ընդ և ուղիղ դիտաւորութին առ ած կալան յանձինս ։ 'Ի տուէ 'ի ձեռագործս վաստակէին , և 'ի գիշերի ը̃ երկար յաղօթս պարապէին ․ թէպէտ և 'ի ձեռագործել իսկ՝ 'ի մտաւոր աղօթից ոչ դադարէին ։

Է̃ ․ Զամ ժամանակս ծախէին յօգուտ ․ ամ ժամ պարապելոյ յած՝ թուէր նց տուղ ։ Եւ առ մեծի քաղցրուն խոկման՝ մոռանային և զպէտս մարմնաւոր կերակրոյ ։ Յամ մեծուէ 'ի փառաց և 'ի պատուոյ , 'ի բարեկամաց և յազգայնոց հրաժարեալ կային ․ ոչ ինչ յՆէ ըղձանային ունել ․ հազիւ թէ զպէտս կենաց առնուին ․ իսկ մարմնոյ ծառայել և 'ի կարևորս՝ ծանր էր նց ։ Այս աղքատք էին յերկրաւոր ինչս , այլ մեծատունք յոյժ 'ի շնորհս և յա

ռաքինութեան ։ Արտաքոյ չքաւորք էին . այլ ներքոյ մեծային շնորհօք և մխիթարութբ լցեալք ։

Դ. Օտարք էին յաշխարհէ . այլ ոչ մօտաւոր և մտերիմ բարեկամք ։ Յաչս անձանց թուէին ոչինչ, և յաչս աշխարհի արհամարհք . այլ յաչս Այ էին պատուականք և սիրելիք ։ ՚Ի ճշմարիտ խոնարհութեն կային . միամիտ հնազանդութբ վարէին . սիրով և համբերութբ գնային ։ Վնկ օրըստօրէ հոգւով զարգանային, և մեծամեծ շնորհս առ յԱյ ընդունէին ։ Տուան յօրինակ ամ կրօնաւորաց . որք առաւել յորդորելոց են զմեզ առ բարւոք յառաջադիմութի, քան զաղջացելոց բազմութիւնք ՚ի ցոփութիւն ։

Ե. Ո՜վ, քանի՜ եռանդն էր ամ կրօնաւորաց՝ ՚ի սկիզբն ոց կարգաց իւրեանց ։ Քանի՜ իղձ աղօթից . քանի՜ նախանձ առաքինութեն . ո՜ր առաւել բոյր բարեկարգութեն . քանի՜ յարգ և հնազանդութի է կանոնաւ վարժապետի՝ ծաղկեաց յամենեսին ։ Վկայ են արդ և ս հետք շաւղաց նց, թէ արդարև ոք էին և կատարեալք . որք այնպէս արիաբար պնդմեալ՝ յաղթեցին աշխի ։ Եւ այժմ ձեր ոմն համարի ,

քեր, թէ որ չեղև օրինաւորանց · թէ որ վշտաց եկեղեց՝ համբերութ. ժուժել կարաց :

Դ. Ո՛վ գաղջութե և հեղգութե վիճակի մերոյ · որ այդպէս վաղվաղակի հոժանեալք 'ի նախնի եռանդնէ · և տաղտկանեալք 'ի կենաց առ. մեղկութեան և գաղջութե : Երանի՛ թէ ոչ ննջէր երբէք 'ի քեզ յառաջադիմութ առաքինութեց , որ բազումս բազում անգամ տեսեր օրինակս առաքինեաց ·

## Գ. Լ. ԺԹ :

### Յաղագս կրթութեանց բարւոյ կրօնաւորի :

Ա. Պարտ է վարուց բարւոյ կրօնաւորի ամ առաքինութ. լինել զարդարեալ · մինչև այնպէսի լինել նմա ներքոյ , որպէս երևի մարդկան արտաքոյ : Նա՛ առաւել պարտ է լինել ներքոյ , քան զերևելին արտաքոյ · զի արտատես մեր ած է , յորմէ մեծապէս պատկառել ունիմք , ուր և իցեմք · և որպ՝ հրեշտակս առաջի նր գնալ սրբութբ : Օրըստօրէ նորոգել պարտ է մեզ զառաջադրութի մեր , և յե֊

տանդն զմեզ զարթուցանել. որպէս թէ այն օր լիցէ սկիզբն դարձի մերոյ. և ասել: Օգնեա ինձ տր 'ի բարւոք առաջադրութեանս, և 'ի սբ ծառայութե քում. և տուր ինձ յայսմ օրէ կատարելապէս սկիզբն առնել. զի զոր մինչև ցարդ գործեցի, չէ ինչ է. Ըստ առաջադրութեան մերոյ են ընթացք յառաջադիմութեան մերոյ. և բազում փութոյ պէտք են այնմ, որ քաջ զառաջանալ կամիցի: Զի թէ որ արիաբար առաջադրէ, բզմ անգամ կասի, զինչ այնմ լինիցի, որ ուրուրեմն կմ հարևանցի առաջադրէ ինչ: Բայց բազմօրինակ պատահէ մեզ կասել 'ի մերմէ առաջադրութենէ. և դոյզն զանցառութիւն կրթութեանց չանցանէ առանց ինչ վնասու: Արդարոց առաջադրութի առաւել հաստատեալ է 'ի շնորհս այ, քան յիւրեանց իմաստութիւն. յորև ապաւինին միշտ, յինչ և ձեռնարկեն: Քանզի մարդ առաջադրէ. այլ այծ է որ տնօրինէ. և չեն ին մարդկան ճանապարհք նր:

Դ: Եթէ վասն բարեպաշտութե և 'ի սակս օգտի եղբօրն' զանց լիցի երբեմն զսովորական կրթութեամբ, դիւրին

րին է պկնել. լնուլ զթերթին : Բայց ե-
թէ առ տաղտկութեն սրտի , և առ-
հեղգութեն թողցի դիւրաւ , ընդիւծ
մեծ է , և մնաս գործի : 'Ի ջանալ խոկ
յում զօրութեն , դեռ դիւրաւ 'ի բա-
ղումս գտանիմք յետնեալ : Բայց և
այնպէս յում ժամ պարտ է մեզ առա-
ջադրել ինչ , մանաւանդ ընդէմ այնց ,
որք առաւել խոչ են մեզ : Զարտա-
քինս մեր՝ միանգամայն և զներքինս՝
քննեսցուք և կարգեսցուք . զի եր-
կաքանչիւրն օգուտ են առ յառաջա-
դիմութի :

Է . Թէ չես ձեռնհաս անդադար ըզ-
քեզ ժողովել , գէթ երբեմն , գէթ
միանգամ յաւուրն՝ ը առաւօտս կամ
ընդ երեկս : Առաւօտուն առաջա-
դրեա . ընդ երեկս քննեա զվարս քո ,
թէ զինարդ անցուցեր զայն օր 'ի բանս
'ի գործս և 'ի խորհուրդս . զուցէ
բազում անգամ յանցեար յայնս յոծ
և յընկերդ : Պնտեա զմէջս քո որպէս
այր զօրութեն ընդդէմ բանսարկուին
պատրանաց . սանձեա զորկորդ . և
զնմ մարմնական յօժարուն դիւրաւ
սանձեսցես : Մի՛ երբէք կացցես
բնաւ դատարկ . այլ կամ ընթերցի՛ր ,
կամ գրեա , կամ աղօթեա , կամ խո-

կօ , կամ գործեամ ինչ առ հ̃րկաւոր օգուտ ։ Բայց զմարմնաւոր աշխատութիւն ընտրողութ̃ պարտ է առնել . և չէ արժան ամենեցուն միօրինակ յայնս ձեռնարկել ։

Ե . Որինչ ոչ է հ̃րկք , մի ցուցաներ արտաքոյ . զի առանձնականք 'ի ծածուկ առաւել աներկեան գործին ։ Բայց զգուշ լեր չլինիլ հեղգ առ հ̃րակայն և փոյթ առ առանձնականսն . այլ երբե կատարեսցես լիով և հաւատարմութ̃ զպարտս , և որինչ մնկ է քեզ , եթէ դեռ կայցէ ժամանակ պարապոյ , յաւել և զքոյն ը̃ ըղձից եռանդեան քոյ ։ Ոչ ամենեցուն է պատշաճօղ մի և նոյն կրթութ̃ . այլ ումն այսմ և ումն այնմ է առաւել ճահողական ։ Այլ և ը̃ պատշաճի ժամանակին կրթութի քան զկրթութի ընտրելագոյն լինի . զի են' որք 'ի տօնս , և են' որք յաւուրս արդոյ յաւէտ քաղցր ճաշակեն ։ Են , որք պիտին 'ի ժամանակի փորձութե , և են' որք 'ի խաղաղութե և 'ի հանդստեան ։ Են' զորս մտաղիւր խորհիմք , յորժամ եմք 'ի տրտմութե . և են' զորս , յորժամ ուրախ եմք 'ի տր̃ ։

Զ . Յերեկելի տօնս նորոգել պարտ է

զբա-

զբարիոք կրթութիւն, և զմեզ օգնական
նութեան քերմագոյն մաղթել: Տօնէ 'ի
տօն պարտ է մեզ առաջադրել ինչ,
որպէս թէ յայնժամ համբերձեալ իցեմք
յաշխարհէ աստի փոխիլ, և յանանց
տօնախմբութիւն ժամանել: Վասն փու-
թոյ պնդութեան պատրաստել ունիմք
զանձինս 'ի հանդիսի աւուրս. և ա-
ւաքինագոյն վարս յանձին բերել.
և զամ պահպանութիւն զգուշագոյն
պահել. որպէս թէ ակն ունելով է
հուպ զվարձս վաստակոց մերոց առ-
յոյ է ունիլ:

Ջ. Եւ թէ յապաղեսցէ, համբերես-
ցուք զանձինս դեռ անպատրաստս և
անարժանս մեծի փառացն, որք յայտ
նելոց են 'ի մեզ 'ի դէպ ժամանակի.
և ջանասցուք լաւ ևս պատրաստել
զմեզ յելս: Երանի՛ իցէ ծառայիցն
այնոցիկ, (ասէ Տէր յաւետարանին զու-
գասու,) զորս եկեալ տէրն գտցէ ար-
թունս. ամէն ասեմ ձեզ, զի 'ի վե-
րայ ընչից իւրոց կացուսցէ զնոսա:

## Գ Լ. Ի :

### Յաղագս սիրոյ առանձնութեան և լռութեան :

Ա. Խնդրեա՛ դէպ ժամանակ միագնելոյ անձին. և զայ առ քեզ երախտիս ածէպ խոկա՛ : Թող զընդվայրաքննինս, և ընթերցի՛ր զայնպիսի գիրս, որ ապաշաւ 'ի քեզ բերեն, և ոչ ըզբօսանս : Թէ անձնապահ լինիս յաւելորդ զրուցաց, և յունայն շրջագնացութէ, և 'ի նորանոր լրոց, գտցես բաւական ժամանակ պարապոյ' 'ի բարի խորհուրդս պատաղելոյ : Մեծամեծք 'ի սրբոց խորշէին ըստ կարի 'ի մարդկան կենցաղավարութէ. և ընտրէին ծառայել այ 'ի ծածուկ :

Բ. Ասաց ոմն. քանիցս անգամ եղէ 'ի մէջ մարդկան, դարձայ անուոր նուազեալ : Զսորա յոլովակի առնումք ըզչափ, յորժամ յերկար զբանիւք անկանիմք : Դիւրին է ամենևին լռել, քան չափաւոր խօսիլ : Դիւրին է առտնին դադարել, քան արտաքոյ ըստ արժանեաց անձնապահ լինել : Այս որ կամի 'ի ներքինս և 'ի հոգևորականս ժա

ժամանել, պարտ է նմա Ը. յն խոյս տալ յամբոխէ ։ Ոչ որ անքոյթ երևի, բայց որ մտադիւր լռեսցի ։ Ոչ որ անքոյթ խօսի, բայց որ մտադիւր լռէ ։ Ոչ որ անքոյթ իշխէ, բայց որ մտադիւր հպատակի ։ Ոչ որ անքոյթ հրամայէ, բայց որ գիտաց բարւոք հնազանդիլ ։

Է. Ոչ որ աներկեան խնդայ, բայց որ զբարւոք խղճի մտաց վկայութիւն յանձին ունիցի ։ Բայց սրբոցն աներկեանութիւն լի եղև միշտ երկիւղիւն. ։ Եւ ոչ նուազեաց նոցա փոյթ և խոնարհութիւն, վս մեծամեծ առաքինութեանց և շնորհաց երևելոց 'ի նս ։ Իսկ թիւրելոց աներկեանութիւն 'ի հպարտութիւն և 'ի յանդգնութիւն գայ յառաջ, և յանգի 'ի պատրանս անձին ։ Մի՛ երբեք խոստանար քեզ աներկեանութիւն յաւուրս կենաց, թէպէտ և թուիցիս յաւէտ անձին բարեկիր վանական, կմ փոյթեռանդն անապատաւոր ։

Ը. Բազում անգամ ընտիրքն յաչս մարդկան ծանրագոյն վտանգեցան վս կարի իմն յանձնապաստանութեան ։ Վասն այսորիկ լաւ է բազմաց՝ չլինել ամենևին զերծ 'ի փորձութեանց, այլ լինել 'ի սակաւ ծգուանս մարտի ։ զի մի՛ կա-

քի իմն անհոգացոյին. գուցէ ամբարտաւանութեամբ փքացոյն. կամ յարտաքին մխիթարութիւն համարձակ խոստովեսցին: Ով, քանի՜ բարիոք խիղճ մտաց յանձին հաստատէր, որ ոչ երբեք անցաւոր ուրախութիւն լինէր 'ի խնդիր, և ոչ երբէք յաշխարհայինս զբաղէր: Քանի՜ խաղաղութի և հանդիստ ժառանգէր, որ զամ սնոտի հոգս 'ի բաց հատանէր. և զփրկականս և զածայինս միայն խորհէր. և զամ յոյս իւր դնէր յած:

Ը. Ոչոք արժանի է երկնային մխիթարութեան, եթէ ոչ 'ի սբ զղջութեն տացէ զանձն: Եթէ կամիս զսիրտ 'ի սըրտի ունել, մուտ 'ի սենեակ քո. և փակեա զդուրս առ աշխարհայինս աղմուկս. որպէս և գրեալ է. յանկողինս ձեր զղջացարուք: 'Ի սենեկի գտցես, զոր յոլով արտաքոյ յորդորակի կորուսեր: 'Ի սենեկի դադարել՝ քաղցր է, և արտաքոյ նոր գեգերանք՝ բերեն տաղտկութիւն: Եթէ 'ի սկզբան դարձի քո ստէպ բնակեսցես և պատսպարիս 'ի նմա, լինի քեզ յետոյ հեշտ մտերիմ սիրելի, և սփոփանս հաճոյական.

Թ. 'Ի լռութեան և 'ի հանդարտութեան յառաջեայ փութեռանդն ոգի. և ուսանի

զխոր

զխորհուրդս մե՛ր գրոց ։ Անդ գտանէ աղբիւրս արտասուաց, որովք զնմ գիշեր լուանայ զանձն և մաքրէ ։ և արարչի ի բում այնչափ ընտանենայ, որչափ առաւել յնմ Ցակեան աղմկէ օտարանայ ։ Ապա որ 'ի բաց կայ 'ի ծանօթից և 'ի բարեկամաց, առ այնպիսին մերձի ած ընդ՝ սբց հրեշտակաց ։ Լաւ է մենանալ, և վս անձին հոգալ, քան զանձնէ անփոյթ լեալ, նշանս գործել ։ Գովելի է կրօնաւորի ուր ուրեմն արտաքս ելանել, խորշել յերևելոյ մարդկան, և ոչ կամիլ տեսանել զմարդիկ ։

Է. Զի՞ է քեզ տեսանել, զոր չէ արժան ստանալ ։ Անցանէ Ցօ, և ցանկալի նո ։ Զգեն զգայական խղձք 'ի զբօսանս ։ այլ յանցանել ժամուն զինչ մնայ քեզ, բայց ծանրուն խղճի, և ցրումն մտաց ։ Որպէս ելք յոլովակի տխուր դարձ գործեն ։ և խնդամիտ հսկումն երեկոյի, տխուր առաւօտ բերէ ։ Այսպէս ամ մարմնաւոր խնդութ անոյշ մտանէ, այլ 'ի վախճանի խայթէ և սպանանէ ։ Զինչ այլուր կարող ես տեսանել, զոր չտեսանես 'ի սենեկի ։ Ահա երկինք և երկիր, և ամ տարերքը ։ զի 'ի սոցանէ եղև ամ ։

Ը.

Է. Զինչ ուրեք տեսանիցես՝ յեր-
կարատև ընդ արեգակամբ։ Կարծի-
ցե՞ս թերևս յագենալ. այլ չիք քեզ
այդմ ժամանել։ Եթէ զա̄մ պատկերս
տեսանէիր, զինչ էր՝ թէ ոչ տեսիլ
ունայն։ Ամբարձ զաչս քո 'ի բար-
ձունս առ ա̄ծ, և կաց յաղօթս վս̄
մեղաց քոց, և հեղգութեց։ Թող ըզ-
ունայնս ունայնոց. և դու մի՛տ դիր
ինձ, զոր հրամայէ քեզ ա̄ծ։ Փակեա՛
'ի վր̄ քոյ զդուրս քո, և կարդա՛ զսի-
րելիդ քո զյս̄։ Կա՛ց ը̄ նմա 'ի սենե-
կի. զի չիք գտանել այլուր խաղաղութի
այդպիսի։ Թէ չէիր ելեալ արտաքս,
և լուեալ շփոթս, լաւ ևս մնայեիր
'ի խաղաղութե̄։ Յորժամ ախորժես
լսել նորալուրս, Յայս քեզ վս̄ այնր
կրել մտաց ամբոխմունս։

## Գ Լ. ԻԱ.

### Յաղագս զղջման սրտի.

Ա. Եթէ կամիս օգտիլ ինչ, պահեա՛
զքեզ յերկիւղ ա̄ծ։ Եւ մի՛ լինիր կարի
իմն համարձակ. այլ ըստ կանոնաց
զուսպ կալ զա̄մ զքո զգայարանս. և

մի՛

մի տար զանձն յուրախութիւն որ ոչ վայելէ ։ Տո՛ւր զքեզ 'ի զղջումն սրտի, և գտցես եռանդն ։ Զղջումն յայտնէ բարութիւնս բ̃զմս, զորս ցոփումն վաղ կորուսանէ ։ Զարմանք են, թէ զիարդ հնար է մարդոյ խնդալից լինել յաստի կեանս, որ զմտաւ ածէ զիւր աքսորանս, և զհոգւոյ իւրոյ բազմապատիկ վտանգս ։

Ծ̃. Առ թեթևութիւն սրտի, և առ անփոյթ լինելոյ զպակասութեանց մերոց, չիմանամք զաղէտս հոգւոյ մերոյ. այլ յոլովակի վայրապար ծիծաղիմք, ուր յիրաւի էր մեզ լալ ։ Ոչ իք ճշմարիտ ազատութիւն, և ոչ գեղեցիկ ուրախութիւն, բայց յերկիւղի ա̃յ, և 'ի բարւոք խիղճ մտաց ։ Երանի՜, որ մերժէ յանձնէ զա̃մ խոչ զբաղական, և միտ դնէ ս̃բ զղջումն ։ Երանի, որ հրաժարէ յա̃մ ինչ՝ որ զխիղճ իւր արատէ, կամ ծանրաբեռնէ ։ Մարտի՛ր քաջութ̃բ. զի սովորութիւն սովորութ̃բ յաղթի ։ Եթէ թողուս դու զմարդիկ, և ն̃ք թողցուսցեն քեզ՝ անսալ գործոց քոց ։

Ծ̃Ա. Մի՛ առարկաներ 'ի քեզ զայլոց իրողութիւնս, և մի՛ մղեր զանձն 'ի դատս մեծամեծաց ։ Կա՛լ յա̃մի զաչս 'ի վերայ քո, և լե՛ր յաւէտ խրատտու անձին

քում

քան սիրելեաց քոց : Եթէ չես 'ի շնորհս մարդկան , մի՛ տրտմիր վասն այդր. այլ այն եղիցի քեզ ծանր , եթէ չիցես բարեկիր և զգաստ 'ի գընացս , որպ՟ վայելէ այ՟ ծռ՟յի , և փոյթեռանդն կրօնաւորի : Լաւ է , և ապահովագոյն՝ չունել մարդոյ մխիթարութիւն բազում յաստի կեանս , մանաւանդ զմարմնականս : Բայց թէ վրէպ եմք յա՟ծայնոցն , կամ ուր ուրեմն առնումք զնոցին ճաշակ , մեր են յանցանք . փոխանակ զի զկիղջ սրտի ոչ խնդրեմք , և զսնոտիսն և զարտաքինս ոչ իսպառ մերժեմք 'ի բաց :

Է. Մի՛ համարիր զանձն արժանաւոր ա՟ծային մխիթարութեան , այլ յաւէտ արժանի բազում նեղութե՟ : Առն զղջականի ծանր և դառն է ա՟շխ : Այր բարի շատ նիւթ գտանէ ցաւոց և լալոյ : Զի եթէ յանձն հայի , և եթէ յընկերն , 'ի միտ առնու , թէ չկայ ոք յ՟ի աստ առանց նեղութե՟ . և ո՟ զգուշագոյն քննութե՟ անձին , առաւելուն 'ի նա ցաւք : Նիւթ արդար ցաւոց և ներքին զղջութե՟՝ են մեղք և մոլութիւնք մեր . յորս այնպէս շաղեալ գնիմք , մինչև հազիւ նկատել մեզ զերկնաւորս :

Է.

Ե. Թէ սակաւ խորհէիր զմահուանէ քումմէ, քան զերկարութէ կենաց, եռանդագոյնս արդեօք ուղղէիր ըզքեզ: Եւ թէ զհանդերձեալ պատժոց դժոխոց կամ քաւարանի մտախորհ լինէիր, մտադիւրագոյն արդեօք տանէիր վաստակոց և ցաւոց. և ոչ 'ի խստութէ ինչ զանգիտէիր: Բայց քան զի ոչ ը̄մտանեն ա̄ք 'ի սիրտ մեր, և դեռ սիրեմք զհրապոյրս, վա̄ այնորիկ կամք մնամք ցուրտք և հեղգացեալք:

Է. Բազում անգամ 'ի կարճմտութէ է այն, զի է̄ փոյթ տառապեալ մարմինն տրտնջէ: Արդ դու խոնարհութբ̄ խնդրեա՛ 'ի տ̄նէ, զի տացէ քեզ ոգի զղջման, և ասա՛ է̄ մարգարէին: Ջամբեա՛ ինձ տ̄ր, հաց արտասուաց, և արբո՛ ինձ արտասուս չափով:

---

## ԳԼ. ԻԲ.

Յաղագս խորհման մարդկային թշուառութէ:

Ա. Ո՛ր վայր և իցես, յո՛ր կողմն և դարձցիս, թշուառական ես. եթէ ոչ առ ա̄ծ դառնաս: Զի՞ խռովիս, յորժամ ոչ յաջողէ քեզ, ո̄պ կամիս

և

և ցանկաս ։ Ո՞վ է, որ զամ ունիցի ըստ իւրոց կամաց ։ Ո՛չ ես, ո՛չ դու, և ոչ ոմն մարդ որ 'ի վր երկրի ։ Ոչ ոք է յԾի առանց ինչ նեղութեան կամ անձկութեան, թէպէտ և թագաւոր իցէ, թէպէտ և քահանայապետ ։ Ո՞ր վիճակ լաւ իցէ, բայց այնմ՝ որ վասն այ կրէ ինչ ։

Ը. Ասեն բազում խօթամիտք և տկարք ։ Ահա քանի՛ բարեկեցիկ է այս ոք. քանի՛ մեծ, և մեծատուն. քանի՛ հզօր, և արդոյ ։ Այլ դու հայեաց յերկնային բարիս, և տեսցես՝ զի առօրեայքս ամ ոչինչ են, և անստոյգք և նեղացուցիչք յոյժ. զի ոչ երբեք հնար է ժառանգել զնա անհոգ և աներկիւղ ։ Ոչ է մարդոյ երջանկութի առօրէիցս յղփութի. այլ շատ է նմա միջասահմանն վիճակ ։ Ապաքէն թշուառութի է կեալ 'ի վերայ երկրի ։ Որչափ առաւել լինի որ հոգեւէր, այնչափ առաւել կեանք լինին նմա դառնագոյն. զի լաւեւս զգայ, և յայտնագոյն տեսանէ զմարդկային ապականութե կիրս ։ Քանզի ուտել և ըմպել, տքնիլ և 'ի քուն լինիլ, հանգչիլ և վաստակիլ, և այլոց կարեաց բնութե ներքոյ լինել, մեծ տառապանք են և վիշտք՝ առն

հոգեսիրի ․ որում անձկայր է աղաւ՛
լինել, և զերծ յամ մեղաց ։
Զ․ Քանզի յոյժ ծանրաբեռնի ներ_
քին մարդն կարեօք մարմնոյ յաշխարհի աստ ։
Վ̃ այսորիկ մարգարէն եռանդեամբ
մաղթէ, զերծ լինել յայսպիսեաց աս_
տի ։ ասէ ․ 'ի վշտաց իմոց հա́ն զիս ։
Բայց վա՜յ որոց ոչ ճանաչեն զիւրեանց
թշուառութիւն․ և և՛ս վայ, որոց սիրեն
զթշուառութիւն և զապականացու զայս կեն
ցաղ ։ Քանզի այնպէս ոմանք փարին
զսովաւ, (թէպէտ և հազիւ զոգե_
պահ պէտս վաստակօք կամ մուրո_
ղութե̃ 'ի ձեռն բերեն․) մինչզի թէ
հնար էր միշտ կեալ յաշխարհի, զարքայու_
թէ երկնից չէր ինչ նց̃ փոյթ ։
Է․ Ո՜վ անմտութի̃ և անհաւատութի̃ սրտի
նց̃․ որք այնպէս գետնաքարշ բերին
զերկրաւորօքս, մինչև ոչինչ խորհիլ
նց̃, բայց միայն զմարմնաւորս ։ Բայց
ծանրագոյն ևս 'ի միտ առցեն տա_
ռապեալքն 'ի կատարածի, քանի՞ խո_
տան և չնչին էր՝ զոր սիրեցին ։ Այլ
ա̃ք ա̃յ և ջերմ բարեկամք ք̃ի ոչ
հայեցան 'ի հաճոյս մարմնոյ, և ո́չ
'ի ծաղկելոյն յայսմ աշխարհի․ այլ բո_
վանդակ նց̃ յոյս և դիտումն անձկայր
անանց բարեաց ։ Իղձ նց̃ բովանդակ

բե_

թերիւր 'ի վեր 'ի մնայունս և յանե֊
րևոյթս, զի մի սիրով երևելեաց
ձգեսցին 'ի ստորինս:

Է. Մի՛ վհատիր եղբայր, 'ի յառա֊
ջադէմ լինելոյ 'ի հոգևորս. դեռ
կայ քոյ ժամ և ժամանակ: Զի՞ յա֊
պաղես զառաջադրութիւն. արի՛ վաղ֊
վաղակի, սկի՛զբն արա, և ասա: Արդ
ժամ է ձեռն 'ի գործ առնելոյ. արդ
ժամանակ է պատերազմի, և դէպ
ժամանակ զգաստանալոյ: 'Ի չարակ֊
րութիւն քո և 'ի վիշտս՝ ժամանակ է
վաստակելոյ զարդիւնս: Պարտ է քեզ
անցանել ընդ հուր և ընդ ջուր, մինչև
ժամանեսցես 'ի հանգիստ: Թէ ոչ
բռնի առնես անձին, ոչ յաղթեսցես
ախտից: Ցորչափ զտկար զայս մար֊
մին բարձեալ ունիմք, ոչ առանց մե֊
ղաց լինել հնար է մեզ, և ոչ անձանձ֊
ձիր և անվիշտ կեանս վարել: Մարթ
էր մեզ զերծ լինել յամ տառապա֊
նաց. բայց քանզի կորուսաք մեղօք
զանմեղութիւն, կորուսաք և զճշմարիտ
երանութիւն: Վա̃յ պարտ է մեզ համ֊
բերութիւն ունել, և ա̃յ ողորմութեան ակն֊
կալել. մինչև անցցէ անօրէնութիւն
այս, և ընկլցի մահկանացուս 'ի կե֊
նաց անտի:

Զ. Ո՞վ մեծի տկարութե̄ մարդկան, որ միշտ դիւրամէտ է 'ի մոլութիւնս։ Այսօր խոստովանիս զմեղս քո. և վաղիւ դարձեալ զնոյն գործես։ Առ ժամն առաջադրես զգուշանալ. և յետ ժամուն գործես, ոչ թէ չէիր ինչ առաջադրեալ։ Ապա յիրաւի է մեզ խոնարհիլ, և ոչ արդոյ ինչ զանձինս համարիլ. փոխանակ զի այսչափ տկար եմք, և դիւրակործան։ Թո՛ղ զի մարթիմք վաղ կորուսանել հեղգութե̄, զոր բազում վաստակօք հազիւ ստացաք շնորհօք։

Է. Զի՞նչ լինիցի մեզ առյապայ, որ այսպէս յայդուէ գաղջանամք։ Վա՜յ է մեզ՝ եթէ միտեմք 'ի հանգիստ, իբրև 'ի խաղաղութե̄ գոլով և յապահովի. մինչ դեռ և ոչ հետք երևին ճշմարիտ սրբութե̄ 'ի գնացս մեր։ Ո՞ւր էր թէ անդրէն յուսումն խոնարհէաք քաջ վարուց՝ իբրև զնորընծայս. զի թերևս լինէր մեզ յոյս ապագայ ուղղութե̄, և առաւելոյ 'ի հոգևոր յառաջադիմութե̄։

## Գ Լ. ԻԳ:

### Յաղագս խորհման մահու:

ձա. Յոյժ վաղվաղակի հասանէ քեզ որ մահու. արդ տե՛ս թէ զիա՞րդ կաս ։ այսօր է ոք, և վաղիւ ո՛չ ևս երևի ։ Իսկ յորժամ բարձեալ լինի ոք յաչաց, գնայ վաղվաղակի և յիշատակ նո՛ր ՚ի մտաց ։ Ո՛վ թանձրամտութիւն, և խըստասրտութիւն մարդկան. որ միայն զառ դիս խորհի, և զհանդերձեալսն ինչ ոչ հոգայ ։ Այնպէս պարտ էր քեզ լինել յամ գործս և ՚ի խորհուրդս, ո՛րպ թէ այսօր հանդերձեալ էիր մեռանիլ ։ Եթէ կայր ՚ի քեզ բարիոք խիղճ մտաց, ոչ յոյժ երկնչէիր ՚ի մահուանէ ։ Լաւ է քեզ խորշիլ ՚ի մեղաց, քան խուսափել ՚ի մահուանէ ։ Եթէ այսօր չես պատրաստ, ո՞րպ լինիցիս առ վաղիւ ։ Վաղուի՛ օր՝ անստոյգ է, և զի՞ գիտես, թէ հասանիցես վաղուի ։

ձբ. Զի՞նչ օգուտ է մեզ կեալ ընդերկար, յորժամ չեմք փոյթք ՚ի զգաստանալ ։ Երկար կեանք ոչ միշտ ուղղեն զմարս, այլ յոլովակի յաւելուն

զյանց

զյանցուածս ։ Ո՛ տայր , թէ օր մի բարւոք քաղաքավարեալ էաք յԾի ։ Բիւրք զամս հաշուեն զդարձի , այլ յոլովակի ուղղութե ինչ պտուղ չերեւի ։ Եթէ սարսափելի է մահ , թերևս վտանգաւոր ևս իցեն ընդ երկար կեանք ։ Երանի՜ , որ զժամ մահուն իւրոյ հանապազ առաջի աչաց ունի , և օրըստօրէ 'ի մահ պատրաստի ։ Եթէ տեսեր երբէք զմեռանիլ մարդոյ , յիշեա՛ , զի և դու գնալ ունիս ը̅ նոյն ճ̅պհ ։

Է ․ 'Ի լինել առաւօտու դնէր 'ի միտ , թէ չես հասանելոց յերեկոյն ։ Եւ 'ի գալ երեկոյի՝ մի՛ իշխեր խոստանալ քեզ զժամ առաւօտու ։ Ապա պատրաստ լեր միշտ ․ և այնպէս կեցջի՛ր , որ ո՛չ երբէք անպատրաստ գտցէ զքեզ մահ ։ Բազումք 'ի թերթել ական և յանկարծ մեռանին ․ զի 'ի ժամու՝ յորում ոչ կարծեմք , գայ որդի մարդոյ ։ 'Ի գալ այնր յետին ժամու յոյժ այլազգ թուեսցին քեզ ամ անցեալ կեանք քո ․ և զղջասցիս յոյժ , զի այդպէս հեղգ․ գար և թոյլ ։

Ը ․ Քանի՜ երջանիկ է և իմաստուն , որ այժմէն ջանայ այնպիսի լինել 'ի կեանս , որպիսի կամի թէ գտցի 'ի

մա-

մահու : Քանզի մեծ համարձակութե-
ամբ երջանիկ մահու, կատարեալ ար-
համարհութե̄ն Տէր, փոյթեռանդն իղձ
զարդանալոյ յառաքինութիւն, սէր խրա-
տու, ձիգն ապաշխարութե̄, յօժարա-
մտութի̄ հնազանդութե̄, ուրացութի̄ ան-
ձին, և համբերութի̄ վշտաց վ̄ն սիրոյն
քո̄ի : Բազում բարիս կարող ես գոր-
ծել յառողջութե̄ . այլ ՚ի հիւանդութե̄
չգիտեմ, թէ կարող ե՞նչ լիցես : Սա-
կաւք ՚ի հիւանդութե̄ յառաջադէմ լի-
նին ՚ի բարին . ո̄պ և որք աստանդա-
կանքն են՝ ուր ուրեմն ժամանեն ՚ի
սրբութե̄ :

Ե̄ . Մի՛ ապաւինիր ՚ի բարեկամս և
՚ի մերձաւորս, և մի՛ ձգեր զփրկութի̄
քո ՚ի վախճան աւուրց . զի վաղ քան
զոր կարծես՝ մոռասցին զքեզ մար-
դիկ : Լաւ է այժմէն յառաջատես լի-
նել, և կանխաւ պատրաստել ինչ
բարի, քան յուսալ յօգնութի̄ այլոց :
Թէ ոչ այժմ հոգաս վ̄ն անձին, ո՞վ
հոգասցի վ̄ն քոյ առյապայ : Այժմ
է պատուական ժամանակ : Ահաւա-
սիկ ժմ̄ ը̄նդունելի . ահա օր փրկութե̄ :
Այլ վա՛յ է քեզ, եթէ ոչ ծախես
զայն յօգուտ, արժանի լինել նովաւ
յաւիտենից կենաց : Եկեսցէ ժա-

 մա-

միանակ, զի օր մի կամ ժամ մի ուղ-
ղութեն խնդրեսցես, և չգիտեմ թէ
գտցես ։

Զ. Ապա սիրելի, 'ի բազում վտանգէ լիցիս ապատ, և յերկիւղէ մեծէ զերծ, եթէ այժմէն յամի երկիւղած լինիցիս, և կասկած մահու իցէ զքև ։ Ջանա արդ այնպէս կեալ, որ 'ի ժամ մահու կարող լիցիս առաւել խնդալ՝ քան երկնչիլ ։ Ուսի՛ր արդ մեռանիլ ծի, զի յայնժամ սկիզբն արասցես կեալ ը քնի ։ Ուսի՛ր արդ զամ արհամարհել, զի յայնժամ կարող լիցիս համարձակութը առ քս դիմել ։ Ճնշեա արդ զմարմին քո ապաշխարութը, զի յայնժամ քաջայոյս գտցիս ։

Է. Անմիտ, զի՞ խորհիս ապրիլ ընդերկար, որ և ոչ օր մի ունիս աներկևան ։ Քանի՞ք խաբեցան, և յանկարծ 'ի մարմնոյ յափշտակեցան ։ Քանի՞ցս անգամ լուար՝ զի ասէին․ այս ոք սրով անկաւ, այն ոք ծովակուր եղև․ այս ոք 'ի բարձունք անկեալ՝ ողնն բեկաւ․ այն ոք յուտել խուռում կարկամեցաւ, և այն ոք 'ի խաղալ խուռում անշնչացաւ ։ Ոմն հրով, ոմն սրով, ոմն ապաժամ մահուամբ, և ոմն հինիւ կորեաւ ։ Եւ այնպէս ամե-

Ննջումն կատարած մահ է. և կեանք մարդկն ոպ̃ ստուեր վաղ անցանեն :

Ը. Ո՞վ յիշեսցէ զքեզ յետ մահու. և ո՞վ կացցէ յաղօթս վս̃ քո : Արի՛ սիրելի, և այժմէն արա՛ զոր ինչ կարող ես առնել. զի ոչ գիտես, ե՞րբ մեռանելոց ես. և ոչ գիտես, զի՞նչ դիպեսցի քեզ յետ մահու : Մինչ դեռ ժամանակս 'ի ձեռս է, ժողովեա՛ քեզ գանձ անմահութե̃ : Բայց 'ի փրկութե̃ քումմէ մի՛ ինչ խորհիր. միայն զնոյն հոգա՛ : Արա՛ արդ քեզ բարեկամս, զսրբս այ̃ պատուելով, և վարուց նց̃ նմանելով. զի յորժամ պակասեսցիս 'ի կենաց աստի, ընկալցին նք̃ զքեզ 'ի յարկսն յաւիտենականս :

Թ. Կա՛լ զքեզ ոպ̃ պանդուխտ և իջաւոր 'ի վերայ երկրի. որում ոչինչ փոյթ է վս̃ի իրողութեց : Պահեա՛ ըզսիրտդ ազատ, և առ ած̃ ուղերձեալ. զի ոչ ունիս աստ քաղաք մնայուն : 'Ի նա ուղղեա՛ զօրըստօրէ աղաչանս քո և զհեծութիւնս արտասուօք. զի հոգիդ քո արժանացի յետ մահու՝ բարեաւ փոխիլ առ ած̃ : Ամէն :

## Գ Լ . ԻԴ :

### Յաղագս դատաստանի , և պատժոց մեղաւորաց :

ա . Յամենայնի հայեաց 'ի կատարածն , և թէ ո՞պ կալցես առաջի անաչառ դատաւորին , յորմէ ոչ ծածկի ինչ . որ ոչ կաշառօք հաճոյի , և ո՛չ պատճառանս ընդունի . այլ արդարութ՟ դատէ : Ո՜վ թշուառական և անմիտ մեղաւոր , զի՞նչ տացես պատասխանի նմ , որ իրագէտն է ամ չարեաց քոց . որ ըզմ անգամ զարհուրեալ դողաս յերեսաց առն բարկացելոյ : Զիա՞րդ ոչ պատրաստես զքեզ աւուրն դատաստանի , յորում ոչ կարէ ոք 'ի ձեռն այլոց արդարանալ . զի իւրաքանչիւրոք բաւական բեռն է անձին : Այժմ արդիւնաւոր են քո ճգունք , ընդունելի են լալիք , լսելի են հեծութիւնք , և քաւարար են վիշտք :

բ . Մեծ և փրկական քաւարան է համբերողի , որ զրկեալ՝ առաւել ցաւէ նմա վա՟ չարութ՟ ընկերին՝ քան վասն իւրոյ վնասու : Որ վա՟ հակառակոր-

դաց խուրոյ յօժարամիտ յաղօթս կայ. և սրտի մտօք՝ յանցուցածոց նց̃ նե-րէ: Որ թողուն յայլոց խնդրել ոչ յապաղէ. Որ երագ է յողորմել քան 'ի բարկանալ: Որ առէպ բուռն առ-նէ անձին, և զմարմինն ամիւ ջանայ հնազանդել հոգւոյ: Լաւ է արդ ըղ-ձեղս քաւել, և զախտս 'ի բաց հա-լածել, քան հանդերձեալ քաւուն պա-հել: Զանձինս ուրեմն խաբեմք՝ ան-կարդ սիրով՝ զոր առ մարմին ունիմք. Դ. Զի՞նչ կերիցէ հուրն այն, բայց զմեղս քո: Որչափ առաւել արդ ան-ձին խնայես, և մարմնոյ անսաս, այն չափ խստիւ առ յապայ տուժիս, և առաւելագոյն նիւթ կիզման ամբա-րես: Որովք ոք մեղանչէ, նոքիմբք ծանրագոյնս տանջի: Անդ ծոյլք հրա ցեալ խթանօք տագնապեսցին. և որ-կորաժէտք անհնարին սովու և ծա-րաւով տանջեսցին: Անդ ըղձախոհք և հեշտասէրք յեռացեալ ձիւթ և 'ի դարշահոտ ծծումբ լողեսցին, և նա-խանձոտք ոպ̃ կատաղի շունք առ ցա ւոյ կաղկանձեսցեն:

Ե. Զիք ինչ մոլուն, որոյ ոչ լիցեն իւր տանջանք: Անդ ամբարտաւանք ամօթալից լիցին. և ագահք չարա-

չար

ջար չքաւորութ̃ տուայտեսցին : Անդ
ժամ մի պատժոց ծանր եղիցի , քան
զաստի հարիւրամեայ ծանր ապաշ_
խարութիւն : Անդ չիք ինչ հանդիստ ·
չիք ինչ մխիթարութիւն դատապարտե_
լոց · այլ աստ երբեմն դուլ լինի 'ի
վաստակոց , և սփոփումն 'ի բարեկա_
մաց : Լե՛ր արդ 'ի հոգս և 'ի ցաւս
վշ̃ մեղաց քոց , զի յօր դատաստանին
անհոգ լիցիս ը̃ երանելոց : Զի յայն
ժամ կացցեն արդարք բ̃զմ համարձա
կութ̃ հանդէպ նեղչաց իւրեանց , և
հարստահարողաց : Յայնժամ նստցի
յաթոռ դատողական , որ արդ խո_
նարհութ̃ հնազանդի դատաստանաց
մարդկան : Յայնժամ մեծ քաջալերութ̃
զգեցցի աղքատն և խոնարհն , և զար
հուրեալ դողասցի ամբարտաւանն :
Է : Յայնժամ յայտնեսցի , թէ իմաս_
տութ̃ էր յայսմ աշխ̃ի , որ վ̃ք̃ի ուսա
յիմար լինել , և արհամարհ : Յայն_
ժամ քաղցր եղիցի ամ̃ նեղութ̃ համ_
բերութ̃ յանձն առեալ · և ամ̃ անօ_
րէնութ̃ խցցէ զբերան իւր : Յայն_
ժամ խնդասցէ ամ̃ առաքինասէր ,
և տխրեսցի ամ̃ ամպարիշտ : Յայն_
ժամ առաւել ցնծասցէ մարմին վշ̃_
տահար , քան զգրգեալն 'ի փափկութ̃

թիս ։ Յայնժամ պայծառասցի աղքատ ձորձիկ, և խաւարեսցին համդերձք բեհեղեայք ։ Յայնժամ առաւել գովեսցի աղքատին յարկ, քան ղոսկենկար ապարանս ։ Յայնժամ առաւել օգտեսցէ արիական համբերութի՛ քան զամ Տի իշխանութի ։ Յայնժամ առաւել բարձր եղիցի միամիտ հնազանդութի, քան զամ Տական խորագիտութի ։

Է. Յայնժամ առաւել ուրախ արասցէ սբ և բարի խիղճ մտաց՝ քան ըզնէրհուն իմաստասիրութի ։ Յայնժամ առաւել յարգեսցի արհամարհութի ընչից քան զամ գանձս երկրածնաց ։ Յայնժամ առաւել մխիթարեսցիս ՚ի մր ջերմեռանդն աղօթից, քան ՚ի մր համեղահամ կերակրոց ։ Յայնժամ առաւել ուրախ եղիցիս ՚ի վերայ լռակացութե, քան ՚ի վերայ երկար զրուցաց ։ Յայնժամ առաւել զօրեսցեն սբ գործք՝ քան զբազում գեղեցիկ բանս ։ Յայնժամ առաւել հաճոյ լիցին անձուկ կեանք և խստամբեր ճգնանք, քան զամ երկրաւոր բերկրութի ։ Ուսի՛ր արդ սակաւուն համբերել. զի յայնժամ ՚ի ծանունց ապրեսցիս ։ Այս յառաջագոյն փորձեա՛, թէ որո՛յ ի-

միք

միք ժուժալ բաւեա առ յապայ : Եւ թէ այժմ դոյղն չարչարանք զքեզ նեղասրտեն, զինչ արասցէ յայնժամ գեհենն : Ահա անհնար է երկուս ունել խնդութիս · աստ յաշխարհի ՚ի դրդանս վայելել, և անդ է քի թագաւորել:

Է : Եթէ մինչև ցայսօր միշտ ՚ի պաստունի լինէիր և ՚ի փափկութիս, զինչ օգուտ էր քեզ յայնմ ժմէ, եթէ արդ յանկարծ ՚ի վր հասանէր մահ : Ապա ամն ունայնութի է, բայց ՚ի սիրոյն այ, և ՚ի ծառայութէ նորա : Զի որ զամ յամ սրտէ սիրէ, ոչ ՚ի մահուանէ երկնչի, և ոչ ՚ի տանջանաց, և ոչ ՚ի դատաստանէ, և ոչ ՚ի դժոխոց : Վասնզի կատարեալ սէրն անհոգ մատչի առ այ : Իսկ որում դեռ քաղցր է մեղանչել, չէն ինչ զարմանք, թէ երկնչի ՚ի մահուանէ և ՚ի դատաստանէ : Բայց բարւոք է, զի թէ ոչ սէրն խոտորեցուցանէ զքեզ ՚ի չարէ, գէթ երկիւղ գեհենին հրաժարեցուսցէ : Իսկ որ զերկիւղն այ մերժէ, ոչ է կարող է երկար կալ մնալ ՚ի բարին · այլ վաղագոյն անկանի յորոգայթս սատանայի :

# ԳԼ. ԻԵ:

## Յաղագս ջերմեռանդն ուղղութեան կենաց մերոց:

Ա. Լե՛ր արթուն և փոյթ 'ի ծառայութեան Այ. և խորհեաց ստէպ, թէ յի՞նչ կոչեցար. և զիա՞րդ թողեր զաշ: Ո՞չ ապաքէն, զի յԱծ կեցցես, և լիցիս այր հոգևոր: Ապա լե՛ր փոյթեռանդն 'ի յառաջադիմութեն. զի զվարձս վաստակոց քոց առցես ընդ հուպ. և յայնժամ ոչ ևս եղիցի երկիւղ կամ ցաւ 'ի սահմանս քո: Փոքր մի արդ վաստակեսջիր, և գտցես հանգիստ մեծ և ուրախութի յաւերժական: Եթէ կացցես մնասցես հաւատարիմ և փոյթեռանդն 'ի գործ, և Ած եղիցի հաւատարիմ և առատ 'ի հատուցումն: Լե՛ր քաջայոյս, թէ հասցես յաղթանակի. այլ չէ պարտ լինել աներկեան, գուցէ հեղգասցիս, կամ փքասցիս:

Բ. Ծփեալ ուրումն երբեմն 'ի վարանս երկիւղի և յուսոյ՝ այն ինչ ոգւով թախծութեն յեկեղեցւոջ առաջի մի սեղա-

նոյն անկեալ կայր յաղօթս , և խոր_
հէր ընդ միտս , իցէ՞ թէ ժուժկալիցեմ
խապառ , անդէն առ յոյս այսպիսի
լուաւ պատասխանի 'ի սրտի : Եթէ
զայդ դիտէիր զի՞նչ առնէիր , զնոյն արդ
արա՛ , և եղիցիս քաջ յապահովի :
Որոյ անդէն վաղվաղակի քաջալերեալ
և զօրացեալ՝ 'ի կամս ըստ եղև յանձն ,
և դադարեցին 'ի նմանէ յոյզք խոր_
հրդոց : Եւ այլ ոչ ընդ վայրաքննին հե_
տազօտեաց , խմանալ , զինչ անցք ան
ցանելոց իցեն ընդ նա առ յապայ . այլ
յաւէտ ջանացաւ խնդրել , թէ զինչ
են կամք ըստ հաճոյն և կատարեալն .
առ սկիզբն առնելոյ՝ և կատարելոյ
զա̃մ գործս բարուն :

Գ. Յուսա՛ 'ի տ̃ր , և արա՛ զբարի .
(ասէ մրգ̃րէն .) բնակեա՛ց յերկրի , և
հովուեսցիս 'ի մեծուն նր̃ : Մի՛ ինչ
է , որ զբազումս յետս ընկրկէ 'ի յա_
ռաջադիմութէ̃ , և 'ի փոյթեռանդն
ուղղութէ̃ վարուց . աՀ դժուարուն ,
կամ ձիգն պատերազմի : Բայց այնք
առաւել քան զայլս յառաջադէմ են
յառաքինութիս , որք առաւել ծա_
նունց և հակառակաց արիագոյն ջա
նան յաղթել : Քանզի անդ առաւել
զարգանայ ոք , և յոլովագունից ար_
ժա_

ժամն լինի շնորհաց, ուր առաւել
յաղթէ անձին, և հոգևորապէս ըղ-
նա մեռուցանէ :

Դ. Ոչ ամենեցուն հաւասար է նիւթ
յաղթման և մեռուցման: Բայց ժրա
ջան նախանձախնդիր զօրագոյն է 'ի
յառաջադիմութի, թէպէտև բազում
ւիցեն նո՛ կիրք, քան զբարեկիր ոք,
որոյ նուազ իցէ եռանդն յառաքինու
թիս: Երկու ինչ առաւելապէս յա-
ջողեն զուղղութի վարուց. բուռն 'ի
բաց քեցիլ յամէ, յոր ախտաբար միտէ
բնութին. և արտի մտօք պնդիլ ունել
զբարին, որում առաւել կարօտի ոք:
Յայնց ևս անձնապահ լեր, և յաղ-
թել ջանա, զորս անհաճոյ է քեզ
տեսանել յայլոց վր :

Ե. Յամե մտ դիր քումդ յառաջա-
դիմութե, ո՞ւր զի թէ բարի ինչ օրի-
նակ տեսանես կամ լսես, վառեսցիս
բորբոքեսցիս լինել նմանօղ: Այլ
թէ ըստգիւտ ինչ յայլս տեսանես,
զգո՛յշ լեր չառնել զնոյն. և թէ ա-
րարեր երբեք, փութա՛ վաղագոյն ուղ
ղել զքեզ: Ո՞ր աչք քո յայլս հային,
նոյնպէս աչք այլոց 'ի քեզ են: Զիարդ
բերկրական է և քաղցր՝ տեսանել ե-
ռանդնոտ և առաքինի եղբարս, բա-

բե-

ընկերս, և խրատեալս : Զիա՞րդ տխուր է և ծանր՝ տեսանել զխնդաբարոյս, որք անդորրք են յամէ՝ յոր կոչեցան : Զիա՞րդ վնասակար է հեղգալ ՚ի դէմ եղեալ նպատակի իւրոյ կոչման. և յօժարամտել յայն՝ որ չէ նմա յանձն :

Դ. Յո՛յց լիցի քեզ առաջադրութիւն՝ յոր ձեռնարկեր. և դի՛ր առաջի աչաց ըզխաչեցելոյն պատկեր : Հայեցեալ ՚ի վարս յիւր քո, յամօթ լեր. զի չև ևս կերպարանակից լինել նմա ջանացար, թէպէտ և ընդ երկար ՚ի ճնչի այդ եղեր : Կրօնաւոր որ սրտի մտօք և եռանդեամբ ՚ի այս վարս և ՚ի չարչարանս քո կրթէ զանձն, զամ պիտանիս և զկարևորս անձին գտանէ անդ առատապէս. և ոչ պիտի նմա արտաքոյ յայս՝ լաւագոյնի ինչ լինել ՚ի խնդիր : Եթէ խաչելեալն յիս եկեալ էր ՚ի սիրտ մեր, ո՛վ թէ զիա՞րդ վաղվաղակի և լիով լինէր մեզ զգօնանալ :

Է. Կրօնաւոր փոյթեռանդն բարեաց համբերէ և տանի ամի, որ նմա հրամայի : Կրօնաւոր հեղգ և յոյլ ունի նեղութ ՚ի նեղութե վր. և յամ կողմանց անձկութ կրէ. զի չունի զներքին միխթարութի, և արտաքնոյն ՚ի խնդրե լի֊

նել

նել՝ չէ նմա հրաման : Կրօնաւորի՝ որ
անկանոն կեանս վարէ , մեծ կործա_
նումն 'ի վե՛ր կայ : Որ ցոփուն և լծու_
լուն զհետ երթայ . միշտ յանձկութիւ
եղիցի . զի է այս ինչ կամ ընդ այն
ինչ ոչ հաճեսցի անձն նր :

ԺԷ . Զինչ գործեն այսչափ բազմութիք
կրօնաւորաց , որք է լծով են վանա_
կան կարգաց : Հազիւերբեք արտաքս
ելանեն . հրաժարական վարեն կեանս ,
աղքատօրէն ուտեն . խոշոր զգենուն .
բաղումս վաստակին , սակաւ խօսին ,
ընդերկար հսկեն , կանուխ յառնեն ,
զաղօթս երկարեն , ստէպ ընթեռ_
նուն , և յամ պահպանութիս կանոնաց
են զգուշաւորք : Հայեաց 'ի կարթուս
եանս , և 'ի կիստերսեանս , և 'ի այս
այս կրօնից միանձունս և կուսանս ,
ո՛պ յամ գիշերի յառնեն սաղմոս ա_
սել ամն : Ո՛րչ ամօթ է քեզ առ այդպի_
սի մբ. գործ հեղգանալ 'ի ժամի յոր_
ժամ այսչափ բազմութի կրօնաւորաց
սկիզբն առնեն աղաղակել առ ած :

ԺԸ . Երանի՛ թէ ոչ այլ ինչ մնայր
մեզ առնել , բայց զոր ած մեր յամ
արտէ և 'ի բերանոյ օրհնել : Երա_
նի՛ թէ ոչ ինչ պէտք էին քեզ ուտե_
լոյ կամ ըմպելոյ , կամ ննջելոյ . այլ

կարող լինէիր միշտ զինձ օրհնել, և միայն հոգևոր փութոյ պարապիլ. յայնժամ երանագոյն լինէր քո վիճակ, քան այժմ, որ կարեաց մարմնոյ ծառայես։ Երանի՜ թէ չէին 'ի միջի այս կարիք, այլ միայն հոգևորական կերակուր անձին. զորոյ (բա՛բէ) զիա՛րդ սակաւ առնումք զճաշակ։

Ժ. Յորժամ ոք ցայն վայր հասանէ, մինչև չխնդրել ինչ իւր մխիթարութեն յարարածոց, յայնժամ սկիզբն առնէ զքաղցրութեն ա̃յ լիով առնուլ ըզճաշակ։ Յայնժամ գոհ գտանի և յա̃մ անցս որք անցանեն ը̃ նա։ Յայնժամ ոչ ը̃ մեծ ինչ ուրախանայ, և ոչ ը̃ խուն ինչ տրտմի. այլ գլխովին յա̃ծ հաստատէ զյոյս իւր, որ է նմ ա̃մ յա̃մի։ Ուրում ոչ կորնչի ինչ, և ոչ մեռանի. այլ ամենեքին նմա կենդանիք են, և ակնարկման նր̃ անյապաղ ծառայեն։

Ժա̃. Յո՛ւշ լիցի քեզ վախճանն, և թէ ժամանակն կորուսեալ այլ ոչ դառնայ։ Առանց փութոյ և ջանից ո՛չ երբեք ստասցիս զառաքինութիս։ Թէ սկիզբն առնես գաղջանալոյ, սկիզբն առնես և չարաչար վարուց։ Ապա եթէ տացես զանձն քո յեռանդն, գտցես խա-

ղաղուն մեծ. և դիւր լիցի քեզ 'ի վաս_
տակս, վս̃ շնորհացն ա̃յ, և սիրոյ ա_
ռաքինուե։ Այր եռանդնոտ և ժրա
ջան՝ պատրաստ է առ ամ։ Մեծ է
վաստակ դիմամարտութե ախտից և
կրից, քան զբռնաջան լինել 'ի մարմ
նաւոր վաստակս։ Որ 'ի դոյզն պա_
կասուեց չխորշի, փոքր փոքր 'ի մե_
ծամեծս սահի։ Ուրախ լիցիս հանա_
պազ ընդ երեկս, եթէ զօրն անցու_
ցեր յօգուտ։ Զակեա՛ 'ի վր̃ քոյ, զար_
թո՛ զքեզ. յիշեցո՛ քեզ. և զիարդ և_
ցեն այլք, դու զանձնէ մի՛ հեղգար։
Այնչափ զարգասցիս, որչափ անձին
քում բռուն արասցես։ Ամէն։

Կատարեցան խրատք առ հոգևոր
կեանս պիտանիք։



# ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ։

## Խրատք՝ որք ձգեն զմեզ ՚ի ներքինս։

## ԳԼՈՒԽ. Ա.

### Յաղագս Ներքին գնացից։

ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ այ ՚ի ներքս ՚ի ձեզ է, ասէ տր։ Դարձի՛ր յամ սրտէ առ տր, և թո՛ղ զթշուառ զայս աշխ. և գտցէ անձն քո հանգիստ։ Ուսի՛ր զարտաքինս արհամարհել. և ՚ի ներքինս անձնատուր լինել. և տեսցես զարքայութիւն այ առ քեզ եկեալ։ Զի արքայութիւն այ է խաղաղութի և խնդութի ՚ի հոգի սբ. որ ոչ տուեալ լինի ամպարշտաց։ Եկեսցէ առ քեզ քս, ցուցեալ քեզ զմխիթարութիւն իւր, եթէ

եթէ պատրաստեսցես նմա 'ի ներքս 'ի քեզ արժանի օթեվան : Ամենայն փառք նր եւ վայելչութիւն է 'ի ներքոյ, եւ անդ լինել հաճոյ է նմա : Ընդ ներանձնացեալս է նր ստէպ այցելութիւն, քաղցր խօսակցութիւն, բերկրական մխիթարութիւն. բազում խաղաղութիւն եւ մեծահրաշ ընտանութիւն :

Բ. Ա՛ղէ հաւատացեալդ ոգի, պատրաստեա՛ այսմ փեսայի զսիրտ քո. զի հաճեսցի առ քեզ եկաւորիլ, եւ 'ի քեզ բնակիլ : Զի այսպէս ասէ նա. եթէ որ սիրէ զիս, զբանն իմ պահեսցէ. եւ առ նա եկեսցուք, եւ օթեվանս առ նմա արասցուք : Արդ պատրաստեա՛ քնի տեղի. եւ այլում ամենի մի՛ տար մուտ : Թէ է 'ի քեզ քս, մեծատուն ես, եւ շատ է քեզ : Նա եղիցի քո հոգաբարձու, եւ հաւատարիմ խնամակալու յամենի, որ այլ ոչ պիտի յուսալ 'ի մարդիկ : Զի մարդիկ վաղվաղակի փոխին, եւ փութով պակասին. քս կայ մնայ յաւիտեան. եւ զօրավիգն է քո մինչ իսպառ :

Գ. Մի՛ կարի իմն ապաւինիր 'ի մարդ. ոսկար եւ մահկանացու. թէպէտ եւ պիտանի ոք իցէ եւ սիրելի. եւ մի՛ յոյժ տրտմեսցիս, թէ ուրեք երբեք ընդդէմ

դառ.

դառնայ և հակառակի : Որք այսօր 'ի քո կողմն են, հնար է թէ վաղիւ դիմադարձ գտցին . և զարրին հկուկն՝ բազում անգամ իբրև զհողմ փոփոխին : Դի՛ր բովանդակ զյոյս քո յԱծ, և նա եղիցի քո երկիւղ և սէր : Նա փոխանակ քո տացէ պատասխանի, և յաջողեսցէ յայն՝ որ լաւ իցէ : Ո՛չ ունիս աստ քաղաք մնայուն . և ուր և իցես, օտար ես և պանդուխտ . և ոչ երբէք գտցես հանգիստ, թէ ոչ սերտ միանաս ընդ Քի :

Է . Զի՞ շուրջ հայիս աստ . չէ քոյ այս տեղի հանգստեան : Յերկնաւորս լինելոց է քո բնակութի, և հարևանցի հայել ունիս յամ երկրաւորս : Անցանէ ամ, և դու ընդ նոսին միահաղոյն : Զգո՛յշ լեր չյարիլ 'ի նա . գուցէ ըմբռնեսցիս, և կորիցես : Առ բարձրելոյն եղիցին խորհուրդք քո, և աղաչանք քո առ Քս անդադար ուղղեսցին : Թէ ո՛չ գիտես խոկալ ըզբարձունս և զերկնայինս, հանգի՛ր 'ի Քի չարչարանս, և 'ի սրբ վէրս նր մտադիւր բնակեա՛ց : Զի թէ 'ի վէրս և 'ի պատուական սպիս յՍի ջերմ լինիս ապաստան, բզմ քաջալերութի ըզգեցցես 'ի նեղութե . ո՛չ մեծ ինչ գրես-

ցես զմարդկան արհամարհանս. և թըջ նամանագիր բանից դիւրաւ տարցիս ։ Ն. Քա̃ իսկ յՁի 'ի մարդկանէ ան-գոսնեցաւ. և յանհնարին վիշտս 'ի ծանօթից և 'ի բարեկամաց թողաւ 'ի նախատինս ։ Կամք եղեն Քի̃ չարչա-րել. և անարգել. և դու իշխես ընաւ արտաունջ ունել զումբէ ։ Քի̃ եղեն հակառակորդք և չարախօսք. և դու կամիս թէ ամենեքին քո բարեկամք իցեն և բարերարք ։ Իւ՞ պատկեացի քո համբերութիւն, թէ ոչինչ վիշտ ընդ-դէմ լինիցի ։ Եթէ ոչ կամիս կրել ինչ հկ̃կուն, զիա՞րդ լինիցիս բարե-կամ Քի̃ ։ Համբեր ը̃ Քի̃ և վ̃ Քի̃, եթէ թագաւորել կամիս ընդ Քի̃ ։

Դ. Եթէ առ անգամ մի մտեալ էր քո 'ի սիրտ յի̃ի, և առ փոքր մի զվա-ռեալ սիրոյ նո̃ր առեալ զճաշակ, ապ-նաւհետև չլինէր քեզ փոյթ զդիւրուէ̃ կամ զվշտաց անձին. այլ ուրախ լի-նէիր ընդ ընկալեալ նախատինս. զի սէրն յի̃ի տայ մարդոյ արհամարհել զանձն ։ Սիրօղն յի̃ի և ճշմարտուէ̃, և որ ներանձնացեալն է՛ և զերծ յան-կարգ ախորժակաց, մարթի համար-ձակ մուտ ունել առ ա̃ծ, և հոգւով վերացեալ 'ի հանգիստ վայելել ։

Է.

Է. Որ իմանայ զա̃մ, որպ̃ և էն, և ոչ ըստ ասից կամ կարծեաց մարդկան, նա է ճշմարտապէս իմաստուն, ուսեալ առ յա̃յ քան 'ի մարդկանէ : Որ ը̃ ներքնոյն դիտէ գնալ, և ոչ ը̃ արտաքնոյն կշռէ զիրսն, ոչ խնդրէ տեղի՝ և ոչ սպասէ ժամանակի՝ 'ի հոգևոր մարզս ձեռնարկելոյ : Այր ներանձնաւոր՝ փութով յինքն ամփոփի. զի ոչ երբէք բոլորովին առ արտաքինս զեղանի : Չէ նմա խափան գործն արտաքին, կամ զբաղումն առ ժամն պիտանեան. այլ ը̃ բերման իրաց՝ պատշաճէ զանձն : Որ կազմ է 'ի ներքոյ և կարգաւորեալ, ոչինչ հոգայ ըզ-մարդկան զարմանաւոր և զթիւր արարս : Որչափ ոք յինքն առարկանէ իրս, այնչափ առաւել խափանի, և զբաղնու :

Ը. Եթէ ուղիղ էիր, և բարեյարդար, ա̃մ յաջողէր քեզ 'ի բարի և յօգուտ : Վ̃ այնորիկ բ̃մ ինչ անհաճոյ է քեզ, և ստէպ խռովէ. զի դեռ չես լիով մեռեալ անձին, և ոչ զատեալ որոշեալ յա̃մ երկրաւորաց : Ոչինչ այնպէս արատէ և թակարդէ զսիրտ մարդոյ, որպ̃ խառնակ սէր արարածոց : Թէ հրաժարիս յարտաքին մխիթ

թարուէ, կարող լիցիս խոկալ զերկ-
նայինս, և ստէպ վայելել 'ի ներքինս
բերկրանս:

---

## ԳԼ. Բ:

### Յաղագս խոնարհ հպատակութեան:

ա. Մի՛ համարիր ինչ, թէ ոք 'ի քո կողմն իցէ, կամ հակառակ քո. այլ այն իցէ քո փոյթ, զի ա՟ծ ընդ քեզ իցէ յամ՟ն զոր առնես: Կա՛լ յանձինս զբարիոք խիղճ մտաց. և ա՟ծ խնամակալու լիցի քեզ: Զի որում օգնել կամի ա՟ծ, ոչ ուրուք ապիրատութիւն կարողանայ հասուցանել նմա վնաս: Եթէ գիտիցես լռել և համբերել, տեսցես անտարակոյս զՏ՟ն օգնականութիւն: Նա գիտէ զժամանակ և զեղանակ ապրեցուցանելոյ զքեզ. վ՟ն այսորիկ 'ի նա զքեզ յանձն արա: Ա՟յ է օգնել, և յամ՟ խռովութենէ զերծուցանել: Առ առաւելուլ 'ի խոնարհութիւն օգուտ է յոյժ բազումանգամ, թէ այլք զմեր պակասութիւնս ծանիցեն, և յանդիմանեսցեն:

բ. 'Ի խոնարհիլ առն վ՟ն իւրոց պա-

կա-

կատուեց, դիւրաւ հանդարտէ զայլս, և հեշտեաւ ցածուցանէ զյասուցեալսն 'ի վերայ իւր: Զխոնարհն պաշտպանէ Ած, և ապրեցուցանէ. զխոնարհն սիրէ և մխիթարէ. խոնարհին զիջանի. խոնարհին առատաձեռնէ շնորհս մեծամեծս. և յետ նեղուէ բարձրացուցանէ զնա 'ի փառս: Խոնարհին յայտնէ զիւր գաղտնիս, և յինքն քաղցրութ ձգէ զնա և հրաւիրէ: Խոնարհն յընդունին զվարհամարհանս, կայ յանխռով խաղաղուե. զի յած կեայ, և ոչ յաշխարհի: Մի՛ յառաջադէմ ոք կարծեր զքեզ. եթէ ոչ քան զամենեսին ստորին զանձն համարեսցիս:

---

## Գ. Լ. Գ:

### Յաղագս առն խաղաղարարի:

Ա. Պատեա՛ զքեզ նախ 'ի խաղաղուե. և ապա կարօղ լիցիս զայլս խաղաղել: Այր խաղաղարար առաւել օգուտ է քան զգիտնաւոր: Այր ախտաւոր՝ և զբարին ձգէ 'ի չար, և դիւրաւ հաւատայ չարի: Այր խաղաղարար զամենայն փոխարկէ 'ի բա_

րի : Որ հաստատեալն է 'ի խաղաղութե̃ , ոչ կասկածէ ինչ զումեքէ . այլ անգոհն և խռովարարն 'ի պէսպէս կասկածանս ծփի . ոչ ինքն հանգչի , և ոչ այլոց տայ հանգչիլ : Ասէ բազում անգամ , զոր չէր պարտ ասել . և չառնէ , զոր օգուտ էր նմա առնել . Խորհի , թէ զինչ այլոց անկ էր առնել . և չխորհի , թէ զինչ նմա է անկ . Ապա լեր նախանձաւոր նախ 'ի վր̃ անձին . և ապա իրաւամբք նախանձաւոր լիցիս և ընկերի քում:

Ը̃ : Քաջ գիտես դու՝ գործոց քոց պատճառանս պատճառել, և արդարացուցանել . բայց զայլոց պատճառանս ընդունել՝ չառնուս յանձն : Իրաւացի էս լինէր, թէ զքեզն ամբաստան լինէիր, և զեղբայր քո արդարացուցանէիր : Եթէ կամիս թէ այլք քեզ տարցին , տար և դու այլոց : Տես , քանի՞ հեռի ես դեռ 'ի ճշմարիտ սիրոյ և 'ի խոնարհութե̃ , որ ոչ ումեք գիտէ բարկանալ կամ ցասնուլ , բայց միայն անձին : Զէ ինչ մեծ ը̃ բարեկիրս և ը̃ հեզաբարոյս քաղաքավարիլ . (զի այդ ամենեցուն բնաւորապէս է հաճոյ , և ընդ այնպիսիս ամ ոք մտադիւր խաղաղութ̃բ գնայ , և

զհա-

զհամախոհս իւր առաւել սիրէ.) բայց ընդ խիստս և ընդ խեղաբարոյս, ընդ անխրատս և ընդ հակառակօղս մեր խաղաղութիւն կեալ՝ մեծ շնորհ է, և գործ գովելի յոյժ, և արիական։

Գ. Են՝ որք զանձինս 'ի խաղաղութեան հաստեն. և ընդ այլս ևս զխաղաղութիւն ունին։ Եւ են՝ որք ոչ զխաղաղութիւն ունին. և ոչ այլոց թողուն կալ 'ի խաղաղութեան. այլոց ծանր են, այլ անձանց յամի ծանրագոյն ևս։ Եւ են՝ որք զանձինս 'ի խաղաղութեան պահեն, և զայլս 'ի խաղաղութիւն արկանել փութան։ Բայց բովանդակ մեր խաղաղութիւն 'ի ցաւալից յայս կեանս՝ առաւել հաստատելի է 'ի խոնարհական համբերութիւն, քան 'ի չզգալ զհակառակս։ Որ քաջ գիտէ համբերել, մեծ խաղաղութիւն կալցի։ Այնպիսին յաղթօղ է անձին, և տէր աշխարհի. բարեկամ քրիստոսի, և ժառանգորդ երկնից։

## ԳԼ. Դ:

### Յաղագս մաքուր մտաց, և միամիտ դիտաւորութե̃:

ա. Երկուք թևօք վերանայ մարդ յերկրաւորաց. միամտութ̃, և մաքրութ̃: Միամտութիւնն պարտ է լինել 'ի դիտմունս, մաքրութիւնն յախորժակս: Միամտութիւնն դիմէ յա̃ծ. մաքրութիւնն հասանէ և ճաշակէ: Ոչինչ գործ բարի խափանեսցէ զքեզ, եթէ ներքոյ ազատ լինիցիս յանկարգ ախորժակաց: Եթէ ոչ այլ ինչ դիտես և խնդրես, բայց զհաճոյսն ա̃յ՝ և զօգուտ ընկերին, վայելեսցես 'ի ներքին ազատութե̃: Եթէ ուղիղ էր քո սիրտ, ա̃մ արարածք լինէին քեզ հայելի վարուց, և մատեան իմաստից սրբութե̃: Չիք արարած այնպէս փոքր և խոտան, որ ոչ յանդիման երևեցուցանէ զա̃յ բարութիւն:

բ. Եթէ 'ի ներքոյ լինէիր բարի և մաքուր, զա̃մ անխափան տեսանէիր, և քաջ առնուիր 'ի միտ: Սիրտ մաքուր ընդմտանէ յերկինս, և 'ի դժոխս:

ժողս։ Որպիսի է ոք 'ի ներքոյ, այնպէս գտանէ արտաքոյ։ Եթէ է խընդութիւն յաշխարհի, ժառանգէ զնա այր, որոյ սր̄ է սիրտ։ Եւ թէ է ուրեք նեղութի և վիշտ, քաջ զնո̄ զգայի առնու, որոյ չար է խիղճ մտաց։ Որպ̄ երկաթ արկեալ 'ի հուր՝ կորուսանէ զժանգ, և լինի հրավառ․ նոյնպէս այր՝ որ յիմ̄ սրտէ դառնայ առ ա̄ծ, 'ի բաց գնէ զթմրութի, և 'ի նոր մարդփոխարկի։

զ̄. Յորժամ գաղջանալ սկսանի այր, 'ի դոյզն վաստակոց երկնչի, և մտադիւր զարտաքին մխիթարութիւնս յածի։ Այլ յորժամ սկիզբն առնէ կատարելապէս յաղթել անձին, և գնալ զճանապարհս ա̄յ արիաբար, թեթև ինչ թուի նմա, զոր յառաջն կարծէր ծանր։

## ԳԼ. Ե։

### Յաղագս ճանաչելոյ զւաք անձին։

ա̄. Անմարթ է մեզ կարի ի̄ն հաւատալ անձանց․ զի բազում անգամ չէք մեր շնորհ և իմաստութի։ Խուն

լինէ

ինչ լոյս է 'ի մեզ. և զայն վաղվաղակի հեղգութ̄ կորուսանեմք : Յոլովակի չհայիմք և 'ի ներքին մեր կուրութ̄. Բազում անգամ չարաչար գործեմք, և ևս չարաչար պատճառանս պատճառեմք: Է՛, զի 'ի կրից շարժիմք, և նախանձաւորութ̄ կարծեմք : Զայլոց մանունս յանդիմանեմք, և զմերովք մեծամեծօք հարևանցիկ անցանեմք : Քաջ վաղվաղակի խորհիմք և կշռեմք, թէ զինչ յայլոց կրեմք. բայց թէ որչափ ինչ այլք 'ի մէնջ կրեն, յայն ինչ ոչ հայիմք : Թէ ոք բարիոք և ուղիղ զիւրսն կշռէր, չդատանէր յայլս ծանր ինչ նիւթ դատողութ̄ :

Է. Այր ներանձնաւոր զանձին փոյթ քան զամենեցուն վերադասէ. և որ ժրաջան անձին միտ դնէ, դիւրին է նմա զայլոց լռել : Ո՛չ երբէք լինիս ներանձնացեալ և փոյթեռանդն, թէ ոչ լռես զօտարաւուց, և առանձինն ինն հայիս 'ի քեզ : Թէ քո և անձին միտ դնես բոլորովին, սակաւ շարժեն զքեզ, զոր ինչ արտաքոյ տեսանես : Ո՞ւր ես, յորժամ ոչ անձին միտ դնես : Եւ յորժամ զանձնէ հեղգացեալ, զի՞մ հետազօտես, զի՞նչ օգտիս : Եթէ զխաղաղութ̄ խնդրէիր, և

կշռ-

զճշմարիտ միաբանութիւն, պարտ էր քեզ՝ զա̃մ թող ՚ի վերջոյ դասել. և զքեզ միայն առաջի աչաց ունել։

Դ. Վա̃կ բազումս օգտիս, եթէ պարապորդ պահես զանձն յա̃մ առօրեայ հոգոց։ Եւ կարի խիստ յետնեալ գտանիս, եթէ զառօրեայքս մեծ ինչ գրես։ Մի՛ ինչ մեծ թուեսցի քեզ. մի՛ ինչ բարձր. մի՛ ինչ ըղձալի, և մի՛ ինչ ընդունելի, բայց միայն Ա̃ծ, և աստուծոյքն։ Զա̃մ սնոտի համարեսջի՛ր, զի՛նչ և մխիթարութիւն դիպեսցի քեզ յարարածոց։ Անձն որ սիրէ զԱ̃ծ, առ ո̃վ արհամարհ համարի զա̃մ։ Միայն Ա̃ծ յաւիտենական և անչափ՝ լցուցիչ է ա̃մի, սփոփումն անձին, և ճշմարիտ ուրախութիւն սրտի։

---

## ԳԼ. Զ։

### Յաղագս ուրախութեան բարւոք խղճի մտաց։

Ա. Փառք առն բարւոյ՝ վկայութիւն բարւոք խղճի մտաց։ Կա՛լ յանձին զբարւոք խիղճ մտաց. և եղիցի ՚ի քեզ հանապազ ուրախութիւն։ Բարւոք խիղճ մտաց՝ բազում ինչ բերէ. և յոյժ ու-

րախ է 'ի վիշտս։ Չար խիղճ մտաց երկչոտ է յամենայնի և անհանգիստ։ Քաղցրութ՟ հանգիցես, թէ սիրտ քո ո՛չ ստգտանէ զքեզ։ Մի՛ ուրախ լինիր, բայց յորժամ բարիս գործիցես։ Չարք ո՛չ երբեք ունին զճշմարիտ ուրախութի՟, և ոչ զգան յանձինս զներքին խաղաղութի՟։ Զի ո՛չ գոյ խաղաղութի՟ ամպարշտաց, ասէ տր՟։ Եւ թէ ասիցեն. 'ի խաղաղութե՟ եմք, ո՛չ եկեսցեն 'ի վր՟ մեր չարիք, և ո՞ իշխեսցէ վնասել մեզ. մի՛ հաւատար նոցա. զի յանկարծակի յարիցէ բարկութին այ՟. և նանրասցին գործք նոցա. և խորհուրդք նց՟ կորիցեն։

է. Պարծիլ 'ի նեղութիւն՝ չէ ինչ ծանր սիրողին. զի այդպէս պարծիլ՝ է պարծիլ 'ի խաչն տն՟։ Սուղ ինչ են փառք, զոր մարդիկ տան և առնուն։ Զփառաց աշխի՟ միշտ ընկեր գայ տրտմութի՟։ Բարեաց փառք 'ի խիղճ մտաց նոցա են, և ոչ 'ի բերան մարդկան։ Արդարոց ուրախութի՟ յաղագս այ՟ է, և յա՟ծ. և խնդութի՟ նց՟ յաղագս ճշմարտութե՟։ Որ ճշմարիտ և յաւիտենական փառաց ցանկայ, զառժամայն փառաց չէ ինչ նմ՟ փոյթ։ Եւ որ զառժամայն փառս խնդրէ, կամ 'ի սրտէ

ոչ

ոչ արհամարհէ , յայտ է թէ զերկ-
նաւոր փառս ոչ սիրէ ։ Մեծ հան-
դարտութի սրտի ունի , որում ոչ զգո-
վութե̃ փոյթ ինչ է , և ոչ զնախա-
տանաց ։

Գ̃. Դիւրին է գոհ լինել և խաղա-
ղական , որոյ խիղճ մտաց սբ̃ իցէ ։
Չես ինչ սբ̃ , եթէ գովիս . և ոչ ա-
նարգ , թէ արհամարհիս ։ Որ ինչ ես՝
այն ես . և ոչ մեծ կոչիլ մարթիս ,
քան զոր ած̃ վկայէ զքէն ։ Թէ հայիս ,
զի՛նչ 'ի ներքս 'ի քեզ ես , ոչինչ հո-
գասցիս , թէ զի՛նչ խօսիցին զքէն մար-
դիկ ։ Մարդ հայի յերեսս , այլ ած̃
հայի 'ի սիրտ ։ Մարդ հայի 'ի գործս .
այլ ած̃ կշռէ զխորհուրդս ։ Միշտ
բարիս գործել , և զանձն չնչին հա-
մարել , ցոյց է խոնարհ հոգւոյ ։ Չառ-
նուլ մխիթարութի 'ի ստեղծուածոց ,
մեծի մաքրութե̃ , և ներքին վստահութե̃
է նշանակ ։

Դ̃. Որ ոչինչ արտաքին վկայութի խնդ-
րէ վս̃ իւր , յայտ է թէ բոլորովին
վստահ է յած̃ ։ Զի ոչ որ զանձն ըն-
ծայեցուցանէ , նա է ընտրեալ , ( ասէ
երանելին պօղոս . ) այլ զոր տր̃ն ըն-
ծայեցուցանէ ։ Հաճոյ լինել այ̃ ներ-
քոյ , և ընդ ոչինչ ախորժակ դրա-
ւիլ

ձիլ արտաքոյ, վիճակ է ներքին մար-
դոյ:

---

## Գ Լ. Է.

### Յաղագս սիրոյն յս̃ի 'ի վեր քան զա̃մ.

Ա. Երանի՛, որ 'ի միտ առնու, զի՛նչ իցէ սիրել զյս̃, և արհամարհել զանձն վս̃ յս̃ի: Պարտ է թողուլ զսիրելին վս̃ սիրելւոյ. զի յս̃ի կամք այս են, սիրիլ միայն 'ի վեր քան զա̃մ: Սէր արարածոց խաբեբայ է՝ և յողդողդ. սէր յս̃ի հաւատարիմ է, և մնայուն: Որ յարի 'ի արարածս, անցանէ ը̃ անցաւորս. որ փարի ըղյս̃ի, հաստատուն մնայ յաւիտեան: Զայն սիրեա՛ և կա՛լ քեզ բարեկամ, որ 'ի թողուլ ամենեցուն ո՛չ թողու զքեզ. և ոչ տայ թոյլ կորնչել 'ի սպառ: Յա̃մէ պարտ է քեզ երբեմն որոշիլ, եթէ կամիս և եթէ ակամայ:

Բ. Կա՛լ զքեզ առ յս̃ի, եթէ 'ի կենդա̃ և եթէ 'ի մահու. և հաւատարմութե̃ նր̃ արա՛ զքեզ յանձն. որ 'ի թողուլ ամենեցուն միայն կարող է օգնել քեզ: Սիրելւոյ քո այսպիսի է բնութիւն, որ

օտա-

օտարի ո՛չ տայ տեղի. այլ միայն կա- մի գրաւականել զսիրտ քո. և որպէս թագաւոր յաթոռ իւր բազմիլ: Թէ գիտէիր քաջ դատարկել զքեզ յա̃մ արարածոց՝ մտադիւր արդեօք քո̃ ընա- կէր ը̃ քեզ: Կորուսեալ գտցես զա̃մ, զոր ինչ արտաքոյ յա̃ն եդեր 'ի մար- դիկ: Մի՛ ապաւինիր և մի՛ յենուր յեղէգն հողմավար. զի ա̃մ մարմին խոտ է, և ա̃մ փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ թօթափեսցի:

Գ̃. Դիւրաւ խաբիս, եթէ յարտա- քին երևոյթ մարդկան միայն հայիս: Զի թէ յայլս խնդրես զքո սփոփանս և զշահ, բազում անգամ տուժիս: Եթէ խնդրես յա̃մի զյս̃, այս՝ գտցես զյս̃: Ապա եթէ խնդրես զանձն, գտցես և զանձն, բայց 'ի կորուստ քո: Զի առաւել վնասակար է մարդ անձին՝ եթէ ոչ խնդրէ զյս̃, քան զաշխարհ ա̃մ, և քան զա̃մ զիւր հա- կառակորդս:

## ԳԼ. Ը:

### Յաղագս մտերիմ սիրելութե Յսի:

Ա. Յորժամ մերձ է Յս, բարւոք է ամ. և չերևի ինչ դժուարին. այլ ՚ի հեռանալ Յսի, խիստ է ամ ինչ: Յորժամ Յս ոչ խօսի ՚ի ներքս, անարգ է մխիթարութիւն. ապա եթէ միայն բան խօսի Յս, մեծ մխիթարութիւն ՚ի վր գայ: Ո՞չ ապաքէն Մարիամ Մագդաղենացի յարեաւ վաղվաղակի ՚ի տեղւոջէն՝ ուր լայր, յորժամ ասաց ցնա Մարթայ. վարդապետ եկեալ է, և կոչէ զքեզ: Երանի՛ ժամուն, յորում կոչէ Յս յարտասուաց ՚ի խնդութիւն հոգւոյ: Քանի՞ ցամաքեալ և խիստ ես առանց Յսի. քանի՞ անմիտ և ունայն ես, եթէ խնդրես ինչ արտաքոյ Յսի: Ո՞չ մեծ է վնաս, քան եթէ զաշխարհ ամ տուժէիր:

Բ. Զի՞նչ ձեռնհաս է աշխարհ տալ քեզ՝ առանց Յսի: Լինել առանց Յսի՝ ծանր դժոխք են. և լինել ընդ Յսի՝ քաղցր արքայութիւն: Եթէ ընդ քեզ է Յս, ոչինչ ձեռնհաս է թշնամին վնա-

Նասել։ Որ գտանէ զյմ̃, գտանէ ըղ-
ձանձ բարի, նա՝ զբարի գերքան զա̃մ
բարի։ Եւ որ կորուսանէ զյմ̃, կո-
րուսանէ բազում յոյժ, և առաւել
քան զճ̃ ամ̃։ Աղքատ է յոյժ, որ
կեայ առանց յմ̃ի. և մեծատուն յոյժ,
որ բարեկոք է ը̃ յմ̃ի։

Գ. Մեծ արուեստ է, գիտել՝ կենաց
կցորդ լինել յմ̃ի. և մեծ իմաստուն՝
գիտել առ իւր ունել զյմ̃։ Լե՛ր խոնարհ
և խաղաղարար, և եղիցի ը̃ քեզ յմ̃։
Լեր ջերմեռանդն և հանդարտ, և
մնասցէ առ քեզ յմ̃։ Կաղվաղակի
իսկ հնար է հալածել քեզ զյմ̃, և
զշնորհս նր̃ կորուսանել, եթէ յօժա-
րեսցիս յարտաքինս խոտորիլ։ Եւ թէ
զնա հալածեցեր և կորուսեր, յո՞ դի-
մեսցես, և որո՞յ բարեկամի 'ի խնդիր
լինիցիս։ Առանց բարեկամի չէ՛ քեզ
հնար բարեկոք կեալ. և թէ ոչ եղիցի
քեզ յմ̃՝ առաւել քան զա̃մ բարե-
կամ, լիցիս տրտում յոյժ և լքեալ։
Ապա անմտութի գործես, եթէ յայլ
ոք ապաւինիս, կամ ուրախ լինիս։
Ընտրեա՛ առաւել զճ̃ ամ̃ ունել քեզ
ոսոխ, քան թէ զյմ̃ բարկացեալ։
Ապա յա̃մ սիրելեաց միայն յմ̃ լիցի
քո հարազատ սիրելի։

Դ.

Դ· Սիրեաջի՛ր զնմ՟ վն՟ յնի՟ · այլ զյմ՟ վասն իւր : Միայն յն՟ քն՟ դեր 'ի մերոյ է սիրելի · զի միայն գտանի բարի և հաւատարիմ քան զնմ՟ բարեկամս : Վասն նր՟ և 'ի նմա սիրելի լիցին քեզ եթէ բարեկամք և եթէ թշնամիք · և վն՟ ամենեցուն ան՟ կա՛ց յաղօթս , զի ամենեքին զնա ծանիցեն և սիրեսցեն : Մի՛ ցանկար առանձինն իմն գովեստ կամ սէր ընդունիլ · զի այդ այ՟ միայն է , որում չիք ոք նմանօղ : Մի՛ յօժարեսցիս , թէ ոք առ քեզ 'ի սըրտի իւրում անձուկ ունիցի , և մի՛ դու ը՟ ումեք անձուկ սիրոյ կալցիս · այլ յն՟ լիցի 'ի քեզ , և յամենայն այլ բարի :

Ե· Լե՛ր մաքուր և ազատ 'ի ներքոյ , առանց ինչ ընդ արարածս ողեխառնութե՟ : Պարտ է քեզ մերկիկ լինել , և սիրտ մաքուր առ այ՟ ունել · եթէ կամիս ժամ առնուլ , և տեսանել զի քաղցր է տր՟ : Եւ արդարև ոչ լիցի քեզ այդմ ժամանել , թէ ոչ շնորհ նր՟ կանխեսցէ , և ձգեսցէ զքեզ · զի յամէ թափուր լեալ և զերծ , միայնդ ընդ միայնում միաւորեսցիս : Զի 'ի դալ շնորհին այ՟ առ մարդ , կարօղ լինի նա ամն՟ · և 'ի հեռանալ նր՟ , չքա-

 ւո-

ւորի և տկարանայ. և ոչ լծէ 'ի տան֊ քանս մատնի : Յայսմ ամի չէ՛ պարտ նմա լքանել և յուսահատել. այլ կա֊ մաց ա՛յ երկայնամտել. և ամի, որ 'ի վե՛ր գայ, համբերել, 'ի գովեստ յա՛ն քա՛ն : Զի յետ ձմերայնի գայ ամառն. յետ գիշերի տիւ, և յետ մրրկի պար֊ զուն օդոյ :

---

## ԳԼ. Թ :

### Յաղագս պակասութեան ամ սփոփանաց :

ա՛ծ. Ոչ է ինչ ծանր զմարդկային սփո֊ փանս արհամարհել. յորժամ առըն֊ թեր կայ ա՛ծայինն : Մեծ է և յոյժ մեծ, եթէ 'ի մարդկայնոց և եթէ յա՛ծայնոց վրէպ լինել սփոփանաց, և 'ի պատիւ ա՛յ՝ մատուցեալ համբերել վտարանդութեան սրտի, և ո՛չ յիրս ինչ խնդրել զանձն, և ո՛չ յիւրն հայել արժանաւորութի : Զի՛նչ մեծ է, ե֊ թէ զուա՛րթ իցես և փոյթեռանդն 'ի դալ շնորհի. այդ ժամ ամենեցուն է ըղձալի : Խնդամիտ ձիավարէ, զոր շնորհք ա՛յ բարձեալ տանին : Եւ զի՛նչ զարմանք են, թէ չզգայ ինչ ծանրու֊

 թի,

թն, որ բարձեալ բերէ յամենակա-լէն, և որում առաջնորդէ առաջնոր-դացն առաջնորդ:

Է̃. Մտադիւր բերիմք 'ի սփոփանս, և դժուարին է մարդոյ մերկանալ յանձնէ. Յաղթեաց սր̃ վկայն Լաւրենտիոս՝ Տն, ը̃ իւրում քահանայի. զի զա̃մ գրգանս Տն արհամարհեաց. և այնմ ևս՝ զի բարձաւ յիւրմէ մեծ քահանայն ա̃յ Քսեստոս՝ զոր յոյժ սիրէր, վս̃ սիրոյն ք̃ի հեղուք̃ տարաւ: Ապա սիրով արարչին՝ մարդկային սիրոյ յաղթեաց. և փոխանակ մարդկային սփոփանաց՝ զա̃ծային հաճոյսն ընտրեաց: Ուսի՛ր և դու զկարևոր և զսիրելի քո բարեկամ վս̃ ա̃յ սիրոյն թողուլ: Եւ մի՛ ինչ դժգմնեսցիս, յորժամ լքեալ թողցիս 'ի բարեկամէ, գիտելով թէ պարտ է ամենեցուն մեզ հուսկ ուրեմն մեկնիլ 'ի միմեանց:

Ը̃. Պիտոյ է մարդոյ բազում և ը̃-երկար պատերազմիլ յինքեան, մինչև ուսցի լիով յաղթել անձին, և զա̃մ զիւր ախորժակ ձգել յա̃ծ: Յորժամ զանձինն հոգայ մարդ, դիւրաւ գթէ 'ի մարդկային մխիթարութիւն: Այլ որ ճշմարիտ սիրօղն է ք̃ի, և ժրաջան հետամուտ առաքինութեց, ոչ անձնա-

տուր

տուր լինել 'ի մխիթարութիւնս, և ոչ խնդրել զայդպիսի զգայական քաղցրութիւնս. այլ ձեռնարկել 'ի մարդս արիականս, և 'ի խստամբեր ճգունս վասն քո:

Դ. Ապա 'ի տալ քեզ այ զհոգևորական մխիթարութիւն, գոհութ ընկալջիր. բայց և 'ի միտ առջիր, թէ 'ի պարգևաց այ է այն. և ոչ 'ի քումմէ արժանաւորութէ: Մի՛ հպարտանար, մի՛ կարծի իմն լինդար, և մի՛ վստահիր 'ի մնոտիս. այլ ը պարգևին լե՛ր առաւել ևս խոնարհ, և զգուշաւոր և երկիւղած յամ 'ի գործս քո: Զի անցանէ ժամն այն. և զհետ գայ փորձութի: 'Ի բառնիլ մխիթարութե մի՛ անդէն վաղվաղակի յուսահատիր. այլ խոնարհութե և երկայնմտութե ակնկալջի՛ր երկնայինն այցելութե. զի կարող է այ միւսանգամ շնորհել քեզ առաւելագոյն ևս մխիթարութի: Ձէ՛ ինչ այս նոր և օտար, որոց փորձ են ճանապարհին այ. զի 'ի մեծամեծ սրբս և 'ի նախնի մարգարէս իսկ եղև յոլովակի այդպիսւոյ փոփոխութեան օրինակ.

Ե. Վասն որոյ 'ի գալ շնորհաց՝ ասէր. Ես ասացի 'ի բարեկենդանութե ի-

մուս, թէ ոչ սասանեցայց յաւիտեան։ Իսկ թէ զինչ ՚ի մեկնիլ շնորհաց ըղձայր յանձին, ՚ի վե՜ր բերէ ասելով. դարձուցեր զերեսս քո յինէն, և ես եղէ խռովեալ։ Սակայն և այնպէս յայսմ ժամի ինչ ոչ լքանի. այլ սաստ աղաչէ զՏր և ասէ. առ քեզ Տր կարդացի, և առ ած իմ աղաղակեցի։ Ապա զիւրոց աղօթից պտուղ ընկալեալ, վն լսելի լինելոյ իւրոյ վկայէ, ասելով։ Լուաւ ինձ Տր, և ողորմեցաւ, և Տր եղև իմ օգնական։ Եւ ևս։ Դարձոյց ասէ՝ զսուգ իմ յուրախութի, եղերծ յինէն զքուրձ. և ինձ զգեցոյց զուրախութիւն։ Արդ եթէ այս անցք անցին ընդ մեծամեծս ՚ի սրբոց, ապա անմարթ է յուսահատիլ մեզ տկարացս և աղքատաց, եթէ երբեմն յեռանդեան լինիմք, և երբեմն ՚ի հովուն։ Զի հոգին գայ և գնայ ըստ հաճոյից կամաց իւրոց։ Վայ ասէ երանելին յոբ. այց առնես նմա առաւօտու, և անդէն փորձես զնա։

Զ. Իսկ յի՞նչ յուսայցեմ, կամ յի՞նչ ապաւինիցիմ, բայց միայն յանբաւ մարդասիրութին այ. և միայն ՚ի յոյս երկնային շնորհաց։ Զի թէպէտ և արք բարիք առ ինև իցեն, թէպէտ

և ջերմեռանդն եղբարք կա՛մ մտերիմ
բարեկամք, թէպէտ և գիրք սո՛ւրբ և
ճառք հոգեպատումք, թէպէտ և
քաղցր երգք և օրհնութիւնք, այդ ա՛մ
սակաւ օգտէ ինձ, և սակաւ քաղց_
րանայ, ցորչափ լքեալ կամ 'ի շնոր_
հաց, և թողեալ յիմում աղքատութ ։
Եւ յայնժամ չիք լաւագոյն հնար քան
զերկայնմտութիւն, և քան զանձին 'ի
կամս ա՛յ յանձնարարութ ։

Է. Ո՛չ գոլի երբէք զոք այնպէս կրօ_
նաւոր և ջերմեռանդն, որ չունէր եր_
բեմն ցամաքութի շնորհաց. կամ չզգ_
ջայր նուազումն եռանդեան ։ Ո՛չ ոք
'ի սո՛ց այնպէս 'ի բարձունս յափշտա
կեցաւ և լուսաւորեցաւ, որ յառաջ
կամ զկնի չփորձեցաւ ։ Զի չէ արժա
նի նկատող լինել խորոցն ա՛յ, որոյ
չէ առեալ զճաշակ նեղութե՛ վա՛ ա՛յ ։
Քանզի յոլովակի հետագայ մխիթա_
րութե՛ յառաջընթաց փորձութին է
նշան ։ Իբրզի հանդիսացելոցն 'ի փոր
ձութիս, խոստացեալ լինի մխիթա_
րութին երկնային ։ Որ յաղթէ, ասէ,
տաց նմա ուտել 'ի փայտէն կենաց ։

Ը. Իսկ տուեալ լինի մխիթարութին
ա՛ծային. զի առաւել ևս զօրասցի
մարդ 'ի համբերել վշտաց ։ Զկնի գայ

և փորձուն, զի մի մեծամտեսցիս ընդ բարիսն: Ո՛չ ննջէ սատանայ. և չէ՛ մեռեալ դեռ մարմինն. վա՛ն մի դադարեր պատրաստիլ 'ի պատերազմ. զի ՚ի յաջմէ և յահեկէ թշնամիք կան, որք ոչ երբէք հանգչին:

---

## Գ. Լ. Ժ:

Յաղագս երախտագիտութեան առ շնորհս Այ:

Քս. Օե՞ խնդրես դու հանգիստ, որ ծնար յաշխատութիւն: Տո՛ւր զանձն 'ի համբերութիւն, և մի 'ի մխիթարութիւն. 'ի խաչակրութիւն, և մի յուրախութիւն: Ո՞վ ոք յաշխարհայնոց ո՛չ մտադիւր ընդունէր զհոգևորականն մխիթարութիւն և զուրախութիւն, եթէ յամ ժամ կարողանայր 'ի ձեռն բերել: Քանզի 'ի վեր են հոգևորական մխիթարութիւնք, քան զամ աշխարհական փափկութիւնս, և մարմնական հեշտութիւնս: Զի ամ աշխարհային փափկութիւնք և դրդանք կա՛մ սնոտի են, և կամ զազրալի: Միայն հոգևոր դրդանք են բերկրականք և վայելչականք, ծնունդք առաքինութեանց, և ածապարգև ձիրք մաքուր մտաց:

մտաց: Բայց յայսոսիկ ա̃ծածիր մխի-
թարութիւն՝ ոչ ոք ըստ կամս իւր յա̃մ
ժամ վայելել զօրէ ․ վ̃ն զի ժամանակ
փորձութեն ոչ յերկար լռէ:

ե̃․ Արդ վերնական այցելութեա յայժ-
դիմադարձի առեա աղաւտութե մտաց ․
և կարի իմն վստահուե յանձն: Բա-
րերար է ա̃ծ 'ի տալ զշնորհս մխիթա-
րութեն ․ բայց ապերախտի մարդ, ե-
թէ ոչ զա̃մն փոխատրէ ա̃յ գոհութ̃:
Վ̃նկ ոչ զեղուն 'ի մեզ բարուիք շնոր-
հաց ․ զի ապերախտ եմք տուողին, և
ոչ զա̃մն անդրէն հեղումք 'ի բուն աղ-
բիւր անդր: Ձի միշտ շնորհի է ար-
ժանի, որ զարժանին մատուցանէ շնոր-
հակալուի ․ և բառնի յամբարտաւա-
նէն, զոր ինչ օրէն է տալ խոնարհի:

զ̃․ Ոչ կամիմ զմխիթարուե, որ բառ-
նայ զիմ զղջուե ․ և ոչ զխորախոր-
հուրդ միտս, որ ածէ 'ի բարձրամբ-
տուե: Ձի ոչ ա̃մ բարձր է ս̃բ ․ և
ոչ ա̃մ քաղցր՝ բարի ․ և ոչ ա̃մ ցան-
կուե՝ մաքուր, և ոչ ա̃մ սիրելի՝ ա̃ծա
հաճոյ: Մտադիւր ընդունիմ զայն շը-
նորհ՝ որով յա̃մի առաւել խոնարհ և
երկիւղած գտանիմ, և 'ի չապաւինել
յիս լինիմ պատրաստագոյն: Ուսեալն
'ի պարգևէ շնորհաց՝ և խրատեալն

դա-

զանխիւ երեսադարձութեն՝ ոչ իշխէ բարի
ինչ անձին ընծայել. այլ աղքատ և
մերկ զինքն խոստովանի: Տուր այ
զայն, և կալ քեզ զքոյն. այս է. մա-
տո այ շնորհս ը շնորհաց. այլ ան-
ձին զյանցուածսդ միայն, և զարժա-
նի պատիժ յանցուածոցդ պատկանա-
դրեսջիր:

Է. Կալ քեզ միշտ զստորինն, և տա-
ցի քեզ վերինն. զի առանց ստորնոյն
ոչ կայ վերին. Սբք որք մեծ են յաչս
այ, փոքր են յաչս անձանց. և որ-
չափ փառաւորագոյն, այնչափ յին-
քեանս են խոնարհագոյն: Ճոխա-
ցեալքն ճշմարտութբ և երկնային փա-
ռօքն՝ չեն սնափառութե սիրողք: Յայ
հիմնեալք և հաստատեալք, ոչ իւիք
գիտեն փքանալ: Եւ որք զամ զածա-
ձիր բարիս այ տան, զփառս ՚ի մե-
մեանց ոչ խնդրեն. այլ զփառս զառ.
՚ի միոյն այ կամին. և զած յանձինս
և յամ սբս ՚ի վեր քան զամ օրհնել
ըղձանան. և միշտ ՚ի նոյն բերին:

Ը. Ապա լեր գոհացօղ ՚ի փոքունս,
և զմեծամեծս ըունելոյ լիցիս արժա-
նի: Եղիցի քեզ փոքրն որպ մեծ, և
դուզնաքեայն որպէս առանձինն իմն
պարգև: Եթէ ՚ի մեծութիւն հայիս

տես-

տուողին, ոչինչ տուրք փոքր են կամ խոտան ․ զի չեն ինչ փոքր՝ պարգևք մեծին այ ։ Թէպէտ և պատիժս և հարուածս 'ի մր ածիցէ , գոհացօ՛ղ լե ջիր ․ զի միշտ 'ի փրկուէ մեր գործէ , զոր ինչ Թողացուցանէ գալ 'ի վերայ մեր ։ Որ զշնորհս այ պինդ ունել կա֊ մի , մա տուեալ շնորհաց շնորհ կալ֊ ցի ․ և վասն բարձելոցն երկայնամիտ լիցի ։ Յաղօթս կացցէ, զի անդրէն տա ցի ․ զգուշաւոր և խոնարհ լիցի , զի մի կորուսցէ ։

---

## Գ Լ ․ ԺԱ ։

### Յաղագս առաջաւորէ սիրողաց խաչին յիի ։

ա ․ Սենի յա արդ բզմ սիրօղս արքայ ութե իւրոյ երկնաւորի ․ այլ բարձօղս խաչի իւրոյ սակաւս ։ Բազումս ունի փափաքօղս միխիթարուէ ․ այլ նեղու֊ Թե՝ սակաւս ։ Բազումս գտանէ հա֊ ղորդս սեղանոյ ․ այլ սակաւս՝ պա֊ հոց պնդուէ ։ Ամենեքին ցանկան ու֊ րախ լինել ընդ նմ ․ սակաւք կամին կրել ինչ վասն նր ։ Բազումք զհետ երթան յիի մինչ 'ի բեկումն հացին ․ բայց

սա֊

սակաւք մինչև ցարբումն չարչարա_
նաց բաժակին : Բազումք զքանչե_
լիս նր յարգեն . սակաւք նախատա_
նաց խաչին զկնի երթան : Բազումք
զյս սիրեն, ցորչափ ոչ պատահէ ինչ
նոցա վիշտ : Բազումք գովեն զնա և
օրհնեն, ցորչափ մխիթարութիւնս ինչ 'ի
նմանէ ընդունին : Բայց թէ թաքչի յս
'ի նոցանէ, և առ վայր մի թողու ըզ_
նս, կամ 'ի տրտունջ լուծանին, և կմ
'ի կարի խիստ լքումն :

Բ . Բայց որք զյս վն յսի, և ոչ վն
իւրեանց մխիթարութեանց սիրեն, յամ
նեղութիւնս և յանձկութիւնս սրտի իբրև 'ի
մեծի մխիթարութեան օրհնեն զնա : Թէ_
պէտ և չտայր ինչ երբեք նց մխիթա
րութի, սակայն և այնպէս միշտ օրհ_
նէին զնա, և միշտ գոհանային :

Գ . Ո՜վ, ո՜րչափ հզօր է սէրն յսի մա_
քուր, յամ դիւրուէ և 'ի սիրոյ անձին
անխառն : Ո՞չ վարձկանս կոչել ար_
ժան իցէ զամենեսին, որք միշտ 'ի
խնդիր են մխիթարութե : Ո՞չ անձնա_
սէրք իցեն քան քսսէրք, որք զդիւ_
րութի և զշահ անձանց միշտ խորհին :
Ո՞ւր գտանիցի ոք, որ ձրի պաշտի_
ցէ զած :

Դ . Ուր ուրեմն գտանի ոք այնպէս

հո_

հոգևոր, որ յամ լիցէ մերկացեալ։ Քանզի զճշմարիտ աղքատն հոգւով, և զմերկիկն յամ արարածոց ո՞վ գտանիցէ։ 'Ի հեռաստանէ և 'ի վերջին սահմանաց է յարգ նր։ Եթէ տայցէ մարդ զամ զիւր ինչս, ահա չէ՛ ինչ։ Թէպէտ և արասցէ ապաշխարութիւն մեծ, դեռ սակաւ ինչ է։ Թէ՛պէտ և խելամուտ լիցի ամ գիտութեց, դեռ 'ի բացէ է։ Թէպէտ և ստասցի առաքինութիւնս մեծամեծս, և մեծաբորբոք եռանդն, դեռ բազում ինչ պակաս է նմա. յայտ է թէ ինչ մի, որ մեծապէս պիտոյ է նմա։ Եւ ո՞ր լիցէ այն։ Զի 'ի թողուլ զամենայն, թողցէ և զանձն. և յիւրմէ դլխովին ելցէ արտաքս. և ոչինչ յանձնական սիրոյ կալցի առ իւր։ Եւ իբրև արասցէ զամ՝ զոր գիտէր թէ պարտ է առնել, համարեսցի թէ չէ ինչ իւր արարեալ։

Ե. Մի՛ մեծ ինչ դրեսցէ, զոր հնար էր մեծ համարել. այլ ճշմարտութբ ծառայ անպիտան զանձն խոստովանեսցէ. որպէս և ճշմարտութիւնն ասէ. յորժամ առնիցէք զամ հրամայեալսն ձեզ, ասասջի՛ք, եթէ ծառայք անպիտանք եմք։ Յայնժամ ստուգութբ աղքատ

և

և մերկ լիցի հոգւով. և կարօղ լիցի ընդ մարդարէին ասել. զի միամօր և աղքատ եմ ես: Սակայն չիք ոք փարթամագոյն, և ոչ զօրագոյն, և ոչ ազատագոյն քան զայն, որ զիւրն զինքն և զամ թողու. և 'ի յետին նուաստութի զանձն իջուցանել:

## Գ Լ. ԺԲ:

Յաղագս արքունի ճանհի սրբոյ խաչին:

ա. Խիստ թուի բազմաց բանս. ուրացի՛ր զանձն, ա՛ռ զխաչ քո, և եկ զկնի իմ: Բայց խստագոյն ևս եղիցի լսել զվերջին զայն բան. երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական: Զի որք արդ մտադիւր լսեն և զհետ երթան ձայնի խաչին, ոչ երկիցեն յայնժամ 'ի լրոյ յաւիտենական դատապարտութե: Այս նշան խաչի երևեսցի յերկինս, յորժամ եկեսցէ տր 'ի դատել: Յայնժամ ամ ծառայք խաչին, որք խաչելոյն խաչակցեցան յամի կեանս, մատիցեն առ քս դատաւոր բազում համարձակութ:

բ. Արդ զի՞ երկնչիս բառնալ զխաչն,

տրով լինի մուտ յարքայութիւն ։ 'Ի խա-
չի է փրկութի ․ 'ի խաչի կեանք , 'ի խա
չի պաշտպանութի 'ի թշնամեաց ․ 'ի
խաչի հեղումն վերնական քաղցրութե ․
'ի խաչի զօրութի մտաց ․ 'ի խաչի խըն-
դութի հոգւոյ ․ 'ի խաչի լրումն առա-
քինութե ․ 'ի խաչի կատարելութի սրբու-
թե ։ Չիք փրկութի հոգւոյ , և ոչ յոյս
յաւիտենից կենաց , բայց եթէ 'ի
խաչի ։ Ապա բա՛րձ զխաչ քո , և երթ
զկնի յի՛ի , և ժամանեսցես 'ի կեանսն
յաւիտենից ։ Յառաջեաց նա՝ բար-
ձեալ զիւր խաչն , և մեռաւ վասն քո
'ի խաչի ․ զի և դու զքոյդ բարձցես
զխաչ , և ախորժեսցես մեռանել 'ի
խաչի ։ Զի եթէ ընդ նմա մեռանիս ,
ը՛ նմին և կեցցես ․ և թէ կցորդ լի-
նիս տանջանացն , կցորդ լիցիս և փա-
ռացն ։

Գ ․ Ահա 'ի խաչի հաստատեալ է ա՛մ ,
և 'ի մեռելութե եդեալ կայ ա՛մ ․ և
չիք այլ ճ՛պհ կենաց՝ և ճշմարիտ ներ-
քին խաղաղութե , բայց միայն ճ՛պհ
խաչին , և հանապազորդ մեռուցման ։
Գնա՛ , ուր և կամիս , և խնդրեա՛ զոր
և կամիս ․ ո՛չ գտցես բարձրագոյն ճա-
նապարհ 'ի վեր , և ապահովագոյն
ճանապարհ 'ի խոնարհ՝ բաց 'ի ճանա-

պարհէ մէջ խաչին։ Տնօրինեալ և կարգ
դեալ զամ ըստ կամս քո, և ոչ զիարդ
թուի քեզ. և միշտ գտցես խաչ, ո-
րում պարտ է համբերել կամայ կամ
ակամայ. և այնպէս միշտ գտցես ըզ-
խաչ։ Զի կամ ցաւս 'ի մարմնի ունի-
ցիս, և կամ վիշտս 'ի հոգի։

Է. Երբեմն առ յայ լքեալ թողցիս.
երբեմն յընկերէն նեղեսցիս. և որ
եւս է, բազում անգամ անձամբ ան-
ձին իսկ ծանրասցիս։ Եւ ոչ ժամա-
նեսցես գտանել ինչ հնար զերծանե-
լոյ, կամ սփոփանս՝ անձին դիւրե-
լոյ. այլ ցորվայր կամք են այ՝ մնայ
քեզ համբերել։ Զի այ կամք այս են,
ուսանիլ քեզ՝ անմխիթար տանիլ նե-
ղութն, և ամբ զքեզ նմա հնազան-
դել, և 'ի նեղուէ առաւել եւս
խոնարհ լինել։ Ոչ ոք այնպէս ամո-
քի 'ի չարչարանս քի, ոչ այն՝ որում
հասանէ զնոյնս չարչարել։ Ապա յամ
ժամ 'ի պատրաստի է խաչն, և ամ
ուրեք քեզ սպասեալ մնայ։ Չիք քեզ
խուսել 'ի նմանէ, յոր վայր և ընթաս
ցիս. զի ուր և դնաս, զքեզ ընդ քեզ
տանիս. և միշտ զքեզ գտանես։ Դար
ձիր 'ի վեր, դարձիր 'ի վայր, դար-
ձիր 'ի ներքս, դարձիր արտաքս. և

յա-

՚յամենայնի յայսմ գտցես զխաչ ։ Եւ
հարկ է քեզ ամ ուրեք համբերութի
ւնիլ ։ Եթէ կամիս ստանալ զներքին
խաղաղութի, և արժանի լինել անթա-
ռամ պսակին ։

Ե․ Թէ մտադիր զխաչն բառնաս,
բարձցէ զքեզ, և տարցի 'ի վախճան
ցանկալի, ուր վախճան լիցի չարակ-
րութեանց․ զոր ոչն է տեսանել աստ ։
Եթէ ակամայ բառնաս, բեռն առ-
նես անձին, և զքեզ առաւել ևս
ծանրաբեռնես․ սակայն և այնպէս
ճնայ քեզ համբերել ։ Եթէ մերժես
զմի խաչ, անտարակոյս զայլ խաչ
գտցես, և թերևս ծանրագոյն ։

Զ․ Կարծիցե՞ս զերծանիլ, յորմէ ոչոք
'ի մարդկանէ եղև զերծ ։ Ո՞ք 'ի սրբց
եղև յշխի առանց խաչի և նեղութե ։
Զի և ոչ տր մեր յս քս եղև ժամ մի
առանց ցաւոց չարչարանաց, ցորչափ
եկեաց ։ Պարտ էր՝ ասէ, քսի չարչա
րել, և յառնել 'ի մեռելոց, և այնպ
մտանել 'ի փառս իւր ։ Եւ զիա՞րդ դու
այլ ճնպհ խնդրես քան զարքունի զայս
ճնպհ սրբյ խաչին ։

Է․ Ամ կեանք քսի խաչ էին և մար-
տիրոսութի, և դու խնդրե՞ս քեզ հանգիստ
և խնդութի ։ Խաբիս, խաբիս,

Թէ այլ ինչ խնդրես , և ոչ զհամբե_
րութե̃ն 'ի վիշտս ։ զի բովանդակ մահ_
կանացու այս կեանք լի են Թշուառու_
Թե̃ք , և շուրջ կնքեալ խաչիւ ։ Եւ
որչափ բարձրագոյն ոք յառաջադէմ
է ըստ հոգւոյ , այնչափ ծանրագոյնս
յոլովակի գտանէ խաչս ։ Զի աքսո_
րանաց իւրոց պատիժ առաւելու 'ի
սիրոյ ։

ը̃ . Բայց որ այսմ բազմօրինակ տա_
ռապի , չէ՛ ինչ անմահ 'ի մխիթարու_
Թէ . գիտելով Թէ մեծապէս առա_
ւելու շահ անձին 'ի համբերութէ̃ ան_
տի խաչին ։ Զի 'ի բառնալ զնա յուս
իւր յօժարութ̃բ , ամ̃ բեռն նեղութ̃ փո_
խի 'ի քաղցրութե̃ն մեծային մխիթա_
րութե̃ն ։ Եւ որչափ խոշտանգի մար_
մինն վշտօք , այնչափ զօրանայ հոգին
ներքին շնորհօք ։ Եւ երբեմն այնպէս
քաղցրերի անձկանօք նեղութ̃ և վշտ_
տաց , 'ի սակս սիրոյ նմանակցութե̃
խաչին ք̃սի , մինչև ոչ են նմա կամք
լինել անցաւ և անվիշտ . զի այնչափ
առաւել մեծահաճոյ զանձն վարկա_
նի , որչափ բազումս և դժուարա_
կիրս վ̃ն նր̃ կրել յանձն առնու ։ Ո՛չ
է այս կար զօրութ̃ մարդոյ , այլ շնորհ
ք̃սի , որ այնչափ ազդէ և ներգործէ

'ի

'ի տկար մարմին, մինչև յորմէ բնա-
պէս յաւէտ խորշի և խուսափէ՝ յայն
տարփմամբ սրտի ձեռնարկել նմա, և
սիրել զնա։

Ժ. Ո՛չ է մարդկան է բառնալ զխաչ.
և սիրել զնա. ատել զմարմինն, և ծա-
ռայեցուցանել. փախչել 'ի պատուոյ,
և մտադիւր համբերել նախատանաց.
զանձն արհամարհել, և զարհամար-
հանս ախորժել. զամ վիշտս վնասուք
յանձն առնուլ, և ոչինչ յաջողուած
յշխի աստ խնդրել։ Եթէ յանձն հայիս,
և ոչ զմի յայսպիսեաց աստի քեզէն
ճարողանաս առնել։ Բայց թէ 'ի տր
յուսացեալ ես, տացի քեզ յերկնից զօ-
րութի. և է բռամբ նուաճեսցես զաշ-
խարհ և զմարմին։ Այլ և ոչ 'ի բան-
սարկու թշնամւոյն երկիցես, եթէ
հաւատոյ զինուք վառեալ ես, և խա-
չիւ քի կնքեալ։

ԺԱ. Ապա զօրացիր ով քաջ և հաւա-
տարիմ ծառայ քի 'ի բառնալ արիաբար
զխաչ տն քոյ. որ խաչեցաւ վս սիրոյ
քոյ։ Պատրաստեա՛ զքեզ տանիլ բա-
զում վշտաց, և պէսպէս նեղութեց 'ի
ցաւալից յաստի կեանս. զի այսպ է
քեզ եղիցի, ուր և լինիցիս. և աստու-
ծուէ գտցես զնա, յոր վայր և թա-

քուցեալ իցես ։ Պարտ է այսմ այսպէս լինել. և չիք հնար զերծ լինել ՚ի չարակութենէ և ՚ի ցաւոց, բայց եթէ համբերելով ։ Զբաժակ տն ախորժելով արբջիր, եթէ բարեկամ ես նր, և մասն ընդ նմա ունել ըղձանաս ։ Զմխիթարութիս յած յանձն արա. և արասցէ նա ած այսպիսիս, ոպ զիարդ առաւել հաճոյ իցէ նմա ։ Այլ դու հաստատեա զքեզ ՚ի համբերութիւն վըշտաց, և համարեա զնս մխիթարութի մեծ ։ Զի ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոցն փառաց, թէպէտ և անձամբ լոկով ամե համբերէիր ։

ԺԱ. Իբրև ղայն վայր հասանիցես, մինչև քաղցրանալ քեզ նեղութե վն քսի. ծանիր, թէ յաջողեալ է քեզ. զի գտեր զարքայութի յերկրի ։ Ցորչափ ծանր է քեզ չարչարիլ, և փախուստ խնդրես, չէ յաջողեալ քեզ. և զհետ եկեսցէ քոյ ամ ուրեք նեղութի, յորմէ փախչիս ։

ԺԲ. Եթէ պատրաստ ես ՚ի վիշտս և ՚ի մահ՝ ոպ պարտն է, վաղ յաջողեսցէ քեզ ՚ի բարի. և խաղաղութի գտցես ։ Թէպէտ և յերրդ երկինս յափշտակեացիս ընդ պօղոսի, սակայն և այնպէս

չես

ջես անքոյթ 'ի կրելոյ զհակառակութիւն․ զի ասէ յս̃․ ես ցուցից, որչափ պարտ իցէ նմա չարչարիլ վն̃ անուան իմոյ։ Ապա կայ մնայ քեզ չարչարիլ, եթէ քաղցր է քեզ սիրել զյս̃, և հանապազ նմա ծռ̃յել։

ժզ̃։ Երանի՛ թէ արժանի լինէիր կրել ինչ վասն անուանն յս̃ի․ քանի՛ փառք մնային քեզ․ քանի՛ ցնծութի լինէր ամս̃րբց, և քանի՛ շինութի ընկերաց։ Զանզի զհամբերութի ամենեքին գովեն, թէպէտև սակաւք համբերել կամին։ Ցիրաւի էր քեզ մտադիւր կրել խուն ինչ վն̃ քս̃ի․ ուր բազումք ծանունս կրեն վն̃ Ա̃ի։

ժէ̃․ Գիտելով գիտասջիր, թէ պարտ է քեզ կեանս վարել մահականս․ և որչափ առաւել ոք մեռանի անձին, այնչափ առաւել կենդանի լինի յա̃ծ։ Ոչ ոք է արժանի հասանել երկնաւորաց, թէ ոչ յանձն առնու համբերել վասն քս̃ի վշտաց։ Ոչ ինչ առաւել ա̃ծահաճոյ, չիք ինչ քեզ առաւել փրկական յա̃ի աստ, ո̃ղ մտադիւր չարչարիլ վասն քս̃ի։ Եւ թէ 'ի ձեռս էր քոյ ընտրել, յաւէտ պարտ էր քեզ փափաքել՝ վն̃ քս̃ի վշտաց համբերել, քան 'ի բազում մխիթարութիւս վայելել։

լեալ։ Զի քանի լինէիր նմանագոյն, և ևս սրբոց կերպարանակից։ Զի չեն հաստատեալ արդիւնք մեր, և յառաջադիմութ վիճակի մերոյ՝ 'ի բզմ քաղցրութիւնս և 'ի մխիթարութիւնս. այլ յաւէտ 'ի համբերել մեծամեծ ծանրութեանց և նեղութեանց։

ԺԵ. Թէ արդարև կայր ինչ լաւ և օգտակար փրկութ մարդկան քան զչարչարիլ, ցուցեալ էր արդեօք քնի զայն բանիւ և օրինակաւ։ Քանզի և զաշակերտսն որք զհետ չոքան նր, և զամենեսին իսկ, որք ցանկացան հետևել հետոց նր, յայտնի 'ի խաչաբարձութ հրաւիրեաց, ասելով. եթէ որ կամի զկնի իմ գալ, ուրացցի զանձն, և առցէ զխաչ իւր, և եկեսցէ զկնի իմ։ Ապա զայս ամ ընթերցեալ և քննեալ, յայս կնքեսցուք զբանս. Թէ բազում նեղութբ պարտ է մեզ մտանել յարքայութիւն այ։

Կատարեցան խրատք որք ձգեն զմեզ 'ի ներքինս ։

ԳԻՐՔ



# ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ.

## Յաղագս ներքին մխիթարութեան :

## ԳԼՈՒԽ. Ա.

Յաղագս ներքին խօսից քսի առ հաւա-
տացեալ ոգի :

ԼՈՒԱՅՑ ԶԻՆՉ ԽՕՍԻ
ի յիս տր ած : Երանի՛ ան-
ձին՝ որ լսէ զն բարբառե-
լոյ 'ի նմա · և 'ի բերանոյ նր ընդու-
նի զբան մխիթարութե : Երանի՛ ական-
ջաց, որք զուղխս ածային ազդեցութե
ընդունին · և աշխարհի քրթմնջանաց
ոչինչ միտ դնեն : Երանի՛ ականջաց,
որք ոչ ունկն դնեն արտաքին հնչման
ձայնի, այլ ներքին ճշմարտութե որ ու-
սուցանէ : Երանի՛ աչաց, որք առ ար

տաքինս փակեալք են, և առ ներքինս յառեալք: Երանի, որք 'ի ներքինս ե̄_մտանեն, և առ իմանալ զերկնային գաղտնիս և ևս քան զևս հանապազորդ կրթութե̄ք ջանան պատրաստել զան_ձինս: Երանի, որք խնդամիտ պատրաստ զին յո̄ժ, և զա̄մ խոչ ծային յան_ձանց 'ի բաց թօթափեն: 'Ի մի՛տ առ զայս անձն իմ. և փակեա՛ զզգայու_թեանց քոց դրունս. զի կարող լիցիս լսել, զինչ խօսի 'ի քեզ Տ̄ր Ա̄Ծ քո:

Ե̄. Այսպէս ասէ սիրելին քո: Փրր_կութի քո ես եմ. խաղաղութի քո, և կեանք քո: Կա՛ց զքեզ առ իս. և խա_ղաղութի գտցես: Թո՛ղ զա̄մ անցա_ւորս. և խնդրեա՛ զանանցս: Զինչ են ժամանակաւորքս, բայց եթէ պատրո_ղականք: Եւ զի՞նչ օգուտ են քեզ ա̄մ արարածք, եթէ լքեալ թողցիս յա_րարչէդ: Ապա հրաժարեալ յա̄մէ, ա_րարչի քում լե՛ր հաճոյ և հաւատա_րի՛մ. զի ճշմարիտ երանութի լինիցիս հասու:

## Գ Լ · Բ :

### Թէ ճշմարտութի՞ն ներքուստ խօսի լռելեայն :

Ա · Խօսեաց Տէր, զի լուիցէ ծառայ քո ։ ծառայ քո եմ ես · իմաստուն արա զիս · զի ծանեայց զվկայութիս քո : Խոնարհեցո՛ զսիրտ իմ 'ի բանս բերանոյ քոյ · իջցեն ոպ̃ ցօղ պատգամք քո : Ասէին երբեմն որդիքն Իէլի ցՄովսէս · խօսեա՛ց դու ընդ մեզ, և լուիցուք · մի՛ խօսեսցի Ը̃ մեզ Տէր, դուցէ մեռանիցիմք : Ո՛չ այսպէս Տէր, ո՛չ այսպէս կամ ես յաղօթս · այլ ընդ Սամուէլի մարգարէին խոնարհութբ̃ և անձկանօք հայցեմ · խօսեաց Տէր, զի լուիցէ ծառայ քո : Մի՛ խօսեսցի Ը̃ իս Մովսէս, կամ 'ի մարգարէից ոք · այլ դու ինքնին խօսեա՛ց, Տէր, որ ազդիչ և լուսաւորիչ ես ամ̃ մարգարէից : զի դու միայն առանց նց̃ կարող ես լիով խելամուտ առնել զիս · բայց նք̃ առանց քոյ ինչ ոչ օգտեսցեն :

Բ · Կարող են բարբառել · այլ ազդումն ոչ բերեն ։ Գեղեցիկս խօսին,

այլ

այլ 'ի լռել քո՝ զսիրտս ոչ բորբոքեն։ Գիրս աւանդեն. այլ դու բանաս զմիտս։ Խորհուրդս քարոզեն. այլ դու յայտնես զխմաստս կնքելոց։ Պատուէրս առաջի առնեն. այլ դու օգնես 'ի կատարումն։ Ճանապարհ ցուցանեն. այլ դու զօրացուցանես 'ի գնացս։ Նոքա արտաքոյ միայն գործեն. այլ դու զսիրտս խմաստուն առնես, և լուսաւորես։ Նոքա արտաքոյ ոռոգանեն. այլ դու արգասաւորութի շնորհես։ Նոքա բարբառեն բանիւք, այլ դու իմաստ շնորհես լսելեաց։

Է. Ապա մի խօսեսցի ընդ իս Մովսէս. այլ դու Տէր Աստուած իմ, ճշմարտութիւն յաւիտենական. գուցէ մեռանիցիմ, և անպտուղ լինիցիմ. եթէ արտաքոյ միայն խրատեալ, և ներքոյ ոչ բորբոքիցիմ. զի մի 'ի դատապարտութիւն լիցի ինձ լսել զբանն և ոչ առնել. ճանաչել և ոչ սիրել. հաւատալ և ոչ պահել։ Ապա խօսեաց Տէր, զի լուիցէ ծառայ քո. քանզի բանս կենաց յաւիտենականաց ունիս։ Խօսեաց ընդ իս՝ անձին իմոյ 'ի մխիթարութիւն, և վարուց իմոց յուղղութիւն. և քեզ 'ի փառս և 'ի գովեստ և 'ի պատիւ յաւերժական։

Գ. Լ.

# Գ Լ. Գ.

Թէ զբանս այ խոնարհութբ պարտ է լսել. և թէ բազումք ոչ կշռեն զնս:

Ա. Լուր որդեակ իմոց քաղցր բանից. որ 'ի վեր են քան զամ գիտութի փիլիսոփայից և իմաստնոց աշխարհիս: Բանք իմ հոգի են և կեանք, և չեն մարդկային մտօք կշռելի: Չէ՛ մարթ ձգել զնս 'ի սնոտի հաճոյս. այլ լռութբ լսել արժան է. և ամ խոնարհութբ և մեծափափաք տենչմամբ ընդունել:

Բ. Եւ ասացի: Երանի՛ մարդոյ՝ զոր խրատես դու տր. և յօրինաց քոց ուսուցանես դու նմա. զի ցածուսցես դու նմա զաւուրս չարութե. և մի՛ ապականեսցի յերկրի:

Գ. Ես, ասէ տր, ուսուցի մարգարէից 'ի սկզբանէ. և մինչև ցարդ ոչ դադարեմ խօսել առ ամենեսին. բայց բազմք խուլ են առ ձայն իմ և խիստ: Բազումք մտադիւր լսեն զաշխ՝ քան զայ. դիւրագոյն զհետ երթան կամաց մարմնոյ իւրեանց՝ քան հաճոյից այ: Խոստանայ աշխ զժամանակաւորս՝ և զչըն-չինս,

չինս, և ծառայեն նմա տարփմամբ սրտի. խոստանամ ես զմեծամեծս և զյաւիտենականս, և Թմբրեալ են սիրտք մահկանացուաց: Ո՞վ այնչափ փութաջան ծառայէ և հնազանդի ինձ յամէ, ո̃չ ծառայեն Տի և տեարց նո̃: Ցամօթ լեր, սի՛դովն. ասէ ծով: Եւ թէ զպատճառն հարցանես, լո՛ւր: Վս̃ դոյզն շահավաճառի՝ երկար ճանապարհ հատանի. վասն յաւիտենից կենաց՝ բա̃մ անգամ և ոչ քայլ ոտին փոխի: Անարգ գինք խնդրին. վս̃ միոյ փողոյ երբեմն չարաչար կագեն. վս̃ սնոտի իրաց և դոյզն խոստմանն՝ զցայգ և զցերեկ տաժանիլ յանձն առնուն:
Դ. Այլ աւա՜ղ, զի վասն անփոփոխ բարւոյ, և վասն անգին հատուցման, վս̃ ծայրագոյն պատուոյ՝ և անզրաւ փառաց, առ սակաւ մի աշխատութն տաղտկան: Ապա յամօթ լեր ծառայ հեղգ և դանդաղաւոր. զի նո̃ք պատրաստագոյն գտանին ՚ի կորուստ, քան թէ դու ՚ի կեանս. Առաւել խնդան նո̃ք ընդ ունայնութ, քան թէ դու ընդ ճշմարտութի: Այնպի նո̃ք ՚ի յուսոյ իւրեանց երբեք երբեք վրէպ գտանին. այլ խոստումն իմ ոչ զոք խաբէ. և ոչ զյուսացեալս յիս արձակէ ունայն:

նայն ։ Զոր խոստացայն՝ տաց ․ զոր
ասացի , լցուցից ․ միայն թէ իսպառ-
կացցէ մնասցէ ոք հաւատարիմ ՚ի սէր
իմ ։ Պարգեւատու եմ ես ամ բարեաց ,
և քաջ հանդիսադիր ամենայն առա-
քինեաց ։

Է ։ Գրեա՛ զբանս իմ ՚ի սիրտ քո ․ և
ուշի ուշով խոկա՛ , զի ՚ի ժամանակի
փորձութեան պիտոյ եղիցին քեզ յոյժ ․
Զոր յընթեռնուլդ չիմանաս , ծանի-
ցես յաւուր այցելութեան ։ Կրկնակի սո-
վոր եմ այց առնել իմոց սիրելեաց ․
փորձութք և մխիթարութք ։ Եւ եր-
կուս դասս տամ նց զօրհանապազ ․
մի զախտս նոցա կշտամբելով ․ երկդ՝
յաճումն առաքինութեանց զնս խրախու-
սելով ։ Որ ունի զբանս իմ , և ոչ
պահէ զնս , գո՛յ որ դատէ զնա յա-
ւուրն յետնում ։

Աղօթք ՚ի հայցել զշնորհս եռանդութեան ։

Ը ․ Տր ած իմ , դու ես ամ բարութի իմ ։
Եւ ո՛ եմ ես , զի իշխեցից խօսիլ ընդ
քեզ ։ Ես աղքատին ծառայ քո եմ ․
և չնչին որդն ․ աղքատին և արհա-
մարհ , առաւել քան զոր գիտեմս և
համարձակիմս ասել ։ Այլ դու տր ,
յիշեա՛ զի ոչինչ եմ ․ ոչինչ ունիմ , և
ոչինչ իմիք ձեռնհաս եմ ։ Դու միայն
ես

ես բարի, արդար, և սբ. դու ամէն
կարող ես, զամ շնորհես, զամ լնուս,
զմեղաւորս միայն թողեալ թափուրս.
Յիշեա́ զգթութիս քո, և լցո́ զսիրտ
իմ շնորհօք քո. զի ո́չ կամիս գործոց
քոց լինել թափուրս:

Է. Զիա́րդ կարող իցեմ տանիլ ինձ
յաստի կեանս. թէ ոչ զօրացուսցես
զիս ողորմութ քո շնորհ: Մի́ դար-
ձուցաներ զերեսս քո յինէն: Մի́ յա-
պաղեր զայցելութի քո. և մի 'ի բա-
ցէ առներ զմխիթարութի քո. զի մի́
լիցի քեզ անձն իմ որպ երկիր անջրդի:
Տր ուսո́ ինձ առնել զկամս քո: Ու-
սո́ ինձ առաջի քո արժանապէս և
խոնարհութբ գնալ. զի իմաստութի
իմ դու ես, որ ճշմարտութեամբ զիս
ճանաչես, և ծանեար յառաջ քան
զլինելն իմ, և մինչև ծնեալ էր իմ
յաշխարհ.

Գ Լ.

## ԳԼ. Դ:

### Թէ պարտ է ճշմարտութեամբ և խոնարհութեամբ գնալ առաջի նորա :

ա̃. Որդեակ, գնա՛ առաջի իմ ճշմարտութբ̃. և միամտութբ̃ սրտի խնդրեա՛ զիս հանապազ: Որ գնայ առաջի իմ ճշմարտութբ̃, անքոյթ լիցի յարշաւանաց չարաց. և ճշմարտութիւն ազատեսցէ զնա 'ի մոլորեցուցչաց, և 'ի քամբասանաց անիրաւաց: Եթէ ճշմարտութիւն զքեզ ազատեսցէ, ճշմարիտ ազատ լինիցիս. և ոչինչ փոյթ լիցի քեզ զունայն խօսից մարդկան:

ը̃: Ճշմարտիւ այդ այդպէս է տր̃. եւ աղաչեմ, զի որպ̃ ասես, նոյնպէս եղիցի ը̃ իս: Ճշմարտութիւն քո ուսուսցէ զիս. նա զիս պահեսցէ, և մինչև 'ի փրկական կատարումն հասուսցէ: Նա զիս ազատեսցէ յամ̃ ախորժակաց չարաց, և յանկարգ սիրոյ. և գնասցից ը̃ քեզ յանդորր ազատութեան սրտի:

Ք̃. Ես ուսուցից քեզ, (ասէ ճշմարտութիւն,) զուղիղն և զհաճոյն առաջի իմ: Զմտաւ ած զմեղս քո բո̃վ թախծութ̃

ծուք և տրտմութք. և մի՛ երբէք համարեսցիս զանձն լինել ինչ ՚ի սակս գործոց բարեաց: Ահա մեղաւոր ես դու, և բազում կրիւք զգածեալ և պաշարեալ: Ինքնին միշտ ՚ի չքուն գընաս. վաղ անկանիս. վաղվաղակի յաղթիս, վաղվաղ խռովիս, և ՚ի նոյն լըքեալ լուծանիս: Չկայ ինչ քո՛ պարծիլ նովաւ. այլ բազում ինչ՝ յորմէ ունիս խոնարհիլ. վս զի տկար ես աւելի քան զկար իմանալդ քո:

Է. Ապա մի՛ ինչ քեզ մեծ թուեսցի՝ յամէ զոր առնես: Մի՛ ինչ պատուական և սքանչելի և արժանայարգ քեզ երևեսցի. մի՛ ինչ բարձր, մի՛ ինչ արժանագով և ցանկալի, բայց որ անանցն իցէ: Քաղցրասցի քեզ քան զամ ճշմարտութին յաւիտենական. դառնասցի քեզ համապազ քո յետին անարգութի: Մի՛ լիցի քեզ ուստեք այնպէս երկնչիլ, և խորշիլ և փախչիլ, ոպ յախտից քոց և ՚ի մեղաց. յորոց առաւել պարտ է քեզ խորշիլ՝ քան յամ վնասուց: Են որք ոչ միամտութ գնան առաջի իմ. այլ ընդվայրաքըննութ և յանդգնութ կամին զգաղտնիս իմ գիտել, և զխորս ծայ իմանալ, լթողեալ զանձանց և զփրկութ իւրեանց

ԸՆ

զփոյթ: Այսպիսիք ըղ̄մ անգամ ան_
կանին 'ի մեծամեծ փորձութիւնս և 'ի
մեղս, վ̄ս ամբարտաւանութե̄ իւրեանց
և ընդվայրաքննութե̄, 'ի դարձուցանել
ինձ զերեսս իմ 'ի նոցանէ:

Է: Երկի՛ր 'ի դատաստանացն ք̄յ. զար_
հուրեսջի՛ր 'ի ցասմանէ ամենակալին:
Մի՛ քններ զգործս բարձրելոյն. այլ
քննեա՛ զանօրէնութիւնս քո, թէ քանի
քանի յանցեար, և 'ի գործոց բարեաց
հեղգացար: Ոմանք փոյթեռանդն են
միայն 'ի գիրս, ոմանք 'ի պատկերս.
և ոմանք յարտաքին նշանս և 'ի ձևս:
Ոմանց 'ի շրթունս եմ միայն. այլ ոչ
նոյնպէս 'ի սրտի: Են և այլք, որք
միօք լուսաւորեալք և սրտիւ մաքրե̄լք
համապազ յաւիտենականացն փափա_
քին: Ծանր է նոցա լսել զերկրաւո_
րաց. և դառն է ն̄ց կարեաց բնութե̄
ծառայել. սոքա իմանան, զի՛նչ հո_
գին ճշմարտութե̄ խօսի 'ի ն̄ս: Զի ու_
սուցանէ ն̄ց զերկրաւորս արհամար_
հել, և զերկնայինս սիրել. զն̄է ան_
փոյթ լինել. և զցայգ և զցերեկ երկ
նից արքայութե̄ն փափաքել:

# Գ Լ. Ե.

Յաղագս սքանչելի պտղոյ աստուածային սիրոյ։

ա. Օրհնեմ զքեզ Հայր երկնաւոր, Հայր Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի, որ հաճեցար յիշել զիս զտնանկս։ Հայր գթութեանց, և Աստուած ամենայն մխիթարութեան, գոհանամ զքէն, զի զիս զանարժանս ամենայն մխիթարութեան զօրացուցանես երբեմն մխիթարութեամբ քո։ Օրհնեմ զքեզ միշտ և փառաւորեմ ընդ միածնի որդւոյ քոյ և ընդ Հոգւոյդ սրբոյ մխիթարչի յաւիտեանս յաւիտենից։ Եւ արդ Տէր Աստուած մարդասէր, յեկաւորիլ քո 'ի սիրտ իմ, ցնծասցեն ամենայն ոսկերք իմ։ Դու փառք իմ, և ցնծութիւն սրտի իմոյ։ Դու յոյս իմ և ապաւէն իմ յաւուր նեղութեան իմոյ։

բ. Բայց քանզի դեռ տկար եմ 'ի սէր, և անկատար յառաքինութեան. հարկ է ինձ 'ի քէն քաջալերիլ, և մխիթարիլ. վասն այց արա ինձ ստէպ. և ուսո՛ ինձ իմաստս սուրբս։ Ապրեցո՛ զիս յախտից չարաց, և բժշկեա զսիրտ իմ յամենայն անկարգ ըղձից. զի ներքոյ առողջացեալ, և քաջ մաքրեալ՝ եղէց

դի֊

գխպօղ 'ի սիրել, արխացե՛լ 'ի համբերել, և անվեհեր 'ի հնազանդել:

Է• Մեծ է սէր, և մեծ բարի, որ միայն թեթևացուցանէ զամ ծանրաբեռն, և կրէ հաւասար զամ անհաւասար: Զի զբեռնն բառնայ անբեռն, և զամ դառն՝ առնէ քաղցր և անոյշ: Ազնուական է սէրն յսի• խրախուսէ 'ի գործել զմեծամեծս• և յորդորէ միշտ ըղձանալ կատարելագունից: Սէրն կամի 'ի վեր բերիլ• և չառնու յանձն 'ի ստորինս փակիլ: Սէրն կամի ազատ լինել• և յամ աշխարհային ախորժակաց օտար• զի մի՛ ներքին նիւ տեսութի խափանեսցի• մի՛ անցաւոր ինչ դիւրութե թակարթեսցի, կա՛մ վշտօք վտանկեսցի: Քան զսէր չիք ինչ քաղցր, չիք ինչ զօրաւոր, չիք ինչ վսեմական, չիք ինչ անդորր, չիք ինչ բերկրական, չիք ինչ պատարուն, չիք ինչ լաւ քան զնա յերկինս և յերկրի: Զի սէր յայ ծնեալ է, և չիք նմա հանգչել՝ բայց միայն յած, 'ի վեր քան զամ արարածս:

Ը• Որ սիրէն, սլանայ, ընթանայ, և խայտայ• ազատ է, և ո՛չ կալանաւորի: Տայ զամ վա ամի, և ունի զամ յամի• զի 'ի մի ինչ գերակայ 'ի վեր

քան

քան զա̃մ հանդչի․ յորժամ ա̃մ բարութ̃ հոսէ, և բղխէ։ Ո՛չ հայի 'ի պարգևս, այլ 'ի պարգևիչ անդր բերի քան յա̃մ բարութիս։ Սէրն յոլովակի ո՛չ գիտէ զպայման, այլ քան զա̃մ պայման՝ եռանդագին է։ Սէրն ո՛չ իմանայ ինչ բեռն, ո՛չ համարի ինչ զվաստակս․ առաւել ձկտի քան զիւր կար, և ո՛չ պատճառի ինչ անհնարութ̃․ զի համարի թէ հնար է, և օրէն է նմա ա̃մ։ Ապա բաւական է առ ա̃մ, և բազում ինչ լնու․ և ձեռներէց է 'ի կատարումն․ ուր որ ոչն սիրէ, լքանի, և անկեալ դնի։

Ե. Սէր արթուն է․ 'ի ննջել իւրում ո՛չ 'ի քուն երթայ։ Աշխատեալ՝ ո՛չ պարտասի․ նեղեալ՝ ո՛չ տագնապի, զարհուրեալ ո՛չ խռովի․ այլ որպէս բոց բորբոքեալ և ջահ վառեալ 'ի վեր ցոլանայ․ և անվեհեր ընդ ա̃մ անցանէ։ Եթէ ոք սիրէ, իմանայ, զի՛նչ այս ձայն հնչէ։ Մեծ բարբառ յականջս ա̃յ է նոյն ինքն վառեալ իղձ սրտի, որ ասէ․ Ա̃ծ իմ, սէր իմ․ դու իմ ես բոլորովին, և ես քո ամենևին։

Զ. Անդորր արա ինձ 'ի սէր․ զի ուսայց բերանով սրտի ճաշակել, թէ

է ո՛չ

մ̃պ քաղցր է սիրել․ և 'ի սէր անդ
հալիլ և լուծիլ։ Կալցնաւորեցայց սի
րով, ելեալ ըստ սահման անձին առ
կարի եռանդեան և հիացման։ Եր֊
գեցից զերգ սիրոյ․ զհետ երթայց
սիրելւոյդ իմոյ 'ի բարձունս․ նուա֊
ղեսցի յօրհնութիւն քո անձն իմ՝ խան֊
դաղակաթ սիրով։ Սիրեցից զքեզ ա֊
ռաւել քան զիս, և զիս միայն վ̅ք քո․
և զամենեսին 'ի քեզ, որք ճշմարտութ̅
սիրեն զքեզ, որպէս հրամայեն օրէնք
սիրոյ առ 'ի քէն ծագեալք։

Է․ Արագ է սէր, և անկեղծ․ բարե֊
պաշտօն, բերկրական և զուարճալի․
զօրաւոր․ համբերող․ հաւատարիմ․
իմաստուն, երկայնամիտ, արիական,
որ ոչ երբէք խնդրէ զանձն։ Զի ուր
խնդրէ ոք զանձն, անդէն անկանի 'ի
սիրոյ։ Շրջահայեաց է սէր, խոնարհ,
և ուղիղ․ ոչ թուլամորթ, ոչ թե֊
թև, և ոչ ունայնասէր․ այլ զգաստ,
ողջախոհ․ հաստատուն․ հանդարտ․ և
յամ՝ զգայարանս զգուշաւոր։ Սէր
հլու և հնազանդ է առաջնորդաց․
յաչս անձին խոտան և արհամարհ․
յաչս ա̃յ ջերմեռանդն և հաճոյարար․
վստահացեալ և յուսացեալ միշտ 'ի
նա․ Թէպէտ և ոչ քաղցրացի նմա

ԺԵ. զի չէ ինչ անցաւ, որ կեայ 'ի սէր:

ԺԶ. Որ ոչ է պատրաստ 'ի կրել զա̃մ, և կալ 'ի կամս սիրելւոյն, չէ արժանի կոչիլ սիրող: Պարտ է սիրողին զա̃մ խստութի̃ և դառնութի̃ վասն սիրելւոյն մտադիւր յանձն առնուլ. և ոչ առ ձախող պատահարաց խոտորիլ 'ի նմանէ:

---

## Գ Լ. Զ:

### Յաղագս հանդիսի ճշմարիտ սիրողի:

Ա. Որդեակ, չես դու դեռ քաջ և խոհական սիրող:

Բ. Եւ զիա՞րդ տէր:

Գ. Զի վա̃ դոյզն ընդդիմութե̃ ձեռնթափ լինիս 'ի սկսելոց. և կարի իմն անձկանօք 'ի խնդիր ես մխիթարութե̃. Քաջ սիրողն պինդ կայ 'ի փորձութիս, և ոչ հաւատայ խորամանկ հրապուրանաց թշնամւոյն: Որպ̃ հաճեալ է ը̃ իս 'ի յաջողուածս, նոյնպէս չխոտորի ը̃ իս 'ի ձախորդութիս:

Դ. Խոհական սիրողն ոչ այնչափ 'ի պարգեւն հայի սիրողին, որքան 'ի սէր

տուո_

տուողին : Առաւել հայի յիղձն՝ քան
՚ի տուրս • և քան զսիրելին ՚ի ստոր
դասէ զամ զատուեալս : Ազնուական
սիրող ոչ հանգչի ՚ի պարգեւն, այլ յիս
՚ի վեր քան զամ պարգեւ : Վն այսորիկ
չէ սպառապառ կորուստ, եթէ ու-
րեք երբեք ոչ ոպ կամէիր՝ քաղցրա-
նաս յիս, կամ ՚ի սրբս իմ : Ախորժակն
այն բարի և քաղցր, զոր երբեմն յան-
ձին զգաս, գործ է այժմու շնորհաց •
և առհաւատչեայ իմն երկնային դա-
ստին • յոր չէ մարթ կարի իմն վըս-
տահիլ • զի գայ և գնայ : Պատերազ-
միլ ընդ չարաչար ամբոխմունս սրտի
որք դիպին, և զթելադրութիս արհա-
մարհել զբանսարկուին, նշան է ա-
ռաքինութէ, և արդեանց մեծաց :

Ե • Ապա մի խռովեսցեն զքեզ օտարո-
տի ցնորք, որ յինչ ելիցէ իրաց գան
՚ի քեզ : Հաստատուն կալ զառաջա-
դրութի քո, և զուղիղ դիտաւորութե
առ ած : Չեն պատրանք, եթէ եր-
բեմն յանկարծ ՚ի հիացումն յափշտա-
կիս • և անդէն վաղվաղակի ՚ի սովո-
րական խակամտութի դառնաս : Զի
զայն ակամայ կրես՝ քան առնես : Եւ
ցորչափ անհաւան ես այնմ, և դի-
մադարձիս, յարդիւնս են քեզ, և ոչ

'ի կորուստ:

Վ· Գիտասջի'ր · զի հի'ն թշնամին մեր հնարի խափանել զցանկումն քո 'ի բարին · և յամ ջերմեռանդն կրթութէ վրիպեցուցանել, 'ի մէջն պաշտամանէ, յիմաց չարչարանացն յիշատակէ, 'ի մեղաց յօգտակար յիշատակութէ, 'ի սրտի քոյ պահպանութէ, և 'ի հաստատուն առաջադրութէ յառաջադէմ լինելոյ յառաքինութի: Բազում խորհուրդս չարաչարս 'ի ներքս ածէ, զի զքեզ տաղտկացուսցէ և զարհուրեցուսցէ· և զի 'ի բաց արասցէ յաղօթից և 'ի սրբ ընթերցուածոց: Ոչ է նմա հաճոյ խոնարհ խոստովանութի· և թէ հնար էր, 'ի հաղորդութէ իսկ հրաժարեցուցանէր: Մի' հաւատար նմա, և մի' ինչ փոյթ լիցի քեզ վասն նորա, թէպէտ և յոլովակի որոգայթս լարեսցէ քեզ խաբէութեան:

Նմա' գրեսջի'ր, յորժամ չարիս և պղծութիս քեզ յիշեցուցանէ: Ասասջի'ր· երթ յետս իմ այսդ պիղծ· յամօթ լեր, թշուառական· գարշելի ես դու յոյժ, որ այդպիսի գարշունս յականջս իմ հեղուս: 'Ի բաց կաց յինէն, մոլորեցուցիչդ չար· չիք քո ընդ իս մասն· այլ Յիսուս եղիցի ընդ իս որպէս քաջ պատերազմող·

մօղ. և դու լիցիս ամաչեցեալ : Առաւել ընտրեմ մեռանիլ, և զամ պատիժ ապատուհասի յանձն առնուլ, քան զի_ջանել քեզ 'ի հաւանութի : Լաւ է կարկեաց, ոչ ես լսեմ քեզ, թէպէտ և բո՛մ աշխատութիս ինձ հնարեսցիս : Տր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց : Թէ յարիցէ 'ի վր իմ ճա_կատամարտ, ոչ երկիցէ սիրտ իմ :

Տր օգնական իմ և փրկիչ իմ:

Է: Մարտե՛ր ո՛չ քաջ զօրական. և թէ ուրեք երբեք 'ի տկարութէ անկա_նիս, անդրէն քաջալերութի զգեցի՛ր աւելի քան զառաջինն, յուսացեալ յա_ռաւելութի շնորհաց իմոց : և զգո՛յշ լեր յոյժ 'ի սնոտի հաճոյից, և յամ_բարտաւանութ է : Վայսորիկ բազումք 'ի մոլորութի վարին, և սահին երբեմն 'ի կուրութի իբր անբժշկական : Այլ քեզ 'ի զգաստութի լիցի՝ և 'ի հանապազորդ_խոնարհութի այս կործանումն ամբար_տաւանից, որք անմտութե վստահա_նան յանձինս :

## Գ Լ. Է:

### Յաղագս ծածկելոյ զշնորհս ընդ պահպա-նութեամբ խոնարհութեան:

Ա. Որդեակ լաւ է քեզ և աներկեւանս ծածկել զշնորհս եռանդեան, և չհպարտանալ յանձն. չառնել զնմանէ զրոյց բզմ, և ոչ առաւել մտաբերել. այլ լինել արհամարհ յաչս անձին, և որպէս անարժան այնմ պարգեւի՝ երկնչիլ: Մի՛ կարի ապաւինիր յախորժակ, որ վաղ փոխի ՚ի հակառակն: Զմտաւ ած ՚ի շնորհի անդ, քանի թշուառ և չքաւոր լինէիր առանց շնորհաց: Ոչ է ՚ի նմա այնչափ՝ հոգեւոր կենաց օգուտ, յորժամ զմխիթարութն ունիցիս շնորհս, այլ՝ յորժամ խոնարհութբ և անձին ուրացութբ, և համբերութբ ժուժկալեսցես ՚ի բառնիլ նորա, մինչև յայնժամ չթուլանալ բ՚դ ՚ի փութոյ աղօթից, և չլքանիլ ամենևին յայլ սովորականս քոց գործոց. այլ մտադիր ՚ի քո կողմանէ առնել՝ որչափ ինչ ձեռնհաս ես. և ոչ առ ցամաքութ և նեղսրտութն քո զոր զգաս՝ ամենևին հեղգալ:

Բ.

Է․ Քանզի բազումք այնք են, որ յոյժ ժամ ոչ յաջողէ նց, անդէն կարճամըտին, և լքանին ։ Զի ոչ միշտ 'ի ձեռս է մարդոյ ճանպհ նր․ այլ այյ է տալ, և մխիթարել, երբ կամի, որչափ կամի, և ում կամի, ոպ զիարդ հաճոյ է նմա, և ոչ աւելի ։ Անզգոյշք ոմանք 'ի սակս շնորհի եռանդման՝ կործանեցին զանձինս․ զի գործել կամեցան աւելի քան զկար իւրեանց, ոչինչ հայեցեալ յիւրեանց փանաքութիւն չափ․ այլ զհետ երթեալ յաւէտ յօժարուե սրտի, քան բանին դատաստանի ։ Եւ զի ձեռներէց եղեն 'ի մեծամեծս քան զոր հաճոյն էր այյ, վասն վաղ կորուսին զշնորհս․ Եղեն աղքատք և խոտանք և ընկեցիկք՝ որոց եդեալ էր յերկինս զբոյն իւրեանց․ զի խոնարհեալք և չքաւորեալք, ուսցին ոչ իւրեանց թևօք թռչել, այլ 'ի հովանի թևոց իմոց յուսալ ։ Նորամուտքն և անհմուտք ճնպհի տն թէ ոչ խորհրդով խոհականաց առաջնորդին, դիւրաւ պատրին, և զղեռնին ։

Ը․ Այս թէ կամիցին զիւրեանց կարծեաց զհետ երթալ, քան հմտացելոց հաւատալ, եղիցին ելք նց վտանգաւորք, եթէ առանուցուն յանձն յիւ_

րեանց

թեանց միայն 'ի բաց հրաժարիլ: Որք յաչս անձանց են իմաստունք, ուր ուրեմն խոնարհին յայլոց առաջնորդուել: Լաւ է սակաւ ինչ գիտել խոնարհութբ և փոքրիմաց միօք, քան մեծագանձ ունել գիտուն՝ հանդերձ սնոտի հաճուբ: Լաւ է թէ սակաւ իցէ քո՝ քան բազում, ուստի մարթիս ձգիլ յամբարտաւանութի: Ոչ իմաստութբ գործէ, որ գլխովին զանձն ուրախութե տայ, մոռացեալ զառաջին զիւր չքաւորութի, և զսր̄ երկիւղ տն՝ որ զառեալ շնորհն խիթայ կորուսնել: Չէ և քաջախոհ, որ 'ի ժամանակի նեղութե և ամ ծանրութե կարե լին լքանի, և ոչ որպ արժանն է, քաջայոյս է յիս՝:

Է. Որ 'ի ժամանակի խաղաղութե անհոգանայ, յոլովակի 'ի ժամ պատերազմի կարի իմն լքեալ և վատասիրտ գտանի: Եթէ գիտէիր հանապազ խոնարհ և արհամարհ լինել յաչս անձին, և ուղղոյ քում հանդարտութբ առաջնորդել, ոչ այդպէս վաղվաղակի անկանէիր 'ի վտանգ և 'ի խեղճ. Քաջ խորհուրդ է 'ի լինել եռանդան սրտի՝ խորհել քեզ, թէ զինչ լինիցի 'ի ճեռանալ լուսոյ: Որ թէ դիպեսցի,

զայն

զայն խորհեաց, թէ կայ հնար վերա_
դարձի լուսոյ, զոր 'ի զգուշութեն
քո՝ և 'ի փառս իմ՝ բարձի առ ժա
մանակ մի ։

Ե. Լաւ է յոլովակի փորձ այդպիսի, քան համայն 'ի յաջողուածս լինել ըստ քոց կամաց։ Զի յարդ արդեանց ոչ ըստ այնմ ինչ է, թէ ոք բազում տեսիլս կամ մխիթարութիւնս ունիցի, կամ քաջահմուտ գրոց իցէ, կամ 'ի գերակայ աստիճան տեղի ունիցի. այլ եթէ 'ի խոնարհութեան հաստատեալ իցէ, և ածային սիրով լցեալ. եթէ զփառս այ միայն յամի խնդրեսցէ. եթէ զանձն ոչինչ համարեսցի՝ և ճշմարտութե արհամարհեսցէ. և յայլոց ևս զարհամարհանս և զտնհարութե քան զպատիւ խնդալից ընկալցի ։

---

## Գ. Լ. Ը ։

### Յաղագս Նուաստ համարման անձին առաջի այ ։

Ա. Խօսեցայց ընդ տն իմում. բայց ես հող եմ և մոխիր։ Եթէ առաւել ինչ զանձն համարեցայց, ահա ընդդէմ դառ_

դառնաս դու ինձ. և ճշմարտութիւն վը-
կայեն անօրէնութիւնք իմ, և չունիմ տալ
պատասխանի: Ապա եթէ անարգեցից
զիս և արհամարհեցից, և յում պար-
ծանաց անձին կարծեցայց, և (ոչ
եմ իսկ) հողոյ համարեցայց, խնայես-
ցէ յիս շնորհք քո, և ծագեսցէ ՚ի
սիրտ իմ լոյս քո. և ամենայն յարգ անձին
թէպէտև չնչին՝ ՚ի ձոր չքութեան իմոյ
սուզեսցի՝ և կորիցէ իսպառ: Անդ
ցուցանես զիս ինձ, զի՞նչ եմ, զի՞նչ
էի, և ու՞ր վայր հասի: Քանզի ոչինչ
եմ, և ոչ գիտացի: Եթէ թողանիմ
զիս, ահա ոչինչ եմ, և գլխովին ա-
պիկար. ապա թէ յիս հայիս, անդէն
զօրանամ. և նոր խնդութիւն զգենում.
Եւ զարմանք մեծ այն են. զի այսպէս
յանկարծ վերբերիմ, և ՚ի մարդասի-
րեդ գրկալիր ողջունիմ, որ իմովս
ծանրութեամբ միշտ ՚ի ստոր բերիմ:

Ե. Զայս առնէ սէր քո, ձրի առա
կանխեալ, և ՚ի բազմադէմ կարիս ինձ
՚ի թիկունս հասեալ, ՚ի ծանունց վշտաց
զիս ապրեցուցեալ, և յանհամար չա-
րեաց զերծուցեալ: Իբր զի ՚ի սիրել
զիս չարաչար՝ զանձն իմ կորուսի. այլ
իբրև զքեզ միայն խնդրեցի, և սըր-
բութեամբ սիրեցի, զիս և զքեզ միահա-

գոյն

ղոյն գոլ ・ և 'ի սիրոյ անտի՝ խորա_
գոյն ես յիմ չքուէ խոնարհեցայ ։ Զի
դու տր քաղցր՝ առնես ընդ իս 'ի վեր
քան զիմ արժանաւորութի , և աւելի
քան զոր իշխեմ ակնունիլ կամ խնդ_
րել 'ի քէն ։

Գ・ Օրհնեալ ես տր ・ զի թէպէտ և
անարժան եմ՝ ես ամ բարեաց , բայց
քո առատուի և անբաւ բարուի ոչ
երբէք կասի բարի առնել և ապա_
շնորհաց , և կարի իմն 'ի քէն օտարա_
ցելոց ։ Դարձո զմեզ առ քեզ ・ զի լի_
ցուք հաճոյք , խոնարհք , և եռանդ_
նոտք ・ վս զի դու ես մեր փրկուի և
զօրուի և ամրուի ։

---

## ԳԼ ・ Թ ։

### Թէ զամ պարտ է վերաբերել յԱծ իբրև 'ի վերջին վախճան ։

ա ・ Որդեակ , զիս կալ քո գերակայ
և վերջին վախճան , եթէ ճշմարտուբ
ցանկաս լինել երանելի ։ Այսպէս դի_
տաւորութբ մաքրեսցի քո խղճ , որ յո_
լովակի 'ի քեզ և յարարածս միակ չա_
րաչար ։ Զի եթէ զանձն յիմէք խնդրես ,
ան_

ամենայն 'ի քեզ նուաղիս և ցամաքիս ։ Ապա զիմ նախ առաջին ինձ ընծայեսջիր․ զի ես եմ, որ ետու զիմ։ Այսպէս համարեսջիր զմի մի յայնց՝ որպէս գերակայ բարւոյն բղխմունս․ զի այսո րէկ յիս՝ իբրև 'ի սկզբն իւրեանց վերածել պարտ է զամենայն։

Ի․ Յինէն փոքունք և մեծամեծք, աղքատք և մեծատունք․ ով 'ի կենդանի աղբերէ առնուն ջուր կենդանի․ և որք ինձ կամակար և մտադիւր ծառայեն, շնորհս փոխանակ շնորհաց ընկալցին։ Իսկ որ առանց իմ պարծիլ կամի, կամ յառանձնական բարի ինչ բերկրիլ, մի հաստատեսցի 'ի ճշմարիտ խնդութեն․ և մի 'ի սիրտ իւր ընդարձակեսցի․ այլ բազմօրինակ խափանեսցի, և տագնապեսցի։ Ապա մի ինչ 'ի բարեաց՝ անձին գրեսցես, և մի յառաքինութեց ինչ՝ մարդոյ ընծայեսցես․ այլ զամ տուր ինձ, առանց որոյ ոչինչ ունի մարդ։ Ես ետու զամ, և բովանդակ զքեզ իմ լինել կամիմ․ և բազում ճշդիւ շնորհակալութի պահանջեմ։

Գ․ Այս է ճշմարտութի, յորմէ ինքնահալած լինի սնափառութի․ և թէ 'ի ներքս մտանէ շնորհն երկնային և

ճշմարիտ սէր, այնուհետեւ ո՛չ եղիցի ինչ նախանձ. եւ ո՛չ նեղսրտութիւն, եւ ո՛չ անձնասիրութիւն ունիցին զօրել: Զի յաղթէ ա՟մի սոցա ա՟ծային սէրն. եւ դիւրէ ա՟մ զօրութեց հոգւոյ: Թէ ուղիղ խորհիս, յիս միայն ուրախ եղիցիս. եւ յիս միայն յուսասցիս. զի չիք ոք բարի, բայց միայն ա՟ծ, որ քան զա՟մ է գովելի, եւ յա՟մի օրհնեալ:

---

## Գ Լ. Ժ:

### Թէ արհամարհողին զաշխարհ՝ քաղցր է ծառայել ա՟յ:

Աշ. Արդ միւսանգամ խօսեցայց տ՟ր, եւ ո՛չ լռեցից. բարբառեցայց յականջս ա՟յ իմոյ, տ՟ն իմոյ, եւ Թ՟ւորի իմոյ, որ էն 'ի բարձունս: Որպէս զի մեծ է օրհնութե քաղցրութե քո տ՟ր, զոր պահեցեր երկիւղածաց քոց: Զի՞նչ ես սիրողաց քոց, եւ որոց յա՟մ սրտէ ծառայեն քեզ: Ահա անճառելի է ճաշակ քաղցրութե քո, զոր առատաձեռնես 'ի սիրելիս քո: Յայամ առաւելապէս ցուցեր առ իս զքաղցրութի սիրոյ քոյ. զի որ ոչն էի, արարեր զիս.

և որ օտարացեալն էի 'ի քէն, դար-ձուցեր զիս, ծառայել քեզ. և հրա-մայեցեր ինձ՝ սիրել զքեզ:

Ժ. Ո՛վ աղբիւր անսպառ սիրոյ, զի՞նչ ասացից զքէն: Զիա՞րդ իշխեցից մո-ռանալ զքեզ. որ հաճեցար յիշել զիս՝ ես և յորժամ հիւծեալն էի, և 'ի կորուստ մատնեալ: 'Ի վեր քան զամ ակնկալութի՝ արարեր ը ծառայի քում ողորմութեն. և քան զամ արժանաւո-րութի՝ ցուցեր առիս շնորհ և բարե-կամութեն: Զի՞նչ տաց քեզ տրիտուր փոխանակ շնորհիս: Զի ոչ ամենե-ցուն տուեալ է, թողեալ զամ յաշ-խարհէ հրաժարիլ. և միանձնական կեանս յանձն առնուլ: Մե՞ծ ինչ իցէ՝ ծառայել ինձ քեզ, որում ամ արա-րածք պարտապան են ծառայել: Ո՛չ մեծ ինչ թուի ինձ՝ ծառայել քեզ. այլ այն թուի մեծ և զարմանալի, զի զայսպիսի աղքատ և անարժան հա-ճեցար ընդունել 'ի ծառայութի, և սիրե-լեաց քոց ծառայից դասակցեցեր:

ԺԱ: Ահա քո է ամ, զոր ունիմ, և որով քեզն ծառայեմ: Բայց և այն-պէս՝ դու ինձ ծառայես, քան ես քեզ: Ահա երկինք և երկիր, զորս 'ի սպաս սաւորութի մարդկան արարեր, 'ի պատ-

րաս-

բնաւորի կան․ և օրինաւորէ զքո հրա
մայեալսդ կատարեն : Եւ ո՛չ այսչափ
միայն, այլ և զհրեշտակս 'ի սպասա_
ւորութի մարդոյ կարգեցեր : Եւ որ
վերագոյնն է քան զամ, դու ինքն հա
ճեցար մարդկան ծառայել․ և զանձն
քո տալ՝ նոցա խոստացար :
Դ : Զինչ տաց տրիտուր ընդ բիւրուց
բարեացս : Ո՛ տայր ինձ ծառայել քեզ
զամ աւուրս կենաց իմոց: Ո՞ տայր ինձ,
գէթ օր մի արժանի պաշտօն քեզ մա
տուցանել․ որ արժանիդ ես ամ պաշ_
տաման և պատուոյ, և անվախճանն
փառաւորութե : Ճշմարտապէս տր իմ
ես դու, և ես քո չնչին ծառայ․ որ յամ
զօրութե պարտապան եմ քեզ ծառայել,
և ոչ երբէք լռել 'ի քո մեծ փառա_
ւորութե : Ընդ այս հաճեալ եմ, և
այսմ ցանկամ․ և որինչ թերին է,
զայն դու հաճեսցիս լնուլ:
Ե․ Մեծ պատիւ և մեծ փառք են՝
քեզ ծառայել․ և զամ վս քոյ արհա
մարհել : Զի մեծ շնորհս առասցեն,
որք կամակար մտօք՝ քո սրբ ծառայ_
ութեն ընդ լծով մտանիցեն : Զքաղցր
մխիթարութի սրբ հոգւոյն գտցեն, որք
վս սիրոյ քո՝ յամ մարմնական բերկ_
րութեց 'ի բաց կացցեն : Եւ 'ի մեծի

ազատուն մնաց վայելեսցեն, որք վա̃ անուան քո յանձուկ ճանապարհ մտա_նիցեն, և յամ̃ ցայլին հոգոց հրա_ժարեսցին:

ը· Ո՛վ հաճելի և քաղցր ծառայութիւն այ̃, որով լինի մարդ ճշմարտապէս սբ̃ և ազատ: Ո՛վ սրբանուէր պաշտա_մանն կրօնաւորական կարգի· որ առ_նէ զմարդ հրեշտակաց հաւասար, այ̃ հաճոյ· դիւաց ահաւոր, և ամ̃ հա_ւատացելոց գովելի: Ո՛վ փարելի, և յաւէտ ըղձալի ծառայութիւն, որով լինի արժանանալ գերակայ բարուն, և ստանալ զանվախճան խնդութիւն:

---

## Գ Լ · ԺԱ:

### Թէ զխնդրս սրտի քննել պարտ է, և չափաւորել:

ա· Որդեակ, պարտ է քեզ դեռ ու_սանիլ բազում ինչ· զոր չև է քոյ քաջ ուսեալ:

բ· Եւ ո՞ր լիցեն այնք, տ̃ր:

գ: Զիղձս քո զխովին կարգել ըստ հաճոյից իմոց· և չլինիլ անձնասէր, այլ կամաց իմոց խնամոտ նախանձա_

խն_

խնդիր։ Խղճք յոլովակի զքեզ բորբոքեն, և բուռն վարեն. բայց դու տես եթէ վս̄ փառաց իմոց յայն բերիս, թէ 'ի սակս դիւրութե քոյ։ Եթէ 'ի սակս իմ, գոհացօ՛ղ լիջիր, որպէս և կարգիցեմ. ապա եթէ 'ի քոց ընծանայց ինչ զօղեալ կայցէ, ահա այն իսկ է, որ խափանէ զքեզ, և ծանրացուցանէ։

Է. Ապա զգուշ լեր, մի կարի իմն յարիլ յիղձս որ գան 'ի քեզ, առանց զիս հարցանելոյ. գուցէ յետոյ զղջասցիս, կամ ոչ հաճեսցիս, որում յառաջն հաճ և հաւան էիր, և ոչ լաւագունի իմն նախանձ կալար։ Զի ոչ ամ̄ յօժարութե, որ բարւոք թուիցի, իսկ և իսկ արժան է երթալ ըղձեւո։ Եւ ոչ յամ̄ հակառակաց յօժարութե՛ անդէն իսկ խուսել։ Լաւ է երբեմն սանձ արկանել ևս և բաբեաց երկասիրութեց և ըղձից զի մի 'ի թախանձանս նոցա՛ զբաղեսցիս քո մտօք. և 'ի շփոթելոյ քոյ՛ գայթակղութ̄ յայլս արկանիցես, կամ 'ի դիմադարձիլ այլոց՛ անդէն խռովեսցիս, և կործանեսցիս։

Ը. Բայց պարտ և պատշաճ է երբեմն բռնանալ, և արիաբար ընդդէմ դառնալ

նալ զդայական բաղձանաց, և չհայիլ յայն՝ թէ զինչ կամք են մարմնոյ՝ և զինչ ոչ. այլ այսմ ջանամ, զի և յակամայան հնազանդ լիցէ հոգւոյ: Եւ այնչափ ընկճեմ զնա, և 'ի ծառայութիւն նուաճեցից, մինչև պատրաստ լիցի առ ամ, սակաւուք ուսցի շատանալ, ընդ անպաճոյճս հաճ լինել. և ՟է անդէպս լինել ոչ քրթմնջել:

---

## Գ Լ. ԺԲ:

### Յաղագս օրինակի համբերութեան, և համբերելոյ ընդդէմ ցանկութեանց:

Ա: Տէր իմ, պիտոյ է ինձ յոյժ համբերութիւն. զի շատք յաստի կեանս պատահեն հակառակութիւնք: Զի ոպ և յօրդարեցից զիմ խաղաղութիւն, անհնար է կենաց իմոց լինել անվիշտ և անպատերազմ:

Բ. Այդ այդպէս է որդեակ: Բայց կամիմ ոչ զայնպիսի խնդրել քեզ խաղաղութիւն, յոր ոչ կայցէ ինչ փորձութիւն. կամ ոչ զգայցես ինչ հակառակութիւն: այլ և յայնժամ համարեսջիր զանձն վայելել 'ի խաղաղութեան, յորժամ 'ի պէս

այէս փորձութիւն հանդիսացեն՝ գտա
նիս , և 'ի բազմադէմ հակառակութեա
փորձ : Եթէ ասես . չեմ կարող բազ
մաց տանել վշտաց . իսկ զիարդ հան_
դուրժեսցես հրոյ քաւարանին : Յեր
կուց չարեաց՝ յամէն փոքրն է ընտրե_
լի : Այս զի ապրեսցիս 'ի հանդեր_
ձեալ տանջանացն յաւիտենից , աստ
չարեաց փոյթ կալջիր զմ̅ ոյ արկա_
քար տանել : Թէ համարեսցես , թէ
աշխարհիկք ոչինչ կամ սակաւ չարչա
րանս չարչարեցին : Զայդ ոչ գտցես ,
թէպէտ և 'ի կարի իսկ փափկակեացս
խոյզ և խնդիր առնիցես :

Դ . Բայց վայելէն , ասես , 'ի բազում
գրգանս , և զերբեանց դհեա երթան
կամաց . զմ̅ այնորիկ ոչ համարին ինչ
զերբեանց նեղութիւ :

Է . Գիտացուք թէ ունին , որ զինչ և
կամին . իսկ ցօր վայր անեեցէ : Ահա
ոխ ծուխ պակասեսցին յղփացեալքն
յոմի , և ոչ մնասցէ ինչ յիշատակ ան
ցելոց խնդութեց : Այլ և առ կենդա_
նութ՝ ոչ առանց դառնութե և տաղտ
կութ և երկիւղի հանդչին 'ի նմ : Զի
ուստի հեշտանան , անտի պատուհաս
ցաւոց յոլովակի յանձինս ընդունին :
Կարէ յիրաւունս , զի որ անկարգ հեշ

տութեանց 'ի խնդիր են, և զհետ երթան, մի առանց ամօթոյ և դառնութե̃ զայն վճարեսցեն: Ո՛վ, որպէս սուտ և սնոտի, որպէս անկարգ և գարշելի է ամ̃ն: Բայց առ արբեցութեն և կուրութե̃ ոչ իմանան. այլ որպ̃ անխօս անասուն վ̃ն դոյզն ապականացու կենցաղոյս հեշտութե̃, զոգի 'ի մահ մատնեն: Այլ դու, որդեակ, զհետ ցանկութեանց քոց մի գնար. և 'ի կամաց քոց հրաժարեսցի՛ր: Ճոեա՛ 'ի տ̃նէ, և նա տացէ քեզ զխնդրուածս սրտի քոյ:

Ը. Զի թէ ճշմարտութ̃բ կամիս 'ի բերկրանս վայելել, և յորդ մխիթարութե̃ յինէն ը̃ունիլ, ահա յարհամարհանե ամ̃ ընդայնոց, և 'ի հրաժեշտ ամ̃ ստորայինն բերկրութեանց եղիցի օրհնութի̃ քո, և բ̃մ մխիթարութի̃ տացի քեզ: Եւ որչափ յամ̃ արարածական սփոփանաց 'ի բաց կասցես, այնչափ առաւել յիս քաղցրագոյն և զօրագոյն մխիթարութի̃ գտցես: Բայց 'ի սկզբանանդ՝ ոչ առանց ինչ տրտմութե̃, և վաստակոց ճգանց լինի քեզ յայդ ժամանել: Ընդդէմ դարձցի անընտել սովորութի̃ն. այլ 'ի լաւեւս սովորութե̃ յաղթեսցի: Քրթմնջեսցէ մարմինն,

այլ

այլ եռանդեամբ հոգւոյն սանձեսցի : Զգրգռեսցէ և դառնացուսցէ զքեզ օձն հին, այլ աղօթիւք հալածական լիցի · այլև վաստակօք պիտանեօք խրցցի նր̅ մուտ :

---

## Գ Լ · ԺԳ :

### Յաղագս հնազանդութեան խոնարհ հպատակի ըստ օրինակին յս̅ի ք̅ի :

ա̅ · Որդեակ, որ ջանայ 'ի բաց կալ 'ի հնազանդութե̅, անձամբ զանձն վրիպեցուցանէ 'ի շնորհաց : և որ խնդրէ ունիլ զառանձնականս, կորուսանէ զհասարակացն : Որ ոչ մտադիւր և կամաւորութբ̅ հնազանդի իւրում մեծաւորի, նշան է, թէ մարմին նր̅ չև է նմա լիով հնազանդեալ · այլ բղմ անդամ անկուշէ, և քրթմնջէ : Արդ ուսի՛ր արագ հնազանդիլ քում մեծաւորի, եթէ ցանկաս զմարմինդ քեզ հնազանդել : Զի դիւրաւ յաղթի արտաքին թշնամին, եթէ ներքին մարդն չէ աւարհարեալ : Ոչ՛ք նեղացուցիչ և չար թշնամի անձինդ՝ քորև զքեզ, յորժամ չես համախոհ ը̅

հոգւոյ: Պարտ է քեզ յամէն ստանալ զճշմարիտ արհամարհութն անձին, եթէ կամիս յաղթել մարմնոյ և արեան: Եւ զի դեռ կարի իմն անկարգ բերիս 'ի սէր քո, վն այնորիկ ըռուլ յանձն լինել 'ի կամս այլոց՝ զանգիտես:

Ե. Բայց զի՞նչ մեծ է, թէ դու հողդ ընչէին վասն իմ լիցիս մարդկան հպատակ. ուր ես բարձրեալս ամենակալ, որ զամ արարի յոչնչէ, վասն քո խոնարհութբ եղէ մարդկան հնազանդ: Եղէ քան զամենեսին խոնարհ և ստորին, զի քումդ հպարտութե իմով խոնարհութբ յաղթեսցես: Ուսի՛ր հնազանդիլ, ուսի՛ր զքեզ խոնարհել՝ հող և մոխիր, և ամենեցուն ընդ ոտիւք լինել: Ուսի՛ր զքո կամս խորտակել և առ ամ հնազանդութե լինել անձնատուր:

Զ. Զայրացի՛ր 'ի վ֊ քո, և մի՛ թողուր ամբարտաւանութե տիրել քեզ. այլ այնպէս հնազանդ և կրտսեր զանձն ընծայեցո՛, մինչև ամենեցուն գնալ 'ի վերայ քո, և ո՛չ կառ գռեհաց կոխել զքեզ: Զի՞ է քեզ, ընչի՛նդ դու, գանգատել: Զիա՞րդ իշխիցես զարշելի մեղաւոր՝ ընդդէմ դառնալ նախատչաց քոց, որ բիւրիցս զամ բար_

կա_

կացուցեր, և դժոխոց բազում ան-
գամ եղեր արժանի։ Այլ խնայեաց
՚ի քեզ ակն իմ. զի պատուական եղև
անձն քո յաչս իմ. զի ծանիցես զսէր
իմ, և առ երախտիս իմ միշտ գոցիս
շնորհակալ. և զի ճշմարիտ հնա-
զանդութեն և խոնարհութեն յանձն տացես
զանձն, և համբերութբ տարցիս ար-
համարհանաց քոց։

## ԳԼ. ԺԴ։

Յաղագս խորհման գաղտնի դատաստա-
նացն Այ, զի մի՛ մեծամտեսցուք
ընդ բարութիւնս։

Ա. Որոտաս յիս զդատաստանս քո,
Տէր. և ահիւ և դողութբ սասանեցու-
ցանես զամ ոսկերս իմ. և զարհու-
րեալ է անձն իմ յոյժ։ Յապուշ հա-
րեալ կամ, ածեալ զմտաւ, զի երկինք
ոչ են սբ առաջի քո։ Եթէ ՚ի հրեշ-
տակս գտեր թիւրութիւն, և ոչ խնայե-
ցեր, զիս զի՞նչ լինիցի։ Անկան աս-
տեղք յերկնից, և ես հողս յի՞նչ յու-
սացեալ իցեմ։ Որոց գործք գովելի
թուէին, անկան ՚ի ստորինս. և որք

ուտէին ղհաց հրեշտակաց՝ տեսի, զի
քաղցրացան ինձ եղջերք խողից:

Ժ̄. Ապա չի՞ք ինչ սրբութի̄, թէ զձեռն քո տ̄ր, ամփոփես: Ոչինչ օգուտ է իմաստութի̄, եթէ յառաջնորդուէ̄ կարիս: Ոչինչ օգնէ արիութի̄, եթէ ՚ի պահպանուէ̄ լռես: Չի՞ք աներկեան ողջախոհութի̄, թէ ո՛չ այնմ լինիս հովանի: Ոչինչ օգտէ անձին պահպանութի̄, թէ ո՛չ մերձ կայ քո սր̄ հսկողութի̄: Զի թէ թողուս, ընկղմիմք և կործանիմք. և թէ այց առնես, կանգնիմք և կենդանանամք: Իբր զի յողդողդ եմք, այլ քև հաստատիմք. զաղջանամք, այլ քև բորբոքիմք:

Դ̄. Ո՞վ, ո՛րչ̄ պարտ է ինձ խոնարհ և արհամարհ լինել յաչս անձին, և համարել զանձն ընչին, եթէ երևեսցի յիս ինչ բարի: Քանի՞ արժան է ինձ ՚ի խոր խոնարհիլ ընդ անքննին դատաստանօք քո, տ̄ր. ուր ո՛չ այլ ինչ գտանեմ զիս, բայց ոչինչ: Ո՞վ անչափ ծանրութես, ո՞վ անտահման ծովուս, ուր ոչինչ գտանեմ յիմոցս՝ բայց ոչինչ: Իսկ արդ՝ ո՞ւր իցեն խորշք ծածկուէ̄ փառաց. ո՞ւր վստահութի̄ ՚ի կարծեցեալ առաքինութի̄: Ընկլան ա̄մ սնոտի պարծանք ՚ի խորոց դա-

տաս-

տառապանաց քոց 'ի վե՟ր իմ:

դ. Զի՞նչ է ա՟մ մարմին առաջի քո․ մի՞թէ պարծեսցի կաւ առաջի բրտի ։ Զիա՞րդ իշխեսցէ յողն կալ մեծաբանութ՟, որոյ սիրտ ընդ ձեռամբ է այ՟ ճշմարտութե՟: Մի՛ հպարտացուսցէ զնա ~ ա՟մ, զոր ճշմարտութի՟ն ընդ ձեռամբ ունի․ և մի՛ յա՟մ գովչաց բերանոյ շարժեսցի, որ զա՟մ յոյս իւր յա՟ծ հաստատեալ իցէ: Քանզի և որք խօսին ինչ՝ ամենեքին ոչինչ են, զի ընդ բարբառոյ բանից պակասին: Այլ ճշմարտութիւն տն՟ մնայ յաւիտեան:

## Գ Լ․ ԺԵ:

Թէ ո՞րպէս կալցես, և զի՞նչ ասել ունիցիս յա՟մ ցանկալիս:

ա․ Որդեակ, այսպէս ասասջիր յա՟մ՟ի: Տէ՟ր եթէ հաճոյ է քեզ, այդ այդպէս եղիցի: Տէ՟ր, եթէ փառք են քեզ, եղիցի այդ յանուն քո: Տէ՟ր, եթէ թըւի յաչս քո, թէ օգուտ է ինձ և պիտանի, տո՛ւր ինձ յայդմ վայելել 'ի պատիւ քո: Այլ եթէ վնասակար

ինձ

ինձ ծանուցես , և փրկութիւն հոգւոյ իմոյ ոչ յօգուտ , 'ի բաց սորա յինէն զցանկութիւն զայդպիսի ։ Զի ոչ ամ̃ ցանկութիւն է 'ի հոգւոյն մէ̃ջ , թէպէտ և յաչս մարդկան ուղիղ թուիցի և բարի ։ Դժուարին է ստուգութ̃բ ընտրել , արդեօք յոգւոյ բարւոյ , թէ յօտարէ է քո բերումն , այսմ կամ այնմ ըղձանալոյ ․ թէ բնաւ իսկ յոգւոյ քումմէ ։ Բազումք 'ի կատարածի խաբեցան ․ որք յառաջն համարէին զանձինս յոգւոյ բարւոյ առաջնորդեալ ։

ը̃ ․ Ապա յամ̃ երկիւղիւ այ̃ և խոնարհութ̃բ սրտի՝ պարտ է ցանկալ և խնդրել , որինչ ցանկալի պատահէ մտաց ․ նա՝ 'ի սեպհական կամաց հրաժարմամբ՝ յիս յանձնել պարտ է զամ̃ , ասելով ․ տ̃ր դու գիտես , ո՛ր լաւ իցէ ․ եղիցի ամ̃ , ոպ̃ և կամիս ։ Տուր , զոր կամիս , և որչափ կամիս , և յորժամ կամիս ։ Արա՛ ը̃իս ոպ̃ գիտես , և ոպ̃ հաճոյ է քեզ , և առաւելու պատւի քո ։ Դի՛ր զիս , ուրեք կամիս ․ և համարձակ արա՛ ը̃իս յամ̃ ․ 'ի ձեռս քո եմ ․ շրջեա՛ , և յածեա՛ զիս շուրջանակի ։ Ահա ծառայ քո եմ ես , առ ամ̃ պատրաստական , զի

ոչ

ո՛չ ցանկամ յիս կենդանի լինել, այլ 'ի քեզ. և երանելի՛ թէ լիով և արժանապէս։

Աղօթք վ՟ն զհաճոյսն ա՟յ կատարելոյ։

Գ. Շնորհեա ինձ քաղցրագութ փրկիչ՝ զշնորհս քո. զի ը՟դ իս լիցի, ը՟դ իս գործեսցէ, և ը՟դ իս մինչ ի սպառ կացցէ միասցէ։ Տուր ինձ համապազ այնմ ցանկալ և փափաքել, որ առաւել հաճոյ է քեզ, և ընդունելի։ Քո կամք՝ իմ լիցին. և իմ կամք քոց կամաց միշտ զհետ երթիցեն, և քաջ ը՟դ այնմ միաբանեսցին։ Իմ կամիլ և չկամիլ ը՟դ քոյդ եղիցի մի. և մի՛ իշխեսցի այլ ինչ կամիլ կամ չկամիլ, բայց զոր դու կամիս կամ ո՛չ կամիս։

Դ. Տուր ինձ մեռանիլ ամ՟ի՝ որ ինչ է յաշխարհի. և վ՟ն քո սիրել զարհամարհանս, և զանծանօթն լինել յաստի կեանս։ Տուր ինձ 'ի վեր քան զա՟մ ցանկալիս՝ 'ի քեզ հանգչիլ. և ըղձիւ իմ 'ի քեզ խաղաղել։ Դու ճշմարիտ խաղաղութիւն սրտի. դու միայն հանգիստ։ Արտաքոյ քո խիստ է ա՟մ, և խռովական։ Յայսմ և 'ի սոյն խաղաղութիւն, այս է՛ 'ի քեզ որ միայնդ ես գերագոյն բարի անվախճան, ննջեցից և հանգեայց։ Ամէն։

Գ. Ի.

## Գ Լ. ԺԶ:

### Թէ զճշմարիտ սփոփանս խնդրել պարտէ միայն յա̄ծ:

Ծա. Զամենայնի, որում ցանկալ կամ զոր խորհիլ հնար է ինձ 'ի սփոփանս իմ, ոչ այժմ ինչ ակնունիմ, այլ առ յապայ: Եթէ զա̄մ սփոփանս Ծի միայն ունէի, և յա̄մ գրգանս վայելել 'ի ձեռս էր, յայտ է թէ չտևէին ինչ յերկար: Վս̄ այսորիկ անհնար է քեզ անձն իմ, լիով մխիթարիլ և ամենայնիւ հանգչիլ, բայց եթէ յա̄ծ, որ մխիթարիչն է աղքատաց, և ը̄ունող խոնարհաց: Համբե՛ր վայր մի, ակնկալեալ ա̄ծային խոստմանն, և գտցես զլիու̄ն ա̄մ բարեաց յերկինս: Եթէ կարի իմն անձկանօք 'ի խնդիր լինիս առօրէիցս, կորուսանես զանանցսն, և զերկնաւորս: Եղիցին ժամանակաւորքս 'ի պէտս. այլ ըղձից քոց բերումն եղիցի առ անանցս: Անհնար է քեզ անցաւոր ինչ բարեօք յագենալ. զի ոչ հաստեցար՝ վայելել 'ի սոսա:

Ի.

Է. Թէպէտ և ամ ստեղծեալ բարիք
քո էին, անհնար էր քեզ լինել երջանիկ
և երանեալ. այլ յԱծ յարարչէն ամե
գլխովին հաստատեալ է քո երանութ
և երջանկութի, ոչ զորպիսի կարծեն
անմիտ աշխարհասէրք, այլ որպիսում
ակնունին բարեպաշտ քմի հաւատա-
ցեալք. և զորոյ առնուն երբեմն ըղ-
ձաշակ հոգեսէրքն և սբքն սրտիւք.
որոց առաքինութն յերկինս է : Սնոտի
և սուտ են ամ մարդկային սփոփանք.
Երանութեան և ճշմարիտ սփոփութն
այն է, զոր 'ի ներքս 'ի մեզ 'ի ճշմար-
տութէ ընդունիմք : Այր առաքինին
ամուրեք Քիւր ունի զմխիթարիչ իւր
Յս, առ որ ասէ : Մերձ լեր ինձ Տր
Յս յամ տեղիս և յամ ժամի : Այս
եղիցի իմ մխիթարութե, մոռացիւր վրէպ
լինել յամ մարդկային սփոփանաց :
Եւ եթէ բոյդ պակասեսցի մխիթա-
րութի, կամք քո՛ և արդար փորձո-
ւղիցին ինձ սփոփութն մծ : Զի ոչ
խապառ բարկանաս դու Տր, և ոչ
յաւիտեան պահես ոխս :

## ԳԼ. ԺԵ.

Թէ զա՛մ հոգւս ընձեռնուլ պարտ է յա՛յժ,

Ա. Որդեակ, թո՛ղ ինձ առնել ընդ քեզ, որպէս և կամիմ. ես գիտեմ, որ լաւ իցէ քեզ: Դու խորհիս որպէս մարդ. և խոկաս յոլովակի որպէս հրապուրելոյ մարդկայինն ախորժակի:

Բ. Տէր, ճշմարիտ է զոր ասես. մեծ է հոգ քո 'ի վերայ իմ, քան զամենայն զիմ առ իս հոգաբարձութիւն: Զի կարի իմն յորդորայթի կայ, որ ոչ ընկենու զամենայն հոգս իւր 'ի քեզ: Միայն թէ կամք իմ ուղիղ և հաստատուն առ քեզ կացցեն, արա ընդ իս, որ ինչ հաճոյ է քեզ: Զի անհնար է անբարի լինել, զինչ և արասցես ընդ իս: Եթէ կամիս լինել ինձ 'ի խաւարի, եղիցիս օրհնեալ. և եթէ կամիս լինել ինձ 'ի լոյս, եղիցիս օրհնեալ: Եթէ հաճիս մխիթարել զիս, եղիցիս օրհնեալ. և եթէ կամիս լինել ինձ 'ի նեղութեան, նոյնպէս յամենայն եղիցիս օրհնեալ:

Գ. Որդեակ, այսպէս պարտ է քեզ կալ, եթէ կամիս հաճոյ լինել ինձ:

Ամ

Այնպէս պատրաստական պարտ է քեզ լինել 'ի նեղութեան, որպէս 'ի խնդութեան. Այնպէս յօժարամիտ 'ի չքաւորութեան և յաղքատութեան, որպէս 'ի լիութեան, և 'ի մեծութեան:

Գ. Տէ՛ր, մտադիւր յանձնառնում վասն քո, որ զինչ և կամիս, թէ եկեսցէ 'ի վերայ իմ: Անխտիր կամիմ ընդունիլ 'ի քոց ձեռաց զբարի և զչար, զքաղցր և զդառն. զուրախականն և զտրտմական, և գոհանալ վասն ամենայնի որ ինձ դիպեսցի: Պահեա՛ զիս յամենայն մեղաց, և ո՛չ երկեայց 'ի մահուանէ և 'ի դժոխոց: Որինչ նեղութիւն գայցէ 'ի վերայ իմ. ինձ ինչ ո՛չ վնասեսցէ. միայն թէ մի՛ յաւիտեան մերժեսցես զիս, և մի՛ ջնջեսցես 'ի դպրութենէ կենաց:

---

## Գ Լ. ԾԲ:

Թէ ժամանակեան մխիթարութեանց ըստ օրինակին ջրոյ պարտ է երկնայնովութեամբ համբերել:

Ա. Որդեակ, իջի ես յերկնից վասն փրկութեան քո. յանձն առի զքո թշուառութիւն, ո՛չ առ հարկի, այլ 'ի սիրոյ ձգեալ.

զի

զի զհամբերութիւն ուսցիս. և ժամա-
նակեան թշուառութեանց մի դժուարա-
կիր գացիս։ Քանզի 'ի ժամէ ծնըն-
դեան իմոյ մինչև 'ի խաչ ելանել՝ ոչ
պակասեցին ինձ չարչարանք։ Մեծ
եղեն իմ պակասութիւնք պիտոյից. տըր-
տունջս բազմս բազում անգամ զինէն
լուայ. ամօթոյ և նախատանաց քաղց-
րութեամբ տարայ. փոխանակ երախտեաց՝
ապերախտութիւնս ընկալայ. փոխանակ
սքանչելեաց՝ հայհոյութիւնս, և փոխա-
նակ վարդապետութեան՝ կշտամբանս։

Ժ. Տէր. մինչ զի դու համբերող եղեր
'ի կեանս քո, դոյլին առաւելապէս կա-
տարելով զպատուիրան հօր քոյ, ար-
ժան է ինձ թշուառացելոյ մեղաւո-
րիս ըստ կամաց քոց երկայնմտութեամբ
համբերել. և ցորչափ կամիս, զբեռն
ապականացու կենցաղոյս՝ 'ի փրկութիւն
իմ բառնալ։ Քանզի թէպէտ և ծան-
րաբեռն թուին աստի կեանք, բայց
շնորհօք քո եղեն յոյժ շահեկանք. և
քոյին օրինակաւ և սրբոց քոց շաւղօք,
տանելիք եղեն տկարաց՝ և պայծա-
ռիք։ Այլ և առաւել զուարթարարք,
քան 'ի նախնումն 'ի հին օրէնս, յոր-
ժամ փակեալ էր դուռն երկնից։ Եւ
մթին ևս թուէր ճանապարհ երկնից, յոր-

ժամ

ժամ սակաւք փոյթ ունէին 'ի խնդիրս
լինելոյ արքայութե՛ երկնից ։ Այն զի
և որք յայնժամ արդարքն էին , և
փրկուե պաշտելք , յառաջ քան զչար_
չարանս քո և զմահ՝ ոչ ունէին մուտ
յարքայութիւն երկնից ։

Գ. Ո՛վ, քանի՞ պարտապան եմ շնորհս
ունելոյ զքեզ. զի ճանապարհ ուղիղ
և բարի՝ ինձ և ծմ հաւատացելոց
ցուցեր՝ յարքայութե քո անվախճան ։
Քանզի վարք քո ճանապարհ են մեզ.
և ա̃մ համբերութ̃բ մատչիմք առ քեզ.
որ պսակդ ես մեր ։ Եթէ չէր քո յա_
ռաջեալ և ուսուցեալ մեզ, ո՞ւմ փոյթ
էր զհետ գալ ։ Բայց է , քանի՞ք բա_
ցական և յետնեալ մնային , թէ ոչ
'ի քո պանծալի օրինակս հայէին ։ Ահա
և 'ի լուր քոց այսչափ նշանաց և
վրդպտւեց դեռ հեղգամք. զի՞նչ անցք
ը̃ մեզ անցանէին , եթէ յայսպիսւոյ
լուսոյ զհետ քո եկաւորուե՛ լինէաք
վրէպ ։

## Գ Լ. ԺԹ.

Յաղագս տանելոյ անիրաւութեանց, եւ ցոյց ճշմարիտ համբերութեան:

Ա. Ոինչ է զոր խօսիդ, որդեակ: Լռեա՛ 'ի քրթմնջելոյ, յիմ եւ յայլոց սըրբոց չարչարանս հայեցեալ: Չեւս արեամբըչափ հակառակ կացեր: Թեթեւ ինչ է, զոր դուդ կրես, առ այնոքիւք, որք բազում կրեցին, ուժգին փորձեցան, ծանունն նեղեցան, եւ բազմօրինակ հանդիսացան 'ի փորձ: Ապա յուշ լիցին քեզ այլոց ծանր ծանր չարակրութիւնք, զի թեթեւագոյն տարցիս քոյ փոքունց: Եւ թէ ո՛չ թըւին քեզ փոքունք, զգո՛յշ լեր, դուցէ եւ այդ 'ի քումմէ կարճմտութէ իցէ: Բայց թէ՛ մեծ իցեն եւ թէ փոքր, ջանա՛ ամէ ժուժկալութ. համբերել:

Բ. Որչափ քաջ պատրաստիս 'ի համբերութիւն, այնչափ իմաստութ. գործես, եւ առաւել վարձուց լինիս արժանի. եւ դիւրագոյն եւս տանիս, եթէ քո միտս եւ գործք 'ի դոյն քաջութ. պատրաստեալ իցեն: Մի՛ ասեր, թէ

չեմ

չեմ կարող զայդ ա͞մ յառնել այդպիսւոյ կրել․ և երբ այդպիսի չեն ինձ տանելի, զի՞ վնաս մեծ հասցեն ինձ․ և մեղ 'ի վե͞ր իմ դնէ, զոր չեք իմ խորհեալ բնաւ․ այլ ում մտադիր տանայց, ոչ զիարդ տանելի թուիցի: Այնպես է խորհուրդ այդպիսի․ որ 'ի համբերութեան առաքինութեան ոչ հայի, և ոչ թէ յումմէ պատկի․ այլ զանձինս կշռէ, և զնախատինսն՝ որ 'ի վե͞ր դան:

Գ․ Ոչ է՛ ճշմարիտ համբերող, որ համբերել ոչ կամի, բայց եթէ որչափ անձին բարւոք թուի, և յումմէ հաճոյ է նմա: Ճշմարիտ համբերողն ոչ հայի թէ վերուստ յումմէ գայ, ո՛րդեօք յիւրմէ առաջնորդէ, 'ի հաւ͞րակցէ, թէ 'ի ստորակայէ․ արդեօք 'ի բարի և 'ի չա͞ր առնէ, թէ 'ի խնդաբարոյէ և յանարժանէ․ Այլ անխտիր յա͞մ արարածոց որչափ և բանիցս անդամ վիշտ ինչ 'նմա պատահէ, զայն ա͞մ 'ի ձեռանէ ա͞յ գոհութե͞ ընդունի․ և մեծ շահ համարի․ վ͞ս զի ոչինչ, թէպէտ և փոքր իցէ՝ բայց վ͞ս ա͞յ յանձն առեա͞լ, մնայ առաջի ա͞յ անվարձ:

Գ․ Ապա պատրաստ լեր 'ի պատերազմ․ եթէ կամիս ունել զյաղթութի͞:

Ամ․ նց

Առանց մարտի ոչ կարես ժամանել պսակի համբերութեան: Եթէ կրել ինչ ոչ կամիս, 'ի պսակէ հրաժարիս: Ապա թէ պսակիլ կամիս, մարտի՛ր արիաբար, և համբերէ՛ր երկայնմտութեամբ: Առանց ճգանց ոչ լինի դիմել'ի հանգիստ. և ոչ առանց պատերազմի ժամանէ ոք յաղթութեան:

Ե. Հնարաւո՛ր լիցի ինձ Տէր շնորհօք որ ինչ անհնար թուի բնութեամբ: Դու գիտես, զի սակաւ եմ 'ի համբերել, և վաղ լքանիմ 'ի յառնել դոյզն վշտաց: Եղիցի ինձ ամենայն վշտակրութիւն վասն անուան քո սիրելի և ըղձալի: Զի կրել և չարչարիլ վասն քո՝ կենսաբեր են հոգւոյ իմոյ:

---

## ԳԼ. Ի:

### Յաղագս խոստովանութեան անձին տկարութեան. և կենցաղոյս թշուառութեանց:

Ա. Խոստովան եղէց զինէն զանիրաւութիւն իմ. խոստովան եղէց քեզ Տէր զտկարութիւն իմ: Բազում անգամ խուն ինչ իրք են, որ նկուն առնեն զիս, և տխրեցուցանեն: Առաջադրեմ արիա-

նալ. այլ 'ի գալ դոյզն փորձութեան՝ անձկութիւն մեծ ունիս զիս : 'Ի չնչին իմն իրաց երբեմն ծանր փորձութիւն գայ 'ի վերայ : Եւ 'ի կարծել զիս առ վայր մի յապահովս, յանկարծ գտանիմ 'ի դոյզն փչմանէ ոչ թէ յաղթեալ :

Է. Եւ արդ տե՛ս Տէր, զխոնարհութիւն իմ՝ և զտկարութիւն, որում ամենայնիւ իրադէտ ես : Ողորմեա՛, և ապրեցո՛ զիս 'ի կաւոյ, զի մի՛ ընկղմեցայց. և մի՛ մնացից անկեալ կործանեալ իսպառ : Այս է որ յոլովակի գանէ զիս, և առաջի քո յամօթ առնէ. զի դիւրահաւան եմ, և տկար 'ի կալ հակառակ կրից : Թէպէտ և ո՛չ գլխովին բերիմ 'ի հաւանութիւն, բայց և վանել զնոսա աղտեղի է ինձ և ծանր. և ձանձրանամ յոյժ՝ հանապազ լինիլ ընդ նոսա 'ի կռուի : Եւ յայսմանէ իմանամ զիմ տկարութիւն. զի դիւրագոյն յիս յարձակին գարշ ցնորք, քան թէ մեկնին :

Ը. Երանի թէ անդ իջեալ հզօր, որ նախանձաւորդ ես հոգւոց հաւատացելոց, հայէիր 'ի ծառայի քո յաշխատութիւնս և 'ի ցաւս. և օգնէիր սմա յամենայնի, յոր վայր և երթայցէ : Զօրացո՛ զիս երկնաւոր զօրութեամբ, զի մի՛ մարդն հին՝ տառապեալ մարմինն ո՛չ լիով հնա

զանգեալ հոգւոյ՝ իշխեսցէ սիրել. Է

որում հարկ լիցի մաքառիլ՝ ցորչափ է յիս շունչ ՚ի թշուառ կենցաղումս։ Բա՞րէ. ո՞րպիսի ինչ են այս կեանք, ուր ո՛չ պակասին նեղութիւնք և տառապանք. ուր լի է ամ՛ որոգայթիւք և թշնամեօք։ Զի ՚ի մեկնիլ միոյ նեղութե̄ կամ փորձութե̄՝ միւս ՚ի վե̄ր գայ։ Նա՛ ՚ի մէջ անդ առաջնոյ մարտի, այլք բազումք ՚ի վերայ հասանեն յանկարծակի։

Ը. Եւ զիա՞րդ հնար իցէ սիրել զսըկեանս, որ այսպիսիս ունի դառնութիս. և այսչափ չարիք և թշուառութիք են ՚ի նմա։ Զիա՞րդ կոչիցի և կեանք, որ այսպիսիս ծնանի մահունս և ժանտախտս։ Սակայն և այնպէս սիրի. և բազումք խնդրեն ՚ի գրգանս նորա վայելել։ Յանդիմանի յոլովակիս, թէ խաբեբայ է և սնոտի. բայց ո՛չ դիւրաւ թողուն զնա. զի ցանկութիք մարմնոյ զօրացեալ են յոյժ։ Է՛ ինչ ՚ի նմա, որ ձգէ ՚ի սէր. և է՛ ինչ՝ որ յարհամարհութի։ Զգեն ՚ի սէր սի ցանկութի մարմնոյ, ցանկութի աչաց, և ամբարտաւանութի աշտի կենաց։ Բայց պատիժք և թշուառութիք, որք իրաւամբք զհետ գան այնց, ատելութի բե-

բերեն ձի, և տաղտկուն։
Ե. Այլ (ով աղէտից, ) յաղթէ Թիւթ հերձուածն ծանէր մնաց, և զլինելն ըստ փշումն' փափկութիս համարի. զե զմ քաղցրուն և զնեքքին առաքինութեն զուարճուն ոչ ետես, և ոչ ճաշակեաց։ Բայց որք զծ կատարելապես արհամարհեն, և ըն այլ խրատու յանձ կեալ կամին, այնք զմ քաղցրութին' զխոստացեալն ճշմարիտ հրաժարութեան' ոչ անգիտանան. և թէ քանի սխալէ աշխարհ և խաբի, յայտնի տեսանեն։

---

## Գ Լ. ԻԱ։

Թէ պարտ է հանգչիլ յայծ, քան յամ բարութիւն և 'ի պարգեւս։

Ա. Ի վեր քան զամ և յամի հանգի՛ր անձն իմ 'ի տր հանապազ. զի նա է անվախճան հանգիստ սրբց։ Տո՛ւր ինձ քաղցր և սիրելի փրկիչ իմ, 'ի քեզ հանգչիլ, քան յամ արարածս, քան յամ փրկութե և գեղեցկութե, քան յամ փառս և պատիւ. քան յամ զորութե և իշխանութե. քան յամ գիտութե և նրբութե. քան յամ մեծութե և ճարտարութե.

թուն․ քան յամ ուրախութե և ցնծու֊
թե․ քան յամ համբաւ և պատուութե․
քան յամ քաղցրութե և մխիթարութե,
քան յամ յոյս և խոստումն, քան յամ
արդիւնս և ցանկութիւնս, քան յամ պար֊
գևս և տուրս, զոր կարող ես տալ
և հեղուլ․ քան յամ խնդութիւն և
հրճուանս՝ մտաց ըմբռնելի և իմանա
լի․ քան 'ի հրեշտակս, 'ի հրեշտակա֊
պետս, և յամ երկնային զօրութիւնս․ քան
յամ երևելիս և աներևոյթս․ և քան
յամ՝ որ չես դու ած իմ․

է․ Զի դու տէր ած իմ, բարի ես քան
զամ․ դու միայն բարձրեալ․ դու
միայն ամենազօր․ դու միայն ամենա֊
բաւական, և ամենալիր․ դու միայն
անուշակ և զուարթարար․ դու միայն
ամենագեղեցիկ, և ամենասիրելի․
դու միայն ազնուական և փառաւո֊
րեալ քան զամ․ յոր ամ բարութիւնք միան
գամայն լինել կան, և միշտ եղեն և
եղիցին։ Վնկ փոքր է և անբաւական,
զորինչ տաս 'ի քէն ինձ պարգևս,
կամ զքէն յայտնես, կամ խոստանաս,
ցորչափ չէ իմ զքեզ տեսեալ․ և ոչ
լիով ժողովեալ։ Զի անհնար է սրտի
իմոյ ճշմարտութե հանգչիլ․ և զլխովին
հաճ լինել, թէ ոչ հանգիցէ 'ի քեզ․
ան֊

անցեալ զանցեալ զի̃մ պարգևօք և զի̃մ արարածովք:

Ձ. Ո՞վ սիրելի փեսայդ իմ յո̃ քո̃, գերամաքուր սիրող. որ մ̃րդ ես ա̃մ արարածոց. ո՛ տայր ինձ Թևս ճշմարիտ ազատութե̃, Թռչիլ և հանգչիլ 'ի քեզ: Ե՞րբ լիով տացի ինձ ճաշակել և տեսանել, զի քաղցր ես տ̃ր ա̃ծ իմ, Ե՞րբ լիով պատապարեցայց 'ի քեզ, մինչև վասն սիրոյ քոյ չխորհիլ ինչ զիս, այլ զքեզ միայն 'ի վեր քան զի̃մ միտս, օրինակաւ՝ որ չէ ամենեցուն յայտնի: Արդ այժմ առէպ յոգւոց հանեմ, և Թշուառութե̃ իմում ցաւագին տանիմ. զի բազում չարիք յայսմ հովտի տառապանաց պատահեն, որ զիս յոլովակի խռովեն, տրտմեցուցանեն, և մռայլ ցինեն արկանեն. բա̃զմ անգամ խափանեն և զբաղեցուցանեն. խոտորեցուցանեն, և Թակարդեն. զի մի ազատ մուտ ունիցիմ առ քեզ, վայելել 'ի քաղցր գրկախառնութիւն, յոր վայելեն միշտ երանելեացն դասք: Գութ արկց 'ի քեզ հեծութե̃ իմ, և բազմադէմ ամայութե̃ իմ յերկրի:

Ձ. Յ̃ ճառագայթ յաւիտենական փառաց, մխիթարութի̃ պանդխտելոյս հոգւոյ.

ւոյ. առ քեզ է բերան իմ անբարբառ, եւ լռութիւն իմ խօսի ընդ քեզ։ Մինչեւ ցե՞րբ յամէ տէր իմ 'ի գալ։ Եկեսցէ առ իս յաղքատիկ իւր, եւ ուրախ արասցէ։ Ձգեսցէ զձեռն իւր. եւ փրկեսցէ զտառապեալս յամ նեղութե։ Ե՛կ ե՛կ, զի առանց քո չիք ինչ օր կամ ժամ ուրախութե։ Վասն զի դու ես ուրախուն իմ. եւ առանց քո թափուր է սեղան իմ։ Տառապեալ եմ ես, եւ որպէս թէ 'ի բանտ արկեալ եւ յոտնակապս պնդեալ. մինչեւ լուսով երեսաց քոց հանգուսցես զիս. եւ յազատութի հանցես. եւ զսիրալի դէմս քո ցուցցես։

Ե. Խնդրեսցեն այլք փոխանակ քոյ, որ զինչ հաճոյ իցէ նց։ Ինձ ո՛չ է՛ եւ ո՛չ եղիցի ինչ հաճոյ, բայց միայն դու ած իմ, յոյս իմ, եւ փրկուն յաւիտենական։ Ո՛չ լռեցից, եւ ո՛չ դադարեցից աղաչել, մինչեւ շնորհ քո դարձցի յիս, եւ դու ներքնին խօսեսցիս ընդ իս։

Զ. Ահաւասիկ մերձ եմ. աւասիկ առ քեզ եմ. զի կոչեցեր զիս։ Արտասուք քո, եւ ցանկուն անձին քոյ, խոնարհութի քո, եւ զղջումն սրտի խոնարհեցուցին զիս, եւ ածին առ քեզ։

Է. Ես ասացի. տէր կոչեցի զքեզ, եւ

անձ_

անձկացայ վայելել 'ի քեզ • պատրաստ
եմ զիմ արհամարհել վս̃ քո ։ Զի
դու յառաջ զարթուցեր զիս 'ի խնդ-
րել զքեզ ։ Օրհնեալ ես տր̃, որ ա-
րարեր այսպիսի բարութի̃ ը̃ ծառայի
քում ըստ բազում ողորմութե̃ քում ։
Զի՞նչ այլ ունիցի ասել ծռ̃յ քո առ
քեզ, բայց խոնարհել յոյժ առաջի
քո, յիշելով յաւէտ զիւր անօրէնութի̃
և զգծծութի̃ ։ Զի չիք ի՛նչ նման քեզ,
յա̃մ սքանչելիս երկնի և երկրի ։ Գործք
քո բարի են յոյժ, և դատաստանք
քո ճշմարիտք • և տեսչութի̃ քո դար-
մանէ զա̃մ ։ Քեզ գովութի̃ և փառք,
որ իմաստութիդ ես հօր • զքեզ գո-
վեսցէ և օրհնեսցէ բերան իմ, անձն
իմ, և ա̃մ արարածք միանգամայն ։

---

## Գ Լ. ԻԲ.

Յաղագս յիշատակի բազմապատիկ բարե-
րարութեց ա̃յ ։

ա̃. Բաց տր̃ զսիրտ իմ յօրէնս քո •
և ուսո՛ ինձ գնալ 'ի պատուիրանս
քո ։ Տո՛ւր ինձ իմանալ զկամս քո, և
բազում պատկառանօք և զգուշաւո
րի-

'քննութե́ յիշատակել զերախտիս քո զհանրականս և զառանձնականս. զի կարող եղէց յայմհետէ արժանաւոր գոհութի քեզ մատուցանել: Գիտեմ և խոստովան լինիմ, զի և ոչ մասամբ ինչ բաւական եմ արժանաւոր փառատրութի փոխատրել: Փոքր եմ ես քան զամ բարութի ինձ պարգևեալ. և 'ի քո ազնուութենդ նայեցեալ՝ յերեսաց մեծութե քո նուաղի հոգի իմ:

Բ. Զամ զոր ունիմք 'ի հոգի և 'ի մարմին, և զորինչ ներքոյ կամ արտաքոյ՝ բնաւորապէս կամ գերբնապէս ստացեալ ունիմք, քո են երախտիք. և զքեզ քարոզեն բարերար գըթած և բարի, յորմէ ընկալաք զամ բարութի: Թէպէտ և ոմն շատ և ոմն սակաւ էառ, բայց ամն քո է, և առանց քո չիք ստանալ և ոչ խուն ինչ: Որ շատ էառ, մի պարծեսցի յարժանաւորութի իւր. և մի փքասցի 'ի վը այլոց. և մի մեծարանեսցէ 'ի վերայ փոքունց: Քանզի նա է երիցագոյն և լաւագոյն, որ անձին ինչ ոչ գրէ. և 'ի շնորհակալութիս խոնարհագոյն է, և ջերմագոյն: Եւ որ քան զամենեսին անարգ զանձն վարկանի, և անարժան համարի, նմա է յաջողեալ

զմե-

զմեծամեծս ըմբռնել։

Դ. Իսկ որ սակաւս էառ՝ մի՛ ինչ տրտմեսցի, և մի՛ խռովեսցի. և մի՛ բարգաւաճելոյն չարակնեսցէ. այլ 'ի քեզ նայեսցի. և զքո բարութիւն մեծապէս օրհնեսցէ, որ այնպէս լիաբաշխ, ձրի, և մատակիր, առանց ինչ աշխատութեան զքո պարգևս առատաձեռնես։ Ի քէն է ամ. կա՛մ յամի ես գովելի։ Դու գիտես, զինչ իւրաքանչիւրում պարգևել լաւ իցէ. և զի՛արդ սա սակաւ, և նա աւելի ունիցի։ Ո՛չ մեզ, այլ քո է զայս ընտրել, առ որում սահմանեալ է իւրաքանչիւրոց արժանաւորութիւն։

Ե. Վ̃կ և մեծ երախտիս համարիմ զո̃ր, պիտանելին բազում. յորմէ արտաքոյ և ի ներքս մարդկան՝ գովութիւն և պարծանք 'ի վեր երևին. մինչև յածել ուրուք զմտաւ զանձին իւրոյ աղքատութիւն և անարգութիւն, ոչ միայն չունի յանձին զդառն ծանրութիւն կամ վշտութիւն և զլքումն, այլ մխիթարութիւն և զուարթութիւն յոյժ. զի դու տէր զաղքատս և զխոնարհս և զարհամարհեալս յշէ՛ ընտրեցեր քեզ մտերիմս և ընտանիս։ Վկայ են քո իսկ առաքեալք, զորս իշխանս կացուցեր 'ի վրէ ամ երկրի.

Սա-

Սակայն և այնպէս անարատ քաղա_
քավարեցան յԾի • զի խոնարհք եղեն
և պարզամիտք , առանց խնչ չարութե
և նենգութե • մինչ զի և է անարգել
իւրեանց՝ խնդային ընդ անուան քո ,
և յորոց խորշի աշխարհ , նոքա տարփ
մամբ փարէին զնոքօք :

Է • Այլ ոչինչ այնպէս ուրախ արաս
ցէ զծառայ քո , և շնորհապարտ , որպէս
կամք քո 'ի նմա , և հաճոյք կարգա_
դրութե քո յաւիտենից • է որ այնպէս
հաճ և հաւան պարտ է նմա լինել ,
և մխիթարեալ , մինչև մտադիւր ընտ
րել նմա լինել փոքր , որպէս ընձանայր
որք լինել մեծ • և այնպէս անխռով և
գոհ 'ի յետին տեղւոջ , որպէս յառաջին
բարձին • և այնպէս մտադիւր ար_
համարհ՝ ընկեցիկ և անուանակ ,
որպէս պատուաւոր և մեծարգի յԾի : Զի
կամք քո և սէր պատուոյ քո պար_
տին անցանել զանցանել քան զամ , և
առաւել մխիթարել զնա , և հաճոյ
լինել նմա , քան զամ երախտիս՝ որք
տուան կամ տացին նմա :

Գ Լ •

## ԳԼ. ԻԳ.

### Յաղագս չորից, որք 'ի ներքս ածեն զխաղաղութիւն մեծ:

ա. Որդի՛ ուսուցից քեզ, որդեակ, զճանապարհ խաղաղութեան, և ճշմարիտ ազատութեան:

բ. Արա՛, զոր ասեսդ, Տէ՛ր. զի քաղցր է ինձ լսել զայդ:

գ. Ջանա՛, որդեակ, զայլոց կամս կատարել քան զքոյդ: Ընտրեա՛ յաւէտ սակաւս ունել քան բազումս: Խնդրեա՛ միշտ զյետին տեղին, և ստոր լինել քան զամենեսին: Ցանկա՛ հանապազ և աղօթիւք հայցեա՛, զի կամք Այ լիով 'ի քեզ կատարեսցին: Այր այդպիսի մտանէ 'ի սահմանս խաղաղութեան և հանգստեան:

դ. Տէր, այս բան քո համառօտ 'ի ներքս փակէ զբազում կատարելութիւն: Սակաւ է ասիւք, այլ լի է իմաստիւք, և առատ պտղովք: Զոր թէ պահէի սրտի մտօք, ոչ վաղվաղակի 'ի վեր ելանէին յիս խռովութիւնք: Զի քանիցս անգամ ամբոխեալ տեսանեմ զանձն և ծան_

ծանրացեալ, յիմաստից աստի զիս
հեռացեալ գտանեմ: Այլ դու որ
միշտ ես կարող, և յամի զօդուտ հոգ-
ւոց սիրես, յաւե՛լ յիս զշնորհս. զի
կարող եղէց զբան քո լնուլ. և զիմ
փրկութն կատարել։

Աղօթք ընդդէմ խորհրդոց չարաց։

Ա. Տր̃ ա̃ծ իմ, մի՛ հեռի լինիր յինէն. ա̃ծ յօգնել ինձ նայեաց. զի յարեան ՚ի վր̃ իմ պէսպէս խորհուրդք, և մեծամեծ արհաւիրք. որք նեղեն զանձն իմ: Զիա՞րդ անցանիցեմ անվնաս, կամ զիա՞րդ լիցի ինձ ցրել զն̃ս։

Բ. Ես, ասէ, երթայց առաջի քո. և զփառաւորս երկրի խոնարհեցուցից։ Բացից զդրունս բանտի, և զխորս գաղտնեաց յայտնի արարից քեզ։

Գ. Արա՛ տր̃, որպէս և խօսեցար. և հալածեսցին յերեսաց քոց ամ̃ անօրէն խորհուրդք։ Այս է յոյս և միմիայն մխիթարութի իմ. յամ̃ նեղութե̃ս առ քեզ դիմել. ՚ի քեզ յուսալ. ՚ի սրտէ կարդալ, և երկայնմտութ̃ մխիթարութե̃ քում մնալ։

Աղօթք վս̃ լուսաւորութեան մտաց։

Դ. Պայծառացո՛ զիս, բարերար յս̃, պայծառութ̃ ներքին լուսոյ. և փարատեա ՚ի սենեկէ սրտիս զամ̃ խաւ-

ւար ։ Արդ ե՛ւ զբաղմօրինակ ցնդմունս ․
և 'ի բաց արա զբուռն փորձութի՟ս ։
Մարտի՛ր քաջութե՟բ փոխանակ իմ, և
'ի բաց վանեա զչար գազանս, զցան_
կութիւնս աւեմ հրապուրս ․ զի եղիցի
խաղաղութի՟ն 'ի զօրութե՟ քում ․ և յաճա_
խեսցէ օրհնութի՟ն քո 'ի գաւիթս սըր_
բութե՟ն՝ 'ի մաքուր խիղճ մտաց ։ Սաս_
տեա՛ հողմոց և մրրկաց ․ ասա՛ ծովու ․
դադարեա՛ց ․ և հիւսիսոյ, թէ մի՛ շըն_
չեր ․ և եղիցի խաղաղութի՟ն մեծ ։
թ ․ Առաքեա՛ զլոյս քո և զճշմարտու_
թի՟ն քո, լուսատու լինել յերկիր ․ զի
երկիր եմ ունայն և թափուր, մինչև
լուսաւոր արասցես զիս ։ Հե՛ղ զաւ_
'ի վերուստ զշնորհդ ․ ցօղեա՛ 'ի սիրտ
իմ զցօղդ երկնային ․ անձրևեա՛ ջուր
եռանդեան՝ ոռոգանել զերեսս երկրի ․
'ի պտղաբերել զբարին և զլաւն ։ Ամ_
բարձ զմիտս իմ ճնշեալ ծանրութե՟բ մե_
ղաց ․ և զա՟մ խղձս իմ յերկնայինսն
ձգեսցե՛ ․ զի ճաշակեալ զքաղցրութի՟ն
վերնոյն երջանկութե՟՝ տաղտկասցի խոր_
հիլ զերկրաւորս ։
ժ ․ Յափշտակեա՛ զիս և զերծո՛ յա՟մ
անցաւոր մխիթարութե՟ արարածոց ։
Զի ոչ ինչ արարած գիտէ զբաղձանս
իմ լիով հանգուցանել և մխիթարել ։

Մխացո՛ զիս ը՟ քեզ անքակ կապանօք սիրոյ. զի դու միայն շատ ես սիրողին, և առանց քո անոտի է ամ:

## ԳԼ. ԻԴ.

### Յաղագս խորշելոյ յընդվայրաքննին հետազօտութենէ վարուց այլոց:

ա. Որդեակ, մի լինիր ընդվայրաքննին. և մի պատաղիր 'ի հոգս անոտիս: Զի՞ կայ քեզ և այլոց. դու եկ զկնի իմ: Զի՞ փոյթ է քեզ, թէ այն որ այսպիսի իցէ կամ այնպիսի. կամ այս որ այսպէս և այնպէս գործիցէ կամ խօսիցի: Ո՛չ քեզ է՝ տալ պատասխանի վ՟ այլոց. այլ վ՟ անձին տալոց ես համարս: Ապա զիա՞րդ յայլոց իրս խառնիս: Ահա ես զա՟մ ճանաչեմ, և որ ինչ ընդ արեգակամբ լինի՝ տեսանեմ: և գիտեմ, զինչ անցք են միոյ միոյ. զինչ խորհի, զինչ կամի, և յինչ վախճան բերի նորա դիտումն: Ապա յիս յանձն արա զա՟մ, և դու պահեա զքեզ 'ի բարիոք խաղաղութե՟. և թո՛ղ յուզողին յուզել որչափ և կամի: Եկեսցէ 'ի գլուխ նորա, զինչ և արասցէ կամ ասասցէ. քանզի խաբել

զիս

զնա ոչ կարէ ։

Է. Մի՛ փոյթ լիցի քեզ զմեծանունութեան շքոյ, մի՛ զբազմաց ընտանութէ, և մի՛ զառանձնական սիրոյ մարդկան ։ Զի սոքա ցնդմունս բերեն, և մթայլ 'ի սիրտ արկանեն ։ Մտադիւր խօսէի ընդ քեզ զիմ բանս, և յայտնէի զխորհս, եթէ իմում եկաւորութե դէտ ական կալեալ սպասէիր . և զդուռն սրտիդ ինձ բանայիր ։ Լե՛ր յառաջատե՛ս, և կանխեա՛ յաղօթս, և խոնարհեցո՛ ընդ քեզ յամի ։

---

# Գ Լ. ԻԵ ։

Թէ յի՞նչ հաստատեալ իցէ անխռով խաղաղութի սրտի . և ճշմարիտ յառաջադիմութի ։

Ա. Որդեակ, խօսեցայ ես և ասեմ. զխաղաղութի թողում ձեզ, զխաղաղութի զիմ տամ ձեզ . ո՛չ որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ ։ Ամենեքին ցանկան խաղաղութե . բայց թէ զի՞նչ պիտի առ ճշմարիտ խաղաղութի, ո՛չ ամենեքին հոգան ։ Խաղաղութի իմ ընդ խոնարհս է, և ընդ հեզս սրտիւ ։ Քո խաղաղութի

ծլեցի 'ի բազում համբերութեն ։ Թէ ինձ լսես, և ձայնի իմում զհետ գաս. 'ի բազում խաղաղութեն վայելեսցես ։

Ը. Եւ զի՞նչ գործեցից ։

Թ. Յամենայն մտի դիր անձին, թէ զի՞նչ տեսանես, և զի՞նչ ասես. և զամ դիտումն քո յայն ուղղեա՛, զի ինձ միայն հաճոյ լիցիս, և արտաքոյ իմ ինչ ո՛չ խնդրեսցես, և ցանկասցիս ։ Այլ և զայլոց բանս և զգործս մի՛ յանդուգն դատեր. և որ ինչ ո՛չ է քեզ յանձն, յայն մի՛ միտիր. զի այսպէս սակաւ, կամ ո՛ւր ուրեմն լիցի քեզ խռովիլ ։ Բայց ոչինչ խռովութեն երբէք զգալ. և ո՛չ նեղութեն ինչ կրել սրտի կմ մարմնոյ՝ ո՛չ այժմու ժամանակիս է, այլ վիճակ յաւիտենից հանգստեան ։ Ապա մի՛ կարծեր թէ գտեալ իցէ քո զճշմարիտ խաղաղութեն, եթէ ոչինչ ըզգաս ծանրութեն. և մի՛, թէ ամն է բարի, յորժամ չկայ ինչ քո ոսոխ. և մի՛ կատարելութեն զայն, եթէ ամ ինչ լինիցի ըստ ըղձից քոց ։ Եւ մի՛ մեծ ինչ դրեր զանձն, կամ առանձինն իմն սիրելի, եթէ առաւելուցու քո եռանդն և քաղցրութեն. զի ո՛չ սոքօք ճանաչի ճշմարիտ առաքինասէրն, և ո՛չ 'ի սոսին հաստատեալ է յառաջադիմութեն

և.

և կատարելութե մարդոյ ։
Ճ̃· Իսկ յի՞նչ ո̃ր ։
Ծ· Յայն՝ զի մատուցես զքեզ յո̃մ սըր տէ քումմէ կամացն ա̃յ, ո՛չ խնդրելով զքոյն, ո՛չ 'ի փոքունս և ո՛չ 'ի մեծամեծս · ո՛չ առ ժամկ մի , և ո՛չ յաւիտեան · մինչև միօրինակ կալ մնալ քեզ 'ի գոհութ՝ եթէ 'ի յաջողուածս և եթէ 'ի վիշտս , նմի հաւասարաթաթ կըշռութ̃ ։ Եւ եթէ այնչափ արի և քաջայոյս լինիցիս , մինչ և բարձմամբ ներքին մխիթարութե՝ առաւելագոյնից ևս համբերելոյ զսիրտ քո պատրաստեսցես · և ո՛չ զանձն արդարացուցես , ո՞չ թէ չէր արժան քեզ զայդ ամ կրել , այլ զիս յո̃մ կարգաւորութիս արդարացուսցես և սուրբ արասցես · յայնժամ ընդ ճշմարիտ և ուղիղ ճ̃պ̃հ խաղաղութե գնաս , և յոյս եղիցի քո աներկեան , թէ անդրէն խնդութ̃ զերեսս իմ տեսցես ։ Ապա եթէ 'ի կատարեալ արհամարհութե անձին ժամանեսցես , գիտասջի՛ր , զի յայնժամ 'ի բազում խաղաղութե վայելեսցես ,
ը̃ մարթելոյ պանդխտութե քոյ ։

## ԳԼ. ԻԶ.

Յաղագս վսեմութեան ազատական մտաց, որում արժանանամք առաւել խոնարհական ա-ղօթիւք՝ քան ուսմամբ։

Ա. Տէր, այս գործ է առն կատարե-լոյ, ոչ երբէք լքանիլ 'ի խոկմանէ երկ-նայնոց, և ընդ բազում հոգս անցանել իբր անհոգ. ոչ ըստ թմրեալ ոք, այլ վսեմութբ իմն ազատական մտաց, յոչ-ինչ արարածս անկարգ ըմբռնմամբ ու-նելով։

Բ. Աղաչեմ զքեզ, մարդասէր Տր, ապահեա՛ զիս 'ի հոգոց կենցաղոյս, զի մի՛ կարի իմն ընկլայց 'ի նս. 'ի բազ-մադէմ կարեաց մարմնոյ, զի մի՛ 'ի հեշ-տութիս ըմբռնեցայց. և յամե՛ն՝ որ ար-նառու է հոգւոյ, զի մի՛ վհատակա-բեկ լքայց։ Ոչ ասեմ յայնց իրաց, զո-րովք սրտի մոօք փարի ծայրն ունայ-նութե. այլ յայնց թշուառութեց, որք զոգի ծառայի քո՝ հասրկց մեռելութե անիծադրութբ դառն ծանրացուցանեն. և չթողուն նմա մտաւ ունել յազա-տութի հոգւոյ, որչափ կամք իցեն։

Գ. Ած իմ, անճառ քաղցրութիւն, դար
ձո՛ ինձ 'ի դառնութիւն զամ մարմնական
մխիթարութիւն․ որ 'ի բաց դարձուցանէ
զիս 'ի սիրոյ անանց բարեաց, և յիմքն
չարաչար յանկուցանէ հրապուրանօք
կենցաղական հեշտութեանց։ Մի՛ յաղթես
ցէ ինձ տէր, մարմին և արիւն․ մի՛ խա
բեսցէ զիս աշխարհ, և անօտի փառք նր․
մի՛ պատրեսցէ զիս սատանայ, և խո
րամանկութիւն նորա։ Տո՛ւր ինձ զօրութիւն
ընդդէմ կալոյ, համբերութիւն տանելոյ,
արիութիւն հնազանդելոյ։ Տո՛ւր փոխա
նակ ամ մխիթարութեանց աշխարհի զհոգւոյ քոյ
զանուշակ օծութիւն, և փոխանակ մարմ
նական սիրոյ հեղ յիս զսէր անուան քո։
Դ. Ահա կերակուր և ըմպելի, ձորձ,
և այլոց կարեաց մարմնոյ պէտք՝ բեռն
են ջերմեռանդն հոգւոյ։ Շնորհեա՛
պայխեօք չափով տածիլ․ և մի՛ ան
չափ ըղձմամբ յայնս պատաղիլ։ Զամ
յանձնէ մերժել չէ արժան․ զի պարտ
է զբնութեան պէտս մատակարարել․ այլ
աւելորդայն և հեշտալեաց 'ի խնդիր
լինել՝ արգելուն սուրբ օրէնք․ զի մի՛
մարմինն ընդդէմ հոգւոյն լրբեսցի․
Յայսմ ամի ձեռն քո ինձ առաջնոր
դեսցէ, և ուսուսցէ, զի մի՛ ինչ լիցի
աւելազանցութիւն։

# Գ Լ. ԻԷ.

Թէ առանձնական սէրն 'ի գերագոյն բար֊
ւոյ ձգտողս յետս ընկրկէ։

Ա. Ո՛րդեակ, պարտ է քեզ տալ զամ՛ փոխանակ ամի, մինչև չխնայելոյ ինչ անձին։ Գիտասջի՛ր, զի սէր անձին առաւել վնասէ քեզ, քան զի իրք։ Ըստ սիրոյ և ըն ըղձմանն՝ զոր յանձին ունիս, յաւէտ կամ նուազ յարին 'ի քեզ իրք։ Եթէ սէր քո մաքուր է և անխառն, և կարգաւորեալ, ոչ ես գերութե գրաւիս նոցա։ Մի ցանկար այնմ՝ զոր ոչ է արժան ստանալ. և մի ստանար զայն ինչ՝ որ խոչ է քեզ, և 'ի ներքին ազատութէ վրէպ զքեզ կացուցանէ։ Զարմանք են, զի ոչ յամ սրտէ յիս յանձն լինիս, ամիւ հանդերձ որում ցանկալ՝ կամ զոր ստանալ մարթիս։

Բ. Զի՞րդ սնոտի տրտմութբ հաշիս. զի՞ աւելորդ հոգովք տաժանիս. կա՛լ զհաճոյս իմ, և ոչ ինչ տուժեսցիս։ Եթէ զայս ինչ կամ զայն ինչ խնդրես, և աստ կամ անդ լինել կամիս՝

վա

վ՛ն անձին դիւրութե , և վ՛ն քոց հա_ճոյից , ո՛չ երբեք եղիցիս 'ի հանգըս_տի , և ո՛չ զերծ 'ի հոգւոց · զի յա՛մի գտցի ինչ յոռութի · և ա՛մ ուրեք լիցի ինչ քեզ դիմադարձ :

է · Ապա լաւ է՝ ո՛չ զա՛մ արտաքին՝ որ զինչ և իցէ՝ ստանալ կմ մթերել · այլ արհամարհել և խլել 'ի սրտէ արմատաքի : Զոր մի իմանար միայն ըղ_դանձուց և զմեծուէ , այլ և զպատ_ուասիրութէ , և զցանկութէ անուան գովութե · որք համօրէն անցանեն ընդ ծի : Ոչինչ օգնէ տեղին , եթէ չկայ եռանդն հոգւոյ · և ոչինչ յերկար տեւէ խաղաղութին խնդրեալ արտաքոյ · եթէ խարխուլ է հիմն սրտի · այս է, եթէ ո՛չ յիս հաստատեալ իցես : Հնար է թէ փոխեսցիս , այլ ո՛չ 'ի լաւ անդր : Զի 'ի դիպել առիթի , գտցես՝ յորմէ խորշեցար , և աւելի ևս :

Աղօթք յաղագս մաքրուէ սրտի , և երկնային իմաստուէ :

ը Հաստատեա՛ զիս տ՛ր , շնորհօք սբ_հոգւոյդ : Տո՛ւր զօրուն , զօրանալ ինձ ի ներքին մարդոյն · և զսիրտ իմ յա՛մ անպիտան հոգոց և անձկութեց դա_տարկեա՛ · չձգիլ ինձ 'ի պէսպէս ցան_կութիս ա՛մի որ անարգ իցէ , և որ պատ

ունական. այլ յամ հայիլ՝ որպէս ՚յան-ցաւոր լինել, և յիս լսել ը Նոսին ան-ցաւորակէից: Զի չիք ինչ միտամիտայ ը արեգակամբ. ուր ամ ինչ ունայնութիւն է, և տառապանք հոգւոյ: Ո՞վ, ո՞ր իմաստուն է, որ զայս խորհի:

Գ. Տո՛ւր ինձ Տէր զիմաստութիւն երկնային, զի ուսայց քան զամ զքեզ խնդրել և գտանել. քան զամ զքեզ խորհել և սիրել. և զայլն ամ՝ ը կարգի իմաստութեան քո իմանալ՝ ո՛րպ և ենն: Տո՛ւր հանճարով խոտորել ՚ի մարդելուզից, և համբերութը տանել հակառակորդաց. զի այս է մեծ իմաստութ, չշարժանիլ յամ հողմոյ բանից. և ոչ ունկն մատուցանել հրապուրանաց յուշկապարկի: Ընդ. ճանապարհ զոր սկսաք, անվրկէան գնամք:

---

## ԳԼ. ԻԸ:

### Ընդդէմ լեզուաց բամբասողաց:

Ա. Որդեակ, մի խռովեսցիր, եթէ ոմանք քրթմնջեն զքէն, և խօսին ինչ դժուարահաճ: Դու յուլեզոյն ես զանձն

զանձն համարեա՛, և մի՛ ողջ կարծեր քան զքեզ տկար ։ Եթէ ըստ ներքնոյն զննես, ոչ մեծ ինչ զբեա զբանս՝ որք ցնդին ըն͞դ օդս ։ Ո՛չ փոքր իմաստութիւն է՝ լռել 'ի չար ժամանակի, 'ի սրտէ առ իս դառնալ, և ոչ ընդ մարդկան դատաստան խռովիլ։

Ը. Մի՛ լիցի խաղաղութիւն քո 'ի բերանս մարդկան. զի եթէ 'ի բարիս մեկնեն, և եթէ 'ի չարն, ոչ վասն այդր լինիս այլ մարդ։ Ո՞ւր իցէ ճշմարիտ խաղաղութիւն, և ճշմարիտ պարծանք. ո՞չ ապաքէն յիս ։ Որ ոչ անձկայ՝ մարդկան հաճոյ լինել, և ոչ երկնչի յաչաց ելանել, վայելէ 'ի բազում խաղաղութեան։ Յանկարգ սիրոյ և 'ի սնոտի երկիւղէ յառաջ գայ ամ͞ աղմուկ սրտի, և ցն͞դ դումն մտաց։

---

## Գ. Լ. ԽԹ.։

Թէ ո՞րպ 'ի ներքուստ պարտ է խնդրել զԱ-ծ, և օրհնել զնա։

Ա. Եղիցի անուն քո տր͞ օրհնեալ յաւիտեան, զի թողացուցեր այսմ փորձութեան և նեղութեան գալ 'ի վե͞ր իմ։

Չեմ բաւական զերծանել 'ի նմանէ . այլ հարկ է ինձ՝ առ քեզ ապաւինել . զի լիցիս իմ օգնական , և շրջեսցես ինձ յօգուտ : Ահա՛ 'ի վիշտս եմ տէր . և չիք դիւր սրտի իմոյ . այլ նեղեալ եմ յոյժ 'ի կրից աստի : Եւ արդ հա՛յր ախրելի , զի՞նչ ասացից . ըմբռնեցայ յանձկութիւս . ապրեցո՛ զիս 'ի ժամէ աստի յայսմանէ : Այլ վասն այնորիկ եկի ես 'ի ժամս յայս , զի դու փառաւորեսցիս , 'ի խոնարհել իմում յոյժ . և յելանել իմում քև յազատութի՛ւն : Կամեցա՛ տէր փրկել զիս . զի ես աղքա՛տ յի՞նչ ձեռնհաս եմ , և յո՞վ երթայցեմ առանց քո : Տո՛ւր տէր համբերութիւն և յայսմ նուագի . օգնեա ինձ տէր իմ . և ես ո՛չ երկեայց , որչափ և ծանրացայց :

Ը . Եւ արդ զի՞նչ ասացից յայսմ ժամի : Տէ՛ր , եղիցին կամք քո : Արժանի էի նեղութեան և չարչարութեան : Այո՛ պարտ է ինձ ժուժկալել . և երանի՛ թէ համբերութեամբ , մինչև անցցէ փորձս , և աջողեսցի : Այլ կարող է ամենազօր ձեռն քո և զայս ևս փորձութիւն բառնալ յինէն , և զբռնութիւն նորա ցածուցանել . զի մի իսպառ վտանգեցայց . ո՛չ և յառաջն բազում անգամ արարեր ըզ

իս

իս ողորմութե, ած իմ։ ինձ դժուա_
րին՝ այլ քեզ դիւրին է այս նորոգումն
աջոյ բարձրելոյդ։

## ԳԼ. Լ.

Յաղագս խնդրելոյ զօգնականութիւնն այ, և յաղագս յուսոյ վերստին ընդունելութե շնորհաց։

Ա. Որդեակ. ես եմ տէր, որ զօրացուցանեմ յաւուր նեղութե. Եկ առ իս, յորժամ ոչ յաջողէ քեզ։ Այս է, որ մեծապէս խափանէ զմխիթարութե երկնային. զի յամր բերիս յաղօթս։ Քանզի մինչչև է քո մատուցեալ առ իս յաղերս, բազում խնդրես սփոփանս, և զբօսեցուցանես զքեզ յարտաքինս։ Վ՛ն ոչինչ օգտէ քեզ այն ամ. մինչև 'ի միտ առցես, թէ ես եմ, որ փրկեմ զյուսացեալս յիս. և արտաքոյ իմ չիք օգնութե զօրաւոր, և ոչ խորհուրդ պիտանի, և ոչ դեղ հաստատուն։ Այլ արդ. որդի առեալ յետ մրրկի, զօրացի՛ր 'ի լոյս գթութեց իմոց. զի մերձ եմ ես, ասէ տէր, 'ի նորոգել զամ, ոչ անթերի միայն, այլ

և.

և լնուլի առաւելութ̃։

ժ̃. Եթէ կայցէ՞ ինչ ինձ դժուարին. կամ թէ յա՞յնց լիցեմ, որ ասեն և ոչ առնեն։ Ո՞ւր են հաւատք քո։ Կա՛ց ձիգ դու հաստատուն համբերութ̃։ Լե՛ր երկայնամիտ և այր զօրուն. եկեսցէ հասցէ քեզ մխիթարութ̃ն յիւրում ժամանակի։ Սպասեա և դարձեալ սպասեա. ես եկից և բժշկեցից զքեզ։ Փորձութ̃ է, որ չարչարէ զքեզ. և ահ սնոտի, որ զարհուրեցուցանէ զքեզ։ Զինչ օգուտ քեզ հոգք զապառնայից՝ թէ գուցէ պատահեսցին, բայց՝ զի ունիցիս տրտմութ̃ 'ի տրտմութ̃ եւ։ Շատ է աւուրն չար իւր։ Սնոտի է և անօգուտ խռովիլ կամ խնդալ 'ի վր̃ ապառնայից, որք

գուցէ ոչ երբեք լինիցին։

ի̃. Մարդկային իմն է՝ այսպիսի ցնորիւք խաբիլ. և փոքրոգութ̃ է նշան այդպէս հեշտեաւ հանգիլ 'ի հրապոյրս թշնամւոյն։ Քանզի չէ ինչ նմ փոյթ, թէ ստութ̃ կամ ճշմարտութ̃ զքեզ խաբեսցէ. և ոչ, թէ արդեօք սիրով կամ ապառնայից ահաբեկութ̃՝ յերկիր զքեզ կործանեսցէ։ Ապա մի խռովեսցի սիրտ քո, և մի զանգիտեսցէ։ Հաւատա յիս, և յողորմութ̃ իմ

յու-

յուսամ: 'Ի կարծել քո զքեզ յինէն հե-
ռի , բայց անդամ ես մերձ կամ : Եւ
յորժամ համարիս թէ զամ կորու-
սեալ է քո , յայնժամ յոլովակի մեծի
հատուցման շահ 'ի մէջ կայ : Ոչ է կո-
րուսեալ ամն , յորժամ իրք ոչ 'ի դէպ
յաջողեն : Մի՛ դատեր ըստ այժմու
կարծեացդ . և մի՛ զծանրութի ինչ՝ ուս-
տի և գայցէ , ըստանձներ , որպէս թէ
ամենեւին յոյս կայցէ թօթափելոյ :

Դ. Մի՛ համարիր զքեզ խափան թո-
ղեալ , թէպէտ և առ վայր մի ար-
կանեցեալ զքեզ նեղութի , կամ 'ի բաց
առնուցում զքո ըղձալի մխիթարութի.
վն Է այս է մուտ յարքայութիւն երկ-
նից : Եւ այս անտարակոյս առաւել
օգուտ է քեզ, և այլոց իմոց ծառայից ,
մարզել ձեզ 'ի վիշտս , քան զամ ու-
նել ըստ հաճոյս : Գիտեմ ես զգաղտնի
խորհուրդս , թէ յոյժ օգուտ է վասն
փրկութեն. թոյլ քեզ վայր մի առանց
քաղցրութե . մի՛ գուցէ փքասցիս ընդ-
բաջողեալ ելս , և յաչս անձին բար-
ւոք թուիցիս յայն ինչ՝ որ ոչ ես :
Զոր ետու՝ գիտեմ բառնալ , և անդ-
րէն շնորհել՝ յորժամ հաճոյ թուի-
ցի ինձ :

Ե : Եթէ տամ, իմ է . և եթէ 'ի բաց

առ_

առնում, ոչ զքոյդ առնում։ Զի իմ են ամ̃ տուրք բարիք, և ամ̃ պարգևք կատարեալք։ Թէ ծանրութի̃ զքև արկանեմ, կամ զի՞նչ և իցէ ձախող պատահար, մի խոժոռեսցիս, և մի լքցի սիրտ քո։ Գիտեմ ես վաղվաղակի թեթևացուցանել, և զամ̃ բեռն 'ի խնդութի̃ փոխարկել։ Սակայն և այնպէս արդար եմ, և յոյժ գովելի. զի զայդ այդպէս առնեմ ը̃ քեզ։

Է. Թէ ուղիղ խորհիս, և 'ի ճշմարտութի̃ հայիս, ոչ երբէք պարտ է քեզ ընդ վիշտս սրտաթափ տխրիլ. այլ առաւել խնդալ և գոհանալ. նա՛ զայն իսկ խնդութի̃ համարիլ, զի 'ի նեղել իմում զքեզ ցաւովք՝ ոչ խնայեմ 'ի քեզ։ Որ̃պ սիրեաց զիս հայր, և ես սիրեմ զձեզ, ասացի սիրելեաց իմոց աշակերտաց. զորս ոչ առաքեցի 'յանցաւոր խնդութիս, այլ 'ի մեծամեծ պատերազմունս. ոչ 'ի պատիւ, այլ յարհամարհանս. ոչ 'ի դատարկութի̃, այլ յաշխատութի̃. ոչ 'ի հանգիստ, այլ 'ի բերել պտուղ յոյժ համբերութե̃։ Յո՛ւշ լիցին քեզ որդեակ իմ, այս բանք։

## Գ Լ. ԼԱ.

### Յաղագս զանց առնելոյ զամ արարածովք, առ գտանելոյ զԱրարիչն :

Տէ՛ր, առաւելագոյն շնորհի պէտք են ինձ, առ ցայն վայր հասանելոյ, ուր ոչինչ յարարածոց լիցի ինձ խափանարար : Զի ցորչափ յիրաց ինչ արգելեալ կամ, չիք ինձ համարձակ առ քեզ վերանալ : Անձկայր համարձակ 'ի քեզ սլանալ, որ ասացն : Ո՞ տայր ինձ թեւս որպէս աղաւնոյ, զի թռչէի, վերանայի, եւ հանգուցեալ դադարէի : Զի՞նչ համարձակահայեաց քան զակն առատ. եւ զի՞նչ համարձակագոյն քան զայն՝ որ ոչինչ իմիք ցանկայ յերկրի : Ապա պարտ է անցանել զանցանել զամ արարածովք, եւ զանձն իսկ գլխովին լքեալ թողուլ. եւ 'ի հիացման լեալ՝ տեսանել, թէ ա բարչիդ ամ ը արարածս չիք ինչ նմանունի : Եւ եթէ չէ ոք զերծ յամ արարածոց, ո՛չ զօրէ համարձակ նայել յամենայնիս : Վս այսորիկ սակաւք գըտանին անձախոհք, զի սակաւք գիտեն

'ի

'ի կորստականաց և յեղականաց լիով
զանձինս ճողոպրել:

է. Առ այս պիտին շնորհք մեծ, առ վերացուցանելոյ զոգի, և քան զինքն 'ի վեր յափշտակելոյ: Եւ եթէ չէ որ հոգւով վերացեալ, և յա̃մ արարա_ ծոց զերծ, և ընդ ա̃յ բոլորովին միա ւորեալ, որ զինչ գիտէ, որ զինչ և ու նի, չէ ինչ մեծարգի: Փոքր մնայ և ստորաքարշ, որ՝ բաց 'ի միոյ միայնոյ անչափ և յաւիտենական բարւոյ՝ հա մարի ինչ մեծ: Որինչ ոչ է ա̃ծ, ոչինչ է, և յոչինչ համարելի: Բա̃մ ինչ է մէջ է իմաստուն առն լուսաւորելոյ և ա_ ռաքինւոյ, և դիտունն ուսումնասէր կղերիկոսի՝ դրոց աշակերտելոյ: Ընտ_ րելագոյն է ուսումն որ 'ի վերուստ յա̃ծային հոսմանէ գայ. քան որ մարդ_ կային երկասիրու̃թ ստացանի:

ը. Բազումք գտանին փափաքօղք վեր նական խոկման. բայց զորս պիտին առ այն՝ ոչ ջանան 'ի գործ արկանել: Մեծ խոչ այն է, զի 'ի նշանս և 'ի զգալիս զկայ առնումք. և զկա̃րեալ մեռելութե̃ չիք մեր փոյթ: Ո՛չ գիտեմ, զինչ իրք են. յորմէ հոգւոյ առաջնորդիմք, և յինչ ձկտիմք մեք՝ որք հո_ գևոր անուանեալս եմք. զի այնչափ

աշ_

աշխատութեն և առաւելագոյն փոյթ յանձին ունիմք վս անցաւոր և չնչին իրաց ․ իսկ 'ի խոկալ զներքինս մեր՝ ուր ուրեմն լինիլ ամփոփեմք զմիտս ։

Դ․ Բայց է, յետ սակաւ մի զմիտս ամփոփելոյ՝ անդէն վաղվաղակի 'ի դուրս յարձակիմք․ և զգործս մեր ոչ անսաստ քննութե կշռեմք ։ Թէ յո՛ր վայր ձգլին մեր ախորժակք, մեք ոչ զնեմք․ և թէ ո՛րչափ անսուրբ է ամ ինչ մեր, զայն ոչ ողբամք ։ Զի ամ մարմին ապականեալ էր զճանապարհ իւր․ վս այնորիկ զհետ գայր ջրհեղեղն աՀագին ։ Եւ քանզի ախորժակ մեր ներքին յոյժ է ապականեալ, Հարկ է և զհետ եկեալ գործոյն՝ որ դուշակն է ներքին լուծութե՝ ապականիլ ։ 'Ի մաքուր սրտէ յառաջ գայ պտուղ կենաց բարեաց ։

Ե․ Թէ ո՞րչափ ինչ արար ոք, այդմ 'ի խնդիր լինին․ այլ թէ քանի՛ առաքինօրէն, ոչ ժրաջան խորհին ։ Թէ է Հզօր, մեծատուն, գեղեցիկ, աջողաձեռն․ կամ քաջ մատենագիր, քաջ երգեցիկ, քաջ վաստակաւոր, զայն զննեն․ Թէ քանի՛ աղքատ է Հոգւով, քանի՛ Համբերող և Հեզ, քանի՛ փոյթեռանդն և ներանձնաւոր, զայն բազումք

զումք լուէն : Բնութիւն յարտաքինս հայի մարդոյ. այլ շնորհն 'ի ներքինս ակնարկէ : Նա ստէպ խաբի. սա յԱծ յուսայ, զի մի՛ պատրեսցի :

---

## Գ Լ. ԼԲ.

Յաղագս ուրանալոյ զանձն, և հրաժարելոյ յամ ցանկութէ :

ա. Որդեակ, ո՛չ կարես ստանալ ըզկատարեալ ազատութի, թէ ո՛չ բոլորովին ուրանաս զանձն : Ստանակապել են ամ ինքեանցասէրք և անձնասէրք, ցանկացօղք, ընդվայրաքննինք և դատարկաշրջիկք. որք խնդրեն յամի ըզհեշտալիս, և ո՛չ զՔի. բայց զայս առնեն յօրինակի կեղծեօք և պատճառանօք, որոց չի՛ք տեղի. Զի կորիցէ ամ, որ ո՛չ գայ յԱյ : Կա՛լ յանձին ըզբանն համառօտ և հակիրճ : Թո՛ղ զամ, և գտցես զամ. Թո՛ղ զցանկութի, և գտցես զհանգիստ : Այսմ ստէպ լե՛ր մտախորհ. և իբրև կատարեսցես, 'ի միտ առցես զամ :

բ. Տր, ո՛չ է գործս միոյ աւուր, կամ տղայական խաղալիկ. զի յայս բան հա-

մառօտ փակի ըմ կատարելութեն կրօնաւորայ։

Գ· Որդեակ, ո՛չ է պարտ քեզ ՚ի բաց դառնալ, և ո՛չ անդէն վաղվաղակի լքանիլ՝ ՚ի լսել զճանապարհ կատարելոց· այլ առաւել ևս ՚ի բարձրագոյնս թերիլ· և գէթ փափաքմամբ այնց անձկալ։ Երանի՛ թէ այնպիսի լինէիր, և ցայն վայր ժամանէիր, մինչև չլինիլ քեզ անձնասէր, այլ հրամանի իմում անսալ, և հրամանի Հօր իմոյ, զոր քեզն առաջի արարի· յայնժամ ինձ հաճոյ լինէիր յոյժ· և զամ կեանս քո խնդութե և խաղաղութե կատարէիր։ Դեռ ՚ի բազում ինչ իրաց ունիս հրաժարել, զորս թէ ո՛չ բոլորովին յիս յանձն առնես, ո՛չ ստասցիս՝ զոր խնդրես։ Խրատ տամ քեզ գնել յինէն ոսկի ընտիր, զի ճոխասցիս· զիմաստութի ասեմ զերկնային, որ զստորայինս ամ առ ոտն հարկանէ։ Արհամարհեա՛ զիմաստութի երկրաւոր, և զամ զմարդկային և զանձնական հաճոյս։

Դ· Ասացի՝ գնել քեզ զանարգս՝ փոխանակ պատուականացն և բարձրականաց ՚ի մարդկայինս իրս· քանզի յոյժ անարգ և դուզնաքեայ և գրեթէ մոռացեալ լինի երևի ճշմարիտ իմաստու-

թին

լծին երկնային, որ ոչ մեծամեծս խորհի զանձնէ, և ոչ մեծանալ խնդրէ յերկրի. զոր բազումք այս բերանով քարոզեն, բայց վարուք օտար են յոյժ։ Նուակայն պատուական մարգարիտ է նա՝ ծածկեալ ՚ի բազմաց։

---

## Գ Լ. ԼԳ.

Յաղագս անհաստատութե՛ սրտի, և յաղագս վախճանական դիտման՝ զոր պարտ է ունել առ Ած։

ա. Որդեակ, մի՛ հաւատար քում ախորժակի. որ առ այժմ է՛, և վաղվաղակի փոխի յայլ։ Ցորչափ կենդանի ես, ընդ փոփոխութ՟ ես, և եւս ակամայ. մինչև գտանիլ քեզ երբեմն ուրախ, և երբեմն տրտում. երբեմն հանդարտեալ, և երբեմն խռովեալ. երբեմն փոյթեռանդն, և երբեմն դաղջ. երբեմն ժրաջան, և երբեմն անջան. երբեմն ծանր, և երբեմն թեթև։ Այլ յաղթէ փոփոխականացս իմաստունն և հոգեխրատն, ոչինչ հայեցեալ, թէ զինչ յանձին զգայ, կամ ուստի՞ շնչէ փոփոխականութեն հողմ.

այլ

այլ յայն՝ զի ձեմ դիտումն մտաց իւ-
րոց բերիցի 'ի պատշաճաւոր վախճանն
որում անձկայ ։ Զի այսպէս հնար է
նմա կալ հնալ անսասան՝ յատակահայ-
եաց դիտմանն աչօք յայնչափ բազմա
դիմի անցս՝ անթարթ լիս յառեալ ։

Է․ Արդ. որչափ յատակագոյն են դիտ-
մանն աչք, այնչափ անդրդուելի լի-
նին գնացք ը̃ պէսպէս ծփանս ։ Այլ
'ի քաղուածս մթագնին յատակ դիտմանն
աչք․ զի անդէն փաղփաղակի ուղղին
'ի հեշտալի ինչ՝ որ ելանէ ը̃ առաջ․
որով հետև դժուարին է թէ գտցի
ոք բոլորովին զերծ յարատոյ իւրոյին
շահասիրութե ։ Ո՞վ հրէայք եկին եր-
լեմն 'ի բեթանիա առ մարթա և մա-
րիամ, ոչ միայն վս̃ յս̃ի, այլ զի և ըզ
ղազար տեսցեն ։ Ապա սրբել պարտ
է զդիտմանն աչս, զի յատակատես լի-
ցէ և ուղիղ․ այլ և առ իս ուղերձել,
զանց զայլովք արարեալ միջնորդօք ։

## Գ Լ. ԼԴ.

### Յաղագս թէ սիրողին քաղցր է ած 'ի վեր քան զամ և յամս։

Ա. Ահա ած իմ, և ամ ինչ։ Զի՞նչ այլ կամիմ. և որո՞ւմ իմիք լաւագոյն ըղձանալ մարթիմ։ Ո՛վ անուշակ և քաղցր բան, բայց սիրողին զբանն, և ոչ զա̃, և զորս յա̃ծի են։ Ած իմ և ամ ինչ։ 'Ի միտ առողին շատ է ասացեալս. և սիրողին քաղցր է ստէպ կրկնել զայն։ Ապաքէն ուր դու կաս, քաղցր է ամ. բայց թէ 'ի բացէ ես, դառն է ամ։ Դու տաս սրտի հանդարտութի, մեծ խաղաղութի, և ցնծալից ուրախութի։ Դու տաս ուղիղ խորհել զամ, և օրհնել զքեզ յամի. և առանց քո ոչ ինչ հաճոյ թուի ընդերկար։ այլ առ հաճոյ լինել և քաղցրանալ՝ պարտ է նմա շնորհ քո առընթեր ունել, և համեմիւք իմաստութե քո համեմիլ։

Բ. Որում քաղցր ես դու, զի՞նչ ոչ քաղցրանայ նմա. և որում չես դու քաղցր, զի՞նչ քաղցրասցի նմա։ Բայց

 վրէպ

վրէպ են յիմաստութէ քումմէ իմաստութիւնք Տի, և որոց քաղցր է մարմին։ Զի անդ է բզմ ունայնութի, և աստ մահ։ Բայց որք արհամարհութե աշխարհայնոց և մեռելութե մարմնոյ ընդհետ երթան քոյ, ճշմարտապէս իմաստուն ճանաչին. զի 'ի նանրութէ 'ի ճշմարտութի, և 'ի մարմնոյ 'ի հոգի փոխադրին։ Այսպիսեաց քաղցր է ած. և որինչ բարութի գտանի յարարածս, զամն 'ի գովեստ մատուցանեն իւրեանց արարչի։ Այլ աննման և յոյժ աննման է քաղցրութի արարչին և արարածոց, յաւիտենից և ժմկի, լուսոյն անստեղծի, և լուսոյն լուսաւորելոյ։

Գ. Ո՛վ լոյս մշտնջենաւոր, որ 'ի վերդ ես քան զամ լոյս եղական, փայլեա՛ զփայլատակունս 'ի բարձանց՝ մտանել 'ի շտեմարանս սրտի իմոյ։ Մաքրեա՛, ուրախացո՛, պայծառացո՛, և կենագործեա՛ զհոգի իմ, և զզօրութիս սո՛, յարիլ 'ի քեզ հրճուողական հիացմամբ։ Ե՞րբ եկեսցէ այն երանաւէտ ժամ ցանկալի. զի տեսլեամբ քո զիս յագեցուսցես, և լիցիս ինձ ամ յամի։ Մինչև է տուեալ այս, ոչ լինի լիուլի խնդութի։ Բա՛րէ, դեռ կենդանի է յիս հին մարդն. չև է բոլորովին խա

չեղեալ, և ոչ կատարելապէս մեռեալ։ Դեռ բուռն ցանկայ հակառակ հոգ-ւոյ. պատերազմունս յարուցանէ ներքինս. և չթողու թագաւորութեան հոգւոյ կալ յանդորրու։

Է. Այլ դու որ տիրես զօրութեան ծո-վու, և զձայն ալեաց նորա ցածուցա-նես. արի՛, օգնեա՛ ինձ։ Ցրուեա ըզ-հեթանոսս, որք կամին ընդ պատե-րազմ. խորտակեա՛ զնոսա զօրութեամբ քով։ Ցո՛յց զմեծամեծս քո, և փառաւորես-ցի աջ քո։ Զի չի՛ք իմ այլ յոյս և ա-պաւէն, բայց 'ի քեզն Տէր Աստուած իմ։

---

## Գ Լ. ԼԵ։

### Թէ չիք ապահովութիւն 'ի փորձութենէ յաստի կեանս։

Տ. Որդեակ, չես երբէք ապահով յաստի կեանս. այլ ցորչափ կենդա-նի ես, հանապազ հոգեւորական զէնք պիտոյին քեզ։ 'Ի մէջ թշնամեաց կաս. և յաջմէ և յահեկէ պատերազմ մղի։ Արդ-թէ ոչ պատսպարես զանձն վահանաւ համբերութեան, ոչ յերկար կացցես ան-խոց։ Իսկ թէ ոչ հաստատես զսիրտ

քոյիս, յանձն առեալ համբերել ա̃մի վշ̃իմ, ոչ կարասցես տոկալ այսմ տագնապի. և ոչ երանելեացն յաղթութե̃ լինիս ժամանող: Արդ պարտ է քեզ քաջութ̃ անցանել ը̃ ա̃մ, և հզօր ձեռամբ 'ի դիմի հարկանիլ ախոյանին: Զի յաղթողին տուեալ լինի մանանայ. իսկ թմբրելոյն մնայ բա̃մ թշուառութիւն:

Է̃. Եթէ խնդրես յաստի կեանս հանգիստ, զիա՞րդ յայնժամ ժամանեսցես 'ի յաւիտենական հանգիստն: Մի՛ պատրաստեր զանձն բազում հանգստեան, այլ մեծի համբերութե̃: Խնդրեա՛ զճշմարիտ խաղաղութի̃, մի՛ յերկրի, այլ յերկինս. մի՛ 'ի մարդիկ և մի՛ յայլ արարածս, այլ յա̃ծ միայն: Վ̃ա ա̃յ սիրոյն մտադիւր յանձն առ զա̃մ, զաշխատութիս, և զցաւս, զփորձութիս, զչարչարանս, զանձկութիս, զվիշտս, ըզհիւանդութիս, զզրկանս, զչարախօսութիս, զկշտամբանս, զցածութի̃, զամօթ, զյանդիմանութիս, և զարհամարհանս: Այս ա̃մ օգնէ առաքինութե. այս ա̃մ ընտիր ընծայեցուցանէ զհամբակ քո̃ի. այս ա̃մ յօրինէ զպսակ երկնային: Ես հատուցից զվարձս անվախճան ը̃ սուղ վաստակոց, և զփառս անանց ը̃ ան-

ցաւոր ամօթոյ:

Է. Կարծիցե՞ս յա̃մ ժամ ունել քեզ ՚ի կամս քո զմխիթարութիս հոգևորս: Սր̃ք իմ ոչ յա̃մ ժամ ունէին այդպի_սիս. այլ բազում ծանրութիս, և պէս_պէս փորձութիս, և մեծամեծ լքմունս: Բայց երկայնմտութ̃ տարան ամ̃ի, և առաւել յիս յուսացան քան յանձինս. զի գիտէին, թէ չեն արժանի չարչա_րանք ժամկիս հանդերձելոցն փառաց: Եւ դու առ օրի՞ն կամիս ունել, զոր բզ̃մք յետ բազմաց արտասուաց և մեծամեծ ճգանց հազիւ ստացան: Համբե՛ր ինձ, քաջալերեա՛, և զօրացի՛ր. մի՛ վհատիր, մի՛ լքանիր, այլ մարմնով և հոգւով արիաբար շահատակեա՛ ՚ի փառս իմ: Ես հատուցից լիուլի. ես Է քեզ եղէց յա̃մ ՚ի վիշտս:

---

## ԳԼ. ԼԶ:

՚Ի վե՛ր ունայն դատողութէ մարդկան:

Ա. Որդեակ, հաստատեա՛ զսիրտ քո ՚ի տր, և ՚ի մարդկայի՛ն դատողութէ մի՛ ինչ զանգիտեր, ուր անըստգիւտ է քո խիղճ մտաց: Բարւոք է և ե_րա_

բանելի՝ կրել ինչ այդպիսի. և չէ ինչ այդ. ծանր՝ խոնարհ սրտի, որ յանձն և ոչ յանձն յուսացեալ իցէ: Բազմք բազում ինչ խօսին, վասն և չեն ինչ արժանահաւատ: Այլ և զամենեցուն զմիտս հաճել՝ չէ ինչ հնարաւոր: Թէ և պէտ և ամենեցուն ջանացաւ պօղոս հաճոյ լինել 'ի տր, և ը ամի ամ եղև. բայց և զդատելն 'ի մարդկանէ ինչ ոչ համարեցաւ:

ը. Գուն գործեաց վս այլոց շինութե և փրկութե յիւրմէ կողմանէ ըր կարէ. բայց զդատիլ և զանգոսնիլ իւր յայլոց՝ չկարաց ինքն խափանել: Վասն զամ յանձն արար այ, որ իրագէտն էր ամի. և երկայնմտութե և խոնարհութե 'ի ժանեաց չարախօսաց և նանրախոհից, և ըր հաճոյս իւրեանց պարծեցող կորզեաց զանձն: Սակայն ձեռն էարկ երբեմն և 'ի պատասխանատուութի. զի մի 'ի տկարս 'ի լռութէ իւրմէ ծնցի գայթակղութի:

թ. Զի՞ է քեզ երկնչիլ 'ի մարդոյ մահկանացուէ: Այսօր է, և վաղիւ չերևի: Զայ երկիր, և յաղթէ մարդկան մի ինչ զարհուրիր: Զինչ ձեռնհաս է ոք 'ի քեզ բանիւք կամ թշնամանօք: Անձին վնասէ և ոչ քեզ. և ոչ

է կարող 'ի դատաստանացն այդ զերծանել, ո՛ ոք և իցէ նա: Կա՛լ դու զանձն առաջի աչաց, և մի՛ կարգեր գժտութի՛ւն: Ապա եթէ առ ժամն երևելի նկուն լինել, և զամօթ կրել, որ չէր արժան, մի՛ վասն այդր խռովիր, և մի՛ կարճմտութե՛ն նուազեր զքո պսակդ. այլ յիս հայեաց յերկինս, որ կարող եմ զերծուցանել յամ ամօթոյ, և 'ի նախատանաց. և հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւր:

---

## ԳԼ. ԼԷ:

Յաղագս անխառն և ողջոյն յանձնարարութե՛ անձին, առ ստանալոյ զազատութ՛ սրտի:

ա. Որդեակ, թո՛ղ զքեզ, և գտցես զիս: Կա՛ց առանց ինչ խտրանաց և սեպհականութե՛, և շահեսցիս միշտ: Զի յաւելցին քեզ առաւել և ս շնորհք, վաղվաղակի իբրև յիս յանձն լիցիս, և ոչ նահանջեսցիս:

բ: Տէ՛ր, ե՞րբ յանձն եղէց 'ի քեզ, և յո՞րս թողից զիս:

գ. Միշտ և յամ ժամ, եթէ 'ի փո

քունս

քունս և եթէ 'ի մեծամեծս: Զթա_
ղում ինչ 'ի զատ. այլ յամն կամիմ լի_
նել քեզ մերկեկ: Ապա թէ ոչ՝ պիարդ-
իմ լինիցիս, և ես քոյ. եթէ չլինիս
յամ կամաց քոց ներքոյ և արտաքոյ
հրաժարեալ: Որչափ վաղագոյն զայդ-
առնես, լաւ ևս լիցիս. և որչափ
լրագոյն և անխառն, այնչափ առա_
ւել ինձ հաճոյասցիս, և առաւել ևս
օգտեսցիս:

Ե. Են՝ որք յիս յանձն լինին, բայց
և թողուն ինչ անձանց պահեստ. զի
ոչ լիով յամ ապաւինին, վա՛ այնորիկ
անձանց հոգատարութե խնամ տանին:
Եւ են ևս՝ որք զառաջինն զամ մա_
տուցանեն, բայց 'ի բաղխել փորձու_
թե, առ իւրեանցն դարձ առնեն.
վնի ոչինչ յառաջադէմ լինին յառաքի_
նութիս: Այսպիսիք 'ի ճշմարիտ ազա_
տութի մաքուր սրտի. և 'ի շնորհս իմոյ
բերկրութեան ընտանութե ոչ ժամանեն.
թէ ոչ նախ առնեն ողջիկ յանձնարա_
րութի, և անձանց զօրհանապազ զե_
նումն. առանց որոյ չլինի խանդաղա_
կաթ միաւորութի:

Զ. Ասացի քեզ բազմ անգամ, և արդ-
դարձեալ ասեմ. թող զքեզ. յանձն
արա զքեզ. և վայելեսցես 'ի բազմ խա_

ղա_

զաղուԹն սրտի։ Տո՛ւր զա՛մ վա՛ ա՛մի. մի՛ ինչ խնդրեր, մի՛ ինչ 'ի բաց պա_ հանջեր։ Կա՛ց յիս անդրդուելի, և ես եղէց քո։ Ազատ լիցիս 'ի սրտի, և խաւար զքեզ ո՛չ ծածկեսցէ։ Այսմ փո՛յԹ կալ. վա՛ այսր կա՛ց յաղօԹս. և այսմ ցանկա՛. ա՛մի մերկանալ քեզ 'ի քոյոցդ, և մերկոյն յո՛ի մերկ զհետ երԹալ. անձին մեռանիլ, և յիս յա_ ւիտեան կենդանի լինել։ Յայնժամ 'ի բաց փարատեսցին ա՛մ ունայնի ցնորք, անօրէն յոյզք, և աւելորդ հոգք։ Յայն ժամ 'ի բաց լիցի և տարապայման եր կիւղ. և մեռցի անկարգ սէր։

---

## Գ Լ. ԼԸ.

Յաղագս չոր հաստատութեան յարփածինս. և դիմելոյ առ ա՛ծ 'ի վտանգս։

Տ. Որդեակ, յայն հայեաց սրտի մի տօք, զի ա՛մուրեք և յա՛մ արտաքին գործս կամ 'ի զբաղմունս, ներքոյ ա_ զատ իցես, և ինքնիշխան. և զի ա՛մ է քև իցէ, և մի՛ դու ընդ նոքօք. ա՛յլ զի լիցիս գործոյ քոց տէր և առաջ_ նորդ, և մի՛ ծառայ կամ արծաթա_ գին.

դէն • այլ ազատազգի, և ճշմարիտ
հեբրայեցի • ժառանգորդ վիճակի և
ազատութեան որդւոցն այ • որք 'ի վեր
են քան զաժամայքս, և դիտեն ըզ-
յաւիտենականս • որք յանցաւորս՝ ձա
խոյ ական հային, և աջոյ ական
յերկնաւորս: Որք ո՛չ ձգին զհետ եր-
թալ ժմկաւորաց, այլ ինքեանք ձգեն
զնա 'ի քաջ արբանեկութէ, ոչ զիարդ
կարգեցան յայ, և հաստատեցան յա-
րարչապետէն, որ ոչինչ անկարգ թո-
ղացոյց յիւր արարածս:

Ժ̃. Եւ եթէ յամ անցս որ անցանեն՝
պինդ կաս, և ո՛չ ըստ արտաքին ե-
րևութին կամ մարմնոյ աչօք զննես,
զորինչ տեսերն կամ լուար, այլ ան-
դէն յինչ և իցէ դատս ընդ մովսէսի 'ի
խորանն մտանես հարցանել 'ի տնէ,
լուիցես երբեմն յատենակոյս կողմանէ
պատասխանի • և դարձցիս յետս՝ տե-
ղեկացեալ զոմ ինչ իրաց արդեաց և
ապառնայից: Զի յամի դիմէր մովսէս
'ի խորանն վկայութէ, առ խնդրոց և
տարակուսանաց լուծումն • և յաջո-
ղեց օգնութի էր ապաստան, 'ի բառ-
նալ զվիշտ վտանգի, և զմարդկան խե-
ռութիս: Նոյնպէս և դու խոյս տուր 'ի
խորան սրտի քոյ, սրտի մտօք կարդա
լով

լով զմ̃ծայինս օգնուի: Զի յայս սակս յեսու և որդիքն իէլի խաբեցան 'ի գաբաւոնացւոց անտի, զի զբե- րան տն նախ ոչ հարցին. այլ կարի իմն հաւատացեալ ողոք բանիցն 'ի սուտ գթուն պատրանս ըմբռնեցան:

---

## ԳԼ. ԼԹ:

### Թէ չէ պարտ հոգւոյ փութանակել յիրողութեանս:

Ա. Որդեակ, յիս յանձն արա յամն զիրողուի քո. ես անօրինեցից յիւրում ժմկի: Մնա՛ իմում կարգաւորուն, և գտցես օգուտ:

Բ. Տր, մտադիւր քեզ յանձն առնեմ զամն. զի խորհուրդք իմ սակաւ օգ- տեն: Ո՛տայր ինձ, չհայիլ յանգս՝ որ հանդերձեալ են անցանել. այլ 'ի հա- ճոյս քո անյապաղ բերիլ:

Գ. Որդեակ, յոլովակի մարդ կարի իմն պնդի զհետ իրաց ինչ՝ որում ցան- կայ. այլ իբրև յայն հասանէ, սկիզբն առնէ այլազգ խորհիլ. զի իղձք առ նոյն՝ չեն մնայուն. այլ մղեն 'ի միոջէ յայլ: Ապա չէ փոքր և 'ի փոքունս

թո-

թողուլ զանձն:

է. Ճշմարիտ յառաջադիմութիւն մարդոյ՝ է ուրանալն անձին. և անձնուրացն ազատ է յոյժ և անհոգ: Բայց բարեատեաց հին թշնամին ոչ դադարէ 'ի փորձելոյ. այլ զցայգ և զցերեկ ծանր ծանր նենգութիւնս մեքենայէ. զի թերևս յորոգայթ պատրանաց արկցէ զանզգոյշս: Արթուն կացէք և աղօթս արարէք, ասէ Տէր. զի մի մտանիցէք 'ի փորձութիւն:

## ԳԼ. Խ:

### Թէ մարդ չունի ինչ բարի յիւրմէ, և չէ կարօղ պարծել յիւր ինչ:

ա. Տէր, ո՞վ է մարդ, զի յիշես դու զնա. կամ որդի մարդոյ, թէ այց առնիցես նմա. Զինչ արժանի է մարդ, թէ շնորհս քո տայցես նմա: Զիա՞րդ իշխեցեմ գանգատել, եթէ մերժես զիս. կամ զի՞նչ իրաւունք իցեն իմ ճառելոյ, եթէ զոր հայցեմն՝ չշնորհես: Ճշմարտութեամբ զայս 'ի դէպ է ինձ խորհել և ասել: Տէր, ոչինչ եմ, ոչինչ իմիք կարեմ. ոչինչ բարի յինէն ունիմ.

նիմ. այլ յամե յետնեալ եմ. և միշտ յոչինչ բերիմ: Եւ եթէ ո՛չ 'ի քէն օգնիմ, և խնչամոնիմ, գլխովին գաղջանամ, և 'ի ցոփութ լուծանիմ:

Ե. Այլ դու տր, միշտ նոյն ինքն ես, և կաս և մնաս յաւիտեան՝ միշտ բարի, արդար, և սր. զամ բարութբ՝ արդարութբ և սրբութբ առնես, և իմաստութբ տնօրինես: Իսկ ես որ 'ի պակասութ յաւէտ միտեմ, քան 'ի յառաջադիմութ, ո՛չ միշտ կամ մնամ 'ի նմին կայի, այլ եօթն ժամանակք փոխին 'ի վր իմ: Սակայն և անդէս վաղ յաջողէ ինձ 'ի բարի, յորժամ հաճեսցիս, և ձեռն տայցես յօգնութն: Զի դու միայն առանց մարդկային ձեռնտուութե կարող ես օգնել, և այնպէս կազդուրացուցանել, մինչ երեսաց իմոց ո՛չ ևս աստ անդ տատանիլ. այլ առ քեզ միայն դառնալ սրտի իմոյ, և հանգչիլ:

Զ. Վա՛նզի եթէ քաջ գիտէի զամ մարդկային մխիթարութի մերժել յանձնէ, եթէ վասն եռանդն ստանալոյ, և եթէ վասն հարկի քեզ 'ի խնդիր լինելոյ, առ 'ի չգոյէ այլոյ՝ որ մխիթարիցէ զիս. յայնժամ իրաւամբք յուսայ 'ի շնորհս քո, և ընդ պարգև

նորոյ մխիթարութեն ուրախ լինել։

Է. Շնորհս ունիմ զքէն, յորժամ գայ ամ, որ ինչ յաջողէ ինձ 'ի բարի։ Այլ ես ունայն եմ, և չնչին առաջի քո. այր մի յողդողդ և տկար։ Արդ յի՞նչ պարծիցիմ. կամ զիա՞րդ ըղձանայցեմ մեծարգի լինել։ Թերևս ընդ չքութեն իմ. և աՀա ընդունայնութիւն է։ Ապաքէն անափառութիւն ժամանախտ է, և ունայնութիւն մեծ. զի 'ի ճշմարիտ փառաց վրիպեցուցանէ, և յերկնային շնորՀաց կողոպտէ։ Զի 'ի լինել մարդոյ Համոյ յաչս անձին, անՀամոյ լինի քեզ. և յանձկալ մարդկային գովութենց՝ զրկի 'ի ճշմարիտ առաքինութենց։

Ը. Այլ ճշմարիտ պարծանք, և ցընծութիւն սրբ՝ են պարծիլ 'ի քեզ, և ոչ յանձն. խնդալ յանուն քո, և ոչ յիւր զօրութի. և ոչ ուրախ լինել յարարած ինչ՝ բայց միայն վս քո։ Գովեսցի անուն քո, և ոչ իմ։ Մեծ եղիցին գործք քո, և ոչ իմ. օրՀնեսցի անուն սրբ քո. և ինձ մի ինչ ընծայեսցի 'ի մարդկային գովութենց։ Դու փառք իմ, դու ցնծութի սրտի իմոյ. 'ի քեզ պարծեցայց և ցնծացայց զօրՀանապազ. այլ վս անձին ինձ ոչ պարծեցայց, բայց եթէ 'ի տկարու_

Յ՟ս իմ։

Դ. Խնդրեսցեն հրէայք փառս զառ ՚ի միմեանց, ես զփառս խնդրեցից զառ ՚ի միոյն քո։ Ա՟մ փառք մարդկային, ա՟մ պատիւ ժամանակեան, և ա՟մ բարձրուն ձական՝ առ յաւիտենական քո փառօք՝ ունայնութիւն է, և անմտութիւն։ Ո՛ ճշմարտութիւն, և ողորմութիւն իմ, ա՟ծ իմ, երրորդութիւն սր՟, քեզ միայնոյ գովութիւն, պատիւ, զօրութիւն և փառք յանսպառ յաւիտեանս յաւիտենից։

---

## Գ Լ. ԽԱ։

### Յաղագս արհամարհանաց ա՟մ ժամանակաւոր պատուոյ։

Ա. Որդեակ, մի՛ դժգոհեսցիս, տեսանել թէ այլք պատուին և բարձրանան. և դու անարգիս, և խոնարհիս։ Ամբարձ զսիրտ քո առ իս յերկինս, և ոչ տխրեցուսցէ զքեզ արհամարհուն մարդկան յերկրի։

Բ. Տէր, ՚ի կուրութեան եմք, և յունայնութէ փութով պատրիմք։ Եթէ ուղիղ յիս հայիմ, չէ երբեք լեալ առ իս անի

րու_

թաւութ յարարածոց · ուստի և չու-
նիմ իրաւունս բողոք ունելոյ առ քեզ·
Եւ վս՟ զի բազում անգամ մեծապէս
մեղուցեալ է իմ առ քեզ, յիրաւի զի-
նին ըդդէմ ինձ ամ՟ արարածք : Ապա
թինձ յիրաւի վայելէն ամօթ, և արհա-
մարհանք · իսկ քեզ գովութ, պատիւ,
և փառք : Եւ թէ ոչ պատրաստեմ
զանձն իմ, մտադիւր յանձն առնուլ
յամ արարածոց անարգելն, ընդ վայր
հարկանիլ, և ամենևին յոչինչ համրիլ·
չէ՛ հնար ինձ ներքուստ խաղաղանալ·
և հաստատուն կալ · և ո՛չ հոգևո-
րապէս լուսաւորիլ՝ և լիով ընդ քեզ
միանալ :

---

## Գ Լ · ԽԲ ·

Թէ չէ՛ պարտ դնել զխաղաղութ ՚ի մարդիկ :

ա · Որդեակ, եթէ դնես զխաղաղու-
թի քո ՚ի մարդ, վս՟ համաբարոյ՝ և
կենակից լինելոյ նր՟ ը̄ քեզ, լիցիս ՚ի
ծուփս և ՚ի տոռուտնս : Այլ թէ դի-
մես ՚ի մշտամնայ ճշմարտութին, ոչ տրտ-
մեցուցէ զքեզ հեռանալ կամ մեռա-
նիլ բարեկամի : Յիս դադարել ունի-

սէր բարեկամիդ. և վս իմ է սիրե-
լի, որ ոք բարւոք թուի քեզ, և անձ
կալի յաստի կեանս: Առանց իմ ոչ
զօրէ ինչ, և ոչ տևէ բարեկամութի.
և չէ ճշմարիտ և սբ սէր, զոր իմ չէ
յօդեալ: Այնպէս լիջիր մահացեալ
յայսպիսի իղձս սիրելեաց, մինչև 'ի
քոյ կողմանէ ըղձանալ քեզ՝ լինել ա-
ռանց ինչ ընկերութե մարդկան: Այն-
չափ առաւել մերձենայ մարդ առ ած,
որչափ յամ երկրաւոր սփոփանաց հե-
ռանայ: Եւ այնչափ բարձրագոյն ե-
լանէ առ ած, որչափ խորագոյն յինքն
իջանէ, և յաչս անձին լինի խոտան:

Է. Այլ որ բարի ինչ անձին ընծայէ,
զշնորհացն այ յինքն եկաւորուն խա-
փանէ: Զի շնորհ հոգւոյն սբյ՝ միշտ
զխոնարհ սիրտ խնդրէ: Եթէ գիտէ-
իր զանձն լիով նանրացուցանել, և
յամ եղականացս սիրոյ դատարկել.
ճոխագոյն և ես հեղուի 'ի քեզ ըղ-
շնորհս: Յակն արկել քո յարարածս,
բառնի արարչին 'ի քեզ ակնարկու-
թե: Ուսի՛ր յաղթել քեզ յամի վասն
արարչին. և յայնժամ կարող լիցիս
ժամանել 'ի ճանաչումն ածայինն: Որ-
չափ և փոքր իցէ ինչ, եթէ անկարգ
է քո առ այն սէր և աչարձակութի,
խա-

խափանէ 'ի գիրագունեն, և յուսա-
ցուցանէ :

## ԳԼ. ԽԳ:

### Յաղագս անոփէ և աշխարհային գիտութէ :

ա. Որդեակ, մի՛ շարժեսցեն զքեզ գեղեցիկ և նուրբ ասացուածք մարդկան: Զի ո՛չ է արքայութիւն այ 'ի զըրոյցս, այլ յառաքինութեան: Հայեա՛ց 'ի բանս իմ, զի վառեն զսիրտս, և լուսաւորեն զմիտս. բերեն զզղջումն, և 'ի ներքս ածեն պէսպէս մխիթարութիս: Մի՛ յայն սակս երբէք ընթերցցիս զբանս, զի երևեսցիս գիտնաւոր կամ իմաստուն: Փո՛յթ կալ մեռուցման ախտից. զի այն առաւել օգուտ է քեզ՝ քան զծանօթութի բազում դըժուարին խնդրոյ:

բ. Յընթեռնուլ քո բա՛զում ինչ, և 'յառնուլ 'ի միտ, զմի՛ 'ի մի սկիզբն դարձուսջի՛ր: Ես եմ որ ուսուցանեմ մարդոյ զգիտութի, և տամ տղայոց լուսաւոր հանճար. զոր 'ի մարդոյ ուսանիլ չէ հնար: Ընդ որում ես խօսիմ, անդէն իմաստնանայ, և հոգւով օգ-

ռի յոյժ։ Վա՜յ է նոցա, որք ճշմարտութիւն նոցա 'ի մարդկանէ խնդրեն, և վասն ժամանապարհի իմուսմ ծառայութեան չէ ինչ նոցա փոյթ։ Եկեսցէ ժամ, յորում յանդիման երևեսցի վկային վկայութիւնք և հրեշտակացն տեր, զամենեցունց լսել զդատ. այս է, զմիոյ միոյ քննել զմտացն խիղճ։ Եւ յայնժամ քննեսցի Երուսաղէմ ճրագաւ, և յայտնի լիցին դաղտնիք խաւարի. և լռեսցեն ճառատանք լեզուաց։

Գ. Ես եմ, որ զխոնարհ միտս առ քթթել ական ամբառնամ, հասու լինել նմա բազմապատիկ իմաստից յաւիտենական ճշմարտութեան, զոր տասնամեայ ժամկաւ չէր հնար ուսանիլ 'ի դպրոցս։ Ես եմ որ ուսուցանեմ, ո՛չ աղաղակաւ բանից, ո՛չ շփոթիւք կարծեաց, ո՛չ պերճութեամբ պատուոյ, և ո՛չ գժտութեամբ հեռամարկութեանց։ Ես եմ որ ուսուցանեմ զերկրաւորս արհամարհել, յաստեսաց տաղտկալ. զյաւիտենականն խնդրել. զանանցս իմաստասիրել, 'ի պատուոյ խորշել. զայթագղութեանց համբերել. զիմ յոյս յիս հաստատել, բաց յինէն ոչինչ իմիք ցանկալ, և քան զիմ՝ զիս եռանդագին սիրել։

Գ.

Է․ Քանզի ոմն 'ի սիրել զիս սրտի մտօք, ուսաւ զա̃ծայինս, և խօսէր զսքանչելիս։ Առաւել օգտեցաւ 'ի թողուլ զա̃մ, քան յուսանիլ զնրբինս։ Բայց ոմանց զհասարակացն խօսիմ, և ոմանց զառանձնաւորն։ Ոմանց նըշանօք և նմանութ̃ք քաղցր երևիմ․ և ոմանց բազում լուսով յայտնեմ զխորհուրդս։ Մի ձայն է գրոց, բայց ո՛չ զամենեսեան միօրինակ հրահանգէ․ զի ներքոյ՝ ես եմ ուսուցիչ ճշմարտութ̃, քննօղ սրտից․ գիտակ խորհրդոց․ յառաջացուցիչ գործոց․ և բաշխօղ իւրաքանչիւր ումեք՝ որպէս և արժան թուիցի ինձ։

---

Գ․ Լ․ ԽԳ․

ՅԱՂԱԳՍ ԸՆԴԴԷՄ ՈՒՆԱՅՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ․

Ա̃․ Որդեակ, պարտ է քեզ 'ի բազում անգիտօղ լինել․ և համարել զանձն որպէս մեռեալ 'ի վ̃ր երկրի․ և որում ա̃շխ 'ի խաչ ելեալ իցէ։ Պարտ է և առ բ̃զմ լինել ո̃չ լսել, և զքո խաղաղութէդ խորհիլ։ Լաւ է զաչս յոչ հաճոյից 'ի բաց դարձուցանել,

նել, և իւրաքանչիւրում զիւր կարծիս թողուլ, քան բանակռիւ լինել: Եթէ բարւոք ես ը̃ ա̃յ, և ՚ի դատաստանի̃ հայիս, դիւրին լիցի քեզ պարտութի̃ յանձն առնուլ:

Է̃: Տ̃ր, ցո՞րվայր հասեալ է մեր: Ահա զորոյժս ողբամք զժամանակաւորավ̃ն դոյզն շահավաճառի աշխատիմք և ընթանամք, և զհոգևոր տոյժս ՚ի մոռացօնս արկեալ՝ հազիւ անագան ուրեմն մտաբերեմք: Որ սակաւ կամ ոչ ինչ օգտէ, յայն հայիմք. և զկարի իմն պիտանեօք հեղգութե̃ հարևանցիկ առնեմք: Զի բոլորովին մարդ յարտաքինս հոսի. և թէ ոչ վաղ զգաստանայ, մտադիւր յարտաքինս անդ անկեալ մնայ.

---

## Գ Լ. ԽԵ:

Թէ չէ պարտ հաւատալ ամենեցուն. և յաղագս դիւրաւ սահելոյ ՚ի բանս:

Ա̃. Տո՛ւր ինձ տ̃ր, օգնութի̃ ՚ի նեղութեան. զի ընդունայն է փրկութիւն մարդոյ: Քանիցս անգամ չգտի հաւատարմութի̃ անդ՝ ուր կարծէի գտանել.

և

և քանիցս անգամ գտի անդ՝ ուր ո՛չ կարծէի: Ապա ճշ̅ունայն է յուսալ 'ի մարդիկ. և փրկութիւն արդարոց 'ի քէն է տ̃ր: Օրհնեալ ես տ̃ր ա̃ծ յա̃մի, որ ինչ անցանէ ը̃ մեզ: Տկար եմք և յողդողդ. վաղվաղակի խաբիմք, և փոփոխիմք:

Ժ̃. Ո՛վ է մարդ, որ այնպէս զգուշաւոր և աչալուրջ յա̃մն անձնապահ լիցէ, մինչ ո՛չ երբէք անկանիլ նմա 'ի պատրանս ինչ կամ 'ի տարակոյս: Այլ որ 'ի քեզ տ̃ր յուսացեալ է, և միամիտ սրտիւ զքեզ խնդրէ, ո՛չ դիւրաւ սահի: Եւ թէ անկանի 'ի նեղութիւն ինչ. ո̃պ և պաշարեսցի, վաղվաղակի քև փրծանի, կամ մխիթարութիւն 'ի քէն ը̃ունի. զի ո՛չ անտես առնես զյուսացեալս 'ի քեզ՝ իսպառ: Ո՞ւր իցէ մտերիմ բարեկամ, որ յա̃մ 'ի վիշտս առ բարեկամն իւրում կացցէ մնացէ. Դու տ̃ր, դու միայն ես մտերիմ յա̃մի.
և բաց 'ի քէն չիք ոք այլ:

Ժ̃Ա. Ո՛վ, ո՞պ̃ քաջ իմաստասիրեաց երանելին այն որ ասաց. միտք իմ 'ի ք̃ս հաստատեալ են, և հիմնեալ: Եթէ և ինձ լինէր այդմ վիճակիլ, ո՛չ այդպէս վաղվաղակի երկիւղ մարդկային զիս տագնապէր. և ո՛չ սաբք

բանից զիս խոտվէին ։ Ո՞վ բաւական իցէ յառաջատես լինել ամի, և զգուշանալ 'ի չարէ, որ հանդերձեալ է գալ։ Եթէ և յառաջատես իրք բզմ անգամ վնաս մեզ հասուցանեն, որչափ ևս յանկարծադէպք ծանր խոցոտեն ։ Եւ զի՞արդ տառապեալս ոչ բարւոք զգուշացայ ։ Զի՞արդ և այլոց դիւրաւ հաւատացի ։ Բայց մարդիկ եմք տկարք, թէպէտ և 'ի բազմաց հրեշտակ համարիմք և անուանիմք ։ Ո՞ւմ հաւատացից ես, ո՞ւմ, բաց 'ի քէն ։ Ճշմարտութի ես, որ ոչ խաբես, և ոչ խաբիս ։ Այն զի ամ մարդ սուտ է, տկար, և յողդողդ, և գլթոտ՝ մանաւանդ 'ի բանս, մինչև ոչ վճռկի հաւատալ արժան է, թէպէտ և 'ի սկզբան անդ ուղիղ թուիցի ։

Դ. Ո՞ր իմաստութե յառաջագոյն յիշեցուցեր մեզ՝ զգոյշ լինել 'ի մարդկանէ. և թէ՝ թշնամիք առն ընտանիք իւր. և թէ՝ մի հաւատայք, եթէ ոք ասիցէ ձեզ, թէ ահաւասիկ աստ է, կամ անդ ։ Ուսայ իմովք վնասուք. և երանի թէ առ առաւել զգուշաւորութի իմ, և ոչ յանմտութի ։ Զգոյշ լեր, (ասաց ոք ցիս.) զգոյշ լե՛ր. պահեա առ քեզ, զոր ասեմս ։ Եւ այն ինչ

ես

ես լռէի, և ծածկեալ կարծէի, նա
ինքն ոչ հանդուրժեաց լռել, զոր խնդ-
րեացն չասել. այլ անդէն զիս և
զինքն մատնեաց, և դնաց։ Յայսպի-
սի զրուցաց և յանզգոյշ մարդկանէ
ապրեցո՛ զիս, Տէր. զի մի՛ 'ի ձեռս ան-
կայց նց. և մի՛ այսպիսի ինչ գործե-
ցից երբեք։ Զբան ճշմարիտ և հաս-
տատուն տո՛ւր բերանոյ իմոյ, և ըզ-
լեզու նենգաւոր 'ի բաց արա յինէն։
Զորինչ կրել չառնում յանձն, յայն-
մանէ ամի զգուշանալ պարտ է ինձ։
Ե. Ո՛վ, ո՜րչ բարւոք է և խաղաղա-
կան զայլոց լռել, և ոչ անխտիր ամե
հաւատալ. և ոչ բերանալոյծ 'ի խօսս
լինել. սակաւուց զմիտս իւր յայտնել.
զքեզ զքննողդ սրտից յամի խնդրել. և
ոչ յամ հողմոյ բանից տատանիլ. այլ
զամ զներքինս և զարտաքինս ը՟ս հա-
ճոյից կամաց քոց կատարել։ Քանի՛
աներկեան է առ պահպանութի երկ-
նային շնորհաց՝ 'ի մարդկայնոց փախ-
չել ցուցակութեց, և ոչ հետամուտ լի-
նել իրաց, որք արտաքոյ երևին զար-
մանագործութե. այլ փութաջան ըզ-
հետ վարիլ այնց՝ որք ուղղութի վա-
րուց բերեն, և եռանդն։ Քանի՛ մնաս
գործեաց բազմաց՝ յայտնութի առաքի-

նութե̃նց և տարաժամ հռչակ: Քանի՞ օգտեցին լռելեայն շնորհք յաղցաւոր կենցաղումս, որ գլխովին փորձութի̃ կոչի և պատերազմ:

---

## ԳԼ. ԽԶ:

Յաղագս ապաւինելոյ յԱ̃ծ, յորժամ 'ի վ̃ր յարձակին ամբոխ բանից:

ա. Որդեակ, զօրացի՛ր, և յուսա՛ յիս: Զի զի՞նչ են բանք, բայց եթէ զրոյցք: Ընդ օդս թռչին. բայց քարի ինչ ոչ վնասեն. Թէ պարտաւոր ես, խորհեա՛ մտօք ուղղե՛լ զքեզ. Թէ ոչինչ գիտես անձին քոյ, խոկա՛ մտադիւր վասն ա̃յ այդմ համբերել: Փոքր ինչ է քեզ՝ լոկոյ բանի երբեմն համբերել. որ սաստիկ գանից չև ևս կարող եղեր տանել: Եւ զի՞ է, զի դոյզն բանք կարեվէր խոցեն զքեզ. բայց զի դեռ մարմնաւոր ես, և 'ի մարդկանէ առաւել քան զարժանն ակնածես: Քանզի երկուցեալ յարհամարհանաց՝ յանդիմանել վ̃ն յանցուածոց ոչ կամիս. և պատճառանօք քողարկութի̃ խնդրես:

Ը. Բայց լաւ ես հայեաց 'ի քեզ, և ծանիցես, թէ դեռ կենդանի է 'ի քեզ Ադամ, և անոտի ակր հաճոյ լինելոյ մարդկան։ Զի 'ի խուսափելդ 'ի ցածուէ և յամօթոյ որ վս͞ պակասութեց՝ յայտ է թէ ո՛չ ճշմարիտ խոնարհ ես, և ո՛չ ճշմարտապէս մեռեալ աշխարհի. և չէ աշխարհ քեզ 'ի խաչ ելեալ։ Այլ դու լո՛ւր իմոց բանից. և ո՛չ փոյթ լիցի քեզ զբիւրուց բանից մարդկան։ Եթէ ասէին զքէն զամ՛ խորամանկեալ չարութ͞, զի՞նչ վնաս էր քեզ, եթէ ատունկանէիր, և շիւղ համարէիր. միթէ կարող ի՞նչ էին դէթ մազ մի խլել 'ի քէն։

Թ. Այլ որ ո՛չ ունի սիրտ ամփոփ, և ո՛չ զած առաջի աչաց, վաղվաղակի խռովի ընդ բանս նախատանաց։ Իսկ որ յիս յուսացեալ է, և ո՛չ իւրում դատաստանի անսայ, աներկիւղ է 'ի մարդկանէ։ Զի ես եմ դա͞տր, ծածկադէտ ամ͞ի. գիտեմ, զի՞արդ գործեցան իրք. գիտեմ զհարստահարօղն և զհարստահարեալն։ Յինէն ելև բանդ այդ. իմով թոյլտու͞թ պատահեաց այդ, զի յայտնեսցին 'ի բազմաց սրտից խորհուրդք։ Ինձ հասանէ դատել զպարտաւորն և զանպարտն. բայց դատա-

զպաղտնի դատաստանաւ զերկրաքան-
չիւրն յառաջ փորձել կամեցայ:

Է· Վկայուն մարդկան յոլովակի խա-
քէ· իմ դատաստան ճշմարիտ է, հաս-
տատուն կայ, եւ ոչ շրջի: Յոլովակի
ծածկեալ է, եւ սակաւուց յայտնի:
Բայց ամենայն ոչ երբեք սխալէ, եւ
ոչ սխալել կարէ· Թէպէտ եւ յաչս
անզգամաց ոչ ուղիղ թուեսցի: Ապա
յէս դիմել արժան է յամենայն դատս,
եւ ոչ ապաստանիլ մարդոյ յիւր կար-
ծիս: Ո՛չ խռովի արդարն, որ ինչ եւ
եկեսցէ նմա առ յինէ: Թէպէտ եւ ա-
նիրաւութ̅ ինչ խօսեսցին զնմանէ, ինչ
ոչ հոգայ: Այլ եւ ոչ ՚ի մնոտիս ցըն-
ծայ, եթէ այլք իրաւացի արդարու-
թեացն զնա: Քանզի գիտէ, թէ ես
եմ որ քննեմ զսիրտս եւ զերիկամունս·
եւ ոչ ը̅ աչս դատեմ, կա՛մ ը̅ կարծեաց
մարդկան: Քանզի յոլովակի յաչս իմ
գտանի մեղադրելի, որ ըստ մարդկանն
կարծեաց համարի գովելի:

Ը· Տ̅ր ամ̅ն դատաւոր արդար, հզօր
եւ երկայնամիտ, որ գիտես զմարդ-
կան տկարութ̅ եւ զթիւրութ̅· լե՛ր իմ
զօրութ̅, եւ յոյս ապաւինի· զի չէ ինձ
բաւական խիղճ մտաց իմոց: Դու գի-
տես զոր ոչն գիտեմ ես· մ̅ այսորիկ

յամ

յիմ յանդիմանութիւն միայն ինձ խոնարհիլ, և հեզութբ համբերել։ Թո՛ղ ինձ գթութբ, թէ ուրեքերբեք չարարի այդպէս. և պարգևեա միւսանգամ շնորհս առաւելագոյն համբերութեան ։ Քանզի լաւ է ինձ քո առատ ողորմութեանդ՝ առհասանելոյ թողութեան, քան զիմ կարծեցեալ արդարութի, առ ջատագովութեն դաղտնի խղճի։ Թէպէտ և ոչինչ գիտեմ անձին իմոյ, բայց ոչ եթէ այսու արդարանամ։ Զի 'ի հեռանալ քո ողորմութեանդ՝ ոչ արդարանայ առաջի քո ամ կենդանի ։

---

## Գ Լ. ԽԷ ։

### Թէ պարտ է տանիլ զամ ծանունս՝ վս յաւիտենիցն կենաց ։

ա̃. ՈՐԴԵԱԿ, մի՛ վհատեցուսցեն զքեզ վաստակք, զորս յանձն առեր վս իմ. և մի՛ լքուսցեն զքեզ նեղութիւնք իսպառ։ Այլ խոստմունք իմ յամ անցս զօրացուսցեն զքեզ, և մխիթարեսցեն։ Բաւական եմ ես 'ի հատուցանել 'ի վեր քան զամ պայման և չափ ։ Ո՛չ ընդերկար իցես վաստակեալս յաս-

տիս .

տիս, և ո՛չ միշտ ծանրացիս ցաւօք: Համբե՛ր սակաւ մի, և տեսցես զերադահաս վախճան չարեաց: Եկեսցէ ժամ, յորում լռեսցեն ամ̅ վաստակք և խռովութիք: Խուն ինչ է և սուղ՝ ամ̅ որ անցանէ ը̅ ժամանակի:

Է̅. Արա՛ զոր առնես. աշխատեա՛ հաւատարմութբ̅ յայգւոջ իմում. ես եղէց վարձք քո: Գրեա՛, ընթերցի՛ր, երգեա՛, հառաչեա՛, լռեա՛, աղօթս արա, և արիաբար համբե՛ր հակառակաց. զի արժանի են այսմ ամ̅ի, և մեծամեծ ևս ճգանց՝ կեանք յաւիտենականք: Եկեսցէ օր մի խաղաղութե̅՝ յայտնի տ̅ն. ո՛չ տիւ իցէ և ո՛չ գիշեր ժամանակեան. այլ լոյս մշտնջենաւոր, պայծառութի̅ անչափաճանն. խաղաղութի̅ հաստատուն, և հանգիստ աներկեան: Զասասցես յայնժամ. ո՛վ ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ աստի մահու: Եւ ո՛չ գոչեսցես. վա՛յ ինձ, զի երկար եղև պանդխտութի̅ իմ. զի ընկլցի մահ. և եղիցի փրկութի̅ աննիազ. անձկութի̅ և ո՛չ մի. զուարճութի̅ երանական, ընկերութի̅ քաղցր և վայելչական:

Ը̅. Բա՛րէ, եթէ տեսանէիր զսբ̅ց յերկինս զանթառամ պսակս, և թէ քա-

նի՛

Նի՞ ցնծան արդ 'ի փառս , որք յծ̃է երբեմն համարէին խոտան, և կենաց իսկ անարժան • խոնարհէիր արդեօք վաղվաղակի մինչ 'ի գետին , և ախորժէիր է̃ ոտիւք լինել ամենեցուն, քան իշխել միում ումեք • և ոչ կենցաղոյս ուրախութե̃ աւուրց ցանկայիր, այլ վասն ա̃յ խնդամիտ նեղութի̃ յանձն առնուիր • և զլինելդ յաչս մարդկան չնչին՝ մեծ շահ համարէիր ։

Է • Ո՞վ, եթէ այս ա̃մ քեզ քաղցրանայր , և 'ի սիրտ քո տարրանայր , զիա՞րդ իշխէիր գէթ առ անգամ մի քրթմնջել ։ Ո՞չ վա̃ յաւիտենից կենաց՝ ա̃մ տարժանաւորք տանելիք իցեն ։ Չէ փոքր ինչ կորուսանել կամ շահիլ զարքայութի̃ն ա̃յ ։ Ապա ամբարձ զաչս քո յերկինս ։ Ահա ես , և ա̃մ սր̃ք իմ է̃ իս , որք յծ̃ի աստ մեծամեծ ճգանց տարան , արդ խնդան , արդ մխիթարին , արդ անհոգ են , արդ հանգչին • և անվախճան ընդ իս զարքայութի̃ հօր իմոյ ժառանգեսցեն ։

Գ Լ:

## Գ Լ. ԽԸ։

### Յաղագս աւուրն յաւիտենից, և չէին ցաղոյս անշինութեց։

ա. Ո՜վ վերնոյ քաղաքի երանաւէտ օթեվանացն։ Ո՜վ մեծապայծառ աւուրն յաւիտենից. զոր գիշեր ոչ նսեմացուցանէ. այլ գերակայ ճշմարտութեն 'ի նմա միշտ ճառագայթէ. որ միապաղաղ'արճ, միշտ աներկեան. որոյ ոչ երբեք փոխի վիճակ 'ի հակառակն։ Ո՜վ տայր, թէ օրն այն ծագէր, և ժամանակեայքս ամ առնուին վախճան։ Լուսաւորէ այս՝ զմս միապայլ պայծառութն, այլ զպանդխտեալս յերկրի երբև 'ի հեռաստանէ և ը հայելի։ բ. Գիտեն երկնաքաղաքացիք, քանի՞ զուարթարար է նա։ Հեծեն աքսորեալ որդիք եւայի. զի դառն և տաղտկալի է սա։ Աւուրք ժամանակիս փոքր են և չար. լի ցաւօք և անձկութբք. ուր մարդ 'ի բզմ մեղս շաղախի, բզմ կրիւք թակարդի, բզմ երկիւղիւ ճնշի. բզմ հոգովք զբաղնու. բզմ ընդվայրաքննութբք ցնդի. բաղում ու-

ունայնութ̃ք պատի · բո̃մ մոլորութ̃ք
պաշարի · բազում վաստակօք հիւծի ·
վրձութ̃ք ծանրանայ · փափկութ̃ք
թօշնի, կարօտութ̃ք տանջի ։

Գ · Ե՞րբ իցէ վախճան չարեացս, ե՞րբ
ազատեցայց 'ի թշուառ ծառայութենէ
ախտից · ե՞րբ յիշեցից զքեզ միայն ·
ե՞րբ լիով ուրախ եղէց 'ի քեզ ։ Ե՞րբ
եղէց անարգել 'ի ճշմարիտ ազատութե̃,
առանց ինչ ծանրութե̃ մտաց և մարմ-
նոյ ։ Ե՞րբ եղիցի խաղաղութի̃ հաստա-
տուն · խաղաղութի̃ անխռով և ան-
քոյթ · խաղաղութի̃ ներքին և արտա-
քին · խաղաղութի̃ ամ̃ե անդրդուելի ։
Բարերար փրկիչ · ե՞րբ յանդիման ե-
ղէց տեսանել զքեզ ։ Ե՞րբ վայելեցից
'ի փառս արքայութե̃ քո · ե՞րբ եղիցիս
ինձ ամ̃ յամի ։ Ե՞րբ եղէց ը̃ քեզ յար
քայութե̃ քում, զոր պատրաստեցեր
սիրելեաց քոց յաւիտենից ։ Թողեալ
կամ աղքատ և աքսորեալ յերկրի թշ-
նամեաց, ուր հանապազորդ պատե-
րազմունք, և աղէտք անհնարինք ։

Դ · Մխիթարեա́ զաքսորանս իմ · մեղ-
մեա́ զցաւս իմ · զի քեզ անձկայ ամ̃ ցան-
կութե̃ իմ ։ Քանզի բեռն է ինձ ամ̃,
զորինչ Ա̃ս մատուցանէ 'ի սփոփանս ։
Յանկամ վայելել 'ի քեզ, այլ ո՛չ ժա-
մա-

մանեմ։ Ըղձանամ յարիլ յերկնայինս. այլ ընկճեն զիս անցաւոր իրք, և անմեռ կիրք։ Մտօք քան զնմ ՚ի վերոյ լինել կամիմ. այլ մարմնոյ ակամայ ներքոյ լինել բռնադատիմ։ Այսպէս տառապեալս ընդ իս մաքառիմ. և անձամբ անձին ծանրանամ, ՚ի խնդրել հոգւոյ իմոյ վերանալ, և մարմնոյս վայրաբերիլ։

Ժ. Ո՛վ, զիարդ տառապի անձն իմ, յոր ժամ մտօք զերկնայինս խորհիմ. և ՚ի կալ իմում յաղօթս՝ անդէն յոյզք մարմնական խորհրդոց լինին ընդ առաջ։ Աստուած իմ, մի՛ ՚ի բացեայ առնիր յինէն, և մի՛ խոտորիր բարկութեամբ ՚ի ծառայէ քումմէ։ Փայլատակեա՛ զփայլատակունս քո, և ցրուեա՛ զնս. առաքեա՛ զնետս քո, և խռովեսցին նմ ցնորք թշնամւոյն։ Ամփոփեա զզգայութիւնս իմ ՚ի քեզ. տո՛ւր ինձ մոռանալ զնմ զսնոյինս, վաղվաղակի ՚ի բաց թօթափել և մերժել զախտից ցնորս։ Հա՛ս ինձ ՚ի թիկունս, ճշմարտութիւնդ յաւիտենական. զի մի՛ դրդուեցուսցէ զիս նանրութի։ Արի՛ եկ քաղցրութիւնդ երկնային, և փախիցէ յերեսաց քոց նմ անմաքրութի։ Ներեա՛ ինձ, և թո՛ղ գթութեամբ, թէ ուրեք երբէք խորհիմ

ինչ

ինչ յաղօթս՝ բաց 'ի քէն։ Խոստովանիմ ճշմարտութեան, զի յոյժ ցնդեալ գտանիմ 'ի նմա։ Քանզի բազում անգամ չեմ անդ, ուր մարմնով կամ, կամ նստիմ․ այլ անդ, ուր խորհրդովք բերիմ։ Անդ եմ, ուր է խորհուրդ իմ․ և անդ է յոլովակի խորհուրդ իմ, ուր է՝ զոր սիրեմն։ Այն ինչ վաղագոյն լինի ինձ ընդառաջ․ որ 'ի բնէ ախորժ է, կամ 'ի սովորութենէ հաճոյ։

Տէր․ Վայ դու ճշմարտութիւն յայտնի ասացեր․ ուր է գանձ քո, անդ է և սիրտ քո։ Եթէ զերկինս սիրեմ, մտադիւր զերկնայնոց խորհիմ։ Եթէ զաշխարհ սիրեմ, ընդ աշխարհի յաջողուածս խընդամ, և ընդ ձախորդութիւնս նորա տրտմիմ։ Եթէ զմարմին սիրեմ, զմարմնոյսն ստէպ խոկամ։ Եթէ զհոգի սիրեմ, քաղցրանայ ինձ զհոգեղինաց խորհիլ։ Զի զորինչ սիրեմ, զայնց մտադիւր խօսիմ և լսեմ․ և զայնպիսեաց պատկերս ընդ իս 'ի տուն տանիմ։ Այլ երանի՛ առն, որ վասն քո Տէր, ամենայն արարածոց հրաժեշտ տայ․ որ բնութեան բռունս առնէ, և զցանկութիւնս մարմնոյ՝ հոգւոյն եռանդեամբ 'ի խաչ հանէ․ զի ջինջ խղճիւ մտաց՝ մաքուր աղօթս քեզ մատուսցէ․ և արժանի լի-

ցի

ցի պարակցիլ ընդ հրեշտակս, երկրա_
ւորացս ամ̃ի ներքոյ և արտաքոյ՝ ըղ-
դուրս ընդդէմ եղեալ:

---

## Գ Լ. ԽԹ:

### Յաղագս փափաքման յաւիտենական կենաց. եւ թէ քանի՞ բարիք խոստացեալ են պատերազմողաց:

Ա. Որդեակ, երբ և յանձին զգաս
զփափաք յաւիտենական երանութե՛ 'ի
վերուստ 'ի քեզ հեղեալ. և ցանկաս
'ի մարմնոյ աստի ելանել՝ առ 'ի վայե_
լելոյ 'ի փառս իմ, յորում չիք շրջելոյ
ստուեր, ընդարձակեա զսիրտ քո, և
ամ̃ ըղձմամբ ընկալ զսէ̃ զայս ազդե_
ցութի: Մատո՛ բ̃ղմ շնորհակալութի վե_
հում բարութեն, որ այսպէս առ քեզ
գթասիրէ, գթութ̃ այց առնէ, բոր_
բոքմամբ զարթուցանէ, հզօրեղապէս
ողնէ. զի մի՛ քոյին ծանրութ̃ յերկրա_
ւորս սահեսցիս: Զի ո՛չ եթէ քոյին
խոկմամբ կամ ջանիւ զայդ ընդունիս,
այլ լոկով հաճութ̃ վերնական շնոր_
հաց՝ և ա̃ծայինն ակնարկութեն. զի
յառաջինուես և յառաւել ևս խոնար_
հու_

Հլութե յառաջադէմ լինիցիս, և 'ի մըրց_
մունս որ առաջի կան՝ զանձն պատ_
րաստեսցես. և զի սրտի մտօք յիս յա
րիլ, և փոյթեռանդն կամօք ծառայ_
ել՝ փոյթ յանձին կալցիս:

Է. Որդեակ, բազում անգամ վառի
հուր, այլ ոչ անծուխ վերանայ բոցն:
Սոյնպէս և ոմանց ցանկութիք յերկ_
նայինսն բորբոքին, սակայն 'ի փոր_
ձութե մարմնական ախորժակաց չեն
ինչ զերծ: Վա՜յ և ոչ սոսկ 'ի պատիւ
այ գործեն, յորժամ անձկանօք խընդ_
րեն ինչ 'ի նմանէ: Այսպիսի է յո_
լովակի և քոյդ ցանկութի, զորմէ սաս
ցեր թէ յոյժ է թախանձական: Զի
չէ ինչ յստակ և կատարել, որ անձին
դիւրութե է շաղախեալ:

Ը. Հայցեա՛, ոչ զայն որ քեզ է հեշ_
տալի և դիւր, այլ որ ինձ է ընդու_
նելի, և 'ի պարծանս: Զի թէ ու_
ղիղ դատես, պարտ է քեզ զիմ կար_
գաւորութե քան զքոյդ ցանկութե և
քան զամ ցանկալիս վերադասել, և
այնմ զհետ երթալ: Գիտեմ զցանկութի
քո, և լուայ զհեծութիս քո անդա_
դարս: Այժմէն կամէիր լինել յազա
տութե փառաց որդւոցն այ: Այժմէն
ցանկալի են քեզ յարկքն յաւիտենա_
կանք,

կանք, և գաւառն երկնային լի խըն_
դութ̃: Բայց չև է հասեալ ժամն այն.
այլ կայ դեռ ժամանակ. այս է, ժա
մանակ պատերազմի, ժամանակ վաս
տակոց և հանդիսի: Ըղձանաս վայ_
ելել 'ի գերակայ բարին. այլ չես կա_
րող այդմ հասանել առ այժմ: Ես
ինքն եմ. կաց մնա՛ ինձ, ասէ տ̃ր, մինչ
չև եկեսցէ արքայութին ա̃յ.

Է. Մնայ քեզ դեռ փորձիլ յերկրի.
և մարզիլ 'ի մարզս բազումս: Տացի
քեզ երբեմն մխիթարութի. այլ ոչ կըշ_
տապինդ յագուրդ: Ապա զօրացի՛ր
և քաջ լե՛ր, եթէ 'ի գործել, և եթէ
'ի կրել զհակառակս բնութե: Պարտ է
քեզ զգենուլ զնոր մարդն, և փո_
խիլ յայր յայլ: Պարտ է քեզ յոլովա_
կի առնել, զոր ոչ կամիս, և թողուլ
զոր կամիս: Այլոց հաճոյք յառաջ
երթիցեն, և քոց հաճոյից ոչ յաջո_
ղեսցի: Այլոց բանք լսելի լիցին, և
քո բանք յոչինչ համարեսցին: Խընդ_
րեսցեն այլք, և առնուցուն. դու
խնդրեսցես, և ոչ ընկալցիս ինչ:

Ը. Եղիցին այլք մեծարու 'ի բերանս
մարդկան, այլ զքէն լռութի լիցի: Այ_
լոց յանձն եղիցի այս ինչ կամ այն
ինչ, այլ դու համարեսցիս անպիտան

առ ամ։ Վ՜ այսօրիկ բնութիւն երբեմն տխրեսցի, և մեծ իմն է, Թէ անմռունչ տարցիս։ Յայսմ ամի՝ և յորս աոցին նման են՝ փորձի հաւատարիմ ծո՜յ ո՜ն, եԹէ կարօղ իցէ ուրանալ և մոռացանել զանձն յամի։ Յոչինչ իրս այնպէս պիտոյ է քեզ մահանալ, ոչ 'ի տեսանել և 'ի կրել զհակառակն ժամաց քոց. և ես առաւել յորժամ հրամայեալքն քեզ դժպատեհ և անպիտան Թուիցին։ Եւ վ՜ զի չիշխես ը͞դէմ կալ բարձրագոյն իշխանուԹե, ը͞ որուք լեալ. վ՜կ խիստ Թուի քեզ ը͞ հաճոյից այլոց գնալ. և զամ զքո կարծիս Թողուլ։

Դ. Այլ յուշ լիցի քեզ որդեակ, այսց վաստակոց պտուղ, և վաղահաս վախճան, և հատուցումն մեծ յոյժ. և ոչ լիցի քեզ խոժոռուԹի, այլ համբերուԹ քո արիական քաջալերուԹ։ Զի և փոխանակ դոյզն այս կամաց՝ յորմէ արդ. կամակար հրաժարիս, եղիցին միշտ կամք քո յերկինս։ Վասն զի անդ գտցես զամ զոր կամիս. զամ, որում ցանկալ զօրես։ Անդ եղիցի քեզ ստացուԹի ամ բարեաց՝ առանց ինչ երկիւղի կորուսանելոյ։ Անդ կամք քո միաբան միշտ ընդ իմումս, ոչինչ իմիք

ըղձանայցէ օտարի կամ առանձնաւո_
րի : Ա՛նդ ո՛չ որ քեզ ը̄դդէմ դարձցի.
ո՛չ որ զքէն քրթմնջեսցէ. ո՛չ որ խա_
փանեսցէ, ո՛չինչ խոչ լիցի. այլ ա̃մ
ցանկալիք միանգամայն լիցին յանդի_
ման. և զա̃մ ախորժակ քո հանգուս
ցեն և լցուսցեն իսպառ : Անդ հա_
տուցից փառս՝ փոխանակ արհամար_
հանաց. հանդերձ պարծանաց՝ փո_
խանակ տրտմութե̄. և փոխանակ յե_
տին տեղւոյն՝ զդահոյս արքայութե̄
յաւիտեան : Անդ երևեսցի պտուղ
հնազանդութե̄. ուրախ եղիցին ճգունք
ապաշխարութե̄. և խոնարհ հպատա_
կութի̄ պսակեսցի փառօք :

Է. Ապա այսուհետև խոնարհեցո՛ ըզ_
քեզ ցածութ̄ ը̄ ամենեցուն ձեռամբ.
և մի՛ լիցի քեզ փոյթ, թէ ո՛ է, որ
զայս ասէ կամ հրամայէ : Այլ այսմ
առաւելապէս փո՛յթ կալջիր, զի եթէ
առաջնորդն, և եթէ 'ի կրտսերաց ոք
կամ 'ի հւ̃րակցաց խնդրեսցէ ինչ 'ի
քէն կամ ակնարկի արասցէ, զա̃մ ըն_
կալցիս 'ի բարի, և միամիտ սրտիւ ջա
նասցես կատարել : Խնդրեսցէ ոք զայս
ինչ, և այլոք զայն ինչ. պարծեսցի
ոս յայս ինչ, և նա յայն ինչ, և
բիւրք յաճախեսցեն նմա գովութիւնք :

Բայց

Բայց դու ո՛չ յայս ինչ և ո՛չ յայն ինչ, այլ յարհամարհանս քո խնդամ, և 'ի հաճոյս և 'ի պատիւ իմ միայն: Այսմ ցանկամ, զի եթէ 'ի կեանս և եթէ 'ի մահու միշտ փառաւորեսցի 'ի քեզ ա՟ծ.

---

## ԳԼ. Ծ:

Թէ ո՞րպ պարտ է լքելոյն՝ աւանդել զանձն 'ի ձեռս ա՟յ:

Ա՟շ. Տէ՟ր ա՟ծ հայր ս՟բ, օրհնեալ ես այժմ և յաւիտեան. զի ո՟պ կամիս, նոյնպ՟ և եղև. և զոր առնես՝ բարի է: Ուրախ լիցի 'ի քեզ ծա՟յ քո, ո՛չ յանձն իւր, և ո՛չ յայլ ինչ. զի դու միայն ես ուրախութի՟ ճշմարիտ. դու յոյս իմ, և պսակ իմ. դու խնդութի՟ իմ և պատիւ իմ, տ՟ր: Զի՞նչ ունի ծառայ քո, բայց զոր 'ի քէն էառ, և զայն առանց ինչ իւրոյ արժանաւորութե՟: Քո է ա՟մ՝ զոր ետուր, և զոր արարեր: Տնանկ և վաստակաւոր եմ ես 'ի մանկութե՟ իմմէ. և տրտմի անձն իմ ստէպ մինչև ցարտասուս. և երբեմն խռովի իսկ՝ վ՟ս եկեալ հասեալ կրից:

Է. Ցանկամ խաղաղական խնդութեն. զխաղաղութի որդւոց քոց ժտիմ. որք լուսով մխիթարութե 'ի քէն հովուէին: Եթէ խաղաղութի տաս, եթէ խնդութի ած յիս հեղուս, եղիցի անձն ծառայի քո ցնծալից, և ջերմեռանդն յօրհնութիս քո: Ապա եթէ հրաժեշտ տաս, ոչ ըղձմ անգամ սովորութ է քո, ոչ և ա կարող լինի ընթանալ 'ի ճանապարհս պատուիրանաց քոց. այլ 'ի բաղխել զկուրծս՝ ծունկք նորա կթոտին. զի ոչ է նմա ոչ յերեկն և յետանդն. յորժամ ճրագ քո լուսատու էր 'ի վր գլխոյ նր, և Է հովանեաւ թևոց քոց ամրանայր 'ի փորձութեց 'ի վր յարուցելոց:

Ը. Հայր արդար և միշտ գովելի, հասեալ է ժամ փորձելոյ ծռյի քո: Հայր սիրելի, արժան է, զի 'ի ժամու յայսմիկ ծառայ քո կրեսցէ ինչ վս քո: Հայր մշտապատիւ, հասեալ է ժամ, զոր յաւիտենից գիտէիր թէ գալոց է. զի առ վայր մի նկուն եղիցի արտաքոյ ծռյ քո, բայց ներքոյ միշտ կեցցէ 'ի քեզ: Փոքր մի անարգեսցի, խոնարհեսցի, և անդոսնեսցի առաջի մարդկան. կրիւք, և ախտիւք խոշտանկեսցի, զի միւսանգամ Է քեզ 'ի ծա-

Ծագել նորանշոյլ լուսոյ յարիցէ. և յերկնայինան փառաւորեսցի: Հայր սբ, դու այսպէս տնօրինեցեր և կամեցար, և եղև ոչ և հրամայեցեր:

Գ. Զի այս է շնորհ առ քո սիրելիս, չարչարիլ և նեղիլ յծի վս սիրոյ քոյ, քանիցս անգամ և յուժմէ և իցէ Թողացուցես այդմ լինել: Առանց խորհրդոյ և տեսչութե քո, և վայրապար ոչինչ լինի յերկրի: Բարի է ինձ տր, զի խոնարհ արարեր զիս, զի ուսայց զարդարութիս քո. և 'ի բաց արարից յանձնէ զամ մեծամտութի և յանձնապաստանութի: Լաւ է ինձ, զի ամօթ ծածկեաց զերեսս իմ, զի զքոյդ և ոչ զմարդկան խնդրեցից զմխիթարութի: Դովին ուսայ և յանքննին դատաստանաց քոց երկնչիլ. որ խոշտանգես զարդարն ընդ ամպարշտի. այլ ոչ առանց իրաւանց և արդարութե:

Ե. Գոհանամ զքէն. զի ոչ ներեցեր չարեաց իմոց. այլ չարագան մաշեցեր զիս. հարեալ զիս ցաւովք՝ և վարակեալ վշտօք ներքոյ և արտաքոյ: Չիք ինձ մխիթար յամէ որ 'ի ներքոյ երկնից՝ բաց 'ի քէն, տր ած իմ, երկնաւոր բժիշկ հոգւոց, որ հարկանես և բժշկես, իջուցանես 'ի դժոխս և հանես:

նես։ Խրատ քո ՚ի միտ իմ. և գաւազան քո ուսուսցէ զիս։

Դ. Ահա հայր սիրելի, ՚ի ձեռս քո եմ ես, խոնարհեալ ընդ գաւազանաւ կշտամբութե քո։ Հար զթիկունս իմ, և զպարանոց իմ. զի խոնարհեցից ՚ի կամս քո զխոտորութիւն իմ։ Արա զիս բարեպաշտօն և խոնարհ աշակերտ, որպէս և սովորութի է քո. զի գնացից յամ հրամանս քո։ Քեզ յանձն առնեմ զիս, և զամ՝ որ ինչ է իմ՝ յուղղութի. զի լաւ է աստ խրատել, քան ՚ի հանդերձեալն։ Դու գիտես զամ միոյմիոջէ. և չիք ինչ ՚ի քէն ծածկեալ ՚ի խիղճ մտաց մարդկան։ Մինչչև են լեալ գիտես, որ ինչ լինելոց է առյապայ. և չէ պիտոյ, թէ ոք ուսուսցէ քեզ, կամ յիշեցուսցէ, որ ինչ լինի յերկրի։ Դու գիտես, ո՞ր լաւ իցէ առ յառաջադիմութի իմ. և քանի՞ օգուտ իցէ նեղութի առ մաքրելոյ զժանգ ախտից։ Արա ընդ իս ըստ ցանկալի հաճոյից քոց, և մի անտես առներ զմեղաւոր կեանս իմ, որ ոչ ումեք բացերև է, որպէս քեզ միայնոյ։

Է. Տո՛ւր ինձ Տէր, գիտել՝ զոր գիտել պարտ է. սիրել, զոր սիրել արժան է. գովել զայն՝ որ մեծապէս հաճոյ

Ճոյ է քեզ․ յարգել զայն՝ որ պատուական թուի քեզ․ և անարգել զայն՝ որ խոտան է յաչս քո ։ Մի թողուր ինձ ըստ տեսութե աչաց դատել, և մի ըստ լրոյ ականջաց տգիտաց վճիռ հատանել․ այլ ուղիղ դատաստանաւ երևելեաց և իմանալեաց ընտրութիւն առնել․ և 'ի վեր քան զամ զհաճոյս կամաց քոց միշտ խնդրել ։

Է․ Խաբին յոլովակի խորհուրդք մարդկան 'ի դատել զդատաստան․ խաբին և Յասէրք 'ի սիրել միայն զերևելիս ․ Զի՞նչ լաւութիւն իցէ մարդոյ յայնմանէ՝ զի մեծ համարի 'ի մարդկանէ ։ Խաբեբայ զխաբեբայ, սնոտի զսնոտի, կոյր զկոյր, և տկար զտկար խաբէ, յորժամ բարձրացուցանէ․ և առաւել յամօթ առնէ, յորժամ 'ի սնոտիս գովէ ։ Զի որչափ ինչ է իւրաքանչիւր ոք յաչս քո, այնչափ է, և ոչ աւելի․ ասաց խոնարհ սբն Ֆրանչիսկոս ։

## Գ Լ. ԾԱ:

Թէ պարտ է պարապել 'ի խոնարհ գործս, յորժամ չեմք ժամանօղ բարձրագունից:

Ա. Որդեակ, չես կարող միշտ եռանդագին ըղձմամբ առաքինութեանց կալ, և ոչ 'ի բարձրագոյն աստիճան խոկման զտեղի առնուլ: Այլ հարկ է քեզ երբեմն վասն սկզբնական ապականութեան՝ 'ի ստորինս վայրաբերիլ. և զբեռն ապականացու կենաց ևս և ակամայ և տաղտկանօք՝ բառնալ: Ցորչափ ես 'ի մահկանացու մարմնի, տաղտկութեան զգաս, և ծանրութիւն սրտի: Ապա պարտ է ստէպ 'ի մարմնի վասն ծանրութեան մարմնոյ հեծել, վասն ոչ զօրելոյ քոյ 'ի հոգևոր փոյթ և յաստուածային խոկումն անդադար պարապիլ:

Բ. Յայնժամ լաւ է քեզ 'ի խոնարհ և յարտաքին գործս դիմել. և գործովք բարութեան զքեզ զբօսեցուցանել. իմում եկաւորութեան և վերնական այցելութեան հաստատուն ապաւինութեամբ սպասել. աքսորանաց քոց և ցամաքութեան մտաց համբերութեամբ տանիլ. մինչև միւս

ան

անգամ քեզ այց լիցի. և յոյժ ձանձ_
րութե լիցիս զերծ։ Զի տաց քեզ զ_
վաստակոց մոռանալ, և 'ի ներքին
հանգստեան վայելել։ Պարզեցից ա_
ռաջի քո զդաշտավայրս սբ՟ գրոց,
զի անդորր սրտիւ սկսցիս ընթանալ
զճանապարհս պատուիրանաց իմոց,
և ասասցես։ Չեն արժանի չարչա_
րանք ժամանակիս հանդերձելոցն փա_
ռաց, որք յայտնելոց են 'ի մեզ։

---

## ԳԼ. ԾԲ.

Թէ չէ պարտ մարդոյ համարել զանձն ար_
ժանի մխիթարութե, այլ յաւէտ
արժանաւոր գանից։

Աշ. Տէ՛ր, չեմ արժանի քում մխիթա_
րութե, և ո՛չ հոգևոր ինչ այցելութե,
վ՟ն այսորիկ իրաւամբք գործես ընդ իս.
յորժամ զիս տնանկ և անտերունչ
թողուս։ Զի թէպէտ և ծովու նման
արտասուս հեղուի, սակայն և այն_
պէս մխիթարութե քում չէի արժանի։
Վ՟ն այսորիկ ոչինչ իմիք եմ արժանի
բայց հարուածոց և պատժոց. զի
ծանունս՝ և ստէպ զքեզ բարկացու_
ցի։

ցի. և ընդ խելք մեծապէս յանցեայ: Վա՜յ թէ արդար խորհիմ, և ոչ դոյզն մխիթարութեան եմ արժանի: Այլ դու գթած և մարդասէր տէր, որ ոչ կամիս զկորուստ գործոց քոց, 'ի ցուցանել զմեծութիւն քաղցրութեան քոյ յանօթս ողորմութեան՝ և առանց իսկ իմոյ արժանաւորութեան յանձնառնուս մխիթարել զծառայ քո՝ առաւել քան զմարդկան եղանակ: Զի քո մխիթարութիւնք չեն իբրև զմարդկան զրոյցս:

Ժ. Զի՞նչ գործեցի, տէր, զի շնորհեսցես ինձ երկնային ինչ մխիթարութիւն: Ոչ յիշեմ թէ գործեալ է իմ բարի ինչ. այլ միշտ 'ի մոլութիւն դիւրամէտ. և առ ուղղութիւն հեղգ լեալ է իմ: Ճշմարիտ է. և ոչ իշխեմ ժխտել: Իսկ եթէ այլազգ ինչ ասէի, դու ինքն կայէիր իմ ոսոխ, և չլինէր ոք իմ ջատագով: Ո՞րոյ իմիք արժանացայ վասն իմոյ մեղաց, բայց գեհենի և հրոյն յաւիտենից: Ճշմարտութեամբ խոստովանիմ, զի արժանի եմ ամենայն ծաղու և արհամարհանաց, և չեմ արժանի յիշատակել 'ի մէջ ջերմեռանդն քոց ծառայից: Դառն է ինձ զայս լսել, բայց և այնպէս վասն ճշմարտութեան ես ինձէն յանդիմանեմ զմեղս իմ. զի դիւրա-

ար-

արժանացայց ը՟ունիլ զքո ողորմութիւն:

Է · Զի՞նչ ասացից ամօթալից մեղա_
պարտս · չունիմ բերան խօսելոյ՝ բայց
զայս նեթ · մեղայ տէր, մեղայ · ողոր
մեա ինձ և քաւեա զիս : Թո՛յլ տուր
ինձ սակաւ մի կծծել զցաւս իմ, մինչև
երթեալ իցեմ յերկիր խաւարին, ուր
է մահու մառախուղ : Զի՞նչ այնպէս
խնդրես 'ի թշուառական մեղապարտ
անձնէ, բայց զի զղջասցի և խոնար_
հեսցի վ՟ն իւրոց յանցանաց : 'Ի ճշմա
րիտ զղջմանէ և 'ի խոնարհութե՟ սրտի
ծնանի յոյս թողութեան, հաշտի ամբա
րեալ խիղճ մտաց · Նորոգին կորու_
սեալ շնորհք, պահի մարդ 'ի համ_
բերձեալ բարկութե՟, և ը՟ առաջ լի_
նին մխիթանց 'ի համբոյր որբուն՝ ած
և ապաշխարող որդի :

Ը · Խոնարհ զղջմամբ մեղաւորայ՝ պա
տարագ է քեզ տէր ընդունելի · անուշա_
հոտ առաջի քո քան զբուրումն կըն_
դրկի : Այս է և իւղն այն անմի, ո_
րով կամեցար թէ մե՟ ոտք քո օծցին ·
զի զսիրտ զղջացեալ և խոնարհ ոչ եր
բէք արհամարհես : Անդ է տեղի ա_
պաւինի յերեսաց բարկութե՟ թշնամ_
եաց : Անդ լռեացեալ սրբէ, որ ինչ
ոյլուսս աղտեղացաւ :

Գ. Լ.

## Գ Լ. ԾԳ.

Թէ շնորհն ա՟յ ոչ խառնի ընդ այնս՝ որոց ճաշակք են երկրաւորք:

Ա. Որդեակ, պատուական է շնորհ իմ. ոչ խառնի ը՟ն օտարոտի իրս, և ոչ ը՟ն երկրաւոր մխիթարութիւնս: Ապա ՚ի բաց արա զա՟մ արգելս շնորհաց, եթէ ըղձանաս զհոսումն ն՟ր ընդունել: Խնդրեա քեզ առանձնութի՟. սիրեա միայն բնակել ը՟ն քեզ. մի ՚ի խընդիր լինիր զրուցաց մարդկան. այլ ջերմեռանդն մատո աղօթս առ ա՟ծ, զի ունիցիս միտս զղջականս, և խիղճ մտաց մաքուր: Զաշխարհ ա՟մ արհամարհեա. Զպարապելն յա՟ծ՝ քան զարտաքինս ա՟մ վերադասեա: Զի անհընար է քեզ՝ յիս պատաղիլ, և միանգամայն անցաւորօքս բերկրիլ: ՚Ի ծանօթից և ՚ի սիրելեաց լեր հեռի. և յա՟մ ժամանակաւոր սփոփանաց ամփոփ կալ զմիտդ: Ո՟պ աղաչէ երանելի առաքեալն պետրոս, լինել հաւատացելոց յ՟շխի ասա ո՟պ նժդեհս և պանդուխտս:

Է. Ո՞վ, քանի՛ համարձակութի է մահ
կանացուի, զոր ոչինչ իրաց իղձ կա_
պեալ ունի ընդ աշխարհի: Բայց զայս_
պիսի զատուցեալ սիրտ ունել յիմէ՝
խօթամիտն դեռ ոչ իմանայ. և ոչ
հեշտաւոր մարդ վնէրքին մարդոյ զա_
ղատուն: Սակայն եթէ ճշմարտութը
հոգևոր լինել կամի, հրաժարիլ պարտ
է նմա՝ եթէ 'ի հեռաւորաց և եթէ
'ի մերձաւորաց. և ոչ յումեքէ այնչ
անձնապահ լինել, որչ յիւրմէ: Եթէ
անձին կատարելաչ յաղթես, վայլն
ամ դիւրաւ ընդ բաւմը նուաճես: Կա
տարեալ յաղթութիւն է 'ի վր անձին
յաղթանակել: Զի որ զանձն հնա_
զանդեալ ունի, մինչև զգայութն ան_
սալ բանի, և բանին լսել ինձ յամի,
նա է ճշմարիտ յաղթօղ անձին, և տր
աշխարհի:

Գ. Եթէ յայս գագաթն վերանալ
տենչաս, պարտ է քեզ քաջութբ ձեռն
'ի գործ առնել, և զտապարն առ ար
մին դնել, 'ի խլել և 'ի յատակել բղ_
գաղոնի զանկարգ միտումն առ անձն
քո, և առ ամ առանձնաւոր և նիւ_
թական բարի: Զայսմ՝ ախտէ կարի
ինն անկարգ ինքնասիրութե կախեալ
կայ գլխովին ամի խոպառ յաղթանա_
կութի:

կուի: Ընդ յաղթել և է՛ նկուն լինել ախտիս՝ եղիցի նոյնհետայն մեծ խաղաղուն, և հանդարտուն: Բայց քան զի սակաւք ճգնին կատարելապէս մահանալ յանձինս, և ոչ լիով արտաքոյ անձանց բերին, վա՛ այսորիկ յանձինս պաշարեալ մնան, և ոչ 'ի վերոյ քան զանձինս հոգւով վերանալ ժամանեն: Այլ որ ազատօրէն ընդ հաճոյս իմ գնալ կամի, հարկ է նմա զամ զթիւր և զանկարգ ախորժակս իւր մեռուցանել, և ոչ ումեք 'ի ստեղծուածոց՝ առանձնական սիրով՝ տարփանօք անձկալ:

---

## Գ Լ. ԾԴ:

### Յաղագս այլեայլ շարժմանց բնութեան և շնորհաց:

ա. Որդեակ, զգուշութ՝ դիտեսջիր զշարժմունս բնութեան և շնորհաց. զի յոյժ նուրբ է այդ է հակառակս շարժումն. զոր հազիւ այր հոգեկիր և լուսաւորեալ դիտէ որոշել: Ամենեքեան բարւոյն բաղձան, և բարի ինչ 'ի բանս կամ 'ի գործս իւրեանց պատ-

ճառ

ճառեն. վ̃ս այսորիկ կերպարանօք
բարւոյ բ̃մք խաբին :
ԺԲ. Բնութիւն նենգաւոր է. և զբ̃մս
յինքն յանկուցանէ, թակարդէ և պատ
րէ. և յա̃մի զինքն ունի վախճան :
Այլ շնորհն պարզմտութ̃բ գնայ. յա̃մ՛
կերպարանաց չարաց խորշի. ոչ հնա_
րս խաբէութեան, և զա̃մ առնէ վ̃ս ա̃յ
միայն, յորում և խաղաղ հանգչի :
ԺԳ. Բնութիւն ոչ կամի մահանալ. ոչ
ճնշիլ, ոչ յաղթահարիլ. ոչ ընդ բը_
ռամբ նուաճիլ, և ոչ կամովին ընդ
լծով լինել : Այլ շնորհն փութայ 'ի
մեռուցումն անձին. հակառակ կայ
զգայութե. խնդրէ հպատակ կալ. յօ_
ժարի յաղթիլ. և ոչ զիւրն կամի վա
րել զազատութի. ընդ առաջնորդութ̃բ
խրատուի սիրէ կալ. և ոչ ախոր_
ժէ ումեք տիրել, այլ յա̃մի ընդ ձե_
ռամբ ա̃յ լինել. և վ̃ս ա̃յ ա̃մ մարդ_
կեղէն ստեղծուածոյ պատրաստ է ցա
ծուք̃ խոնարհիլ :
ԺԴ. Բնութիւն առ դիւրուե իւր աշխա_
տի. և զինչ շահ յայլմէ կորզիցէ՝ յայն
հայի : Իսկ շնորհն՝ ոչ զանձին օգուտն
և զդիւրութի, այլ զբազմաց օգտա_
կարն խորհի :
ԺԵ. Բնութիւն մեծադիւր պատիւ և յարգ

ը̅ունի ։ Իսկ շնորհն զն̅մ պատիւ և՛ զփառս հաւատարմութ̅ ն̅յ ընծայէ ։

զ̅· Բնութիւն երկնչի յամօթոյ , և յարհամարհանաց ։ Իսկ շնորհն խնդայ ը̅ անարգելն վ̅ անուանն յս̅ի ։

է̅· Բնութիւն սիրէ զդատարկութի և ըղհանգիստ մարմնոյ ։ Իսկ շնորհն անգործ կալ ոչ գիտէ · այլ մտադիւր գիրկս արկանէ զաշխատութ̅ ։

ը̅· Բնութիւն խնդրէ ունել զը̅վայրաքըննինս , և զգեղեցիկս · ատեայ զանարգս և զխոշորս ։ Իսկ շնորհն զուարճանայ ը̅ անպաճոյճս և ը̅ խոնարհս · զխոշորս ոչ արհամարհէ · և ոչ խորշի 'ի զգենլոյ զհանդերձս հնոտիս ։

թ̅· Բնութիւն հայի 'ի ժամանակաւորս · խնդայ ը̅ շահս երկրաւորս · տխրի 'ի տոյժս · և բարկանայ ընդ դոյզն նախատինս ։ Այլ շնորհն հայի 'ի յաւիտենականս · ոչ յարի 'ի ժամանակաւորս · ոչ ը̅ կորուստ ընչից խռովի · և ոչ 'ի խիստ բանից դառնանայ · զի զգանձ իւր և զխնդութի եդ յերկինս , ուր ոչ կորնչի ինչ ։

Ժ· Բնութիւն շահախնդիր է , և մտադիւրագոյն առնու , քան տայ · սիրէ զիւրսն և զառանձնականս ։ Իսկ շնորհն գթած է՝ և զհասարակացն սիրէ · խոր

շի

ցի յառանձնականաց , շատանայ սա_
կաւուք · երանաւորյն համարի զտալն
քան զառնուլն:

ԺԱ · Բնութին մտէ 'ի ստեղծուածս ,
'ի մարմին իւր , յունայնութիւնս և 'ի զը_
րոյցս : Այլ շնորհն ձգէ յած և յա_
ռաքինութիւնս · հրաժարէ 'ի ստեղծուա_
ծոց · փախչի յաշխարհէ · ատեայ ըղ_
ցանկութիս մարմնոյ · կարճէ զդեգե_
րանս · ամաչէ երևիլ 'ի հրապարակս :

ԺԲ · Բնութին մտադիւր բերի յարտա_
քին սփոփանս · յորս բերկրի ը̅ զգայ_
ութե : Այլ շնորհն յած միայն խընդ_
րէ մխիթարիլ , և 'ի գերակայ բա_
րին քան յամ երևելիս բերկրիլ:

ԺԳ · Բնութին զամ առնէ 'ի շահ և 'ի
դիւրութե անձին · ոչինչ առնէ ձրի ·
այլ կամ զհաւասարն , և կամ զլա_
ւագոյն , կամ զգովութե և կամ զնպաս_
տաւորութե փոխարէն երախտեացն
ընդունիլ ակն ունի · և կամի թէ մեծ_
արգի լիցին իւր արարք և պարգևք :
Իսկ շնորհն ոչինչ ժամանակաւորի լի_
նի 'ի խնդիր · և ոչ այլ ինչ հատու_
ցումն՝ բայց միայն զած խնդրէ 'ի
վարձս : Եւ առօրէից պիտոյից ինչ
ոչ ցանկայ , բայց որչափ պիտին նմա
առ ստանալոյ զյաւիտենականսն :

ժդ̃․ Բնութիւն խնդայ ը̃ բազում բա-
րեկամս և ազգայինս․ պարծի ը̃ ազ-
նուական տեղի և ը̃ ծագումն տոհմի․
մատահաճութ̃ գնայ ը̃ հզօրս․ շողոքոր-
թէ զմեծատունս․ գովէ զիւր նը-
մանս։ Իսկ շնորհն և զթշնամիս սիրէ․
և ոչ ընդ հոյլս բարեկամաց փքա-
նայ․ ոչ համարի ինչ զտեղին և ըզ-
ծագումն տոհմի, բայց՝ ուր առաւե-
լուն իցէ առաքինութ̃․ Նպաստէ ա-
ռաւել աղքատի քան մեծատան, վըշ-
տակից լինի անմեղի՝ քան հզօրի․ խըն-
դակից լինի ճշմարտախօսի քան ստա-
սացի․ յորդորէ միշտ զբարիս՝ նախան-
ձաւոր լինել շնորհաց որք լաւքն են․
և առաքինութ̃ք՝ որդւոյն ա̃յ լինել
նմանօղ։

ժե̃․ Բնութիւն ընդ պակասութ̃ս և ընդ
նեղութ̃ վաղվաղ տրտնջէ։ Շնորհն ա-
րիաբար տանի չքաւորութ̃։

ժզ̃․ Բնութիւն զա̃մ յինքն ձգէ․ վ̃ն իւր
գժտի և դիմախօսէ։ Իսկ շնորհն զա̃մ
յա̃ծ դարձուցանէ, յորմէ որպէս յաղ-
բերէ բղխէ ա̃մ․ ոչինչ բարի անձին
գրէ․ և ոչ յանդուգն վստահի յանձն․
ոչ վիճէ․ և ոչ զիւր կարծիս քան զայ-
լոցն վերադասէ․ այլ յա̃մ խորհուրդս
և իմաստս՝ յաւիտենական իմաստութ̃

և

և ածային քննութեն ներքոյ արկանել
զանձն ։

ԺԷ. Բնութեին բաղձայ գիտել զգաղտ-
նիս, և լսել զնորալուրս. կամի ար-
տաքոյ երևիլ. և զբազում իրաց ըզ-
գայութի առնուլ զճաշ. ցանկայ լինել
ծանուցեալ, և ձեռնարկել 'ի գործ,
ուստի գովեստ և զարմանք քաղի ։
Այլ շնորհաց չէ ինչ փոյթ լսել ըզ-
նորալուրս և զընդվայրաքննինս. զի
այդ ամ 'ի հնուէ ապականուէ է ծա-
գել. որովհետև չիք ինչ նոր և մըշ-
տամնայ 'ի վր երկրի ։ Ապա ուսուցա-
նէ զուսալ ունիլ զզգայութս. խորշել
յունայն հաճուէ, և 'ի ցուցամոլու-
թէ. ծածկել խոնարհութե զգովելին
և զզարմանչելին. և յամ իրողութիս և
'ի գիտութս զպտուղն խնդրել զօգուի,
և զգովուե և զփառս ամյ ։ Ոչ կամի
թէ ինքն և որ ինչ իւր է քարոզես-
ցի. այլ անձկայ՝ զի ած 'ի պարգևս
իւր օրհնեսցի, որ զամ 'ի լոկոյ սիրոյ
'ի մեզ առատաձեռնէ ։

ԺԸ. Այս շնորհ՝ լոյս է գերբնական,
և մանաւոր իմն պարգև ածաձիր.
սեպհական կնիք ընտրելոց. և առ-
հաւատչեայ փրկուե յաւիտենից. որ
ամբառնայ զմարդ 'ի սէրս երկրաւո-

րայց 'ի սիրելութիւն երկնայնոց · և դշխն չաւորին գործէ հոգևոր : Ապա որչափ առաւել ճնշի բնութիւն և յաղթի, այնչափ մեծագոյն շնորհ 'ի մեզ հեղանի · և օրըստօրէ նորանոր այցելութեամբ ներքին մարդն ըստ պատկերի ա՛յ նորոգի :

---

## Գ Լ · ԾԵ :

Յաղագս ապականութե՛ բնութե՛, և ազդեցութե՛ աստուածային շնորհաց :

Ա · Տ՛Ր ա՛ծ իմ, որ արարեր զիս ըստ պատկերի քում, և ը՛ նմանութե՛, շնորհեա ինձ զշնորհդ զայդ՝ զոր ցուցեր այդչափ մեծ և հարկաւոր առ փրկութիւն · զի յաղթեցից իմում ապականեալ բնութե՛, որ ձգէ 'ի մեղս և 'ի կորուստ : Զի տեսանեմ 'ի մարմնի իմում զօրէնս մեղաց, որ հակառակ կայ օրինաց մտաց իմոց, և գերէ զիս 'ի հնազանդութիւն զգայութե՛ 'ի բազումս : Եւ ոչ կարեմ ընդդէմ դառնալ կրից նո՛, թէ ոչ օգնէ ինձ շնորհ քո սբ՝ ջերմ հեղեալ 'ի սիրտ իմ :

Բ · Կարօտ եմ շնորհի քոյ, և մեծի շնոր-

շնորհի, անյաղթելոյ բնութեան՝ որ հաս-
տատեալն է միշտ 'ի խնամս չարին 'ի
մանկութենէ իւրմէ : Քանզի 'ի նախա-
մարդն ադամ սահեալ սորա և յոռա-
ցեալ մեղօք, այնուհետև յամ̄ մարդիկ
կէջ պատիժ այսր արատոյ. մինչև բուն
բնութեն̄, որ 'ի քէն բարիոք և ուղիղ
հաստեցաւ, յայնմ հետէ դնիլ փոխա
նակ ախտի և տկարութ̄ ապականեալ
բնութ̄. իբր զի 'ի թողուլ 'ի նա զբե-
րումն իւր, ձգէ 'ի չարիս և 'ի ստո-
րինս : Քանզի սակաւ այն զօրութի̄
որ մնաց, է որպէս կայծ իմն ղօ-
ղեալ 'ի դաղախի : Այն ինքն է բանն
բնական՝ մածեալ մթին մառախլով.
յորոյ դեռ 'ի ձեռս է ընտրութի̄ բար-
ւոյ և չարի, և որոշումն ճշմարտի և
ստոյ. թէպէտ և չէ ձեռնհաս 'ի գործ
դնել զամ̄՝ որում հաւանի, և ոչ լիա-
պատար ունի զլոյս ճշմարտութե̄, և
ոչ քաջառողջ է յախորժակս իւր:
Դ. Վա̄ այսորիկ հաճեալ եմ Տր̄, ընդ
օրէնս քո ըստ ներքին մարդոյն. գի-
տելով թէ պատուիրանք քո բարի
են, և արդար, և սբ̄. և թէ խոր-
շիլ պարտ է յամ̄ չարէ և 'ի մեղաց:
Բայց մարմնով ծառայեմ օրինաց մե-
ղաց, առաւել անսացեալ զգայութե̄

քան զանձն։ Վա՛յ այսօրինակ կամք առա-
ջի կան ինձ, և առնել զբարին ոչ։
Բազում անգամ բազում բարիս ա-
ռաջադրեմ, բայց առ 'ի չգոյէ շնոր-
հաց՝ օգնել իմումս տկարութեան, 'ի
դոյզն հակառակութէ յետս ընկրկիմ և
կասիմ։ Վա՛յ այսօրինակ դէպ լինի, զի
զճանապարհ կատարելութեան ճանաչեմ․
և թէ զիա՞րդ արժան իցէ ինձ գործել՝
զայն քաջ տեսանեմ․ բայց ծանրութ
իմոյ ապականութեան ճնշեալ, 'ի կատարե
լագոյնս անդ ոչ ժամանեմ։

Է․ Ո՛վ, ո՞րչափ պիտոյ է ինձ տէր շնորհ քո՝
'ի սկսանիլ զբարին, 'ի յառաջ վարել,
և 'ի կատարել։ Զի առանց նորա ոչ կա
րեմ առնել ինչ․ այլ ամենայն կարող եմ
քև, 'ի զօրացուցանել զիս շնորհաց
քոց։ Ո՛վ երկնային շնորհի, առանց
որոյ ոչինչ են մեր արդիւնք․ և ոչ
ինչ ձիրք բնութեան են արդոյք։ Ոչինչ ար
ուեստ, ոչինչ մեծութիւն, ոչինչ գեղեց
կութիւն կամ քաջութիւն, ոչինչ ճարտարութիւն
կամ ճոխութիւն արժեն ինչ առաջի
քո տէր, առանց շնորհաց։ Քանզի
ձիրք բնութեան՝ բարեաց և չարաց են
հասարակք․ այլ ընտրելոց սեպհական
պարգև է շնորհն և սէր․ որով պեր-
ճացեալքն արժանի համարին կենացն

յա-

յաւիտենից ։ Այնչափ գեր 'ի վերոյ է շնորհս, մինչ զի ոչ պարգեւ մարգարէութե, եւ ոչ նշանագործութի, եւ ոչ որոցեւիցէ խորոց խորհրդածութե՛ համարին ինչ առանց սր։ Այլ եւ ոչ հաւատ, եւ ոչ յոյս, եւ ոչ այլ առաքինութիք ընդունելի են քեզ՝ առանց սիրոյ եւ շնորհաց։

Է. Ո՛վ երանաւէտ շնորհ. որ զաղքատն հոգւով ճոխացուցանես առաքինութբք, եւ զճոխացեալն բազում բարեօք՝ խոնարհ առնես սրտիւ։ Եկ էջ առիս. լի՛ց զիս յայգուէ մխիթարուե քով, զի մի նուաղեսցի 'ի վհատութէ եւ 'ի ցամաքութէ մտաց անձն իմ։ Տո՛ւր Տր, գտանել ինձ շնորհս առաջի քո. զի շատ է ինձ շնորհ քո, թէպէտ եւ ոչինչ ունիցիմ 'ի ցանկալեաց բնութե։ Եթէ փորձեսցիմ, եւ տառապեցայց վշտօք բազմօք, ոչ երկեայց 'ի չարէ՝ 'ի լինել շնորհի քո ընդ իս։ Նա է իմ զօրութի, նա տայ ինձ խորհուրդ եւ օգնութի։ Քան զամ թշնամիս է զօրագոյն, եւ քան զամ իմաստունս իմաստնագոյն։

Ը. Վարդապետ է ճշմարտութե, ուսուցիչ է խրատու, լոյս սրտի, դիւրիչ վշտաց. փարատիչ տրտմութե, վա

նիչ երկիւղի, սնուցիչ եռանդեան, ծնու-
ցիչ արտասուաց: Զինչ եմ ես առանց
նր̃, բայց եթէ փայտ չոր. և կոճղ ան-
պիտան 'ի բաց ընկեցիկ: Ապա շնորհ
քո Տր̃, յամ̃ի իմ առաջի երթիցէ, և
զհետ եկեսցէ. և տացէ ինձ հանա-
պազ փոյթեռանդն լինել 'ի գործս բա-
րութ̃, քս̃իւ յս̃իւ որդւով քով. ամէն:

---

## Գ Լ. ԾԶ:

Թէ պարտ է զմեզ ուրանալ զանձինս, և զհետ երթալ Քս̃ի 'ի ձեռն խաչի:

Ա. Որդեակ, որչափ 'ի քէն ելանես,
այնչափ յիս փոխաբերիս: Որպ̃ ոչինչ
իմիք ցանկալն արտաքոյ, բերէ զներ-
քին խաղաղութիւն. նոյնպ̃ ներքուստ
հրաժարիլն յանձնէ, ընդ Այ̃ միաւո-
րէ: Կամիմ ուսանիլ քեզ զկատարեալ
յանձնարարութի̃ անձինդ 'ի կամս իմ,
առանց ինչ հակառակութե̃ և տրտունջ-
ման: Եկ զկնի իմ. ես եմ ճպ̃հ, ճըշ-
մարտութի, և կեանք: Առանց ճանա-
պարհի ոչ հատանի ուղի, առանց ճըշ-
մարտութե̃ ոչ ճանաչի ինչ, և առանց
կենաց ոչ լինի կեալ: Ես եմ ճպ̃հ,
որում պարտ է քեզ զհետ երթալ. ճըշ-
մար-

մարտութի՝ որում պարտ է քեզ հաւա-
տալ, և կեանք՝ յոր ունիս յուսալ: Ես եմ ճանապարհ անմոլար, ճշմար-
տութի անսուտ, և կեանք անվախճան: Ես եմ ճանապարհ ուղիղ. ճշմարտու-
թի գերակայ. կեանք ճշմարիտ, կեանք երանական և կեանք անստեղծ: Ե-
թէ կացցես 'յիմում ճանապարհի, ծանիցես զճշմարտութի, և ճշմարտութիւն ազատեսցէ զքեզ, և հասցես կենացն յաւիտենից:

Բ. Եթէ կամիս մտանել 'ի կեանս, պահեա՛ զպատուիրանս: Եթէ կամիս ճանաչել զճշմարտութիւն, հաւատա՛ ինձ: Եթէ կամիս կատարեալ լինել, վաճառեա՛ զա̃մ: Եթէ կամիս լինել իմ աշակերտ, ուրացի՛ր զանձն: Ե-
թէ կամիս զերանական կեանս ժա-
ռանգել, զայսր կեանս արհամար-
հեա՛: Եթէ կամիս վերադաս լինել յերկինս, խոնարհեցո՛ զքեզ յա̃հի: Ե-
թէ կամիս թագաւորել ը̃ իս, բարձ զխաչ ը̃ իս: Զի միայն ծառայք խա-
չին գտանեն զճ̃պհ երանութե̃ և ճշ-
մարիտ լուսոյ:

Գ. Տ̃ր յ̃ս ք̃ս, քանզի անձուկ էին կեանք քո, և արհամարհ աշխարհի, տո՛ւր ինձ արհամարհութբ̃ [illegible] լինել

քեզ նմանօղ: Զի ոչ է ծ̃այ մեծ քան զտ̃ր իւր. և ոչ աշակերտ քան զվարդապետ իւր: Մարզեսցի ծառայ քո 'ի վարս քո. զի անդ է իմ փրկութի̃ն, և ճշմարիտ սրբութի̃: Զորինչ արտաքոյ նր̃ կարդամ կամ լսեմ, ոչ զուարթացուցանէ զիս, և ոչ լիով բերկրեցուցանէ:

Դ̃. Որդեակ, քանզի զայդ ամ̃ գիտես, և ընթերցեալ է քո զամ̃, երանելի լինիս, եթէ առնիցես զն̃ա: Որ ունի զպատուիրանս իմ, և պահէ զն̃ա, նա է, որ սիրէ զիս. և ես սիրեցից զընա, և երևեցուցից նմա զիս. և նըստուցից զնա ընդ իս յարքայութեան հօր իմոյ:

Ե̃. Տ̃ր յ̃ս ք̃ս, որպ̃ ասացեր և խոստացար, նոյնպէս և եղիցի. և ինձ̃ ես վիճակեսցի այդմ լինել արժանի: Ընկալայ ընկալայ 'ի ձեռաց քոց զխաչ. բարձից և բարձից զայն մինչև ցմահ, որպ̃ և եդեր 'ի վ̃ր իմ: Ահա բարւոյ աբեղայի կեանք խաչ է, որ տանի յարքայութի̃: Սկիզբն արարաք. ոչ յետս ընկրկիլ արժան է, և ոչ թողուլ 'ի ձեռանէ:

Զ̃. Հա՛յդա եղբարք, դիմեսցուք միանգամայն. և յ̃ս եղիցի ը̃ մեզ: Վ̃ս յ̃ի

յանձն

յանձն առաք զխաչս, մի՛ յետս կացցուք մնասցուք 'ի խաչի. նա եղիցի մեր օգնական, որ առաջնորդ է մեր և կարապետ: Ահա թագաւոր մեր մտանէ առաջի մեր, որ պատերազմի փոխանակ մեր: Արիաբար զհետ երթիցուք. մի՛ ոք երկիցէ յահէ. պատրաստ լիցուք մեռանիլ քաջութ. 'ի պատերազմի, և մի՛ խառնեսցուք անուն վատութե ընդ փառս մեր, փախչելով 'ի խաչէ:

---

## Գ Լ. ԾԷ.

Թէ չէ պարտ մարդոյ չափէ իմն լքանել, յորժամ դիպի նմա 'ի պակասութիւնս ինչ անկանել:

Տ. Որդեակ, առաւել հաճոյ են ինձ համբերութի և խոնարհութի 'ի վիշտս, քան զբազում մխիթարութիւն և եռանդն 'ի յաջողուածս: Զի՞ է զի տրտմեցուցանէ զքեզ խուն ինչ զրոյց ասացեալ զքէն: Թէ աւելի ևս լինէր, չէր արժան քեզ խռովիլ: Բայց արդ թո՛ղ դու, և զանց արա. չէ՛ առաջին, և ո՛չ նոր ինչ. այլև ո՛չ վերջին, եթէ կեցցես ընդերկար: Քաջ ես դու,

յոր

ցորչափ ո՛չ դիպի ինչ վիշտ. խոհականն
ես և 'ի խրատել զայլս, և գիտես
քաջալերել բանիւք. այլ եթէ և դայ
յանկարծակի նեղութիւն առ դուրս քո,
և 'ի խրատուէ և 'ի քաջալերութե-
նէ վերջացեալ գտանիս: Հայեա՛ց 'ի
մեծ տկարութիւնդ, զորոյ ստէպ առ-
նուս պչափ 'ի դոյզն առիթս: Բայց
առ փրկութիւն քո գործին այս ժամ, և
որ սոցին նման՝ պատահարք:

Է. Հա՛ն ը̄ կարի 'ի սրտէ. և թէ եր-
գիծոյց ինչ, մի՛ խսպառ լքուցէ, և
մի՛ ընդ երկար պաշարեսցէ: Գէթ
համբե՛ր երկայնմտութ̄, թէ ո՛չ կարես
խնդութ̄: Թէպէտ և դժուարահաճ
ես 'ի լսել, և դայ 'ի քեզ ցասումն,
դու ժուժեա՛. և մի՛ թողուր՝ թէ ան
կարգ ինչ ելցէ 'ի բերանոյ քումմէ,
յորմէ գայթակղեսցին փոքունք: Վաղ
վաղակի զիջցի զայրոյթն գրգռեալ. և
դառնութիւն ներքին քաղցրասցի՝ 'ի դառ-
նալ շնորհի: Կենդանի եմ ես, ասէ
Տ̄ր, զի պատրաստ եմ օգնել քեզ, և
առաւել քան զսովորականն մխիթա-
րել, եթէ յիս յուսասցիս, և ջերմ
առիս կարդայցես:

Ը. Քաջալերեա՛ց, մնացինեալ 'ի մե-
ծագոյն համբերութե: Չես գլխովին

զրա-

զրաջան, թէ ուրեք երբէք նեղեալ զքեզ գտանես, կամ մեծապէս փորձեալ։ Մարդ ես դու, և ոչ Աստուած, մարմին ես, և ոչ հրեշտակ։ Զիա՞րդ հնար էր քեզ միշտ 'ի նոյն սահմանս առաքինութեան կալ մնալ. որ ոչ վիճակեցաւ այս՝ ոչ հրեշտակաց յերկինս, և ոչ նախամարդոյն 'ի դրախտի։ Ես եմ, որ զտրտմեալս քաջալերութեամբ կանգնեմ, և զորս ճանաչեմ ըզտկարութիւն իւրեանց, յաստուածութիւն իմ վերբերեմ։

Զ. Տէր, օրհնեալ է բան քո, քաղցր 'ի քիմս իմ քան զմեղր և զխորիսխ։ Զինչ առնելոց էի յայնչափ նեղութիս և 'ի վիշտս իմ, թէ ոչ զօրացուցանէիր զիս բանք քո սուրբ։ Այսուհետեւ զի՞ փոյթ է, թէ զինչ և որչափ ինչ կրիցեմ. միայն թէ 'ի նաւահանգիստ փրկութեան հասանիցիմ։ Տուր վախճան բարի. տուր երջանիկ փոխումն յաշխարհէ աստի։ Յիշեա զիս Աստուած իմ. և առաջնորդեա ինձ ընդ ճանապարհ ուղիղ յարքայութիւն քո, ամէն։

ԳԼ.

Գ Լ. ԾԸ։

Յաղագս չքննելոյ զբարձրագոյն իրս, և զԱ̄յ գաղտնի դատաստանս։

Ա. Որդեակ. զգո՛յշ լեր չվիճել ըդ-խորին նիւթոց և զգաղտնի դատաստա-տանացն Այ, թէ զիա՛րդ այսոք այդ̄ թարձի թողլի կայ, և այն ոք յայնչափ շնորհս ամբարձեալ է. զիա՛րդ սա այսչափ տառապի, և նա այնչափ փառաւոր 'ի փառս բարձրանայ։ Այդ ա̄մ 'ի վեր է քան զհասողութիւն մարդ-կան. և ա̄ծայինն դատաստանաց քըն-նութե̄ ոչինչ բան կամ վիճումն դիմա-կալէ։ Արդ յորժամ այսպիսի ինչ թելադրէ քեզ թշնամին, կամ ընդ-վայրաքննինք 'ի խոյզ և 'ի խնդիր ար-կանեն, դու զմարգարէին ասա։ Ար-դար ես Տր, և ուղիղ են դատաստանք քո։ Եւ թէ՝ դատաստանք Տն ճըշ-մարիտ են, և արդար են 'ի նոյն։ Դա-տաստանք իմ սարսափելի են, և ոչ քննելի. զի մտաց մարդկան են ան-հասանելի։

Բ. Մի՛ խնդիր առներ, և մի՛ վիճեր և 'ի վը̄ արդեանց սր̄ց, թէ ո՛ քան

զո՛

Զո՛ սրբագոյն իցէ. կամ ո՛վ մեծ իցէ յարքայութեան երկնից: Խնդիրք այդպիսիք ծնանին յոլովակի վէճս եւ հակառակութիւնս անպիտանս. եւ տածեն զհպարտութիւն եւ զունայնփառութիւն. յորմէ 'ի վեր երեւին նախանձք եւ երկպառակութիւնք, 'ի ջանալ ումեմն զայս սբ՟ եւ ումեմն զայն սբ՟՝ հպարտուբ՟ վերադասել: 'Ի գիտութեն եւ 'ի քննութեն այդպիսի իրաց ձեռնարկել՝ ոչինչ օգուտ 'ի մէջ բերէ. նա՝ անհաճոյ իսկ է սբ՟ց: Վ՟ զի չեմ ես ա՟ծ խռովութեն, այլ խաղաղութեն. որ առաւել հաստատի 'ի ճշմարիտ խոնարհութեն, քան յինքնապարծ բարձրութեն:

Է. Են որք նախանձու սիրոյ ձգին յայս կամ յայն սբ՟ յորդագոյն ըղձմամբ. բայց մարդկային իմն է այն, քան ա՟ծային: Ես եմ ա՟մ սբ՟ց հաստիչ. ես պարգեւեցի նց՟ զշնորհս, ես ետու նց՟ զփառս: Ես ծանեայ զմիոյ միոյ 'ի նոցանէ զարդիւնս. ես ժաման արարի զնս՟ յօրհնութի քաղցրութեն իմոյ: Ես յառաջագոյն ծանեայ զսիրելիս իմ յառաջ քան զյաւիտեանս. ես ընտրեցի զնս՟ յաշ՟է, եւ ո՛չ թէ նոքա զիս նախ ընտրեցին: Ես կոչեցի զնս՟ շնորհօք, ձգեցի յիս ողորմութբ՟, եւ առաջ֊

նոր֊

նորդեցի նց̃ ընդ պէսպէս փորձութիւնս։ Ես հեղի 'ի նմ̃ մխիթարութիւնս մեծամեծս. եւ ետու նց̃ յարատևութիւն. եւ պսակեցի զնց̃ համբերութիւն։

Դ. Ես եմ՝ որ ծանուցեմ զառաջինն և զյետինն. եւ ընդ ամենեսին անչափ սիրով գրկախառնիմ։ Ես եմ գովելի յա̃մ սր̃ս իմ. ինձ 'ի վեր քան զա̃մ վայելէ օրհնութիւն և պատիւ վս̃ միոյ միոյ 'ի նոցանէ, զորս այնպէս փառաւոր մեծացուցի, և յառաջագոյն սահմանեցի՝ առանց ինչ արժանաւորութե̃ նոցա կանխելոյ։ Ապա որ ոք զմի 'ի փոքրկանց իմոց արհամարհէ, այնպէս սին և ոչ զմեծն մեծարէ. զի զփոքրն և զմեծ ես արարի։ Եւ որ ընդ վայր հարկանէ զմի 'ի սր̃ց, ընդ վայր հարկանէ և զիս և զա̃մ սր̃ս յարքայութե̃ երկնից։ Ամենեքին մի են յօդիւ սիրոյ. զնոյն խորհին, զնոյն կամին. և ամենեքին միաբանութ̃ սիրեն զմիմեանս։

Ե. Այն զի՝ (որ բարձրագոյն ևս է,) առաւել սիրեն զիս՝ քան զինքեանս և քան զիւրեանց արդիւնս։ Քանզի յափշտակեալք 'ի վերոյ քան զանձինս, և ձգեալք արտաքոյ քան զիւրեանց սէր, գլխովին 'ի սէր իմ դիմեն. յոր և զմայլմամբ հանգչին։ Զիք ինչ որ

է

՚ի բաց դարձուցանէ զնա, կամ ճնշէ զ
իբր զի յաւիտենական ճշմարտութիւն
առլցեալք, վառին հրով անշէջ սի_
րոյ։ Ապա կարկեսցին մարմնաւոր և
շնչաւոր մարդիկ՝ խօսիլ զվիճակէ մեզ,
որք ոչ գիտեն սիրել, բայց միայն զա
ռանձնաւոր խնդութիւնս։ Նուաղեն
և յաւելուն ըստ իւրեանց յօժարու_
թեան, և ոչ ըստ հաճոյս յաւիտենա_
կան ճշմարտութեան։

Ը. ՚Ի բազումս ՚ի սոցանէ է՛ տգիտու_
թիւն, մանաւանդ յայնս՝ որոց աղօտ է
լոյս, և ուր ուրեմն գիտեն սիրել
զոք կատարեալ և հոգևոր սիրելու_
թեամբ։ Այլև բնաւոր ախորժմամբ, և
մարդկային բարեկամութեամբ կարի իմն
ձգին յայս ոք կամ յայն ոք․ և որպէս
բերին ՚ի ստորինս, նոյնպէս կարծեն
և զերկնաւորս։ Բայց անհամեմատ
միջոցաւ տարատրոհին, զորինչ ան_
կատարք խորհին, և զորինչ հոգեկիրք
վերին յայտնութեամբ խորհրդածեն։

Թ. Ապա զգոյշ լեր որդեակ, չխօսիլ
ընդվայրաքննութեամբ զայնպիսեաց՝ որ ՚ի
վեր են քան զքո գիտութիւն։ Այլ այսմ
ռաւել փոյթ կալ, և մի դիր․ զի
դէթ փոքրիկ յարքայութեան այ մար_
թասցիս գտանիլ։ Թէպէտ և դի_
տէր

տէր որք, թէ ո՛ քան զո՛ սրբագոյն էցէ, կամ մեծագոյն համարիցի յարքայութեն երկնից. զի՞նչ օգուտ էր նմա ճանաչութիւնս, թէ ո՛չ 'ի ճանաչմանէ աստի առաջի իմ խոնարհէր, և յաւաւելագոյն գովեստ անուան իմոյ խրախուսէր: Յոյժ մեծահաճոյ լինէ գործէ, որ զմեղաց իւրոց մեծութի՛, և զառաքինութեանց իւրոց փոքրութի՛ խորհի. և թէ քանի՛ հեռի է 'ի կատարելութէ սրբոց, քան զայն, որ զերիցութէ կամ զկրսերութենէ նոցա վիճէ: Լաւ է ջերմեռանդն աղօթիւք և արտասուօք զսուրբս աղաչել, և զպանծալի օգնութի՛ նոցա խոնարհամիտ հայցել. քան զգաղտնիս նոցա զննութեամբ քննել: Ը. Քաջ իսկ հաճեալ են նոքա. եթէ ուսցին մարդիկ զուսալ կալ. և զզրախօսութի իւրեանց կարճել: Ո՛չ պարծին նոքա յիւրեանց արդիւնս. իբր զի ոչինչ բարի ընծայեն անձանց, այլ զամ ինձ. զի զամ յանբաւ սիրոյ իմոյ նոց շնորհեցի: Այնչափ լի են սիրով ածութէ, և բազմադեղ խնդութէ, մինչև չպակասիլ ինչ նոցա՝ 'ի փառաց և յերանութէ: Ամ՛ սո՛ք որչափ բարձր են 'ի փառս՝ այնչափ խոնարհ են յիւքեանս. և ինձ առաւել մերձաւոր և

սի֊

շիրելի : Վա՛ այսօրիկ գրեալ է, թէ
արկանէին զպսակս իւրեանց առաջի
ա՛յ. և անկան 'ի վե՛ երեսաց իւրեանց
առաջի գառինն, և երկիրպագին կեն
դանւոյն յաւիտեանս յաւիտենից:

Թ. Բազումք խնդրեն, թէ ո՛վ մեծ
իցէ յարքայութե՛ն ա՛յ, որք ո՛չ գիտեն
թէ արժանասցի՛ն արդեօք ընդ փո_
քունս դասիլ: Մեծ է փոքր իսկ լի_
նելն յերկինս. ուր ամենեքին են մեծ,
զի ամենեքին որդիք ա՛յ կոչին՝ և են:
Կրտսերն եղիցի 'ի հազարս. և մեղա_
ւորն հարիւրամեայ մեռցի: Քանզի 'ի
խնդրել աշակերտաց, թէ ո՛վ մեծ ի_
ցէ յարքայութե՛ երկնից, այսպիսի լը_
ւան պատասխանի: Եթէ ո՛չ դարձ_
ջիք և եղիջիք իբրև զմանկունս, ո՛չ
մտանիցէք յարքայութի՛ն երկնից: Զի
որ խոնարհեցուցանէ զանձն իբրև ըզ
մանուկս զայս, նա է մեծ յարքայու_
թե՛ն երկնից:

Ժ. Վա՛յ է նմ՛. որք ը՛ մանկունս կա_
մաւ խոնարհիլ չառնուն յանձն. զի
խոնարհ դուռն արքայութե՛ երկնից ո՛չ
տացէ նմ՛ մուտ: Վա՛յ և մեծատանց.
որք ընկալան աստէն զմխիթարութիւ
իւրեանց: Զի 'ի մտանել աղքատաց
յարքայութի՛ն ա՛յ, նք արտաքոյ կացե՛լ
կա_

կականաւ լացցեն ։ Ուրախ լերուք խո նարհք , և ցնծացէք աղքատք , զի ձեր է արքայութիւն ա̃յ , սակայն եթէ ճշմարտութեամ գնայցէք ։

---

## ԳԼ. ԾԹ ։

Թէ զա̃մ յոյս մեր և ապաւինութիւն յա̃ծ միայն պարտ է հաստատել ։

Ա. Տ̃Ր, ո՞վ է իմ ապաւինութիւն յաս տի կեանս . կամ ո՞ր իցէ մխիթարութիւն իմ յա̃մ երևեալս ընդ արեգակամբ ։ Ո՞չ ապաքէն դու ա̃ծ իմ, որոյ ողոր մութեանդ ո՛չ գոյ թիւ ։ Ո՞ւր ինձ բարի ինչ եղև առանց քոյ . կամ ե՞րբ չար ինչ պատահեաց՝ 'ի լինել քո ընդ իս ։ Առաւել կամիմ լինիլ աղքատ վ̃ն քոյ . քան մեծատուն առանց քոյ ։ Ընտրեմ մանաւանդ ընդ քեզ յերկրի պանդխ տանալ, քան առանց քո զերկինս ժա ռանգել ։ Ուր դու ես, անդ են եր կինք . և անդ մահ և դժոխք , ուր ո՛չ ես դու ։ Դու ես իմ ցանկալի . վ̃ն այսորիկ հարկ է ինձ զհետ քո յող ւոց հանել, աղաղակել, և աղերս ար կանել ։ Եւ չիք ինձ վստահանալ յոք, որ ձեռնտու իցէ 'ի կարիս 'ի ժամու,

բայց 'ի քեզ միայն ած իմ: Դու ես
յոյս և ապաւէն իմ. դու մխիթարիչ
իմ, և մտերիմ յամե:

Է. Ամենեքին զիւրեանցն խնդրեն .
դու զփրկութի և զյառաջադիմութի իմ
միայն կամիս . և զամ ինձ 'ի բարի
փոխարկես : Թէպէտ և 'ի պէսպէս
փորձութիս և 'ի վիշտս արկանես, սա_
կայն զամ յօգուտ իմ կարգես, որ
բիւրօրինակ դիտես փորձել զքո սի_
րելիս . Յոր հանդէս ոչինչ նուազ ար
ժան է ինձ սիրել զքեզ և օրհնել, Ք
եթէ երկնային մխիթարութբ զիս լնուիր:

Ը. Արդ 'ի քեզ տր դնեմ զամ զյոյս
իմ և զապաւինութի, 'ի քեզ զամ նե_
ղութի և զվիշտս իմ հաստատեմ. զի
զորինչ արտաքոյ քո տեսանեմ, զամ
տկար, և յողդողդ գտանեմ: Զի
ոչինչ օգտեն ինձ բազում բարեկամք.
և ոչ օգնել ինչ զօրեն հզօր օգնա_
կանք. և ոչ տան պիտանի պատասխա
նի խոհական խորհրդականք. և ոչ
մխիթարեն իմաստնոց մատեանք. ոչ
ընտիր ընտիրք ինչք դիտեն զերծու_
ցանել. և ոչ տեղի անքոյթ և զուար
ճարար՝ պատսպարել. թէ ոչ դու ինքն
մօտ եկեսցես. օգնեսցես, զօրացուս_
ցես, մխիթարեսցես, ուսուսցես, և

պահեսցես:

Դ. Զի ամ որ ինչ խաղաղուն թուի սուիթ, և երջանկութն, առանց քո ոչինչ է. և ոչինչ երջանկուն ճշմարտութ 'ի ներքս անձ: Ապա կատար ամ բարեաց, և բարձրութն կենաց, և խորուն ճարտարուեց դու ես: Եւ 'ի քեզ քան յամ ինչ յուսալ, արխական ափոփումն է քոց ծառայից: Առքեզ են աչք եմ. 'ի քեզ յուսացեալ եմ, ած իմ, հայր ողորմութեց: Օրհնեա և սրբեա զհոգի իմ երկնաւոր օրհնութբ. զի եղիցի քեզ բնակարան սրբուն, և աթոռ յաւիտենական փառաց քոց. և ոչինչ 'ի տաճար փառաց քոց գտցի՝ յաչս ածպետուեդ անհաճոյ: Ըստ մեծի բարուն քում, և ըստ բազում գթութեց քոց հայեաց յիս, և լուր աղօթից ծառայի քոյ աղքատի, վտարելոյ յերկիր ստուերաց մահու: Պարսպեալ պահեա զանձն ծառայի քոյ 'ի բազմապատիկ վիշտս ապականացու կենցաղոյս, և ուղեկցելով շնորհի քոյ առաջնորդեա ինձ 'ի ճանապարհս խաղաղութն, 'ի դաւառ մշտնջենաւոր պայծառուն: Ամէն:

Կատարեցան խրատք որ 'ի վն ներքին մխիթարութե:



# ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ·

## Յաղագս խորհրդոյ հաղորդութեան։

### Ջերմեռանդն հրաւէր առ սբ հաղորդութիւն։
### Ձայն Քրի։

ԵԿԱՅՔ ԱՌԻՍ ԱՄԵՆԱյն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. ասէ Տր։ Հացն զոր ես տաց մարմին իմ է, զոր ես տաց վս կենաց Ծի։ Առէք կերայք, այս է մարմին իմ, որ վս ձեր բաշխի. զայս արարէք առ իմոյ յիշատակի։ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ, և ես ՚ի նմա։ Զբանս՝ զոր ես խօսեցայ ընդ ձեզ, հոգի են և կեանք։

# ԳԼՈՒԽ Խ· Ա:

Թէ զանի՞ յարգանօք պարտ է ընդունել զՔս: Ձայն աշակերտի:

Ա· Այս բանք են քո, Քս ճշմարտութի յաւիտենական. Թէպէտ և ոչ միահաղոյն ասացան, և ոչ ՚ի մի վայր գրեցան: Արդ՝ քանզի քո են, և ճըշմարիտ, սրտի մտօք՝ և հաւատովք ընդունիմ զայն: Քո են, և դու բարբառեցար. և իմ ևս են, զի առ փրկութի իմ ասացեր: Մտադիւր ընդունիմ զնս ՚ի բերանոյ քումմէ. զի անջինջ տպաւորեսցին ՚ի սիրտ իմ: Զարթուցանեն զիս գորովալիր այս բանք, որ լի են քաղցրութբ և սիրով. բայց զարհուրեցուցանեն զիս յանցանք իմ, և յընդունելութէ ահաւոր խորհրդոյս յետս ընկրկէ զիս անմաքուր խիղճ մտաց: Յորդորէ զիս քաղցրութի բանից քոց. այլ ծանրէ զիս բազմութէ ախտից իմոց:

Բ· Հրամայես ինձ՝ անվեհեր մատչել առ քեզ, եթէ կամիմ ունել ընդ քեզ մասն. և զանմահականն ճաշակել.

կել կերակուր, եթէ ցանկամ զյաւի-տենականն ընդունիլ զկեանս և ըզ-փառս: Եկա՛յք, ասես, առ իս ամ աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ: Ո՞վ քաղցր և փա-բելի բարբառոյս յունկն մեղաւորի. որով դու տէր, զաղքատն և զտնանկն հրաւիրես ՚ի հաղորդութեն ամենասուր մարմնոյ քոյ: Այլ ո՞վ եմ ես տէր, զի վստահացայց մատչիլ առ քեզ: Ահա երկինք և երկիր չեն քեզ բաւական. և դու ասես, եկայք առ իս ամենե-քեան:

Է. Զի՛նչ լիցէ գործականս այս զիջումն և գթալիր հրաւէր: Զիա՞րդ իշխե-ցեմ գալ, որ ոչինչ բարի գիտեմ ան-ձին իմոյ, առ ՚ի կարօղ լինելոյ վստա-հանալ: Զիա՞րդ մուծից զքեզ ՚ի տուն իմ, որ բազում անգամ բարկացուցի զքաղցրիկ երեսս քո: Պատկառին ՚ի քէն հրեշտակք և հրեշտակապետք. երկնչին սրբք և արդարք. և դու ա-սես. եկայք առ իս ամենեքեան: Եթէ ոչ քո էր ասացեալ, ո՞ հաւատայր լի-նել ճշմարիտ. և եթէ ո՛չ քոյ էր հրա-մայեալ, ո՞ ձեռնարկէր մատչիլ:

Ը. Ահա նոյ այր արդար ՚ի շինութեն տապանին հարիւր ամ աշխատ եղև,

զի

ղի ապրեացի ընդ սակաւուց ։ Եւ ես զիա՞րդ կարիցեմ 'ի մի ժամ պատրաստել զանձն՝ առ ընդունելոյ յարգանօք զաշխարհի արարչագործ ։ Մովսէս մեծ ծառայ քո, և մտերիմ, արար տապանակ յանփուտ փայտից ։ զոր և պատեաց ոսկւով սք̃վ, դնել 'ի նմա զտախտակս օրինաց ։ Եւ ես փուտ ստեղծուած իշխիցեմ զօրինադիրդ և զկենսատուդ այսպէս հեշտեաւ ընդունիլ։ Սողոմոն իմաստնագոյնն 'ի թգ̃ւրս իւրն՝ տաճար շինեաց մեծակառոյց զամս եօթն 'ի դովեստ անուան քոյ ։ Եւ ութ օր նաւակատիս կատարեաց ։ Հազար զոհս խաղաղականս մատոյց ։ Եւ զտապանակն ուխտի ձայնիւ փողոյ և հռչակաւ մեծահանդէս զետեղեցոյց 'ի պատրաստեալ յիւր տեղի ։ Եւ ես թշուառս և ապիկարս 'ի մարդկանէ զիա՞րդ մուծից ըզքեզ 'ի տուն իմ, որ հազիւ զկէս ժամու անցուցանել գիտեմ եռանդեամբ ։ Եւ երանի թէ զկէս իսկ առ անգամ մի արժանապէս ։

Է ։ Բա՛բէ, ո՞րչափ ինչ առնել քանացան նք̃ 'ի հաճոյանալ քեզ ։ Եւ ո՞րպէս խուն ինչ է, զոր եսն առնեմ ։ ո՛պ 'ի համառօտն փութամ, յորժամ 'ի հա-

զոր-

ղորդութե պատրաստիմ. հազիւ զմիսս
ամփոփեալ, հազիւ հազ յամ ցնդեա֊
նէ մաքրեալ : Եւ արդարեւ 'ի կենա֊
րար եկաւորութե ածութեդ չէր ար֊
ժան անարժան ինչ խորհրդոյ յի֊
գալ, և ոչ արարածոյ իմիք զիս ըղ֊
բաղել. զի ոչ զհրեշտակ, այլ զհրեշ֊
տակացն իր հանդերձիմ հիւրընկալել.
Է. Այն՝ զի մեծ խտիր է 'ի մէջ տա֊
պանակին ուխտի՝ և աւանդիցն որ 'ի
նմա, և 'ի մէջ ամենասուրբ մարմնոյ
քոյ, և անպատում զօրութեց նր. 'ի
մէջ օրինակման զոհից, որ նախանկար
էին հանդերձելոց. և 'ի մէջ Ճշմարիտ
մարմնոյ քոյ պատարագի, որ ամ նախ֊
նի զոհից է լրումն :
Ը. Իսկ արդ զի՞ է, զի ոչ յաւէտ բոր֊
բոքիմ առ քոյ արդոյ եկաւորութի.
զիա՞րդ ոչ մեծաջան պատրաստիմ առ
ընդունելութի քոյ սրբութեց. ուր այն
նախնի սր նահապետք և մարգարէք,
Եւս և թագաւորք և իշխանք՝ հան֊
դերձ ամ ժողովրդեամբ այսչափ իղձ
եռանդեան ցուցին առ պաշտօն ած֊
ային :
Թ. Կաքաւեաց առաքինասէր արքայ
դաւիթ առաջի տապանակին այ ամ
զօրութբ, յիշելով զերախտիսն՝ զոր
արար

արար ա՛ծ երբեմն առ հարս ։ Այսպ
ազգս ազգս նուաճագարանաց · յօրի_
նեաց սաղմոս , և սահմանեաց եր_
գել ուրախութե՛ · նուաճագէր և ինքն
առեալ քնարաւ , ազդմամբ շնորհաց
ս՛բ հոգւոյն ։ Ուսայց ժողովրդեանն
իւրի յա՛մ սրտէ գովել զա՛ծ , և միա_
ձայն բարբառով զօրհանապազ օրհ_
նել զնա և փառաւորել ։ Եթէ այս_
չափ եռանդն էր յայնժամ, և ա՛ծայ_
ին օրհնութե՛ յիշատակ առաջի տապա_
նակին վկայութե՛ , որչափ ևս արդ
պարտ է ինձ , և ա՛մ ժողովրդեանս
քրիստոնէից՝ ունել յարդ և եռանդն
յառաջակայութե՛ ս՛բ խորհրդոյս , և 'ի
ճաշակել զպատուականն մարմին ք՛սի ։
ԺԹ · Ընթանան բազումք 'ի տեղիս տե_
ղիս՝ յայց նշխարաց ս՛ց , և զքանչա_
նան 'ի լսել զվարս նց · նմանան ընդ
հոյակապ շինուածս տաճարաց նց , և
համբուրեն զս՛բ ոսկերս նց մեծաքաս
պատու , և ոսկեպատս ։ Եւ ահա
դու աստ առաջի իմ ես 'ի վր՛ սեղա_
նոյ , ա՛ծ իմ , ս՛բդ սրբոց , արարիչ
մարդկան , և ա՛ր հրեշտակաց ։ Յո_
լովակի յայսպիսի այցարարութիս է՛
հետաքրքրութի մարդկան , և նորութի
անտես իւրաց · և սակաւ պտուղ բա_
ղի

ղի ուղղութե՛ , մանաւանդ ուր թե-
թեւութի՛ խուռն ընթանան՝ առանց
ճշմարիտ ողջման : Այլ աստ 'ի խոր-
հրդեան սր՛ սեղանոյ գլխովին ներկայ
ես , ա՛ծ և մարդ յի՛ քս՛ . ուր և ա-
ռատ քաղի յաւիտենական փրկութե՛
պտուղ , քանզի անգամ արժանապէս
և եռանդեամբ ճաշակի : 'Ի սա ո՛չ
ձգէ թեթեւութի՛ ինչ , և ո՛չ հետաքըր-
քրութի՛ , կամ զգայականութի՛ . այլ հաս-
տատուն հաւատ , ջերմեռանդն յոյս ,
և անկեղծ սէր :

Ժ . Ո՜վ անտեսանելի արարիչդ Ծի
ա՛ծ , զիա՛րդ սքանչելի են գործք քո
առ մեզ . զիա՛րդ մարդասիրապէս առ
ընտրեալս քո գթասիրես , որոց զանձն
քո 'ի սր՛ խորհրդեանս առաջի դնես
'ի ճաշակել : Քանզի 'ի վեր է այս քան
զմ՛ միտս . և առանձինն ինձ զառա-
քինեաց զսիրտս ձգէ , և զսէր վառէ :
Զի քո ճշմարիտ հաւատացեալք , որք
զմ՛ կեանս իւրեանց յուղղութի՛ կար-
գեն , յայսմ արգոյ խորհրդոյ մեծ շը-
նորհ եռանդեան և սէր առաքինութե՛
յոլովակի յանձինս ը՛ունին .

ԺԱ . Ո՜վ սքանչելի և ծածկեալ շնոր-
հի խորհրդոյս , զոր գիտեն միայն քնի՛
հաւատացեալք . իսկ անհաւատք և

մեղ-

մեղաւորք ոչ ժամանեն զմի առնուլ
զչափ : Յայսմ խորհրդեան առեալ
լինի հոգևորական շնորհ, և վերստին
նորոգի յոգի առաքինութին կորուսել.
և դառնայ անդրէն գեղեցկութին՝ մե-
ղօք տգեղացեալ: Այնչափ է երբեմն
այս շնորհ, մինչև 'ի յորդուէ եռան-
դեան՝ ոչ միոք միայն, այլ և տկար
մարմինն զգայ առաւել ևս քաջալե-
րութին զգենուլ :

ժբ. Այլ աւաղ և եղուկ յոյժ մե-
րումս դառնութն և հեղգութն. զի ոչ
մեծափափաք տենչմամբ բերիմք յընդու-
նիլ զնա, յոր հաստատի ամ յոյս՝ որոց
ակնունին փրկուն, և արդիւնք նց :
Զի նա է սրբութն մեր և փրկութն.
նա է մխիթարութիւն յաստի կեանս
ծնգհորդելոց, և յաւերժական զմայ-
լումն սրբց: Այս յիրաւի է մորմոքիլ
յոյժ. զի բաղումք այդչափ անփոյթ
են զփրկական խորհրդոյս, որ զեր-
կինս ուրախ առնէ. և զՔս ամ պա-
հէ: Աւաղ կուրութն և խստասրտութն
մարդկան. զի զայսպիսի անսպառ մ
պարգև՝ ոչ ոք արժան է՝ մնաւե-
րէ. և 'ի հանապազորդ սովորութէ
'ի մոռացօնս իսկ արկանէ :

ժգ. Զի եթէ այս սբ խորհուրդ 'ի
ժիլ մի

միում միայն տեղւոջ. և 'ի միջէ միայ
նոյ քահանայէ կատարիւր յ՚նի, քա_
նի՛ փափաքմամբ այնմ տեղւոյ և այնմ
քահանայի ո՛յ անձկային մարդիկ. զի
զա՛ծային խորհրդոյն տեսցեն զկատա_
րումն: Բայց արդ բազում եղեն քա_
հանայք, և 'ի բ՛զմ տեղիս մատչի ք՛ս,
զի սիրու տարածութեամբ ս՛է հա_
ղորդումն ընդ տիեզերս, առաւել ևս
երևեսցի շնորհ և սէր ո՛յ առ մար_
դիկ: Գոհանամ զքէն բարերար փըր
կիչ, հովիւ յաւիտենական, որ զմեզ
զաղքատքս և զաքսորեալքս հաճեցար
պատուական մարմնով և արեամբ քո
կերակրել. և առ ընդունելուն խոր_
հրդոյս՝ ևս և բանիւ բերանոյ քոյ
հրաւիրեցեր՝ ասելով. եկա՛յք առիս
ա՛մ աշխատեալք և բեռնաւորք, և ես
հանգուցից զձեզ:

## Գլ. Բ.

Թէ մեծ բարութիւն և սէր Ա՟յ 'ի սմ խորհրդեան ցուցանի մարդկան։

Ձայն աշակերտի։

Ա. 'Ի բարութիւն քո Տ՟ր, և 'ի մեծ ողորմութիւն ապաւինեալ՝ մատչիմ տկարս առ կեցուցիչդ, քաղցեալս և պաս-քեալս առ աղբիւրդ կենաց· կարօտեալս առ Թագաւորդ երկնից, ծառայս առ Տ՟րդ, արարածս առ արարիչդ, և լքեալս առ մխիթարիչդ իմ գթած։ Այլ ուստի՞ է ինձ այս, զի եկեսցես առ իս։ Ո՞վ եմ ես, զի զանձն քո ինձ ընծայեսցես։ Զիա՞րդ իշխեսցէ մեղաւորն երեւիլ առաջի քո· և դու զիա՞րդ յանձն առնուցուս գալ առ մեղաւորն։ Դու ճանաչես զծառայ քո· և գիտես զի չունի ինչ բարի, թէ արասցես նմա զայդ շնորհ։ Արդ խոստովանիմ զիմ անարգութիւն, ճանաչեմ զքո բարութիւն· օրհնեմ զգթութիւն, և շնորհ ունիմ զքէն վ՟ս մեծի սիրոյդ։ Զի վ՟ս քոյ զայս առնես, և ոչ վ՟ս իմոյ արժանաւորութ՟ե· այլ զի բարութ՟

քո

քո ինձ առաւել ես յայտնեցի. սէր
քո և ես տպաւորեցի. և խոնար-
հութիւն քո կատարելագոյն գովեցի։
Արդ վս՟ զի հաճոյ է քեզ այդ. և
այսմ այսպէս հրամայեցեր լինել, հա-
ճոյ է և ինձ քո զիջումն ։ Եւ երանի՞
թէ անօրէնութիւն իմ ոչ զդէմ կալցի ։

Է. Ո՜վ քաղցր և բարերար փրկիչ,
քանի՞ պատիւ և գոհութիւն հնպ̃զորդ-
օրհնութե՟ քեզ վայելէ, վս՟ ընդունելու-
թեն սբ՟ մարմնոյ քո, զորոյ զյարգ-
ոչ ոք 'ի մարդկանէ կարօղ է պատ-
մել։ Այլ զի՞նչ խորհիցիմ յայսմ հա-
ղորդուէ, 'ի մատչիլ իմում առ տ̃րդ
իմ. զոր ըստ արժանեաց պատուել
չեմ բաւական, բայց եռանդեամբ ը̃-
ունիլ ըղձանամ։ Զի՞նչ խորհիցիմ որ
լաւ և օգուտ իցէ, բայց զանձն իմ
գլխովին խոնարհեցուցանել առաջի
քո, և զքո անբաւ բարութիդ բարձ-
րացուցանել 'ի վր՟ իմ։ Օրհնեմ զքեզ
ած իմ, և բարձր առնեմ յաւիտեան։
Արհամարհեմ զանձն իմ, և ներքոյ
արկանեմ քո, 'ի խորս անարգութեանս
իմոյ ։

Ը. Ահա դու սբ՟ ես սրբոց, և ես
աղտեղութիւն մեղաց։ Ահա խոնարհիս
առ իս, որ չեմ արժանի համբառնալ

զանձն իմ առ քեզ ։ Ահա գաս առ իս ։ և կամիս լինել ընդ իս, և հրաւիրես ’ի կոչունս քո ։ Տաս ինձ երկնաւոր կերակուր, և հաց հրեշտակաց ’ի ճաշակումն, ոչ զայլ՝ բայց զքեզ ինքն զհացդ կենդանի, որ յերկնից իջեր և կեանս տաս աշխարհի ։

Գ. Ահա, թէ ուստի՞ գայ սէրն, և ո՞րպիսի ’ի վեր երևի զիջումն ։ Քանի՞ գոհութիւն և փառաբանութիւն քեզ վայելչէ վասն ամի այսորիկ ։ Քանի՞ փրրկաւէտ և պիտանի եղև քո հանճար ’ի սահմանել զայս . քանի՞ քաղցր և զուարթարար են կոչունքս ’ի պարգևել քո զքեզ ’ի կերակուր ։ Ո՞վ սքանչելի են գործք քո տր, ո՞վ հզօր քո զօրութիւն, և անպատում քո ճշմարտութիւն ։ Զի ասացեր, և եղև ամ . և այս եղև, զի դու հրամայեցեր ։

Ե. Սքանչելի իմն է և արժանահաւատ. բայց միտք մարդկայնոց յաղթէ մտաց. զի դու տր իմ, ճշմարիտ ած և մարդ՝ ընդ դոյզն տեսակաւ հացի և գինւոյ ամբողջ կաս, և անծախապէս ճաշակիս ։ Դու տր ամի, որ ոչինչ իմիք կարօտիս, կամեցար ’ի ձեռն սր խորհրդոյս բնակել ’ի մեզ ։ Անարատ պահեա զսիրտ իմ և զմարմին. զի զուարթ

թա-

ճաղին և մաքուր խղճիւ միայն կա_
րողացայց ատեալ կատարել զքո խոր_
հուրդս, և ընդունիլ առ իմ մշտնջե_
նաւոր փրկութիւն. զոր 'ի պատիւ և
յանմոռաց յիշատակ քո օրհնադրեցեր
և սահմանեցեր:

Գ. Ուրախ լեր անձն իմ, և գոհա_
ցիր զա̃յ վ̃ն այսր ազնուական պար_
գևի, և մեծի սփոփանաց՝ որ թո_
ղաւ քեզ յայսմ արտասուաց վայրի:
Զի քանիցս անգամ զայս խորհուրդ
պաշտես, և զքոյն մարմին ճաշակես,
զփրկութիւն քո գործ գործես. և ընդ
արդեանց քոյն լինիս բաժանորդ: Զի
ակրն քոյն ոչ երբեք նուաղի, և քա_
ւութն ն̃ր ոչ սպառի երբեք: Վ̃ն այ_
սորիկ միշտ նորոգութբ̃ միայն յայս
պատրաստեսջիր զանձն. և զմեծ զայս
խորհուրդ փրկութե̃ մատուցութբ̃ կշռես
ջիր: Այնպէս մեծ և նոր և զուար_
ճալի քեզ թուեսցի՝ 'ի մատուցանել
քո կամ 'ի տեսանել զպ̃տրդ, որպէս
եթէ յայնմ աւուր ք̃ն իջեալ յարգանդ
կուսին մարդանայր, և կամ 'ի խաչի
բևեռեալ՝ վ̃ն փրկութե̃ քո չարչարիւր
և մեռանէր:

# Գ Լ․ Գ․

## Յաղագս Թէ օգտակար է յաճախ հաղորդիլ՝ Ձայն աշակերտի:

ա․ Ահա առ քեզ գամ Տր, զի բարի լիցի ինձ 'ի պարգևաց քոց, և ուրախ եղէց 'ի սբ կոչունս քո․ զոր պատրաստեցեր քաղցրութբ քով աղքատի իմ: Ահա 'ի քեզ է ամ, որում ըղձանալ մարթիմ: Դու կեանք իմ և փրկութի, յոյս և զօրութի, վայելչութի և փառք: Ուրախ արա այսօր զանձն ծառայի քոյ․ զի առ քեզ Տր Յս, համբարձի զանձն իմ: Փափաքիմ արդ եռանդեամբ և յարգանօք զքեզ ընդունիլ: Ցանկամ զքեզ 'ի տուն իմ տանիլ, զի ընդ զաքէի արժանացայց 'ի քէն օրհնիլ· և ընդ որդիս աբրահամու համարիլ: Անձն իմ փափաքէ մարմնոյ քում, և սիրտ իմ ցանկայ միանալ ընդ քեզ:

բ․ Տուր զքեզ ինձ, և շատ է․ զի բաց 'ի քէն ոչինչ մխիթարութի արժէ ինչ: Առանց քո լինել ոչ կարեմ․ և առանց այցելութե քոյ կեալ ոչ զօրեմ:

Վս

Վն̃ այսորիկ պիտոյ է ինձ ստէպ առ-
քեզ մատչել, եւ 'ի դեղ փրկութե̃ իմոյ
զքեզ ընդունիլ. գուցէ նքթեցիմ 'ի
ճ̃նհի, վրէպ գտե̃լ յերկնային կերակ-
րոյդ։ Զի այսպէս դու մարդասէր
փրկիչ, 'ի քարոզելդ ժողովրդեան, եւ
'ի բժշկել զպէսպէս ախտս նց̃, ասա-
ցեր երբեմն. ոչ կամիմ արձակել զնս̃
նօթիս 'ի տունս իւրեանց, գուցէ նք-
թիցին զճանապարհայն։ Ապա՝ արա՛
զայդ եւ արդ ընդ իս, որ վս̃ հաւա-
տացելոց մխիթարութե̃ զքեզ 'ի խոր-
հրդեանս մեզ աւանդեցեր։ Զի դու
ես քաղցր կերակուր հոգւոյ. եւ որ
արժանապէս զքեզ ճաշակէ, բաժա-
նորդ եւ ժառանգ լինի փառացն յա-
ւիտենականաց։ Ինձ՝ որ յոլովակի գը-
թեմս եւ մեղանչեմ, եւ վաղվաղ թըմ-
բիմ եւ նուաղիմ, հարկ է ստէպ աղօ-
թիւք եւ խոստովանութե̃ք, եւ սբ̃ մարմ-
նոյ քոյ հ̃ղորդելութ̃ նորոգիլ, սրբիլ,
եւ վառիլ. զի մի յերկար հրաժար-
մամբ՝ յետնեալ գտայց 'ի սբ̃ առաջա-
դրութէ։

Է. Զի դիւրամէտ է զգայութի մար-
դոյ 'ի չարն 'ի մանկութէ̃ իւրմէ. եւ
թէ ոչ օգնէ նմա դեղս ա̃ծային, ա-
րադ գլթէ յեւս չարագոյնս։ Ապա քե

ցէ 'ի չարէ ամ̃ հաղորդութենէ, և 'ի բարին զօրացուցանէ ։ Իսկ արդ եթէ այժմ, որ հաղորդիմս կամ պատարագեմ, բազում անգամ հեղգ եմ և գաղջ· զինչ լինէր, եթէ դեղ ոչ առնուի, և օգնականութեան մեծի ոչ լինէի 'ի խնդիր ։ Եւ թէպէտ օրըստօրէ ընդունիլ չեմ բաւական, և ոչ 'ի պատարագել քաջ պատրաստական · սակայն ջանացայց 'ի պատշաճ ժամանակի զնծայինս ընդունիլ խորհուրդ · և մեծի շնորհիս բաժանորդ զանձն ընծայել ։ Քանզի մեծ մխիթարութիւն է հաւատացելոյ հոգւոյ, ցորչափ տարադիր է 'ի քէն 'ի մահկանացու մարմնի, զի սակաւ յիշատակաւ ա̃յ իւրոյ զմիտելին իւր եռանդեամբ ընկալցի 'ի սիրտ ։

Դ · Ո՜վ սքանչելի զիջման գթութ̃ քո 'ի մեզ տ̃ր · զի որ արարիչդ ես և կենդանարար ամ̃ հոգւոց՝ յաղքատին ոգի եկաւորիլ յանձն առնուս, և բովանդակ ած̃ութ̃ քո և մարդկութ̃ զհիւծութ̃ նր̃ պարարես ։ Ո՜վ երջանիկ մըտաց և երանելի ոգւոյ, որ զքեզ ըզտ̃ր ած̃ իւր արժանաւորի եռանդեամբ ընդունիլ, և 'ի քում ընդունելութե̃ հոգևորական խնդութ̃ լի լինիլ ։ Ո՜րպիսի

պ̃էսն մեծ տր ընդունելի · որպէս սի_
րելի հիւրընկալէ · որպէս զուարթա_
րար ընկեր օթեւացուցանէ · որպէս հա
հատարիմ բարեկամ ժողովէ · որպէս
դեղեցիկ և աղնուական փեսայի դիրկս
արկանէ · որ սիրելին է քան զամ̄ սի_
րելիս և քան զամ̄ ցանկալիս ։ Լուսա_
ցեն յերեւաց քաղցր սիրելոյդ իմոյ
երկինք և երկիր, և ամ̄ զարդ նոցա -
զի որինչ է ՚ի նմ̄ գովելի և վայելուչ,
քո հաճոյն և առատաձեռնութ̄ են
ձիրք, և ոչ ՚ի մեծ վայելչութ̄ անուանս
քո ժամանեն, որոյ իմաստութ̄եդ ոչ
գոյ բաւ ։

---

## ԳԼ · Դ ։

Յաղագս ԲԷ բաղում բարեաց պարգեւին
այնց, որք ընդունեսցեն հաղորդեն ։
Զայն աղաչերգէ ։

ա · Տէ՛ր ամ̄ իմ, կանխեա առ ծառայ
քո օրհնութ̄ քաղցրութ̄ քո · զի ՚ի քո
հրաշափառ խորհուրդ արժանապէս և
եռանդեամբ արժանացայց մատչիլ ։
Զարթո՛ զսիրտ իմ ՚ի քեզ, և ՚ի թանձր
թմրութ̄է սթափեա զիս ։ Այց արա

ինձ 'ի փրկութե քում, 'ի ճաշակել հոգ-ւով զքաղցրութիւն քո, որ յայժմ խորհրդեան ամ̃ յաղքեր լիուլի ծածկեալ կայ։ Լուսաւորեա և զաչս իմ, հայել յայսպիսի ահաւոր խորհուրդ. և զօրացո զիս հաւատալ յայն աներկբայ հաւատով։ Զի քո գործ է, և ոչ մարդկային զօրութե. քո սր̃ սահմանադրութի է, և ոչ մարդկան գիւտ։ Քանզի չիք ոք իւրև բաւական այսմ ամի հասու լինելոյ և իմանալոյ, որ անցանէ զանցանէ և զհրեշտակական նրբութի։ Եւ զիարդ ես անարժան մեղաւոր, հող և մոխիր, այսպիսի անհաս խորհրդոյ կարող իցեմ խոյզ և խնդիր առնել, և խելամուտ լինել։

Է. Տր̃, միամիտ սրտիւ, հաստատուն հաւատով և քով հրամանաւ առ քեզ մատչիմ յուսով և պատկառանօք, և ճշմարտապ̃ հաւատամ, թէ կաս աստ 'ի խորհրդեանս ածութ̃ և մարդկութ̃։ Արդ քո կամք են, ինձ զքեզ ընդունել, և ընդ քեզ սիրով յօդել։ Վս̃յ զքո գթութեանդ աղաչեմ, և զայս առանձինն շնորհ ինձ պարգևել հայցեմ, զի զլումին 'ի քեզ հալեալ՝ սիրով զեղուցում, և յոտար ինչ մխիթարութե այլ մի մխիթարեմ։ զի այս դերապանծ իննկելի

խոր

խորհուրդ՝ փրկութիւն է հոգւոյ և մարմնոյ. դեղ ամ հոգևորական ախտից. որով մոլութիւնք իմ բուժին, կիրք սանձահարին, փորձութիւնք վանին կամ նուաղին. շնորհք առաւելագոյն հեղանին. առաքինութին սկսեալ՝ առնու աճումն. հաւատն հաստատի, յոյսն զօրանայ, և սէրն բորբոքմամբ արծարծանի :

Է. Քանզի բազում բարիս առատաձեռնեցեր, և արդ իսկ յոլովակի առատաձեռնես 'ի խորհրդեանն՝ քոց սի'րելեաց եռանդեամբ հաղորդելոց՝ ամ իմ, ընդունող հոգւոյ իմոյ, բուժիչ մարդկան ախտից, և տուող ներքին մխիթարութե : Զի բազումս հեղուս 'ի նոսա մխիթարութիւնս 'ի պէսպէս փորձութիւնս, և 'ի ստորէ վհատութե՝ կանգնես 'ի յոյս քո հովանաւորութե. և նորոգ շնորհիւ զնս զօրայուցանես, և լուսաւորես. մինչ զի որք յառաջ քան զհաղորդութին նեղեալ էին, և անհոգոյն, ապա ճաշակմամբ երկնային կերակրոյս և ըմպելւոյս՝ 'ի լաւ անդր փոխարկեալ գտանին զանձինս : Զոր վն այնորիկ յընտրեալս քո տնօրինես, զի ստուգութբ ծանիցեն, և յայտնի զգային առցեն, թէ քանի՞ տկարութբ զղծեալ էին, և որչափ բարութի և

շնորհ 'ի քէն ընդունիմ: Իբր զի յանձանց ցուրտ, խիստ, և անեռանդն են. այլ քև ջերմ, զուարթ, և եռանդնոտ արժանաւորին լինել: Զի ո՞վ է, որ առ աղբիւր քաղցրութեան խոնարհութեամբ մատուցեալ՝ ոչ սակաւ մի քաղցրութեան անտի առնուցու. կամ ո՞վ առ հրով մեծաւ կայցէ, և ոչ դոյզն ջերմութեան անտի ընդունիցի: Եւ դու աղբիւր ես մշտալիր զեղեալ. և հուր մշտավառ անշէջ:

Դ. Վասն այսորիկ եթէ չէ ինձ արժան հանել 'ի լրութենէ անտի աղբերն, և ցյագ ըմպել. սակայն մատուցից զիմ բերան յերկնայնոյ ծորան. զի գէթ շիթ մի առից անտի 'ի զովացումն ծարաւոյս, և մի՛ իսպառ պապակեցայց: Եւ թէ չև եմ ժամանող բոլորովին լինիլ երկնաւոր, և իբրև զսերովբէսն և զքերովբէսն հրեղէն, սակայն ջանացայց փոյթ ունիլ եռանդեան, և ըզմիտս իմ պատրաստել, զի գէթ խուն ինչ բոցոց յանձային հրակիզմանէ՝ խոնարհական ճաշակմամբ կենարար խորհրդոյս յանձն ընկալայց: Իսկ ըզթերին բարերար փրկիչ, դու ընդ իմ լցո՛ քաղցրութեամբ և ողորմութեամբ. որ զամենեսին առ քեզ հաճեցար կոչել, ա-

ան-

թելով։ Եկայք առ իս ամ՟ աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից ըզ ձեզ։

Ծ. Աշխատիմ ես քրտամբք երեսաց իմոց. և ցաւովք սրտի տանջիմ. մեղօք ծանրաբեռնեալ եմ, փորձութե՟ք վտանգիմ, և բիւ՟ չարաչար կրիւք պաշարեալ նեղիմ. և չիք ոք որ օգնէ. և ոչ այն՝ որ ապրեցուցանէ և կեցուցանէ, բայց միայն դու տր՟՝ ած՟ փրկիչ իմ. որում յանձն առնեմ զիս, և զա՟մ ինչ զիմ. զի զիս պահեսցես, և առաջնորդեալ հասուսցես 'ի կեանսն յաւիտենից։ Ընկալ զիս 'ի փառս և 'ի գովեստ անուա՟ն քո, որ զմարմին քո և զարիւն՝ կերակուր և ըմպելի ինձ պատրաստեցեր։ Տո՛ւր տր՟ ած՟ փրկիչ իմ, զի յանձխութ՟ քումդ խորհրդոյ՝ առաւելցի ախորժակ եռանդեան իմոյ։

## ԳԼ. Ե:

### Յաղագս յարգի խորհրդոյս, և քահանայական կարգի:

### Ձայն ուրբեյելոյն:

ա. Եթէ ունէիր զհրեշտակական մաքրութիւն, և զսրբոյն յովհաննու մկրտչի սրբութիւն, չէիր արժանի զայս խորհուրդ ընդունիլ. և ոչ յայն մերձենալ: Զի ոչ մարդկային արժանաւորութիւն է, քահանայագործել մարդոյ, և մերձենալ 'ի խորհուրդ Քրիստոսի. և առնուլ 'ի կերակուր զհաց հրեշտակաց: Մեծ է խորհուրդս, և մեծ է յարգ քահանայից, որոց տուեալ է, որ ինչ չէ տուեալ հրեշտակաց: Քանզի քահանայք միայն՝ օրինօք յեկեղեցւոջ ձեռնադրեալք՝ իշխանութիւն ունին պատարագելոյ, և զմարմին Քրիստոսի քահանայագործելոյ: Այր՝ Աստուծոյ պաշտօնեայ է քահանայ, որ զԱստուծոյ բանն 'ի կիր արկանէ՝ հրամանաւ և օրինադրութեամբ նորա: Բայց Աստուած է անդ գլխաւոր արարօղ, և աներևոյթ ներգործիչ. ընդ որոյ ձեռամբ է ամենայն զոր կամի. և

որում

որում հնազանդի ամ՟ զոր հրամայէ:

Ե՟. Ապա առաւել հաւատալ պարտ է քեզ՝ ա՟յ ամենակալի, յայսմ դերահրաշ խորհրդեան, քան քոյին զգայութեան, կամ արտաքին ինչ նշանի: Վ՟ այսորիկ ահիւ և պատկառանօք լիցի քեզ մատչիլ յայս գործ: Հայեաց յանձն քո, և տե՛ս, ո՞ր խորհուրդ քեզ աւանդեցաւ ձեռնադրութ՟ եպս՟ի: Ահա եղեր քհնյ, և օրհնեցար 'ի քահանայագործել. զգո՛յշ լեր արդ, զի հաւատարմութ՟ և եռանդեամբ յիւրում ժամանակի մատուսցես ա՟յ զպատարագ. և զանձն քո անարատ ընծայեցուսցես: Ո՛չ թեթևացուցեր զբեռն. այլ պնդագոյն ևս կապեցար կապանօք խրատու. և մեծ ևս կատարելուե սրբուե պարտ յանձն առեր: Պարտ է քահանայի ամ՟ առաքինութ՟ք լինել զարդարեալ, և բարի վարուց օրինակ ընծայել այլոց: Գնացք նր՟ լիցին մի՛ ը՟ ճանապարհս դռեհկաց, և սովորականաց. այլ ը՟ հրեշտակաց յերկինս, և ընդ արանց կատարելոց յերկրի:

Զ՟. Քահանային զգեցեալ զհանդերձ սրբուե՝ ք՟ի է տեղակալ. զի մի՛ իւր և մի՛ ամ ժողովրդեան խոնարհական

հայցմամբ զնծ աղաչեացէ : Ունի յառաջոյ և 'ի Թիկանց զորութեան խաչին նշան , 'ի յիշատակել հանապազ զքո չարչարանսն : Կրէ զնշան խաչի յառաջոյ . զի զգուշութ հայեացի 'ի շաւիղս քո , և փութոյ պնդութ ջանասցի երթալ զհետ : Խաչանիշ է և 'ի Թիկանց , զի ամ վշտաց որ գան յայլոց , մտադիւր վն այ համբերեացէ : Առաջի իւր կրէ զխաչ , զի զիւր մեղս ապաշխարեացէ . և զկնի իւր , զի և զայլոց մեղս ախտակցաբար ողբացէ . և 'ի մէտ առցէ , Թէ միջնորդ է 'ի մէջ այ և մեղաւորի . և մի հեղգասցի յաղօԹից և 'ի նուիրագործութէ , մինչև զշնորհս և զողորմութի ընդունիլ արժանասցի : Քահանայ յոր ժամ պտրգէ , զնծ փառաւորէ , ըզհրեշտակս ուրախ առնէ , զեկեղեցի շինէ , կենդանեաց օգնէ . ննջեցելոց հանգիստ շնորհէ , և զանձն իւր ամ բարեաց առնէ բաժանորդ :

## Գ. Լ. Զ.

Հարցումն 'ի վե̃ հրեշտակէ յառաջ քան զհաղորդութիւն:
Զայն աղաչեսցէ:

Ա̃. 'Ի յիշել իմում Տ̃ր զքո բարձրութիւն, և զիմ անարգութիւն, զարհուրիմ յոյժ, և խռովի անձն իմ: Զի թէ ոչ մատչիմ, 'ի կենաց փախչիմ. և թէ անարժան մատչիմ, զքեզ բարկացուցանեմ: Արդ զի՞նչ գործեցից, Տ̃ իմ, օգնական իմ, և մխիթար 'ի վիշտս:

Բ̃, Դու ուսո՛ ինձ ճ̃պհ ուղիղ. առա՛ առաջի կրթութեն ինչ համառօտ՝ պատշաճօղ սբ̃յ հաղորդութե̃ : Զի օգուտ է գիտել. ո՞պ եռանդեամբ և յարգանօք պարտ իցէ ինձ պատրաստել քեզ զսիրտ իմ, առ կենսաբեր ընդունելութ̃ն խորհրդոյ քո, ևս և 'ի նուիրագործութ̃ն մեծի և ածային պատարագի:

# ԳԼ. Է:

## Յաղագս զննութեան խղճի մտաց, և ուղղութեան առաջադրութեան:

Ձայն սիրեցելոյն:

Ա. 'Ի վեր քան զամ, պարտ է քա-հանայի այ մատչել 'ի քահանայագոր-ծել և յընդունել զայս խորհուրդ՝ բա-զում խոնարհութբ սրտի, և ողոքական յարգանօք· ընդ հաւատով, և բարե-պաշտ դիտմամբ փառացն այ: Զգու-շութբ քննեսջիր զխիղճ մտաց քոց, և ըստ կարի ճշմարիտ զղջմամբ և խոնարհ խոստովանութբ մաքրեալ սրբեսջիր. մինչև չունիլ կամ չգտանել 'ի քեզ ծանր ինչ, որ ատդտանիցէ զքեզ, և չհամարձակեցուսցէ 'ի մատչիլ: Սորբ ջասջիր յամ մեղաց քոց առհասարակ. և ըստ հնազօրդ յանցուածոց առաւել լիցի քո զեղջ և հեծութիւն: Եւ եթէ ժամանակն ներէ, խոստովանեալ լեր ա-ռաջի այ 'ի շտեմարանս սրտի զամ կրից քոց թշուառութիւն:

Բ. Հեծեծեա և ողբա, զի դեռ այդ-պէս մարմնաւոր ես, և ծայրն. այդ-

չափ

չափ անմեռ 'ի կիրս․ այդչափ լի խլըրտ-
մամբք ցանկութեց․ այդչափ անզգոյշ
'ի զգայութիս արտաքինս․ այդչափ մտո-
ալի ցնորիւք ստէպ պաշարեալ․ այդ-
չափ յօժարամիտ առ արտաքինս․ այդ-
չափ հեղգամիտ առ ներքինս․ այդ-
չափ թեթեւ 'ի ծաղր եւ 'ի ցոփութի̃․
այդչափ խիստ 'ի լալիւն եւ 'ի զղջումն․
այդչափ պատրաստական 'ի թուլութի̃․
եւ 'ի մարմնոյ դիւրութի̃․ այդչափ պը-
ղերգ 'ի ձգումն եւ յեռանդն․ այդչափ
ընդվայրաքննին 'ի լսել զնորալուրս, եւ
'ի դեղոյ աչարձակութիւն․ այդչափ մեղկ
ձեռնարկելոյ 'ի խոնարհականս եւ յա-
նարգս․ այդչափ ցանկացող աւելա-
ստացութե̃․ այդչափ ձիշդ 'ի տալ․ այդ-
չափ ուխտ 'ի պահել․ այդչափ ան-
խորհուրդ 'ի խօսս․ այդչափ անժոյժ
'ի լռել․ այդչափ անհեթեթ 'ի վարս․
այդչափ դժպատեհ 'ի գործս․ այդ-
չափ զեղխ 'ի կերակուրս․ այդչափ խուլ
առ բանն այ̃․ այդչափ արագ 'ի հան-
գիստ․ այդչափ յամր յաշխատութի̃ս․
այդչափ արթուն առ առասպելս․ այդ-
չափ քնէած առ սբ̃ հսկմունս․ այդ-
չափ փութացող 'ի կատարածն․ այդ-
չափ ապուշ 'ի մտադրել․ այդչափ
հեղգ 'ի կատարել զժամակարգութիս․

այդ-

այդչափ դաղձ 'ի պատարագել. այդչափ ցամաք 'ի հաղորդել. այդչափ շոյտ 'ի ցնդել զմիտս. այդչափ դանդաղ 'ի հաւաքել. այդչափ դիւրաշարժ 'ի բարկութիւն. այդչափ վաղվաղակ 'ի զզուել զայլս. այդչափ յօժարամիտ 'ի դատել. այդչափ սուպր 'ի յանդիմանել. այդչափ ուրախ 'ի յաջողութիւն. այդչափ տխուր 'ի վիշտս. այդչափ սակաւ քո՞մ բարիս առաջադրես, և սակաւ 'ի գործ դնես:

Է. Զայս ամ, և զայոցին նման քո ապականութիս, քո՞մ ցաւովք և տկարութե քո տաղտկանօք՝ խոստովանեալ և ողբացեալ, հաստատութբ առաջադրեմ յանձն ուղղել զվարս քո. և 'ի լաւանդը յառաջադէմ լինել: Այլ լուսի նուէրս համբ և անթերի կամօք մատո զանձն քո 'ի պատիւ անուան իմոյ՝ 'ի սեղանարտի քո հանապազորդ ողջակէզ. ըդմարմին քո և զհոգի իմն յանձն արարեալ հաւատարմութբ. ոչ զի ը արժանեաց արժանացիս մատչիլ 'ի մատուցանել ինյ զպատարագ, և զխորհուրդ մարմնոյ իմոյ ընդունիլ 'ի փըրկութիւն:

Ը. Զի չիք նուէր ընտրելագոյն, և վճար մեծագոյն 'ի քաւել զմեղս, քան

ԸԴ

զնուիրել զանձն Ա̃յ մաքրութբ̃ և ամ-
բողջութբ̃ ը̃ նուիրագործութե̃ մարմ-
նոյն քո̃ 'ի պատարագի և 'ի հաղոր-
դութե̃ : Եթէ արասցէ մարդ՝ որ ինչ
անկ է նմա, և ստուգութբ̃ ապաշխա-
րեսցէ, քանիցս անգամ վն̃ Թողութե̃
և շնորհաց առ իս մատչիցի, կենդա-
նի եմ ես, ասէ Տ̃ր, որ ոչ կամիմ զմ-
ահ՝ մեղաւորին, այլ դառնալ նորա,
և կեալ · զի զմեղս նր̃ ոչ ևս յիշե-
ցից · այլ ա̃մ Թողցի նմա :

---

## ԳԼ · Ը:

### Յաղագս նուիրման քո̃ 'ի խաչին, և յա-ղագս յանձնարարութե̃ անձին :

### Ձայն սիրեցելոյն :

Ա̃մ · Ո̃ր ես զանձն իմ, բաղկատարած 'ի խաչին և մերկամարմին, վն̃ մեղաց քոց Հօր Ա̃յ կամաւ մատուցի · մինչև չմնալոյ ինչ յիս, որ ոչ բովանդակ ընծայեցաւ 'ի պտ̃րագ Ա̃ծային հաշտութեան · Նոյնպէս և քեզ պարտ է զանձն քո ինձ մատուցանել կամաւ 'ի նուէր սր̃ և անարատ՝ զօրհանապազ 'ի պտ̃րգի, համայն զօրութբ̃ և ախոր-

ժա-

ժակօք քո՛ 'ի սրտէ ։ Զի՞նչ աւելի 'ի քէն
պահանջեմ , բայց զի փոյթ կալցիս
զքեզ ինձ բովանդակ յանձն առնել ։
Զի՞նչ և տացես ինձ բաց 'ի քէն , չէ՛
ինչ իմ . զի ո՛չ խնդրեմ զտուրս քո ,
այլ զքեզ ։

Ը. Ո՟պ չէր քեզ բաւական ունել զա՟մ
բաց յինէն . նոյնպէս և ո՛չ ինձ հա-
ճոյ է , զինչ և տացես , եթէ ո՛չ զանձն
ընծայեսցես ։ Մատո՛ զքեզ ինձ , և
տո՛ւր զքեզ բովանդակ վ՟ն ա՟յ , և ե-
ղիցի նուէրդ ընդունելի ։ Ահա ես բո-
վանդակ զիս մատուցի հօր վ՟ն քո .
ետու և բովանդակ զմարմին իմ և
զարիւն 'ի կերակուր . զի բովանդակ
քո եղէց . և դու իմ ։ Ապա եթէ 'ի
քեզ կայցես , և ո՛չ կամովին զքեզ
կամաց իմոց ընծայեսցես , ո՛չ լի է
նուէրդ , և ո՛չ անթերի լիցի 'ի մե-
րում միջի միաւորութ՟ի ։ Ապա քան
զա՟մ գործս քո յառաջեսցէ կամաւո-
րական նուիրումն անձին 'ի ձեռս ա՟յ ,
եթէ զազատութ՟ի ստանալ կամիս և
զշնորհս ։ Քանզի վ՟ն այնորիկ սակաւք
լուսաւորին , և ազատանան , զի զան-
ձինս բոլորովին ուրանալ ո՛չ գիտեն ։
Հաստատուն է իմ վճիռ ։ Եթէոք ո՛չ
հրաժարեսցէ յա՟մէ , ո՛չ կարէ իմ ա-

շակերտ լինիլ ։ Արդ եթէ ցանկաս դու իմ աշակերտ լինել, մատո՛ զանձն քո ինձ հանդերձ ամ̃ ախորժակօք քո ։

---

Գ. Լ. Թ ։

Թէ զմեզ՝ և զամ̃ ինչ մեր՝ պարտ է մեզ մատուցանել Այ̃, և վս̃ ամենեցուն առնել աղօթս ։

Ձայն աշակերտի ։

ա̃. Տր̃, ամ̃ ինչ քո է, որինչ յերկինս և որինչ յերկրի ։ Ցանկամ զանձն իմ քեզ կամաւոր պա̃րգ մատուցանել, և քոյ լինիլ իսպառ ։ Տր̃, սրբութ̃ սրտի մատուցանեմ զիս քեզ այսօր ՚ի մշտըն ջենաւոր ծառայ, ՚ի պաշտօն և ՚ի պա̃րգ հանապազորդ օրհնութե̃ ։ Ընկալ զիս ը̃ս սր̃ նուիրմանցս պատուական մարմնոյ քո, զոր քեզ այսօր առաջի հրեշտակաց յաներևոյթս յանդիման եղելոց մատուցանեմ․ զի լիցի վս̃ իմ, և վս̃ ամ̃ ժողովրդեան քո ՚ի փրկութիւն ։

բ̃. Տր̃, առաջի առնեմ քեզ զամ̃ մեղս և զյանցանս իմ, զոր գործեցի առաջի քո, և սր̃ց հրեշտակաց քոց, յօրէ յոր-

'յորմէ սկիզբն արարի մեղանչել՝ մինչ
և ցայսօր, 'ի վր̃ հաշտարար սեղանոյ
քո. զի առհասարակ զմ̃մ այրեսցես
և կիզուցուս հրով սիրոյ քոյ, և ջըն-
ջեսցես զմ̃մ բիծս մեղաց իմոց. և
զխիղճ մտաց իմոց յմ̃մ յանցուածոց
մաքրեսցես. և դարձուսցես յիս ըզ-
շնորհ քո, զոր մեղօք կորուսի, 'ի նե-
րել ինձ լիով զմ̃մ. և յընդունել զիս
մարդասիրապէս 'ի համբոյր հաշտութ̃
ե̃. Զի՞նչ կարող իցեմ առնել վս̃ մե-
ղաց իմոց, բայց խոնարհութբ̃ խոս-
տովանիլ և ողբալ. և զքո ներողու-
թիւն անդադար աղաչել: Պաղատիմ
առ քեզ, լուր ինձ գթութբ̃, 'ի կալ
իմում առաջի քո, ա̃ծ իմ: Ամ̃ մեղք
իմ՝ չար թուին ինձ յոյժ, և այլ ո՛չ
երբեք կամիմ գործել. այլ զղջացեալ
եմ 'ի նոցանէ. և զղջացայց, ցորչափ
իցեմ կենդանի. պատրաստ եմ ապաշ-
խարել, և ըստ կարի վճարել: Թո՛ղ
ինձ ա̃ր, թո՛ղ ինձ զմեղս իմ. վասն
անուանդ քում սր̃յ կեցո՛ զհոգի իմ,
զոր պատուական արեամբ քո գնե-
ցեր: Ահա յանձն առնեմ զիս ողոր-
մութե̃ քում. և 'ի ձեռս քո աւանդեմ
զիս: Արա՛ ընդ իս ը̃ բարութե̃ քում,
և մի̃ ը̃ չարութե̃ և անօրէնութե̃ իմում:

Դ. Մատուցանեմ քեզ և զիմ բարիս իմ, թէպէտ և յոյժ սակաւ և ան-կատարս. զի ուղղեսցես զնն, և սըր-բեսցես. և 'ի հաճոյս քեզ ընկալցիս. և միշտ 'ի լաւ անդր յառաջեցուսցես. և զիս զհեղգս և զանպիտանս 'ի գո-ծելն և յերանաւէտ կատարած ժա-մանեցուսցես ։

Ե. Մատուցանեմ քեզ և զիմ բա-րեպաշտ իղձս առաքինեաց, զկարիս ծնողաց, բարեկամաց, եղբարց, քերց, և իմ սիրելեաց իմոց. և այնց՝ որք վն սիրոյ քոյ՝ ինձ և այլոց բարի ա-րարին. և որք աղօթս և պատարագս վն իւրեանց, և իւրեանցայնոց մա-տուցանել յինէն խնդրեցին. եթէ դեռ 'ի մարմնի կենդանի իցեն, և եթէ յնէ փոխեալ, զի ամենեքին զօգնու-թն շնորհաց քոց ընկալցին, և զնր-պաստ մխիթարուէ. զպահպանութն 'ի վտանգից, և զազատուն 'ի պատ-ժոց. զի զերծեալք յամ չարեաց, շնորհս քեզ մատուսցեն խնդուք ։

Զ. Մատուցանեմ քեզ և զաղաչանս, և զհաշտութեան նուէրս առանձինն վասն այնոցիկ, որք խիք յանցեան յիս, և տրտմեցուցին, կամ անար-գեցին. կամ վնաս ինչ և նեղութիւն

յիս հասուցին. այլ և վասն ամենե-ցուն, զորս ես ինքն երբեմն տրտմե-ցուցի, խռովեցուցի, դառնացուցի և գայթակղեցուցի, բանիւ կամ գոր-ծով, գիտութ կամ անգիտութբ. զի ամենեցուն մեզ առհասարակ թողցես ըզ-մեր մեղս և զառ միմեանս գայթակ-ղութիւն: Բարձ տր ՚ի սրտից մերոց զամ կասկած, զցասումն, զբարկութիւն, և զհակառակութիւն. և զամ որ ինչ վնա-սակար է սիրոյ, և նուազէ զեղբայր-սիրութիւն: Ողորմեա տր, ողորմեա խընդ-րողացս զքո ողորմութիւն. տուր շնորհ կարօտելոցս, և արժանացո զմեզ վայ-ելել ՚ի շնորհս քո, և ժամանել ՚ի կեանսն յաւիտենից, ամէն:

---

## Գ Լ. Ժ:

Յաղագս որ է ՚ի սէր հաղորդութեան չէ պարտ ՚ի բաց կալ դիւրաւ:

Ձայն սիրեցելոյն:

ա. Պարտ է քեզ ստէպ դիմել յաղ-բիւր շնորհաց և ածային ողորմութեան, յաղբիւր բարութեան, և ամ մաքրութեան. զի ՚ի կրից քոց և յախտից բուժես-ցիս.

ցիս. և ը՟դէմ ա՟մ փորձութե՟ց և պատրանաց բանսարկուին զօրագոյն և հզօրագոյն գտցիս ։ Գիտելով Թշնամւոյն, Թէ մեծ պտուղ և դեղ բժշկուե կայ 'ի սբ՟ հաղորդութե՟, ա՟մ իրօք և պատճառանօք ջանայ զհաւատացեալս և զառաքինիս ը՟ կարի յետս ընկրկել և խափանել անտի ։

ը՟. Քանզի են ոմանք, որք 'ի պատրաստել զանձինս առ սբ՟ հաղորդուե՟, չար ևս զգան յանձինս զսատանայի ներգործութիւնս ։ Խոքնեն այսն չար, (որ՟ գրի 'ի գիրս յոբայ,) գայ խառնի ը՟ որդիսն ա՟յ. զի չարութե՟ իւրով որպէս սովորութի է նր՟, խռովեցուսցէ զնս՟, կամ կարի իմն երկեցուսցէ, և 'ի տարակոյս արկանիցէ. որ՟ զի զախորժակ նր՟ նուաղեսցէ, կամ զհաւատս նոցա պատերազմաւ կարճեսցէ. զի Թերևս խոպառ 'ի հաղորդութե՟ 'ի բաց կացցեն, կամ գաղջութե՟ յայն մատչիցին, Այլ ոչինչ է պիտոյ հոգալ վա՟ խռովամանկութե՟ց նր՟, և ցնորից. որչափ և զազրոտի իցեն, և գարշելի ։ Այլ զա՟մ ցնորս նր՟ պարտ է շրջել 'ի նորին գլուխ ։ Արհամարհել պարտ է զեղկելին, և ծիծաղել զնովաւ. և ոչ վա՟ յարձակմանց նր՟ և խռովութե՟ցն յա-

րուցելոց՝ 'ի բաց կալ 'ի ս՟րբ. հաղոր-
դութենէ :

Դ · Խափանէ յոլովակի և կարի խիղճն հոգ. յորդեռանդն լինելոյ, և վարանք խո՟ստովնելոյ · Այլ դու արա ը՟ստ խրատու իմաստնոց · և 'ի բաց թօթափեա զվարանս և զխղճահարութն · զի խափանարար է շնորհին ա՟յ, և եղծիչ եռանդեան մտաց : Վ՟ս դոյզն ամբոխման կամ ծանրութե մի թողուր զհաղորդութին ս՟րբ · այլ փութա խոստովանիլ · և ամենեցուն առ. քեզ յանցուցելոց մտադիւր ներումն շնորհեա · Ապա թէ քոյ յանցուցեալ իցէ առ. ոք, խոնարհութբ թողութիւն խնդրեա · և ա՟ծ մտադիւր ներեսցէ քեզ :

Ե · Զի՞նչ օգուտ է յերկար յամեցուցանել զխոստովանութին, կամ յապաղել զս՟րբ հաղորդութին : Մաքրեա ըզքեզ փութանակի · թուք վաղվաղակի արտաքս զթոյնն · փութա առնուլ դեղ բժշկութեան, և առողջագոյն լիցիս՝ քան եթէ յապաղէիր յերկար : Եթէ այսօր վ՟ս այս ինչ իրաց թողուս, դուցէ վաղիւ մեծ ևս ինչ իրք դիպեսցին : Եւ այսպէս հնար է քեզ յերկար 'ի հաղորդութենէ 'ի բաց կալ · և առաւել ևս անընդունակ լինել : Որչափ

վա-

վաղագոյն հնար է՝ յայժմու ծանրութե
և հեղգութենէ սթափեալ ․ զի ոչինչ
օգուտ է ընդերկար 'ի վարանս լինել ․
և 'ի ծուլս տատանիլ ․ և մն̃ օրըստօրէ
խափանածոյ յանձայնոց 'ի բաց հրա_
ժարիլ ։ Նա՝ վնաս մեծ է , ընդերկար
'ի հաղորդութենէ 'ի բաց կալ ․ քանզի և
ծանր թմրութի գիտէ ածել 'ի մզ ։ Ո՞վ
աղէտից ․ զի են գաղջք և ցուրտք , որք
մոտաքիւր յապաղեն զխոստովանութիւն ։
և զհաղորդութիւն որ մն̃ այնր յամե_
ցուցանել կամին ․ զի մի զգուշագոյն
պահպանութե անձանց միտ դնել պար
տաւորեսցին ։

Է ․ Բարէ ․ ո՞րպ սակաւ է որ սէր , և
ո՞րպ տկար եռանդն ․ որք զոր հաղոր_
դութ այդպէս հարևանցիկ առնեն ։
Քանի՞ երջանիկ է նա , և ընծահաճոյ ․
որ այնպէս կեայ , և այնպէս մաքուր
պահէ զիւր խիղճ մտաց ․ մինչև յամ
օր հաղորդելոյ պատրաստ էր և յօ_
ժարամիտ , եթէ օրէն էր նմա , և ե_
թէ [illegible] հնար էր առնել ։
Եթէ որ երբեմն հրաժարի խոնար_
հութե աղօթաւ , և 'ի սակս օրինաւոր
ինչ խափանածոյ , գովելի է նր յարգ ․
բայց եթէ թմրութե 'ի ներքս սպրդեա_
ցի , այնպիսւոյն սթափիլ պարտ է , և

առնել՝ որինչ հնար է յիւրն կողմանէ. և որ զօրավիգն լիցի ըղձման նր վս բարեյօժարութն, յոր առաւելապէս հայի:

Զ. Իսկ թէ օրինօք խափանի, պինդ կալցի յանձն զբարեյօժարութին, և զբարեպաշտ կամս հաղորդելոյ. և այնպէս ոչ վրիպեսցի 'ի պտղոյ սր խորհրդոյն: Զի մարթ է ամի՝ որ ջերմեռանդն իցէ, յամ օր և յամ ժամ 'ի հոգեւորական հաղորդութիւն քսի անարգել մատչել յօգուտ: Բայց և պարտ է նմա յաւուրս ինչ և 'ի սահմանաւոր ժամանակս զմարմին փրկչի իւրոյ ըղձակաթ յարդանօք 'ի սր խորհրդեանն ճաշակել, և առաւել զօրութն և փառացն նր փոյթ ունել, քան զիւր մխիթարութն խնդրել: Քանզի խորհրդաբար հաղորդի և յաներևոյթս կերակրի, քանիցս անգամ ոք զմարդեղութն քսի զխորհուրդ և զչարչարանս նր սրտի մտօք յիշատակէ, և 'ի սէր նր բորբոքի:

Է. Որ ոչն պատրաստի, բայց եթէ 'ի դալ տօնի, կամ 'ի առնուլ սովորութն, այնպիսին յոլովակի անպատրաստ գտանի: Երանի այնմ, որ մատուցանէ ինն զանձն յողջակէզ, քա-

նիցս

նիցս անգամ պատճառէ, կամ հաղորդի : 'Ի պատարագելդ մի՛ լիցիս կարի երկար, կամ արագ . այլ զհասարակաց ընդ որս գտանիս՝ պահեա զբարւոք սովորութիւն : Մի՛ լիցի քեզ բերել յայլս ձանձրութիւն, և տաղտկութիւն . այլ զհասարակաց կա՛լ զշաւիղ՝ ըստ Նախնեացն օրինադրութեան . և առաւել այլոց օգտի խնամ կալջիր, քան քում եռանդեան և ախորժակի :

---

## ԳԼ. ԺԱ.

### Թէ մարմինն Քրիստոսի, և սուրբ գիրք յոյժ են հարկաւոր անձին հաւատացելոյ :

### Ձայն աշակերտի :

ա : Ո՛վ քաղցր Տէր, որչափ մեծ է քաղցրութիւն ջերմեռանդն ոգւոյ ընդ քեզ խրախճանալոյ 'ի քում խրախճանսի . ուր ոչ դնի նմ առաջի այլ կերակուր 'ի ճաշակել, բայց միայն դու սիրելիդ իւր, քան զամ ցանկութիւն սրտի նորա ցանկալի : Քաղցր լինէր և ինձ 'ի սիրոյ սրտիս հեղուլ առաջի քո արտասուս . և ընդ մագդաղենացւոյն զքո զոտս արտասուօք ողողանել : Այլ ո՞ւր իցէ

այս

այս եռանդն. ուր մի արտասուաց յոր
դառատ հեղումն: Այո՛ առաջի քոյ.
և ընդ քոյ հրեշտակաց՝ արժան էր
արդէ իմոյ գլխովին վառել, և 'ի խըն
դութէ յարտասուս լուծանիլ: Զի 'ի
մի խորհրդեանս Ճշմարտապէս ունիմ
զքեզ առաջի. Թէպէտ և օտար կեր_
պարանօք ծածկեալ:

Ի. Քանզի 'ի քո յածային պայծառութե
ակնարկել աչք իմ ոչ հանդուրժէին.
և ոչ աշխարհ ամ՝ փայլման փառաց
մեծ վայելչութե քո հանդարտէր: Ա_
պա այսուհետև յիմ տկարութե զիջեր. զի
զքեզ ընդ խորհրդեամբ ծածկեցեր:
Ճշմարտապէս առաջի ունիմ, և եր_
կիրպագանեմ, որում երկրպագեն հրեշ
տակք 'ի յերկինս: Այլ ես դեռ հա_
ւատամք , և նորա դէմյանդիմանն , և
անպատրուակ: Պարտ է ինձ շատա_
նալ լուսով Ճշմարիտ հաւատոյ , և
յայնմ կենալ. մինչև ծագեսցի տիւն
մշտնջենաւոր պայծառութե , և խա_
նարհեսցին ստուերք նմանութեց: Այլ
յորժամ եկեսցէ կատարելութն , լուծա_
ցին պէտք խորհրդոց. զի երանելագոյն
յերկնային փառս ոչ պիտին դեղք
խորհրդականք: Զի խնդան անվախ_
ճան առաջի քյ , դէմ յանդիման տեսել_

զլու

զփառս նր. և 'ի պայծառութէ 'ի պայ_
ծառութի խորոցն ամծութեան փոխա_
կերպեալք՝ մաշակեն զմաշակ բանին
ամյ մարմին եղելոյ, ոտ եղեն 'ի սկըզ_
բանէ, և մնայ յաւիտեան :

Դ. 'Ի յիշատակել իմաւմ զքաղցրալիքս,
տաղտկութի է ինձ յոյժ՝ ես և որպի_
սի և լցէ հոգևորական սփոփութն :
Ձի ցորչափ զմր իմ յայտնապէս յիւր
փառսն ոչ տեսանեմ, ոչինչ համարիմ
զամ զոր յծի տեսանեմ և լսեմ: Վկայ
ես ինձ դուինքն մր, զի ոչինչ կա_
րող է զիս մխիթարել, և ոչ ստեղծ_
ուած ինչ հանգուցանել, բայց 'ի
քէն մր. յորում ցանկամ վայելել յա_
ւիտեան : Այլ չէ ք այսմ հնար, ցոր_
չափ եմ 'ի կենցաղումս : Վն այսորիկ
պարտ է ինձ ձեռնարկել 'ի մեծ համ_
բերութի, և զանձն իմ ամ ցանկութբ
քեզ հնազանդել : Քանզի և սբք քո
մր, որք արդ ընդ քեզ ցնծան յերկ_
նից արքայութե, մինչդեռ կենդանի
էին, հաւատով և համբերութբ մե_
ծաւ դալստեան փառաց քոց սպա_
սէին : Զորինչ նք հաւատացին, հա_
ւատամ և ես. յորինչ նք յուսացան,
յուսամ և ես. յոր նք հասին, շնորհօք
քո ակնունիմ հասանիլ և ես : Առ
այժմ

այժմ զնայից հաւատովս, քաջալե-
րեալ օրինակօք սրբոց։ Կալայց և զսբ
գիրս ինձ 'ի սփոփանս և 'ի հայելի
վարուց, և 'ի վր ամն զսբ մարմին քո
'ի դեղ բժշկութե և յամուր ապաւինի։
Է. Զի երկու ինչ ինձ յոյժ կարեւոր
տեսանեմ յաստի կեանս. առանց որոց
անտանելի լինէին ինձ այս թշուառ
կեանք։ 'Ի բանտի մարմնոյս արգելեա
կան՝ երկուց խոստովանիմ ունել պէ-
տոյս, կերակրոյ և լուսոյ։ Արդ ե-
տուր ինձ տկարիս զսր մարմին քո,
'ի կազդուրութին մտաց և մարմնոյ. և
եդեր ճրագ ոտից իմոց զբան քո։ Ա-
ռանց երկոցուն սոցա անհնար է ինձ
բարւոք կեալ. զի բանն քո լոյս է
հոգւոյ իմոյ. և խորհուրդ քո՝ հաց
կենաց։ Մարթ է զոսսա կոչել և եր-
կուս սեղանս աստի և անտի եդեալս
'ի գանձատան սբ եկեղեցւոյ։ Մին է
սեղան սբ բեմին, որ ունի զհացն սըր-
բութե, զմարմին քո պատուական։
Երկրորդ է սեղան ածային օրինաց, յո
րում է վէմն սբ՝ ուսուցիչ ուղիղ
հաւատոյ, որ անստերիւր առաջնոր-
դէ 'ի ներքին կողմն վարագուրին, ուր
են սրբութիւնք սրբոց։ Գոհանամ զքէն տր
յն, լոյս անվախճան լուսոյ, վասն

ամ̃յ սեղանոյ վէպութ̃ե, զոր 'ի ձեռն
ծառայից քոց մարգարէից և առա֊
քելոց և վարդապետաց մեզ մատա֊
կարարեցեր։

Ե. Գոհանամ զքէն արարիչ և փրկիչ
մ̃դկան, որ 'ի ցուցանել զմ̃ Ծի զսէր
քո, ընտրիր մեծ պատրաստեցեր,
յորում ոչ զդառն օրհնակին, այլ
զամենաայ̃ քո մարմին և արիւն ա֊
ռաջի եդեր 'ի կերակուր, զուարճա֊
ցուցեալ զմ̃ հաւատացեալս 'ի սբ̃
հոչունդ, և արբուցեալ նդ̃ բաժակ
փրկութ̃ե, յորում են մմ̃ փափկութ̃ք
դրախտին. և ուր է մեզ սեղանաւո֊
րին սբ̃ հրեշտակք, բայց առաւելա֊
գոյն քաղցրութ̃։

Զ. Ո՜վ, ո՛րչ մեծ և արդոյ է պաշտօն
քահանայից. որոց շնորհեցաւ զօր̃ն
փառաց բանիւք սրբութ̃ե քահանայա֊
գործել, շրթամբք օրհնաբանել, ձե֊
ռօք շօշափել, բերանով ճաշակել, և
ղնոյն այլոց մատակարարել։ Քանի՛
ջինջ լինելոց են նց̃ ձեռք, քանի՛ մա֊
քուր բերանն, քանի՛ սբ̃ մարմինն,
քանի՛ անարատ սիրտն, յոր ստէպ
մտանէ մաքրութ̃են արարիչ։ 'Ի բերա֊
նոյ քահանային մի՛ լուիցի ինչ բան,
բայց որ սբ̃ իցէ, և վայելչական, և

պի֊

պիտանի․ զի ընդ անուամբ զքնին ճա-
շակել խորհուրդ։

Է․ Այս նո ամբիծք և պարկեշտք․ զի ՚ի մարմին քնի հայրն։ Զնաք նո մաքուրք ամբարձեալք յերկինս․ զի զարարիչն երկնի և երկրի շօշափեն։ Առ քահանայս առանձինն ասի յօրէնս․ եղերուք սրբք, զի սրբ եմ ես տր ած ձեր։

Ը․ Օգնեա մեզ շնորհօք քո, ամենակալ տր․ զի որք զպաշտօն քահանայական յանձն առաք, արժանապէս և եռանդեամբ քեզ ծառայեսցուք, ամ մաքրութբ և բարիոք խղճիւ։ Եւ թէ ոչ ժամանեմք դնալ ամբծութբ վարուց, որ արժանն է, գէթ շնորհեա մեզ արժանապէս ողբալ զչարիսն զոր գործեցաք։ Զի հոգւով խոնարհութեան և բարեյօժար առաջադրութբ յայսմհետէ ջերմադոյնս քեզ ծառայեսցուք։

## ԳԼ. ԺԲ.

Թէ՛ որ հաղորդելոյն է, բազում զգօ-նութ̄ պատրաստել ունի զանձն առ ընդունելութ̄ ք̄ի :

Ձայն սիրեցելոյն :

ա. Սիրօղ եմ ես մաքրութեան, և տուօղ ամ̄ սրբութե̄ : Սիրտ մ̄ խնդրեմ. և անդ է իմ տեղի հանգստեան : Պատրաստեա ինձ վերնատուն մեծ զարդարեալ. և առ քեզ արարից զպատիկ աշակերտօքս հանդերձ : Եթէ կամիս, զի առ քեզ եկից, և օթեվանս առ քեզ արարից, 'ի բաց սրբեա զհին խմորն, և մաքրեա զարտի քո բնակարան : 'Ի բաց արա զամ̄ զկենցաղականս, և զամ̄ ախտից աղմուկ. Նիստ որպէս ճնճղուկ միայն 'ի տանիս, և խորհեա զյանցուածս քո 'ի դառնութեան անձին քոյ : Քանզի ամ̄ որ սիրէ, սիրողի իւրում սիրեցելում ազնիւ և դեղեցիկ յարդարէ տեղի. զի այսուիկ ճանաչի սէր ընդունողին զսիրելին :

բ. Բայց զայն գիտասջիր, թէ անհնար է քեզ յանկ հանել զայս պատ-

բաստութիւն արդեամբք Ճգանց քոց ։ Թէպէտ և ամ մի ողջոյն զանձն պատրաստեցես, և յայլ ինչ ոչ զբաղեսցիս ։ Այլ միայն յիմմէ գթուէ և 'ի շնորհաց Թողացուցանի քեզ մատչիլ յիմ սեղան. զորօրինակ եթէ մուրող ոք կոչիւր 'ի Ճաշ մեծատան , և նա ոչինչ ունէր 'ի հատուցումն երախտեաց նր̄ , բայց զխոնարհիլն և ըզշնորհակալել ։ Արա՛ զո̄ կարես, և դիր ջան, մի 'ի սովորութէ, մի առ հարկի, այլ ահիւ և պատկառանօք և ըղձմամբ՝ ընդունիլ զմարմին սիրեցելոյ տե̄ ա̄յ քոյ , որ յանձն առնու գալ առ քեզ ։ Ես եմ որ կոչեցի, և հրամայեցի այսմ այսպէս լինել . և ես լցուցից զքո Թերին. եկ, և ընկալ զիս ։

՟Դ . Եթէ տամ շնորհ եռանդեան՝ գոհացիր զա̄յ բարեմնէ . ոչ զի արժանի էիր . այլ զի գթացայ 'ի քեզ ։ Թէ չունիս եռանդն , այլ ցամաքեալ կաս , կանխեա յաղօթս, հառաչեա, և բաղխեա, և մի դադարեր, մինչև արժանասցիս փշրանք մի կամ շիթ մի կենարար շնորհաց ը̄ունիլ ։ Դու ինձ կարօտ ես, և ոչ ես քեզ. ոչ դու գաս սրբել զիս , այլ ես գամ սրբել, և բժշկել զքեզ ։ Դու գաս . զի յինէն սր-

արբեսցիս, և ընդ իս յօդեսցիս · զի նոր շնորհս ընկալցիս, և նորոգ յուղղութիւն վարուց բորբոքեսցիս : Մի՛ զանց առներ զշնորհիւն, այլ պատրաստեա՛ ամ փութով զսիրտ քո, և

մո՛յծ առ քեզ զսիրելիդ քո :

Ժ · Բայց ոչ միայն պիտոյ է քեզ պատրաստել զանձն յեռանդն՝ յառաջ քան զհաղորդումն, այլ խնամովք կալ մնալ յայնմ և յետ ընդունելութէ սբ̄ խորհրդոյն : Եւ ոչ փոքր պահպանութիւն պահանջի զկնի, քան զջերմեռանդն պատրաստութիւն՝ որ յառաջն : Քանզի բարիոք պահպանութիւն զհետ եկեալ՝ քաջ պատրաստութիւն է մեծ ևս շնորհաց հասանելոյ : Իբր զի յայնմանէ լինի որ յոյժ անպատրաստ, յորժամ անդէն վաղվաղակի կարի իմն զբաղի յարտաքին ախորժանս : Զգո՛յշ լեր 'ի շատխօսութէ · կա՛ց առանձինն, և ուրա՛խ լեր յԱծ քո : Զի զայն ունիս՝ զոր Ա ամ 'ի քէն բառնալ ոչ կարէ : Ես եմ, որում պարտ է քեզ զլխովին անձնատուր լինիլ, մինչ ոչ ևս 'ի քեզ, այլ յիս կենդանի լինիլ քեզ՝ առանց իմիք

հոգոյ :

## ԳԼ. ԺԳ։

### Թէ պարտ է ջերմեռանդն ոգւոյ յա̄մ սրտէ ախորժել միանալ ընդ Քրի 'ի սբ̄ խորհրդեան։

### Ձայն աշակերտի։

Ա. Ո՞ տացէ ինձ տ̄ր, գտանել զքեզ միայն. բանալ քեզ բովանդակ զսիրտ իմ. և վայելել 'ի քեզ, որպէս փափաքէ անձն իմ. մինչ զի յայնմ հետէ ոչ ոք լիցէ որ զիս անգոսնեսցէ, և ոչ ստեղծուած ինչ զիս շարժեսցէ, կամ բնաւ ինչ յիս հայեսցի. այլ դու միայն ընդ իս խօսեսցիս, և ես ը̄ն քեզ. զոր օրինակ խօսիցի սիրելին ը̄ն սիրելւոյ, և կեցցէ բարեկամն ընդ բարեկամի։ Զայս աղաչեմ, և այսմ ըղձանամ, զի ը̄ն քեզ բոլորովին միացայց, և զսիրտ իմ յա̄մ արարածոց 'ի բաց դարձուցից. և սբ̄ հաղորդութբ̄, և ստէպ պատարագմամբ ուսայց ևս քան զևս քաղցրանալ յերկնային խոկմունս։ Ե՞րբ տ̄ր, բոլորովին ը̄ն քեզ միացայց, և 'ի քեզ ընկլայց, և զկնովին զիս մոռացայց։ Շնորհեա տ̄ր, քեզ յիս լի-

նել

նել՝ և ինձ 'ի քեզ, և այնպէս մնալ
մեզ 'ի միասին:

ե̃· Դու ես սիրելի իմ, ընտրեալ 'ի բիւրուց, յոր հաճեցաւ անձն իմ բնակիլ զամ̃ աւուրս կենաց իմոց: Դու ես իմ խաղաղարար, յորում է ամենակատար խաղաղութի̃ և հանգիստ ճշմարիտ· և արտաքոյ նր̃ վաստակք և ցաւք, և անհնարին թշուառութի̃: Դու ես ա̃ծ ծածկեալ, և խորհուրդ քո չէ ը̃ ամպարիշտս· այլ ընդ խոնարհս և ընդ պարզամիտս են խօսք քո: Ո՛վ, ո̃պ քաղցր է հոգի քո տր̃, որ 'ի ցուցանել զքաղցրութի̃ քո առ որդիս, անուշակ հացիւ, որ իջեալ է յերկնից՝ յանձն առնուս զնա կերակրել: Զի՞ք այլ ազգ այնպէս մեծ, որ ունիցի ա̃ծս իւր հպաւորս, ո̃պ դու ա̃ծ մեր մերձ ես ա̃մ հաւատացելոց քոց, որոց 'ի հանապազորդ սփոփանս, և առ ուղղելոյ զսիրտ նոցա յերկինս՝ զքեզ ջամբես 'ի կերակուր
և 'ի վայելս:

զ̃· Զի՞ որ ազգ է այնպէս ազնուական, ո̃պ ազգ քրիստոնէից· կամ ո՞ր ստեղծուած 'ի ներքոյ երկնից այնպէս սիրելի, ո̃պ եռանդնոտ ոգի· առ որ մտանէ ա̃ծ, 'ի կերակրել զնա իւրով

պատուական մարմնով: Ո՜վ անճառե-
լի շնորհիս, ո՜վ սքանչելի զիջմանս, ո՜վ
անչափ սիրոյս, որ ցուցաւ առ մար-
դիկ: Այլ զի՞նչ տաց տրիտուր Տն
ը̄ այսր շնորհի և ընդ սիրոյս մեծի:
Չունիմ ինչ ընծայել այ̄ իմոյ առա-
ւել հաճոյական. բայց զսրտի իմոյ
բոլորապատուղ նուէր, և զսերտ միակ-
ցութին: Յայնժամ ցնծասցեն ամ ոս-
կերք իմ, յորժամ կատարելապէս ը̄
այ̄ միաւորեսցի անձն իմ: Յայնժամ
ասասցէ ցիս. եթէ կամիս դու լինել
ը̄ իս, և ես կամիմ լինել ը̄ քեզ: Եւ
ես տաց պատասխանի: Հաճեաց տր̄, լի-
նել ընդ իս. և ես մտադիւր եղէց ընդ
քեզ: Այս է ամ ցանկումն իմ, յօդել
սրտի իմոյ 'ի քեզ.

---

## Գ Լ. ԺԳ:

### Յաղագս փափաքել ըղձի եռանդնոտագ առ մարմին Քի:

### Ձայն աշակերտի:

ա. Ո՜վ զի մեծ է օրհնութն քաղցրութե
քոյ տր̄, զոր պահեցեր երկիւղածաց
քոց: 'Ի յիշել իմում տր̄, զմատչիլ
ե-

Եռանդնոտաց 'ի սր̄ քո խորհուրդ մեծաւ եռանդեամբ և ըղձիւ, բազում անգամ ամաչեմ և յամօթ լինիմ. զի 'ի մատուցարան քո, և 'ի սր̄ հաղորդութե̄ անղան գաղջ և ցուրտ մնացիմ, ցամաք և անյօրդօր գտանիմ: Ոչ բոլորովին վառիմ առաջի ա̃յդ իմոյ, և ոչ կալթողնիմ. ո̃պ էին բազումք յեռանդնոտաց, որք կարի իմն տարփմամբ հաղորդութե̄, և զգալի իսկ սիրով սրտի՝ ոչ ժուժային զուսպ ունել զարտասուս. այլ սրտիւ և բերանով առ քեզ ա̃ծ աղբիւրդ կենդանի անձկանօք յօդւոց հանէին. ոչ կարացեալ զքաղց իւրեանց այլազգ զիջուցանել և յագեցուցանել, բայց եթէ զմարմին քո ճաշակելով ա̃մ խնդութ̄ և հոգևորական ըղձմամբ:

Ը. Ո՞վ ճշմարիտ վառեալ հաւատոյ ա̃ց, որ ցոյց մեծ է՝ լինելոյ քոյ 'ի խորհրդեան անդ: Քանզի սոքա ճշմարտապէս ճանաչէին զտ̃ր իւրեանց 'ի բեկանել հացին, որոց սիրտ այնպէս ուժգին ճմլի 'ի նմա, վս̃ գնալոյն յս̃ի ը̄ նմա: Հեռի է յինէն յոլովակի այդպիսի ախորժակ և եռանդն, այդպիսի սաստիկ սէր և բորբոքումն: Քաւիչ իմ լեր, բարերար յս̃, քաջը և

գթած. և շնորհեա ինձ աղքատ մուրողի քում՝ դէթ խուն ինչ ըղձակաթ սիրոյ քոյ 'ի սէր հաղորդութեան առնուլ երբեմն զճաշակ : Զի հաւատք իմ և ես զօրասցին . յոյս իմ 'ի բարութիւն քո առաւելցի . և սէր իմ կատարելապէս վառեալ, և զերկնային ժամանայիս առեալ զճաշակ, մի ես նուաղեսցի:

Գ. Արդ կարող է ողորմութիւն քո զայս ցանկալի շնորհ պարգևել և ինձ. և հոգւով բորբոքման՝ յորժամ եկեսցէ օրն՝ յորում հաճոյ լիցի քեզ, այց առնել և ինձ գթութք : Զի թէպէտ և ոչ ձայլիմ ես այսպիսի մեծափափաք տենչմամբ քոց նշանաւոր եռանդնոտաց . սակայն շնորհիւ քո այդմ մեծաբորբոք տենչման փափաքիմ, աղաչելով և անձկալով՝ ամ այդպիսի յորդեռանդն սիրողաց քոց բաժանորդ զիս առնել. և 'ի մէ վիճակ նոցա համադասել:

ԳԼ.

## ԳԼ. ԺԵ:

Թէ զշնորհ եռանդեան՝ խոնարհութբ, և անձին ուրացութբ լինի ստանալ:
Ձայն սիրեցելոյն:

ա̃. Պարտ է քեզ զշնորհ եռանդեան ստէպ խնդրել. փափաքմամբ հայցել. երկայնմտութբ և յուսով սպասել, գոհութբ ընդունիլ. խոնարհութբ պահել, ժրաջան 'ի գործ արկանել, և զսահման և զպայման վերնական այցելութեան յա̃ծ յանձն առնել, մինչև եկեսցէ: Խոնարհիլ առաւել պարտ է քեզ, յորժամ նուազ, կամ ոչինչ եռանդն զգաս յանձին. այլ ոչ կարի իմն լքանիլ, և ոչ տարապայման տրտմիլ: Տայ յոլովակի ա̃ծ 'ի վայրկեան ժամանակի, զոր չետ ը̃ ժամանակս բազումս: Տայ երբեմն 'ի վախճանի. զոր 'ի սկզբան աղօթից յապաղեաց տալ:

բ̃. Եթէ հանապազ արագ տուեալ լինէր շնորհն, և զոյգ ընդ խնդրոյն 'ի վի̃ր հասանէր, տկարութե̃ մարդկան ոչ ճանաչէր զյարգ նր̃: Վս̃ այսորիկ քաջ

յուսով, և խոնարհ երկայնմտութեամբ պարտ է սպասել շնորհի եռանդեան ։ Այլ դու՛ քե՛զ, և մեղաց քոց լե՛ր մեղադիր, յորժամ ոչ տուեալ լինի, կամ լռելեայն բնաւ իսկ բառնի ։ Փոքր ինչ է երբեմն, որ զշնորհն խափանէ և ծածկէ․ սակայն թէ արժան իցէ փոքր կոչել զայն, և ոչ մանաւանդ մեծ, որ մեծի բարւոյ է խափանարար ։ Եւ թէ զայս փոքր կամ զմեծ 'ի բաց առնես, և իսպառ վանես, լինելով լիցի զոր ինչ խնդրեցեր ։

Դ․ Զի վաղվաղակի իբրև յա՟մ սրտէ 'ի ձեռս ա՟յ զքեզ աւանդեսցես․ և ոչ այսմ կամ այնմ ը՟ հաճոյից կամաց քոց 'ի խնդիր լինիցիս․ այլ բովանդակ 'ի նա յանձն եղիցիս, անդէն ընդ նմա յօդեալ՝ հանդարտեալ գտցիս․ վ՟ն զի ոչինչ այնու հետև քաղցրագոյն քեզ և հաճոյագոյն՝ իբրև զհաճոյս կամացն ա՟յ ։ Արդ որոք զիւր կամս միամիտ սրտիւ 'ի վեր առ ա՟ծ ամբառնայ․ և զինքն յա՟մ անկարգ սիրոյ կամ 'ի չկամութէ արարածական իրաց դատարկէ, եղիցի դիպող ընդունելութե՟ շնորհի, և արժանի պարգևի եռանդեան ։ Քանզի անդ տայ տ՟ր զիւր օրհնութի՟, ուր անօթս գտանէ դատարկս ։ Եւ որ_

չափ

ջան կատարելագոյն 'ի ստորայնոց ոք հրաժարի , և արհամարհութ̅ անձին մեռելութե̅ զգենու , այնչափ շնորհն վաղագոյն գայ , առատագոյն մտանէ · և զազատ սիրտ նր̅ բարձրագոյն 'ի վեր ամբառնայ ։

Է̅ · Յայնժամ տեսցէ , և խնդասցէ · զարմասցի և ը̅նդարձակեսցի սիրտ նորա 'ի նմա · զի ձեռն տն̅ է ը̅ նմա · և ինքն գլխովին եդ զանձն 'ի ձեռսն նր̅ մինչև յաւիտեան ։ Ահա այսպէս օրհնեսցի այր , որ խնդրէ զա̅ծ յամ̅ սրտէ իւրմէ · և որ ոչ առնու զնանրութիւն յանձն իւր ։ Սա յընդունելութե̅ ս̅րբ հաղորդութե̅ մեծի արժանաւորի ա̅ծային միաւորութե̅ շնորհի · զի ոչ հայի յիւր եռանդն և 'ի մխիթարութի̅, այլ 'ի վեր քան զա̅մ եռանդն և մխիթարութի̅, 'ի փառս ա̅յ և 'ի պատիւ նորա ։

## ԳԼ. ԺԶ:

Թէ պարտ է մեզ՝ պէտս մեր Քսի յայտ_ նել, և շնորհս նր հայցել:

Ձայն աշակերտի:

ա. Ո՜վ քաղցր և մարդասէր տր, զոր արդ եռանդեամբ ընդունիլ ցանկամ, դու գիտես զտկարութիւն իմ, և զվիշտս զոր կրեմ. յորչափ չարիս և 'ի մոլութիս անկեալ դնիմ. որչափ յոլովակի ծանրիմ, փորձիմ, խռովիմ, և աղտեղանամ: 'Ի հնարս բժշկութեն առ քեզ մատչիմ. վս մխիթարութե և օգնականութե առ քեզ պաղատիմ: Առ ամենագէտդ բարբառիմ, որում յայտնի են ամ ներքինք իմ. և որ միայն կարողդ ես լիով զիս մխիթարել. և իմ լինել ձեռնկալու: Դու գիտես, որոց բարեաց առաւելապէս կարօտիմ. և որչափ թափուր եմ յառաքինութեց:

բ. Ահա կամ առաջի քո աղքատ և մերկ. շնորհս քո հայցելով, և ողորմութի խնդրելով: Կերակրեա զքաղցեալ մուրացիկ քո. ջեռո զցրտութի իմ հրով սիրոյ քոյ. լուսաւորեա զկուրութի իմ

լու_

լուսով եկաւորութե՟ քոյ : Դարձո՛ զա՟մ երկրաւորս ինձ 'ի դառնութի՟, զա՟մ ծանուցս և ներհակականս 'ի համբերուն, զա՟մ ստորինս և արարածականս յարհամարհուն և 'ի մոռացումն: Ուղղեա՛ զսիրտ իմ առ քեզ յերկինս. և մի՛ թողուր ինձ տատանիլ 'ի վերայ երկրի: Դու միայն քաղցրացիր ինձ յայսմհետէ մինչև յաւիտեան. զի դու միայն ես կերակուր և ըմպելի իմ, սէր և խնդութի՟ իմ. քաղցրութի՟ իմ, և ա՟մ բարութի:

Գ. Երանի՛ թէ յեկաւորութեան քում զկնովին զիս վարէիր, կերուիր, և 'ի քեզ փոխարկէիր. զի մի լինէի ընդ քեզ հոգւով, շնորհօք սերտ միաւորութե՟, և հալմամբ բորբոքեալ սիրոյ: Մի՛ թողուր ինձ նօթի և պապաքեալ 'ի քէն հեռանալ. այլ արա՛ ընդ իս մարդասիրապէս, զորօրինակ բա՟մ անգամ արարեր ընդ սե՟ս քո սքանչելապէս: Զինչ զարմանք են, թէ գլխովին բոց հրանամ, և յիս նուաղիմ. հուր դոլով բոյ մշտավառ և աննուաղ. սէր սրբարար սրտի, և լուսաւորիչ մտաց:

Գ. Լ.

## ԳԼ. ԺԷ։

Յաղագս ջերմեռանդ սիրոյ, և ըղձական փափագման ընդունելոյ զՔս։

Ձայն աշակերտի։

ա. Մեծաւ եռանդեամբ, և վառեալ սիրով, ախորժմամբ և տարփմամբ սրտի փափաքիմ ընդունել զքեզ Տր. զորօրինակ բազում սուրբք և առաքինիք 'ի հաղորդիլ իւրեանց քեզ փափաքեցին. որք մեծապէս սրբութբ վարուց քեզ հաճոյացան, և 'ի ջերմ եռանդն վառեցան։ Ո՛վ Ած իմ, սէր յաւիտենական, լրումն բարութն, երջանկութն անզրաւական. ցանկամ ընդունել զքեզ մեծ եւ տարփմամբ և արժանաւոր յարգանօք, քան զոր սուրբք երբէք կալան յանձինս։

բ. Եւ թէպէտ անարժան եմ զայս ամ եռանդն յանձին բերել. սակայն զամ զիմոյ սրտի ախորժակ քեզ մատուցանեմ, ո՛չ եթէ այն ամ խանդաղակաթ ըղձից բորբոքք յիս միայն լինէին։ Այլ և զորինչ հնար է բարեպաշտ մտաց խորհել, և փափա-

քել,

քեզ, զայն ո՟մ մեծաւ յարգանօք և ըղձմամբ սրտի քեզ ընծայեմ և մատուցանեմ։ Ոչինչ կամիմ անձին պահել. այլ զիս, և զո՟մ որինչ է իմ, քեզ կամակար և մատղիր նուիրեմ։ Ա՟Ծ իմ, արարիչ իմ, և փրկիչ իմ, այնպիսի ըղձիւ և յարգմամբ, գովութբ. և պատուով, այնպիսի գոհութբ՝ մեծարանօք և սիրով, այնպիսի հաւատով յուսով և մաքրութբ անձկամ ը_ ունիլ զքեզ այսօր, զոր օրինակ փափաքմամբ ընկալաւ զքեզ ամենասրբ մայր քո փառաւորեալ կոյսն մարիամ. յորժամ յաւետել նմա հրեշտակին զմարդեղութեն խորհուրդ՝ խոնարհութբ և եռանդեամբ ետ պտասխանի։ Ահաւասիկ կամ աղախին տն, եղիցի ինձ ը՟ բանի քում։

Գ. Եւ ո՟վ երանելի կարապետն քո, մեծն 'ի մէջ յովհաննէս մկրտիչ՝ առաջի քո խայտալով ցնծացաւ խնդութբ հոգւոյն սր՟յ, մինչդեռ փակեալ էր յարգանդի մօրն. և յետ ժամանակաց տեսեալ զքեզ, զի գնայիր 'ի մէջ մարդկան՝ առաւել ևս խոնարհեալ՝ յորդեռանդն ըղձիւ ասէր. իսկ բարեկամ փեսային, որ կայ և լսէ նմա, ուրախութբ ուրախ լինի վս՟ ձայնի փեսային.

տայցն · Նոյնպէս և ես ցանկամ մծ̃ ըղձմամբ բորբոքիլ, և յամ̃ սրտէ առաջի առնել քեզ զանձն իմ։ Ա̃յ և զամ̃ եռանդնոտաց հրճուանս, զբորբոքեալ իղձս, զմտաւոր զմայլմունս, զգերբնական լուսաւորութիւնս և զառ'ի յերկնից յայտնութիւնս քեզ մատուցանեմ և ընծայեմ, հանդերձ ամ̃ առաքինութե̃ք և գովութե̃ք յամ̃ արարածոց յերկնից և յերկրի քեզ ընծայելովք, վա̃ իմ, և վա̃ ամենեցուն յաղօթս իմ յանձն եղելոց · պէ յամենեցունց արժանապէս օրհնեսցիս, և յաւիտեան փառաւորեսցիս։

Դ · Ընկալ զուխտս իմ, տէ̃ ա̃ծ իմ · և զիղձս անչափ օրհնութե̃, և անբաւ փառաւորութե̃, որ քեզն վայելեն, ը̃ առաւելութե̃ անպատում մեծութե̃ քոյ։ Զայս ա̃մ քեզ փոխարէլ ցանկամ յա̃մ աւուրս և 'ի ժամանակս · և հայցմամբ և ըղձմամբ հրաւիրանօք աղերսեմ զա̃մ երկնային զօրս, և զա̃մ հաւատացեալս 'ի քեզ, փոխարէլ քեզ ը̃իս զշնորհս և զգովութի։

Ե · Օրհնեսցեն զքեզ ա̃մ ազգք և ազինք և լեզուք, և զս̃բ զանուշակ անուն քո հռչակաւ և վառեալ եռանդեամբ մեծացուսցեն։ Եւ որք յար-

գա-

քանօք եռանդագին զայս դերահրաշ խորհուրդ քո կատարեն, և լիահաւատ յայն մատչին, զշնորհս և զողորմութի առաջի քո գտանել արժանասցին. և վ՟ն իմ մեղաւորիս աղերս մատուսցեն ։ Եւ ի բերել յանձկալի յայն եռանդն և 'ի զմայլեցուցիչ միաւորութե հասանիցեն, և քաջ մխիթարեալք, և մեծահրաշ վայելեալք 'ի ս՟բ յերկնային սեղանոյ քոյ մեկնեսցին, և զիս ընդ-տառապեալս յիշման արժանի արասցեն ։

---

## Գ Լ · ԺԲ ·

*Թէ չէ պարտ մարդոյ լինել ընդվայրաքննին խուզարկու խորհրդոյս, այլ խոնարհ հետեւօղ Ք՟ի, հնազանդեալ զմիտս ս՟բյ հաւատոյ ։*

Ձայն սիրելոյն ։

ա՛ · Զգո՛յշ լեր յընդվայրաքննին և յանպիտան հետազօտութենէ խորին խորհրդոյս . եթէ ո՛չ կամիս խորդաւանիլ 'ի վիհս երկբայութե ։ Որ քննիչ է մեծ վայելչութե, մղձկի 'ի փառաց անտի ։ Բազում ինչ հնար է ա՟յ գործել,

ծել, քան մարդոյ 'ի միտ առնուլ: Տա-
նելի է բարեպաշտ և խոնարհ քննութիւն
ճշմարտութեան, որ պատրաստ է միշտ
ուսանիլ, և ջանայ ըստ ողջամիտ ի-
մաստից հարց գնալ:

բ̃. Երանի՛ պարզմտութեան, որ զդժուա-
րին խնդրոց ճանապարհս թողու, և
ը̃ հարթ և հաստատուն շաւիղս պատ-
ուիրանացն ա̃յ գնայ: Բազումք կո-
րուսին զեռանդն, 'ի ձեռնարկել իւր-
եանց՝ քննել զբարձրագոյնս: Հա-
ւատք 'ի քէն պահանջին, և վարք ամ-
բիծք. ո՛չ վսեմութիւն մտաց, և ո՛չ խորք
խորհրդոցն ա̃յ: Թէ չիմանաս, և չտա-
նիս, որ ինչ ստո՛ր է քան զքեզ, զիա՞րդ
հասու լիցիս, որոց 'ի վեր են քան
զքեզ: Հնազանդ լեր ա̃յ, և խոնար-
հեցո՛ զմիտս քո հաւատոյ. և տացի
քեզ լոյս գիտութեան, որչափ զիարդ օգուտ
իցէ քեզ, և պիտոյ:

գ̃. Ոմանք մեծապէս փորձին 'ի վե-
րայ հաւատոյ, և խորհրդոյ հաղոր-
դութեան. բայց այս ո՛չ նոցա է մեղ,
այլ առաւել թշնամւոյն: Մի՛ հոգար.
մի՛ վիճիր ընդ խորհուրդս քո. և մի՛
երկբայութեանց որ 'ի սադրելոյ սատա-
նայի, տար պատասխանի: Այլ հա-
ւատա՛ բանիցն ա̃յ. հաւատա՛ սրբոց նորա.

և

և մարգարէից . և Թշնամին չար լիցի՛ ի
քէն հալածական: Բազմ անգամ օգուտ
մեծ է ծառայի ում՝ այդպիսեաց համ_
բերել: Քանզի ո՛չ փորձէ նա զան_
հաւատս և զմեղաւորս, յորս վստահ
է թէ իւր են . այլ զջերմեռանդն
հաւատացեալս բազմօրինակ փորձէ և
չարչարէ:

Դ. Հա՛պա, դնա՛ զՃնշ̄հ քո անկեղծ
և աներկբայ հաւատով . և աղօթա_
նուէր յարգանօք մատի՛ր 'ի ս̄ր. խոր_
հուրդ . և զոր ո՛չ բաւես իմանալ,
ամ ամենակալի աներկեան արա՛ յանձն:
Ո՛չ խաբէ զքեզ ած . այլ խաբի՝ որ_
կարի իմն հաւատայ անձին: Գնայ
ած ընդ պարզամիտս, յայտնէ զանձն
խոնարհաց, տայ իմաստուն տղայոց,
բանայ զմիտս մաքրամտաց, և ծած_
կէ զշնորհս 'ի հետաքրքրաց և յամ_
բարտաւանից: Բանն մարդկային տը_
կար է, և հնար է թէ խաբեսցի,
այլ հաւատ Ճշմարիտ՝ է անխաբ:

Ե. Ամ բանի և բնաւոր հետաղօտու
թե̄ պարտ է զհետ երթալ հաւա_
տոյ . ո՛չ յառաջել, և ո՛չ միջամուխ
լինել: Զի հաւատ և սէր գերիվերոյ
են յոյժ . և յայսմ ամենայն. գերա_
հրաշ խորհրդեան ծածկապէս ներգոր
ծեն:

ծէն ։ Այն անչափ՝ յաւիտենական է՛ անբաւազօր առնէ մեծամեծս և անքըն նինս յերկինս և յերկրի. և չիք ղննուն սքանչելի գործոց նր ։ Եթէ լինէին նր գործք՝ մարդկային, քանի դիւրա- հասք, ոչ արդեօք սքանչելի էին, և ոչ անպատում։

ՎԵՐՋ։

ՑԱՆԿ

# ՑՈՒՑԱԿ

## Գրոց, և գլխոց :

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ:

Խրատք առ հոգևոր կենաց օգտակարք :

Գլ․ Ա․ Յաղագս նմանօղ լինելոյ քՙի, և արհամարհելոյ զամ ունայնութիւնս աշխարհի : Երես․ 3
Բ․ Յաղագս նուաստ համարելոյ զանձն : 8
Գ․ Յաղագս վարդապետութեան ճշմարտութեան : 10
Դ․ Յաղագս յառաջատեսութեան ՚ի գործս : 14
Ե․ Յաղագս ընթերցման սուրբ գրոց : 15
Զ․ Յաղագս անկարգ ախորժակաց : 16
Է․ Յաղագս խորշելոյ ՚ի սնոտի յուսոյ և ՚ի մեծամտութենէ : 17
Ը․ Յաղագս զգոյշ լինելոյ ՚ի կարի իմն ընտանութենէ : 19
Թ․ Յաղագս հնազանդութեան, և հպատակութեան : 20

Ժ․

Ժ. Յաղագս խորշելոյ 'ի դատարկ բանից: 21
ԺԱ. Յաղագս ստանալոյ զխաղաղութի, և յաղագս նախանձու յառաջադիմութե: 23
ԺԲ. Յաղագս օգտի վշտաց: 26
ԺԳ. Յաղագս հակառակ կալոյ փորձութեց: 27
ԺԴ. Յաղագս խորշելոյ 'ի յանդուգն դատողութե: 31
ԺԵ. Յաղագս գործոց 'ի սիրոյ եղելոց: 33
ԺԶ. Յաղագս համբերելոյ պակասութեց այլոց: 34
ԺԷ. Յաղագս միանձնական վարուց: 36
ԺԸ. Յաղագս օրինակաց սրբոց հարց: 38
ԺԹ. Յաղագս կրթութեց բարւոյ կրօնաւորի: 41
Ի. Յաղագս սիրոյ առանձնութե և լռութե: 46
ԻԱ. Յաղագս զղջութե սրտի: 50
ԻԲ. Յաղագս խոկման մարդկային թշուառութե: 53
ԻԳ. Յաղագս խոկման մահու: 58
ԻԴ. Յաղագս դատաստանի և պատժոց մեղաւորաց: 63

իե. Յաղագս փոյթեռանդն ուղղութեն վարուց մերոց: 68

# ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ.

Խրատք, որք ձգեն զմեզ 'ի ներքինս:


գլ. ա. Յաղագս ներքին գնացից: 77

բ. Յաղագս խոնարհ հպատակութեն: 82

գ. Յաղագս առն խաղաղարարի: 83

դ. Յաղագս մաքուր մտաց, և միամիտ դիտաւորութեն: 86

ե. Յաղագս ճանաչելոյ զչափ անձին: 87

զ. Յաղագս ուրախութեն բարւոք խղճի մտաց: 89

է. Յաղագս սիրոյն Քնի 'ի վեր քան զամ: 92

ը. Յաղագս մտերիմ սիրելութեն յի: 94

թ. Յաղագս պակասութեն ամ մխիթարանաց: 97

ժ. Յաղագս երախտագիտութեն առ շնորհս այ: 102

ժա. Յաղագս սակաւութեն սիրողաց խաչին յի: 105

ժբ. Յաղագս արքունի ճանապարհի սբյ խաչին: 108


ԳԻՐՔ.

# ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ։

## Յաղագս ներքին մխիթարութեան։

Գլ. Ա. Յաղագս ներքին խօսից քի առ հաւատացեալ ոգի։ 119
Բ. Թէ ճշմարտութիւն ներքուստ խօսի լռելեայն։ 121
Գ. Թէ զբանս այ խոնարհութեամբ պարտ է լսել. և թէ բազումք ոչ քննեն զնա։ 123
Դ. Թէ պարտ է ճշմարտութեամբ և խոնարհութեամբ գնալ առաջի այ։ 127
Ե. Յաղագս սքանչելի պտղոյ ածային սիրոյ։ 130
Զ. Յաղագս հանդիսի ճշմարիտ սիրողի։ 134
Է. Յաղագս ծածկելոյ զշնորհս ընդ պահպանութեամբ խոնարհութեան։ 138
Ը. Յաղագս նուաստ համարման անձին առաջի այ։ 141
Թ. Թէ զամ պարտ է վերաբերել յած իբրև ՚ի վերջին վախճան։ 143
Ժ. Թէ արհամարհողին զաշխ, քաղցր է ծառայել այ։ 145
ԺԱ. Թէ զխղճս սրտի քննել պարտ է, և կարգաւորել։ 148

ժբ. Յաղագս օրինակի համբերութեան, և մարտնչելոյ ը̃դէմ ցանկութեանց : 150
ժգ. Յաղագս հնազանդութեան խոնարհ հպատակի, ը̃ս օրինակին յի̃ի ք̃ի : 153
ժդ. Յաղագս խոկման գաղտնի դատաստանացն ա̃յ, զի մի մեծամտեսցուք ը̃ բարութիւնս : 155
ժե. Թէ զիա՞րդ կալոց եմք, և զի՞նչ ասել ունիմք յա̃մ ցանկալիս : 157
ժզ. Թէ զճշմարիտ մխիթարանս խնդրել պարտ է միայն յա̃ծ : 160
ժէ. Թէ զա̃մ հոգս ընկենուլ պարտ է միայն յա̃ծ : 162
ժը. Թէ ժամանակեան թշուառութեանց՝ ըստ օրինակին ք̃ի, պարտ է երկայնմտութ̃բ համբերել : 163
ժթ. Յաղագս տանելոյ անիրաւութեանց . և ցոյց ճշմարիտ համբերողի : 166
ի. Յաղագս խոստովանութեան անձին տկարութեան, և կենցաղոյս թշուառութեանց : 168
իա. Թէ պարտ է հանգչիլ յա̃ծ, քան յա̃մ բարութիւնս և 'ի

պայրդևս : 173

ԻԲ. Յաղագս յիշատակի բազմապատիկ բարերարութեանց այ : 175

ԻԳ. Յաղագս չորից, որք 'ի ներքս ածեն զխաղաղութիւն մեծ : 179

ԻԴ. Յաղագս խորշելոյ յընդվայրաքննին հետաքօտութենէ վարուց այլոց : 182

ԻԵ. Թէ յի՞նչ հաստատեալ իցէ անխռով խաղաղութիւն սրտի, և ճշմարիտ յառաջադիմութիւն : 183

ԻԶ. Յաղագս վսեմութեան ազատական մտաց, որում արժանանամք առաւել խոնարհական աղօթիւք՝ քան ուսմամբ : 186

ԻԷ. Թէ առանձնական սէրն 'ի գերագոյն բարւոյ մեծապէս յետս ընկրկէ : 188

ԻԸ. Ընդդէմ լեզուաց բամբասողաց : 190

ԻԹ. Թէ ո՞պ 'ի նեղութեան պարտ է կարդալ առ ած, և օրհնել զնա : 191

Լ. Յաղագս խնդրելոյ զօգնականութիւն այ, և յաղագս յուսոյ վերստին ընդունելութեան շնորհաց : 193

ԼԱ. Յաղագս զանց առնելոյ զամ արա-

արարածովք , առ գտանե_
լոյ զարարիչն : 197
ԼԲ . Յաղագս ուրանալոյ զանձն ,
և հրաժարելոյ յա̃մ ցանկու_
թենէ : 200
ԼԳ . Յաղագս անհաստատութե̃
սրտի , և յաղագս վախճանա
կան դիտման՝ զոր պարտ է
ունել առ Ա̃Ծ : 202
ԼԴ . Յաղագս թէ սիրողին քաղցր
է Ա̃Ծ 'ի վեր քան զա̃մ և յա_
մենայնի : 204
ԼԵ . Թէ չիք ապահովութի̃ 'ի փոր
ձութէ̃ յաստի կեանս : 206
ԼԶ . 'Ի վ̃ր ունայն դատողութե̃
մարդկան : 208
ԼԷ . Յաղագս անխառն և ողջիկ
յանձնարարութե̃ անձին , առ
ստանալոյ զազատութի̃ սրտի : 210
ԼԸ . Յաղագս քաջ կառավարութե̃
յարտաքինս , և դիմելոյ առ
Ա̃Ծ 'ի վտանգս : 212
ԼԹ . Թէ չէ պարտ մարդոյ տագ
նապիլ յերողութի̃ս . 214
Խ . Թէ մարդ չունի ինչ բարի
յիւրմէ , և չէ կարող պար_
ծիլ յիւր ինչ : 215
ԽԱ . Յաղագս արհամարհութեան

ամ ժամանակաւոր պատուոյ: 218
ԽԲ. Թէ չէ պարտ դնել զխաղաղուն ՚ի մարդիկ: 219
ԽԳ. Յաղագս մնոտի և աշխարհային գիտուն. 221
ԽԴ. Յաղագս չձգելոյ զանձն յարտաքինս: 223
ԽԵ. Թէ չէ պարտ հաւատալ ամենեցուն, և յաղագս դիւրահաւնուե ՚ի բանս: 224
ԽԶ. Յաղագս ապաւինելոյ յած, յորժամ ՚ի վերայ յարձակին ալիքք բանից: 228
ԽԷ. Թէ պարտ է տանել ամ ծանունց, վս յաւիտենից կենաց: 231
ԽԸ. Յաղագս աւուրն յաւիտենից, և կենցաղոյս անձկութեց: 234
ԽԹ. Յաղագս փափաքման յաւիտենական կենաց, և թէ քանի՞ բարիք խոստացեալ են պատերազմողաց: 238
Ծ. Թէ ո՞րպ պարտ է լքելոյն՝ աւանդել զանձն ՚ի ձեռս այ: 243
ԾԱ. Թէ պարտ է պատաղել ՚ի խո֊

խոնարհ գործս, յորժամ չեմք ժամանող բարձրագունից ։ 248

ծբ. Թէ չէ պարտ մարդոյ համարիլ զանձն արժանի մխիթարութե՛, այլ յաւէտ պարտաւոր դանից ։ 249

ծգ. Թէ շնորհն այ̃ ոչ խառնի ընդ այնս՝ որոց քաղցր են երկրաւորք ։ 252

ծդ. Յաղագս այլ և այլ շարժմանց բնութե՛ և շնորհաց ։ 254

ծե. Յաղագս ապականութե՛ բնութե՛, և ազդուութե՛ ած̃ային շնորհաց ։ 260

ծզ. Թէ պարտ է մեզ ուրանալ զանձինս ․ և զհետ երթալ քի̃ 'ի ձեռն խաչի ։ 264

ծէ. Թէ չէ պարտ մարդոյ կարի իմն լքանիլ, յորժամ դիպի նմա 'ի պակասութիւնս ինչ սահիլ ։ 267

ծը. Յաղագս չքննելոյ զբարձրագոյն իրս, և զա̃յ գաղտնի դատաստանս ։ 270

ծթ. Թէ զա̃մ յոյս մեր և ապաւինութի յա̃ծ միայն պարտ է հաստատել ։ 276

# ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ.

## Յաղագս խորհրդոյ հաղորդութեան:

Ջերմեռանդն հրաւէր առ սբ. հաղորդութիւն: 281

Գլ. ա. Թէ քանի՞ յարգանօք պարտ է ընդունիլ զքս: 282

բ. Թէ մեծ բարութի և սէր այ ՚ի սբ. խորհրդեան ցուցանի մարդկան: 290

գ. Թէ օգտակար է ստէպ հաղորդիլ: 294

դ. Յաղագս թէ բազում բարիք պարգևին այնց, որք եռանդեամբ հաղորդին: 297

ե. Յաղագս յարգի խորհրդոյս, և քահանայական կարգի: 302

զ. Հարցումն ՚ի վր կրթութե յառաջ քան զհաղորդութիւն: 305

է. Յաղագս քննութեան խղճի մտաց, և ուղղուե առաջադրուե: 306

ը. Յաղագս նուիրման քնի ՚ի խաչին, և յաղագս յանձնառութե անձին, 309

թ. Թէ զմեզ՝ և զամ ինչ մեր

պարտ

պարտ է մեզ մատուցանել
նմա. և վն ամենեցուն առնել
աղօթս ։ 311
Ժ. Յաղագս թէ 'ի մր. հաղոր-
դուէ չէ պարտ 'ի բաց կալ
դիւրաւ ։ 314
ԺԱ. Թէ մարմնն քնի, և մր.
գիրք՝ յոյժ են հարկաւոր ան
ձին հաւատացելոյ ։ 319
ԺԲ. Թէ որ հաղորդելոցն է, բա-
զում զգուշութբ պատրաս-
տել ունի զանձն առ ընդու-
նելուն քնի ։ 325
ԺԳ. Թէ պարտ է ջերմեռանդն
ոգւոյ յոմ սրտէ ախորժել
զմխանալն ընդ քնի 'ի մր խոր-
հրդեան ։ 328
ԺԴ. Յաղագս վառեալ ըղձի ե-
ռանդնոտաց՝ առ մարմն քն ։ 330
ԺԵ. Թէ զշնորհս եռանդեան՝ խո
նարհուբ և անձին ուրացու
թբ լինի ստանալ ։ 333
ԺԶ. Թէ պարտ է մեզ զկարիս
մր քնի յայտնել, և զշնորհս
նր հայցել ։ 336
ԺԷ. Յաղագս վառեալ սիրոյ և
ըղձակաթ փափաքման ընդու-
նելոյ զքն ։ 338

ԺԸ.

ԺԸ. Թէ չէ պարտ մարդոյ լի-
նել ճիվայրաքննին խուզարկու
խորհրդոյս, այլ խոնարհ հե-
տեւօղ քմի, հնազանդեալ
գերել միտս մեր հաւատոյ։ 341

ՎԵՐՋ.